Z notipnei
Przemyśl
28 A.

88
Z-78



8824.
8824,
XVI 2.
XVII/29

88
7-70
3828
Հաստատուն,

ՄԵԹՈՍ

ՀՈՄԵՐՈՍԻ

ՈԴԻՍԱԿԱՆ

88
Z-78
10
1007
39506

ՀՈՄԵՐՈՍ

ՈԴԻՍԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՀԵԼԼԵՆԱԿԱՆԷ

Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՄԱՃԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՏՈՐ Բ.

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄԴԶ

2914-42

2 JUN 2006

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԳ.

JUN 2006

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Նորոգ ընծայաբերութիւնք առ Ոդիսէս։ Զետեղեն զամենայն 'ի նաւի։ Հրաժեշտ առնու Ոդիս յարքայէն. հասուցանեն զնա ողջամբ Յիթակէ մինչ դեռ նա 'ի քուն է։ Իսկ 'ի դառնալ անդրէն նաւուն, Պոսիդոն ոխերիմ նաւագնացութեանն Ոդիսեայ, 'ի քար փոխարկէ զնաւ զայն Փէակեցւոյն։ Զարթնու Ոդիւս ոչ ճանաչէ զհայրենիս առ թանձրամած միգի. Ալթենաս փարատէ զմէգն երևեալ նմա 'ի կերպարան հովուի, ուսուցանէ նմա զօրինակ սատակելոյ հոմանեացն. և զառեալ ընծայսն տայ նմա ծածկել յանձաւի ուրեք։ Ի վերջէ ուրեմն փոխարկէ զՈդիս 'ի մուրիկ ոմն հինօրեայ, որպէս զի մի ոք Յիթակէ յանկարծ ծանիցէ զնա։

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԳ.

Ընծա լռեաց. առ հասարակ զմայլեալք
'ի լուր պատմութեանց,
Կային լռիկք. մինչև ուրեմն Աղկինոոս
ձայն կրկնեաց.
" Անշուշտ Ոդիս, հասեալ քո աստ 'ի
մեծամուր 'ի տուն իմ,
Զարչարազգեացդ այլ ոչ լիցիս դու ծովա-
ծուփ 'ի դարձին.
Այլ ձեզ ասեմ քաջորերոյդ, որ աստ
առնուք ըզբաժակ
Զանոյշ գինւոյն, զմայլեալք լսել զերգա-
հանին մեր նուագ.

Զորձք և ընծայք առ հասարակ. հրաշակերտուածք և ոսկւոյն,
Զոր մեր աւագք ածին հիւրոյս, ջքնաղ յարկեղ կան ողջոյն:
Աղէ, և մեծ եռոտանի տացուք այր այր և ըզսան,
Դարձեալ 'ի նոյն պատուասիրել յորդորեսցուք ըզխուժանն.
Ծանր է միոյն ընծայաբեր գոլ բոլորին 'ի ժամուն ».
Ասաց արքայն, և կոչնականքն հաւանութեան ձեռն ետուն:
Այր այր 'ի տուն ջոքաւ հանդէպ, մինչ վարդամատն այգ ծագեաց
Եւ փութապէս ածեն 'ի նաւն զընծայն արդոյս պրղնձեաց.
Ինքնին արքայն ընդ նստոցիւք կարգեաց ըզկահ պրղնձեան,
Եւ զգուշացաւ զի թիավարք թի շարժեսցեն անխափան:
Դարձան ապա 'ի խրախութիւն 'ի տուն մեծի արքայի,
Եւ Աղկինոս յաղէր արքառ Ամպրոպայնոյն հրզօրի.
Այրեալք ըզթամբրս զաղդերաց, կոչունս կարգեն մեծահաց
Զուարճանային, և Դեմոդոկ երգիչն երգէր գերազանց.

Այլ Ոդիւսէս ակնակառոյց ըստէպ յարը
փին լուսափայլ,
Երբ նա արագ դարձցի 'ի մայրն, էր անձկ-
այրեաց 'ի դառնալ.
Որպէս գեղջուկ անձկայ հացին, երբ
սեաւ եղինք քաջամուր
Ըզթիւն ողջոյն ընդ անդ երէզ ձրգեն
զարօրն հաստակուռ,
Սպասէ յոգնեալն ընթրեաց ժամուն 'ի
խոնարհել արևուն,
Խնդայ ընդ ժամն և խոնջ ծնգովք գընայ
ընթրել նա 'ի տուն.
Այսպէս Ոդիւս ընդ մուսս արփւոյն
խընդաց, ձայն էտ փէակեանց,
Եւ առաջին Աղկինոսին. "Լուր դու, ար-
քայդ գերապանծ.
Հանէք նուէր, գնացիս ողջամբ, և դուք
ողջամբ մընասջիք.
Իզձք իմ լըցան. կազմ է ուղիս. կազմ են
ընծայք գեղեցիկ.
Դիւքն երկնաձեմք ձեր ընծայիւքն հովա-
նասցին ինձ 'ի տան.
Վեհ զամուսինս ողջամբ գըտից և զսիրե-
լիս ողջանդամ.
Դուք ասա մնացեալք պարկեշտ հար-
սամբքդ և զաւակօք բերկրեսջիք
Բարեբաստիկք եղեալք 'ի դից, մի ինչ
հասցեն ձեզ չարիք":

Ընդ օրհնութեան բանս Ոդիսեան յոյժ մեծապէս խնդացին,
Ճեպ տան ուղղոյն և մեծ արքայն ձայն զայս կարդաց Քարոզին.
« Արի՛ Պոնտոն, խառնարանէն բաշխեա՛ բնաւից անապակ.
Զօնեալք Դիայ և մեր հիւրոյն դարձ մաղթեսցուք յաջողակ ».
Խառնեաց Պոնտոն զանոյշ գինին, էկաց բաշխեաց բոլորից,
Զն նուիրեն երկնաբնակաց այր այր յիւրեանց գահոյից.
Յարեաւ Ոդիս տաշտ բոլորակ եդ 'ի ձեռին Արեսի.
« Խնդա՛, ասէր, դու յաւիտեան ո՞ հոյակապ Թագուհի,
Մինչև ալիքն առցեն ըզքեզ, օրհասբնաւից տնկակից,
Ես արդ 'ի քէն ուղղոյ լինիմ, դու ասա՛ կացցես բերկրալից.
Մայրըդ բերկրեալ 'ի զաւակաց, բերկրեալ 'ի քոյ խուժանէն,
Բերկրեալ խսպառ յերջանկափառ յԱՂկինոսէ արքայէն »:
Ասաց, ընդ սեամն էլ Ոդիսէս. Քարոզն յարեաւ կարապետ.
Ըզսա արքայն եդ ընդ նրմա ածել 'ի նաւն հետ ընդ հետ.

Դշխոյն ըզհետ յղեաց նաժիշտս. մին ձորձ տանէր ջինջ պայծառ,
Նոյն և լոգիկ. և միւս նաժիշտ զարկղն ամ բափակին բառնայր.
Երրորդն ըզհաց բարձեալ տանէր և ըզ կարմիր ըզգինին.
Հասեալք 'ի ծով, նաւաղք զպարէնն ա ռին եդին 'ի նաւին.
Ի խելս նաւուն գորգ և կըտաւ սրփռեն հիւրոյն յանոյշ քուն.
Եվ նա լըռիկ ընկողմնեցաւ. նաւաղք թիոց կարգ եռուն:
Ռին նստոցս, 'ի ծակ վիմէն առեալ զպա ռանն ձրգեցին,
Եւ կորովի թիավարեալք հարուն ըզջուրն ըզծովին.
Յարտեանունսըն Ոդիւսեայ անդ քուն անկաւ թանձրութեան,
Քաղցր և անոյշ նինջն էր խորին մահա հանգոյն թմբրութեան.
Իսկ նաւն յայնժամ որպէս 'ի դաշտ ձիք քառալուծք 'ի յարուցց
Ի միասին խարազանեալք 'ի քեմխտեայ մորակաց,
Վերոստուցեալք ճեպ հատանեն ըզսահ մանեալքն զուղի,
Այսպէս նաւուն խելք վերամբարձ վա զէր ընդ ծուին ամեհի.

Ըզհետ ալեքքն ծիրանիք խուժեն ծովուն բազմագոչ,
Սրանայր վազէր և լաստաւիայսն անքոյթ ծովուն յանդնդոց.
Եւ ոչ բազէն այն Կիրկոսեան օդասպարիկն 'ի Թռչունս 54
Ժամանն լինէր Թռուցեալ նաւուն ընդ կապուտակ մրկանունս.
Թռուցեալ տանէր զայրն հանձարոտն համանմանեալ աստուածոց,
Զայր վշտաւոր զմրցեալն 'ի մարտս, զմրցեալն ընդ ծովս ալէկոծ.
Իսկ անդ յայնժամ քաղցրր ննջէր անյուշ վշտացն իւր ողջոյն,
Մինչև պայծառ էլ արուսեակն հրեշտակ լուսոյ արփենուոյն:
Յայնժամ արագ ծովայածուկ նաւն հասանէր 'ի կղզին.
Բայց յԻթակէ գոյ նաւաբաշխ ծովուն ծերոյն Փորկինին 55.
Կրկին ափունք անդ առապարք են կարկառեալք առ միմեանս,
Ի սաստկաշունչ պահեն հողմոց և 'ի մեծաց կոհակաց.
Նաւք միջամուխք անդ կան անքոյթ արձակ առանց պարանի,
Իսկ 'ի ծայրին ամենաձիւղ հովանանայ ձիթենի.

Մերձ առ նովաւ գոյ քարանձաւ հովանաւոր և հեշտին,
Զոնեալ 'ի ձոն յաւերժահարսանց որ նայասեանք յորջորջին.
Ի ներքս 'ի խոր սափորք և տաշտք կուռ 'ի քարանց մարմարեայց,
Ուր զանուշակն ընդ մութ անձաւ մեղրը գործեն պարքք մեղուաց.
Կայ անդ 'ի ներքս և մարմարեայ ոստայնանկացքն գործի,
Յաւերժահարսունք անդ հրաշարուեստ ձորձ անկանեն ծիրանի.
Խաղան և ջուրք յաւերժահոսք. և անդ կրկին դուրք բանին,
Մին առ հիւսիս մարդկան գնայուն, և միւսն 'ի կոյս հարաւին.
Հարաւայինն է 'ի մասին աստուածայնոց ըն ձոնից,
Երբէք ընդ նա ոչ գընայ մարդ, ուղի է նա անմահից։
Յայս նաւաբաշխ մուծին ըզնաւն, եղեալք վայրաց նախագգեաց,
Ի միջակէն շեշտ 'ի ցամաք թիավարեալ կորովեաց.
Ելին յափունս 'ի կուռ նաւէն բարձեալ զՈդիւս խընամով,
Կտաւով, գորգո

Ըզձօնս փեկեանց ձօնեալ նրմա ընդ հո-
վանեաւ Պալլասին,
Ողջ զայն ընծայսն ընդ ձիթենեաւ 'ի
դուրս յուղւոյն կուտեցին.
Զի մի անցորդ ոք դրժեսցէ 'ի ժամ քը-
նոյն Ոդիւսի.
Որեարն ապանաւամարզիկք 'ի տուն դար-
ձան հայրենի:
Բայց Պոսիդոն խէթ զՈդիսայն, զոր
սպառնացաւ մեծասաստ,
Ոչ մոռացաւ. մատեաւ մեղմով հետաքրն-
նէր զԱրամազդ.
"Արամազդ հայր, ինձ չիք այլ ևս շուք
յանմահիցն 'ի դասէն,
Երբ մահացուքն անշուք թողուն փե-
կեանք սերեալքն յիմ ձեռէ.
Ես ասէի, բազմաչարչար 'ի տուն դառ-
նալ Ոդիսի,
Ընդ դարձն երբէք ոչ խանդացեալ, զոր
խոստացար ակնարկի.
Իսկ արդ Ոդիս 'ի քուն անոյշ նաւեալ
եհաս յԻթակա,
Պըղինձ ոսկի առեալ ամբաւ և անկուա-
ծոյս բեհեզեայ.
Անշուշտ այնչափ նա ոչ տանէր Տրոյ-
եանց քանդեալ յոստանէն,
Եթէ դառնայր ինքն ողջանդամ առեալ
զիւր մասն յաւարէն":

« Բաբէ, կրկնեաց Ամպրոսպայինն, զինչ
երկրաշարժդ ասացեր.
Շուք տան քեզ դիք. Ծանր է դձձել զա-
ւադդ հուժկուդ անվեհեր.
Իսկ թէ մարդ ոք յաւակնելով քեզ շուք
չածէ զարժանի,
Դու քոյ բազկաւդ առցես ըզվրէժ, արա
հրաշքդ ըստ կամի »:
« Լուր Ամպրոպեանդ, երկրասասանն
կրկնեաց յայնժամ Դիոսի.
Էր իմ բազկին անգործ մընալ թէ քեզ
պատկառ ոչ կայի.
Արդ կամ է ինձ ըզթէակեանց զայդ հրա-
շակերտ լաստափայտ,
Երբ 'ի յուշոյն դարձ արասցէ, 'ի ծով
սուզել ալեսատ.
Ուացին դոքա մի անխրտիր ուղղոյ դընել
ըզմարդիկ.
Նաև լերամբ մեծակարկառ ծածկեմ զոս-
սանն ես ողջիկ »:
« Քաջ է, կրկնեաց Ամպահաւաքն, ընդ
բանդ և ես հաւանիմ.
Երբ լաստափայտն 'ի տուն մերձեալ տե-
սիլ կացցէ խուժանին,
Քարացո զայն 'ի տիպ նաւու, այն ինչ
մերձեալ 'ի ցամաք,
Յահարկուութիւն տեսանելեաց. լերամբ
ծածկեա և զքաղաք »:

Ն՚եպ Պոսիդոն, լուեալ զքաւ 'ի Աքեր
յերկիր Փէակեանց.
Անդ ըսպասէր. գայր նաւն անդուստ հա-
տեալ զալիս Ճեպընեթաց.
Մատեաւ 'ի լաստն և քարացոյց ձե-
ռամբն հարեալ դիւցեղէն,
Արմատացոյց ըզլաստն յանդունդս. ան-
յայտացաւ ինքն անդէն։
Իսկ Փէակեանքն նաւահրմուռքն երկայ-
նաթիկքն այն որեար
Հիացեալք սոսկմամբ առ հասարակ, այր
ընդ ընկեր տայր բարբառ.
« Աւա՜ղ, ո՛ զ զարագ մեր նաւն 'ի ծով
կապեաց ալեբեր,
Մօտ էր 'ի տունն և մեզ արդէն ողջ լաս-
տատփայտն երևէր »։
Զայս հիացեալք զրուցատրէին. հրաշից
պատճառն կայր թաքուն,
Մինչև յարեաւ մեծն Աղկինոս ընորհէր
լուծումն 'ի ժամուն.
« Բաբէ, պատգամքդն վաղեմիք, զոր
հայրս ասէր ծերունին
Վասն ցասմանն Պոսիդոնի, ըզրուն ահա
մեզ առին.
Ցանուս այն վերն, զի մեք բնաւից ուղի
հորդեմք անխրատիր.
Վասն այն, ասէր, 'ի ծով սուզցէ 'ի դարձն
ըզնաւ մեր զընտիր.

Նաև զոստան մեր ծածկեացէ վլուզեալ
լերամբ ահագին,
Զայս նախաձայն հայրն իմ ասէր. և արդ
ողջոյն յանդ ելին:
Եկայք, ո՞ արք, լուարուք ձայնիս. մի լի-
ջիք դուք ռահահորդ
Հիւրոյն 'ի մերն հասեալ յոստան, և մի
ցասմանն բաժանորդ.
Պոսիդոնին երկոտասան ցուլ քաջընտիր
յաղեսցուք.
Գթասցի 'ի մեզ և մի ոստանս դարձցի
լերանցն 'ի դերբուկ »:
Արքն երկուցեալ ածին ըզցուլս, Պոսի-
դոնին մաղթէին,
Աւագ որեարն փէակեցւոց շուրջ ըզբաղ-
նաւ բակ առին:
Զարթեաւ յայնժամ մեծն Ոդիսէս
անկեալն յերկիր հայրենեան,
Ոչ ճանաչէր ըզհայրենիսն այր բազմա-
մեայն բացական.
Նաև Պալլաս 'ի մէջ մրթին ծածկեաց
յայնժամ զայրն աւագ,
Թաքուն պահել 'ի հայրենեաց, ազդել
նմա կարգ 'ի կարգ.
Մինչև նորա 'ի հոմանեաց ըզ վրէժն ա-
ռեալ զամենայն,
Ոչ ծանիցէ ոչ ամուսինն, ոչ բարեկամք,
ոչ խուժան:

1907
32506

Վասն այն նրմա տեսիլքն ողջոյն երևէին նորահրաշք,
Ուղք արահեռք, հեշտ նաւակայք, ժայռք բարձրաբերձք և անտառք։
Եկաց կանգուն անդ 'ի զընին բնակասը նունդ հայրենեաց,
Ցողեաց արտօսր, ըզձեռն ածեալ ծեծէր ըզթամբ զաղդերաց.
Յոգւոց եհան. «Եղուկ եմ ես, իսկ յոյց երկիրն հասեալ կամ.
Արդեօք մարդիկն իցեն վայրագք, արդեօք ժըպիրհք, անըզգամ.
Եթէ արդեօք արք վանաւորք, և միտքն իցեն երկիւղած,
Նա՞ զի ես ո՞ր առեալ տարայց զայս լուութիւն բազմագանձ
Ո՞ր և ես ինքն երթայց թափառ յաշխարհ օտար յաշխարհէ.
Բաբէ, մըթերքս անդ առ փէկեանս մնացեալ էին, իցէ թէ.
Եւ ես դիմեալ գնայի առ ոք 'ի յարքայից Քաջազանց,
Որ հիւրընկալ զիս ժողովէր, ուղի հորդէր ինձ 'ի դարձ։
Արդ ո՞ր եդից զայս մեծութիւնս, կամ աստ թողից վայրապար,
Լինել գանձուս անցաւորին յառ և յապուր և յաւար.

Բաբէ, բաբէ. աւագորեարն կղզւոյն այնմիկ փէակեանց
Չէին ուրեմն արք հանճարեղք և ոչ արդարք երկիւղած.
Այն որ յԻթակն իմ անձկացեալ յղել զիս բան կրուեցին,
Եւ արդ յօտար արկեալ յերկիր իւրեանց բանին դրժեցին.
Ո՜հ, 'ի նոցունց ողբընկալըն Արամազդ վրէժ առցէ,
Դէտն աշխարհի, որ զյանցաւորս անպատուհաս չարձակէ.
Բայց ՝ն ընդ Թիւ արկից ըզդանձս. խորեալ իցեն 'ի նաւին՝՝.
Ասաց, ըզպերճ զեռոտանիսն Թուէր, ըզսանսն, և զոսկին.
Ընդ Թիւ էարկ և ըզչքնաղ բարակամանս բեհեզեայց.
Զեգիտ պակաս, այլ ինքն երկրի էր հայրենեաւոյն անձկայրեաց:
Ո՛ռ բազմագոչ ծովուն ափամբ յոգւոց հանէր և քայլէր.
Մատեաւ Պալլաս, գիրգ պատանւոյ առեալ հովուի ըզպատկեր,
Տիպն էր նրման արքայորդւոյ, զուսով կրկին պատմուճան,
Կոշիկ 'ի յոտսըն ձիւնափայլ և 'ի ձեռին էր հաշտեան:

Խնդաց Ոդիւս տեսեալ ըզնա, և ընդառաջ կարդաց ձայն.

« Որ զքեզ նախկին տեսի աստէն, խնդա՛, ողջ լեր, բարեկամ.

Գալուստդ ողջամբ. ապրեցո՛ զիս, և ապրեցո՛ ըզգանձն իմ.

Իբր աստուծոյ մաղթեմ ես քեզ և ըզծնդովքըդ փարիմ.

Ասա՛ Ճչգրիտ, զինչ երկիր է. ո՞յք են բնակիչք. զինչ խուժան.

Արդեօք կողմ է բարեխառն օդոց ընչող քաղցրութեան.

Կամ թէ ամին է ծովահայեաց սա արգաւանդ ցամաքի »։

Լուաւ խաժակրն Ալթենաս և Ճչգրտէր մի առ մի։

« Մոլեա՛, ո՛վ հիւր, կամ թէ 'ի տար եկեալ ես դու յաշխարհէ,

Որ զայս երկրէս ինձ հարցանես, զոր ողջ աշխարհ ճանաչէ.

Գիտեն ըզսա բնակիչք այգուն թեւակոխեալքն 'ի յարփին,

Գիտեն ըզսա պատսպարեալքն ընդ մուտս արփւոյն խաւարին.

Թէպէտ երկիր սա առապար ձիավարժից անպիտան,

Այլ չէ բնաւին անբերնաւոր, ձգեալ յանձուկ 'ի սահման.

Ունի գինի, ցորեան առատ, անձրև անդուլ, ցօղ քաղցրիկ,
Արօտ այծեաց և անդէոց, բիւրաբեղուն և մայրիք.
Են և ալբիւրք անհատահոսք. մինչ զի անուանն Իթակայ
Հասեալ է հիւր և յԵղիոն, զոր տար ասեն յԵլլադայ ,,։
Ի լուր բանիցն Ամֆենասայ խայտայր Ոդիս մեծասքէս,
Զի զհայրենի զերկրին լսէր ըզդովուլթեանցն հանդէս.
Այլ բան կրկնեաց ձախողակի ՀՀմարտուլթեան 'ի մասին.
Սուտ կրցկրցեաց. ցանգ խորագէտ գամն որոճայր 'ի սրտին.
Պատմուլթիւն մի ողջ քրմազարդ հիւսեալ անդէն Պալլասայ,
" Եւ ես, ասէ, լեալ 'ի Կրետէ լուր առեալ եմ զԻթակայ,
Յայն լայնատարը ես 'ի ծովէն եկի ասէն ընդ գանձիս,
Ըզկէսնորա թողեալ անդէն ժառանգուլթիւն առ որդիս.
Փախեայ ապանեալ զԱրսիլոքոս զԻդոմենեայ քաջ զաւակ,
Որ 'ի Կրետէ արագ ոտիւք տանէր նա ցանգ մրցանակ.

Քանզի հնարէր կողոպտել զիս նա յա-
մենայն աւարաց,
Ոյր վան 'ի մարտ, ընդ ապաժոյժ, ըզ-
ծովս հատի ալէտանջ.
Էր ցասուցեալ, հիմ հօր նորա պատուա-
սիրեալ ոչ կացի
Ես պաշտօնեայ 'ի մարտ Տրովեան. ուր
ես այլոց իշխէի.
Արդ մինչ դառնայր սա 'ի դաշտէն յու-
ղղոջ մրտի 'ի դարան,
Էր մուրթ գիշեր. ընդ գործակցիս հարի
'ի նա սուր հաշտեան.
Եատես ոչ ոք, և ոչ նա ինքն որ անդ զոգին
իւր փչեաց,
Փախեայ արագ ես ապաստան 'ի նաւ
քաջաց Փիւնիկեանց.
Յողոք անկայ, վարձ ետու մեծ, ասեմ
'ի Պիւզ տանել զիս,
Կամ ուր Եպեանքըն տիրէին 'ի հոյա-
կապն 'ի յԵղիս.
Անտի զնոսա հողմն ուժգնակի առ և վա-
րեաց յակամայս,
Ազքն անխարդախք զայս վայր կալան ան-
դուստ Թափառք տարագնաց.
Էր խոր գիշեր. հաղիւ քաշտեօք մրտաք
նաւաց յայս դադար,
Եւ ոչ ընթրիք մեզ յուշ եկին, թէպէտ
նքթեալք չարաչար.

Այլ հապճեպով մեք խառն 'ի խուռն
էլեալք արտաքս 'ի նաւէն
Ընկողմնեցաք. ես խոնջ էի զիս քուն ա-
նոյշ առ անդէն.
Ոչքա զիմ գանձն հանեալ ցամաքն եդին
ուր ես ննջէի,
Եւ 'ի Սիդոն բազմաժողով ինքեանք ան-
կան 'ի յուղի.
Ես ամայի թողայ ասուէն հարեալ 'ի սիրտ
կարեվէր ».
Լուաւ խաժակն և ժպտեցաւ, մատեաւ
առ նա և աջէր։
Փոփոխեցաւ նա նոյնհետայն առ ըզկը-
նոջ ըզտիպար,
Զքնաղ և պերճ, և որ 'ի գործս հրա-
շակերտեալս է ճարտար.
« Անշուշտ, ասէր, յոյժ հնարիմաց իցէ
ոք այր խաբուսիկ,
Այր որ 'ի դաւս քեզ յաղթեսցէ, թէ-
պէտ ինքնին իցեն դիք.
Հէգ, խորագէտ, անյաղթ 'ի նենգ, ոչ
ակն ածես և յերկրէդ,
Քեզ դաւք, խաբանք, և հիւսք լեզուին
քեզ քաղցրացան յօրոցէդ։
Այլ շատ է արդ. 'ի հայթայթանս մեք
երկոքեանս եմք ներհուն,
Դու վեհ շրթամբք և խորհրդով մահկա-
նացուաց 'ի դասուն,

Ես 'ի յանմահս եմ աննըման հնարից 'ի դամս, 'ի հանճար.

Այլ դու զՊալլասըն զԱթենաս վեհ զոլրիորդն ոչ ծանեար.

Զիս՝ որ յաղէտս փրկեմ ըզքեզ կացեալ քեզ միշտ հովանի,

Զիս՝ որ ըզքեզ հեշտ բաղձալի փէակեցուցն արարի.

Եկի և արդ սադրել խորհուրդ, գանձուդ լինել պահապան,

Զոր լիաբաշխ քեզ ձօնեցին իմ խորհրդովս աստուածեան.

Եւ արդ ասեմ. քեզ 'ի տան քում օր վերտագին հասանէ.

Տար դու անմռունչ. այլ ըզգալուստդ ոչ այր ոչ կին գիտասցէ.

Զանխուլ կացցես յամենեցունց. և ըռելեայն դու ցաւեա,

Մշտաչարչար անձնատուչոր պարսից բանից համբերեա՝՝,

Կրկնեաց Ոդիս. «Զքեզ, դիցանոյշ ընդառաջեալ մահացուի,

Եւ ոչ ներհուն ոք ծանիցէ. զի յար պատկերդ փոփոխի.

Զայս քաջ ծանեայ 'ի մարտ Տրովեանց, ուր հովանի ինձ էիր,

Մինչև զոսատանն ըզՊրիամուն մեք հարթեցաք ընդ երկիր.

Ծովայածեալք յուղղոջ աստուած ըզ-
Յոյնս կացոյց ցիր և ցան,
Եւ ապա ես վեհ զօրիորդդ այլ ոչ տեսի
միանգամ.
Ոչ և 'ի նաւս երևեցար դիւր մի առնել
իմ վշտին,
Ես յիս տանջեալ թափառէի, մինչև աս-
տուածք փրկեցին։
Յանդորը ելի մինչև քո ինձ 'ի Սքեր
տուեալ քաջալերը,
Մինչև յոստանն Ճոխ Փէակեանց քո զիս
մուծեալ անվեհեր.
Արդ 'ի սէր հօրդ ես յողոք կամ. ասա
ինձ յայտ յանդիման.
(Զի ոչ կարծեմ ինձ արդ կոխել զիմ
անձկացեալն Իթակայն.
Ես դեռ անշուշտ յօտար աշխարհ թա-
փառական դեգերիմ,
Եւ դու ընդ իս խաղաս բանիւք զստուեր
ածեալ Ճշմարտին).
Ասա Ճշգրիտ. հասեալ կամ ես յիմ
անձկացեալ հայրենիս ».
Զայն ետ Պալլաս. « Յանդ 'ի նոյն միտս
անփոփոխ կաս, ոմ Ոդիս.
Ուստի և ինձ անհրնար է զքեզ լքանել
'ի վշտին,
Զի այր ես դու Ճարտարասան, այր հնար-
իմաց և ուշիմ.

Քանզի այլ այր իբրև ըզքեզ թափառա-
կան 'ի դարձի,
Բա՛ փոյթ անձկայր ըզկին, զորդիս իւր
տեսանել 'ի յարկի.
Դու տակաւին անհետապօտ՝ փոյթ չա-
րարեր ինչ երբէք,
Ոչ նախ փորձեալ փորձ զամուսնոյդ, որ
կայ 'ի տանդ յուսաբեկ.
Նորա 'ի սուգ տիւք և գիշերք մաշին 'ի
դառն արտասուաց,
Բայց ես անշուշտ էի զդարձէդ, թէպէտ
և զուրկ յընկերաց.
Այլ հօրեղբօրս Պոսիդոնի ակն ածէի ես
վեհին.
Խեթաց ընդ քեզ՝ զի դու զսիրուն կու-
րացուցեր զիւր որդին.
Եւ արդ ա՛ղէ, քեզ 'ի հաւատ ըզկայս
ցուցից զԻթակայ.
Ո՞չ ահա սա է նաւաքաշն ծերոյն ծո-
վուն Փորկինեայ.
Ահա և քեզ 'ի ծայր նորուն աճունա-
ճիւղ ձիթենին.
Մօտ կայ նրմա հովանաւորն և քարանձաւ
ինկելին.
Անձաւ ձօնեալ յաւերժահարսանց, որ
յորջորջին Նայասեան.
Ո՞չ ճանաչես զանձաւդ անդոյր զկամա-
րաձևն աննրման.

Ո՞չ դու տայիր յաւերժհարսանցդ անդ
հարիւրեզն ըզնուէր.
Եւ ո՞չ դա լեառն է Ներիտոն անտա-
ռախիտ մայրաբեր »։
Գ.ին ինչ ասաց. և զբալաձիգ մէգ փա-
րատեաց դիցուհին.
Երևեցաւ ողջոյն երկիրն, և կայր Ոդիւս
'ի զընին.
Խայտաց յոգին, և զկենսատու ըզհող
երկրին համբուրէր,
Անդէն յաղօթս յաւերժհարսանց ամ-
բարձ ըզձեռն իւր 'ի վեր.
« Պա՜ղք Նայասեանց յաւերժհարսանց,
կոյսք վեհազինք արփենի,
Կրկին ձեզ յայց ինձ ելանել ես ակն
երբէք չունէի.
Արդ 'ի խայրեաց սրախս ձայնեմ, ո՛ղջ լե-
ռուք, տեարք, խնդացէք.
Ես ձեզ ապա տաց և ձօնիս՝ որպէս յա-
ռաջ զիս տեսէք.
Թէ վեհ Պալլասն աւարածուն տացէ ինձ
կեանս յաշխարհի,
Լցցէ զարգուն բարօրութեամբք և զնա-
զելին զիմ որդի »։
Կարձեաց Պալլաս, « Քաջալերեա՛ց. դու
զայդոցիկ մի՛ հոգար.
Ե՛կ, մեք զարդիս դիցուք զգանձն խոր ան-
ձաւիս 'ի դադար.

Ասա կան յանքոյթ, և մեք զերացդ խոր-
հուրդ կալցուք առանձին ».

Ասաց, եմուտ 'ի քարանձաւն հովանաւոր
դիցուհին.

Մտեալ խնդրէր դարան խրթին. ան-
դուստ Ոդիս բեռնաբարձ

Ածէր ըզպէրճ հանդերձանին, զոսկին,
զարծին, զիւրըն դանձ.

Ողջ զեռեղեալ, եդ վէմ Պալլաս դրան
կափարիչ անձաւին,

Եկին ապա, նստան նոքա վեհ ձիթենւոյն
առ արմին.

Խորհուրդ նիւթեն մահ օրահաս ածել
գոռոզն հոմանեաց,

Եւ առաջին 'ի խորհրդեան ձայն եռ խաժ-
ակն Ամֆենաս։

« Ուշիմդ Ոդիս, խորհեաց զիարդ լիցիս
դոցա գամագիտ.

Երբորդ ահա ամ հոլովի՝ ժանոք տիրա-
ցեալ են յարկիդ։

Վեհ ամուսնոյդ են տարփածուք օժիտ
տուեալ մեծագանձ,

Նա ցանգ 'ի տան արտասուալից հեծէ
անձկայ 'ի քոյն դարձ.

Նա յոյս ընդ խաբ տայ հոմանեաց, կրէ
խոստումն ըզլեզուին,

Միոյ միոյ հրեշտակ յղէ, այլ ինչ ունի
'ի սրտին »։

Պոչեաց Ոդիւս. « Բաբէ և ինձ Ագամեմնեայն բօթ մահուն
Գուժայր 'ի տանս, թէ դիցուհիդ էր ուսուցեալ ինձ ողջոյն.
Դու ինձ աղէ ուսո՛ խորհուրդ, զիա՞րդ եղէց վերիժառու.
Դու հովանի տացես ինձ, տէր, սիրտ անվեհեր և հուժկու.
Որպէս երբեմն 'ի քանդել մեր ըզՏրոյիոյ սերմ բրգունս,
Եւ սատ նոյնպէս կորով հեղցես ինձ, Ամենասա, 'ի բազուկս.
Թէ հանդիպիմ, վեհ դիցանոյշ, ես մեծապէս այդ շնորհի,
Թէպէտ ընդդէմ երեքարիւր քաջաց հարայց 'ի դիմի »։
« Ես քեզ անքուն, կրկնեաց Պալլաս, կամ հովանի հանապազ.
Ընդ քեզ անդուլ նիզակակից եղէց 'ի յայդ 'ի մրցանս.
Սեղեխք շամբուշք այդ որկորեայք որ զինչքս քո ըսպառեն,
Թացցեն զատակդ 'ի յուղեղաց և յապաժոյժ արենէն.
Բայց ես զարդիս այլափոխեալ եղից ըզքեզ 'ի ծածուկ,
Մորթ խրուսացեալ յառոյդ անդամս տամ ընդ մորթոյն քոյ փափուկ

Խարտեաշ ըզվարսս առեալ գլխոյդ,
ձորձ քեզ արկից բրդգըզեալ,
Զի ոչք 'ի քեզ ակնարկեսցեն՝ դարձցին
'ի քէն քըստմընեալ.
Յաչս անգեղեայս և քոսոտեալս դարձ-
ցին աչք քո գեղեցիկ,
Եւ պժգասցին կին քո 'ւորդիդ և ամե-
նայն հոմանիք։
Բայց դու երթ նախ առ խոզարածդ
հաւատարիմ 'ի դաշտին.
Նա զքեզ սիրէ, սիրէ զորդիդ, և զՊե-
նելոպըն զուշիմ.
Գոցես ըզնա մերձ առ խոզեանն եղեալ
'ի դաշտ 'ի Ճարակ
Անդ մօտ 'ի վէմըն Ագռաւուն 'ւ Արե-
թուսայն յաղբերակ.
Ուտեն զանոյշ խրեանց զկաղին, ըզջուրն
ըմպեն սեաթոյր,
Յորմէ խոզեանն Ճարպով ծաղկեալ դառ-
նան լինին գէր և յոյր.
Անդ կայցես դու և 'ի նմանէն հարցա-
քննեա զամենայն.
Մինչ ես երթամ 'ի Սպարտիա, ուր ջըք-
նաղացն է կայան.
Անդուստ առ քեզ կոչեմ, Ոդիս, ըզնա-
զելիդ Տելեմաք,
Որ արդ 'ի մեծ Լակեդեմոն Մենելա-
ւեայն է 'ի յարկ.

Անդ նա չոքաւ լըսել ըզքէն, թէ արդեօք կեա՞ն, և ո՞ւր կա՞ս »։

Արկնեաց Ոդիւս. « Եւ դու գիտակդ հիմ չասացեր նըմա զայս.

Մինթէ և նա՞ ցաւովք զերթ հայրն ըզծովս հատցէ զանբեղուն,

Եւ անդ օտարք ըզտան նորա ըսպառեսցեն լիութիւն ».

« Մի՛ վասն որդւոյդ, կարձեաց Պալլաս, մի՛ լեցիս դու մըտաանջ.

Եա՛ ինքն ըզնա անդ յըղեցի ստանալ անձին մեծ պարծանս.

Այն զի անվիշտ վարէ նա կեանս անդ յարքունիս Ադրիտեայ

Լի և զեղուն վայելչացեալ, և պակաս ինչ չինք նըմա։

Այո՛ որեար նստի 'ի նաւ 'ի մահ վարել զքաջորդիդ,

Դարանամուտ դարձին նորա. այլ ոչ լեցին դամադիտ.

Դիժոխորովայն այդ հոմանիք կանուխ մտցեն ընդ հողով ».

Ասաց Պալլաս. հպեաց յՈդիս վեհ դիւցական իւր ցըպով։

Երիթացոյց ըզգիրդն ըզմորթ նորա զառոյգ ըզմարմնոյն.

Եւ ձեռն ածեալ խարտեաշ ըզվարսս ջնջեաց նորա ըզգլխոյն.

Արկ ողջ յիրանն մորթ ըզծերոյ խը-
ռուեալն ամՕք ծայրալիր,
Ի բիժ մրթար անգեղացոյց զաչքս նորա
լուսալիր.
Իակ վերարկու արկ ըզնովաւ ձորձ հրնո-
տի գրրգրլեակ,
Բաձկոն կեղտեալ և բրդգրզեալ 'ի ծուխ
'ի մուխ թրխորակ.
Շուրջ արկ նրմա մեծ լաչկամաչկ զա-
ղրագոտին զեղջերուի,
Ցուպ ետ նրմա, փոկ ոլորեալ 'ի մեցամէս
մաղախի:
Մեկնին ապա այր յընկերէ քաջիկ խոր-
հեալ խորհուրդ զայս,
Եւ 'ի Սպարտա առ Տելեմաք ուղղոյ լի-
նէր Աթենաս:

ՈԳԻՍԱԿԸՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԴ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Հասանէ Ոդիւս 'ի տուն Եւմէոսի՝ իւրոյ հաւատարիմ ծառային և արդոյ խոզապանին. հիւրընկալի 'ի նմանէ յանծանօթս։ Զրուցատրութիւնք նոցա ընդ միմեանս։ Ոդիւս կեղծէ զանձնէն լինել 'ի Կրետեայ, և պատմէ զհիւսածոյ անցս։ Զոհ Եւմէոսի և ընթրիք։ Ի մրրկայոյզ և 'ի ցուրտ գիշերին յայնմիկ՝ և այլ ևս հիւսածոյս Ճառ արկեալ Ոդիւս, առնու իւր վերարկու 'ի ծածկոյթ 'ի ծառայէն իւրմէ. և գնայ սա ընկողմանիլ ընդ քարանձաւաւ միով 'ի պահկերութիւն խոզերամակին իւրոյ։

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԴ.

Իսկ Ոդիսէս թողեալ զափունս եմուտ
ընդ ուղ առապար,
Գընայր ընդ վայրս Թանձրամայրիս եղեալ
ընդ դարս և ընդ սար.
Ուր և նրմա եցոյց Պալլաս զայրըն զաւագ
խոզարած
Զհաւատարիմըն Ոդիսեայ քան զամենայն
ըզծառայս.
Եգիտ ըզնա նստեալ առ դուրս բարձր և
արձակ իւր գաւթին,
Գաւիթ անդորը և գեղաշէն էր յերևան
'ի վայրին.

Զայն նա շինեաց վասն խոզից մինչ տա-
բադէմ էր ալքայ,
Ոչինչ խնդրեաց ոչ տիկնոջէն ոչ 'ի ծե-
րոյն Լայերտեայ.
Եհատ քարինս, կերտեաց ինքնին, և 'ի
փրշոց զայն ցանգեաց,
Շուրջանակի խիտ խիտ վարսեաց ցիցըս
գաւթին 'ի կաղնեաց.
Եդ խոզաբոյնս երկոտասան միմեանց խըշ-
տիս առընթեր,
Եւ 'ի մէն մի մատակ խոզեան յիսուն
թուով պառակէր.
Իսկ արտաքոյ արու խոզեանն գեանա-
խըշտեայք ննջէին
Յոյժ նուազունք, զի օր 'ի յօր զայն հո-
մանիք ծախէին.
Խոզ պարարակ միշտ խոզապանն ըզքաջ-
ընտիրն յերամոյն
Յըղէր նոցա. մնացին միայն երեքարիւր
և յիսուն.
Գիշերապահք են նոցա չորք գազանա-
տիպք 'ի գամփռանց,
Զորս սընուցեալ քաջ բուծանէր ինքնին
աւագ խոզարած:
Նա անդ կոշիկ հարթէր ոտից կըտրեալ
զեզին մորթ գունեան.
Նորա երեք որեանն ատտ անդ տաւաղէին
ըզխոզեանն.

Իսկ չորրորդին 'ի ձեռս տուեալ յայն-
ժամ խոշ մի պարարակ,
Յղէր յոստանն խեռ հոմանեաց յաղել
իւրեանց պատրուճակ։
Յանկարծ զՈդիս տեսեալ գամփռանց
և մեծահաչք վազէին.
Ուշիմացեալ նստաւ Ոդիս ըզցուպն ար-
կեալ 'ի գետին.
Էր իսկ անշուշտ յիւր կալուածին կըրել
նրմա մեծ արկած,
Բայց խոզապանն վազեաց 'ի դուրս ըզ-
մորթն արկեալ 'ի ձեռաց.
Սաստ մեծաստաստ կանչեալ գամփռանց՝
յայսկոյս յայնկոյս փարատէր.
Գիլ արկանէր նա խիտ առ խիտ, և առ-
տէր իւր զայս ասէր.
"Վայրիկ մի ևս ով ծերունիդ, գազանքդ
ըզքեզ գոչէին
Ինձ ցաւ բարդել, իբրու որ այլ չունիմ
ես ցաւս 'ի յոգին.
Ես ըզսէրն իմ զատուածանման նրա-
տիմ և լամ հանապազ,
Եւ կերակուր այլոց բուծեմ զայս պա-
րարակս խոզայ.
Իսկ նա թափառ յօտար աշխարհս և պա-
րենին կարօտ է.
Եւ ո՞ գիտէ, կեա՞յ տակաւին և ըզյս զար-
փուոյն տեսանէ։

Այլ արի, ծեր, մոցուք 'ի յարկ. առ-
ցես ըզհաց և բաժակ,
Եւ պատմեսցես ուստի՞ ես դու և զինչ
կրեցեր դրժնդակ »։
Այս ասացեալ և յառաջոյ էանց ար-
գոյն խոզարած,
Եմոյծ 'ի յարկ և ոստրս Թաւս առեալ
յերկիր տարածեաց.
Սփռեաց վերայ և զԹաւամազ ըզմորթ
զայծուն վայրենի,
Եւ անկողին եդ 'ի բազմոց Թանձրը և
լայն և հեշտի։
Խնդայր Ոդիս ընդ հիւրասէրն, ասէ,
« Քեզ Զեւս և դից պար
Տացեն ո՞վ հիւր, զո՛ր և խնդրես, որ զիս
այսպէս ընկալար »։
Զայն կրկնեցեր, արդոյդ Եւմէ. « Զէ
ինձ ո՛վ հիւր, չէ արժան
Ե՛ւ քան ըզքեզ հիւրն հիւգադոյն անշուք
Թողուլ յիմոմատան.
Զի ամենայն հիւրք և աղքատք յԱրա-
մազդայ գան առ մեզ,
Եւ հիւրոյն մի Թէպէտ չնչին սիրելի է
մեծապէս.
Այս վիճակ է մեզ ծառայիցս հիքացե-
ցոյս 'ի բախտէն.
Միշտ ԹաքԹաքուրք գործեմք, յորժամ
տեարքս պատանիք մեզ տիրեն.

Աւա՜ղ, զայն տէրն իմ խնամակալ աստ-
ուածք 'ի մէնջ կապտեցին,
Սէրն սիրով նա զիս սիրէր նաև ընոյր
ըզձէռն իմ.
Զոր օրինակ տէր բարեմոյն խնամէ իւ-
րում ծառայի,
Տուն տայ նըմա և կարասի, տայ և կին
մի փարելի.
Զորոց և քիրան առ տէրըն իւր ինքնին
օրհնէ մեծն Աստուած,
Որպէս և զիմն բարգաւաճ օրհնեաց և
եդ յայս կալուած.
Անշուշտ նա ինձ էր մեծապէս, թէ աստ
'ի տան ծերանայր.
Աւա՜ղ, կորեաւ. ո՜վ, Հեղինեայ զարմն
ազգովին կորանայր.
Զի շատ քաջաց կրթոյց ըզծունգս, որ-
պէս և տէրն իմ'ի շուք
Ագամեմնեայ էլ 'ի տանէն Տրովեանց
մարտին 'ի շըշուկ »:
Ասաց, անդէն գօտեաւն ընդ մէջ զիւրըն
սնդեաց վըտաւակ,
Յարեաւ ջոքաւ 'ի խոզաբոյնան ուր էր
խոզաց երամակ.
Մատաղս երկուս առ փողոտեաց, խան-
ձեաց յօշեաց և շամփրեաց.
Քաջ խորովեալ և ջերաջերմ այնպէս շամ-
փրոքն ած յառաջ.

Եդ ըզխորտիկն Ոդիսեայ, ցանեաց ա-
լիւր ըսպիտակ,
Խառնեաց 'ի տաշտն բաղեղան զանոյշ
գինւոյն ըզբաժակ.
Նստաւ հանդէպ, ասէր. « Ո՞վ հիւր,
կե՛ր զծառայից զայս խորտիկ,
Զայս խոչքորակս, զի զպարարակ խոզ-
եանն ուտեն հոմանիք :
Վա՜շ, որկորեայց չի՛ք գութ 'ի սիրտ և
ոչ երկիւղ աստուածեան.
Բայց դիք արդարք ատեան զչարիս, սիրեն
զբարիս ըզմարդկան :
Նա՛ թշնամիք յերկիր օտար կամ՞ք Դիայ
ասպատակք
Լցեալք ըզնաւս և դարձ առնեն 'ի տունս
իւրեանց և 'ի յարկ,
Նոքա վրիժուն զասպատակին ունին զեր-
կիւղ 'ի յոգին,
Իսկ այդ սեղեիք յանձնապատանք ան-
շուշտ ինչ մի լուր առին,
Լուր զօրհասի ըզտեառն իմոյ, կամ թէ
յայտնեաց ինքն Աստուած,
Որք խառն այնպէս տարփան 'ի կիսն, և
առ իւրեանցն չառնեն դարձ.
Ա՜յլ յանդորրու որկորաժէտքդ ըզդոյս
ծախեն անխընայ.
Զօր ամենայն մի սպանդ ։ երկու շատ
որկորոյն չէ դոցա.

Բաժակ քամեն նոքա յանչափս, զի էր
իմ տեառն ըստացուած
Բազմահամբար, որչափ քրիստանք չունին
յարանց դիւցազանց
Ոչ 'ի ցամաքն և ոչ յԹիակ, զոր արդ
ընդ Թիւ արկից քեզ.
Անդ գոն անդեայք երկոտասանք, նոյն-
չափ օդեաց և հանդէս.
Այնչափ խոզաց են և արօտք, նոյնչափ
դադարք լայնք այծեաց,
Եւ արածին յօտարական և բնակաւոր 'ի
հովուաց.
Եւ աստ դարձեալ փարախք այծեաց են
լայնատարը մետասան,
Արօտականք 'ի ծագ կղզւոյս, և կան արք
քաջք պահապան.
Մէն մի նոքա տան հոմանեաց յաւուրն
այծ մի պատրուճակ,
Ըզքաջընտիրն 'ի հօրանաց յղէն այծուն
պարարակ:
Իսկ ես աստէն վերակացու և զայս խո-
զեան պահպանեմ,
Նոցա խոզից յերամակէն զընտիր ընտիրն
առաքեմ ":
Մինչ նա պատմէր, Ոդիւս անոյշ ուտէր,
ըմպէր անդ լըռիկ,
Եւ հոմանեաց 'ի խոր սրտին աղէտ նիւ-
Թէր և չարիք.

Իբրև ընթրեալ ըզքաղցն եհար, առ Եւ-
մէոս զըմպանակ
Որով ըմպէր, և լից գինեաւ, խնդաց
Ոդիս առ բաժակ։
Զայն ետ նըմա. « Ո՞ բարեկամ, ըզքեզ
գընոց ո՞ գընեաց,
Անշուշտ աւագ այր ոք փարթամ որպէս
բերան քո պատմեաց.
Ասես մատնեալ զայրն 'ի կորուստ Ագա-
մեմնեայ 'ի պատիւ.
Բայց աղէ դու հարց ինձ, Եւմէ, թերևս
գիտեմ ըստուգիւ.
Գիտէ Հշգրիտ զայն Արամազդ և անմա-
հից գիտէ պար,
Թէ լուր տամ ես ականատես ընդ վայրս
բազում լեալ թափառ »։
« Այր ոք թափառ, կրկնեաց Եւմէս,
Թ' եկեալ լուր տայ զՈդիսին,
Ի լուրս նորա ոչ հաւատայ ոչ ամուսինն
ոչ որդին.
Պանդուխտք անյարկք կարօտք են տան.
չասեն իրաւ այլ սրտեն.
Եւ ասա յԻթակ գան առ տիկինս և քը-
մաղարդ բան պատմեն.
Նա հիւրընկալ հարցեալ զառնէն միշտ
յարտասուս լուծանի.
Այս կիրք կընոջն, որոյ փեսայն կորեաւ
'ի տար աշխարհի.

Արդ և դու ինքն, ով ծերունիդ, մեզ
վեպս բանից հիւսեսցես
Թէ ոք բաձկոն և վերարկու ծածկոյթ
անձին տացէ քեզ.
Այլ տեառն իմոյ, արդ յարագ շանց և
'ի թռչնոց երամոյն
Քանցեալ ելցէ մորթն յոսկերաց, հոգին
ելեալ 'ի մարմնոյն.
Կամ թէ 'ի ծով կուր և ճարակ նա 'ի
ձրկանց խառնելոց,
Ոսկերքն անկեալք կան 'ի յատակունս ընդ
կոյտ խառնեալ աւազոց:
Աւաղ, կորեաւ. և սիրելեացն և ինձ
յաւէտ ցաւ առթեաց,
Ո՞ր տէր գլուխց հեզ այնպիսի ես յընդ-
հանուրս աշխարհաց.
Եւ ոչ 'ի տուն հօրն իմ և մոր վայր իմ
ննդեան յորորան
Գնացեալ անձկով նոցա 'ի տես հանգեայց
յերկիրս հայրենեան.
Այնչափ անձկութիւն ես տասանամ տար-
աշխարհիկն Ոդիսեայ,
Եւ պատկառեմ այսպէս կոչել թէպէտ
և է 'ի բացեայ.
Զի սերս սրտիս սիրէր նա զիս և խնամ
ածէր գրգաբար,
Այլ զբացականն սիրեմ կոչել արգոյ
երէց իմ եղբայր »:

“Ինչուշտ ուրեմն, Ոդիս կրկնեաց, ոչ հաւատաս, բարեկամ.

Եւ զՈդիւսէս անդարձ ասես. բայց ես անսուտ ասեմ բան.

Երդնում ահա, դարձցի Ոդիս և տացես ինձ աւետչեայ.

Առից ես զայն վաղվաղակի՝ երբ 'ի տուն իւր գայցէ նա.

Բաձկոն, խրլայ, ամրկ դու զինև ձորձ գեղեցիկ իմ անձին,

Գձձեալ եմ յոյժ. այլ մինչ ոչ գայ, երբէք ես զայն չընդունիմ.

Ինձ Թշնամի և ատելի դրանց դրժոխոց է հանգոյն,

Այր՝ որ անինչ հարկեալ յաղքից վաճառական է սրտոյն.

Ինձ փառք վեհին վրկայ լեցին Արամազդայ վանատրի,

Սեղանն հիւրոց, վրկայ և յարկ քաջն Ոդիւսեայ, յոր եկի,

Բանքն իմ ողջոյն լրլուսին առցեն. գայցէ Ոդիւս 'ի յայս ամ.

Ի յեղս ամսոյս, 'ի մուտս նորոյն դարձցի 'ի տուն ողջանդամ.

Առցէ ըզվրէժ, որ զամուսինն և կամ զորդին իւր դրձձեաց”:

Լուար դու զայս, արդոյդ Եւմէ, եռուր յայնժամ անդրադարձ.

« Լ՛ուր, ծերունիդ, և հանդարտ լեր. ոչ
ես տաց քեզ զաւետչեայդ,
Եւ ոչ 'ի տուն իւր հայրենի դարձցի եր-
բէք Ոդիւսդ այդ.
Ա՛րբ դու ուրախ. մի այլ յիշեր. բան
փոխեսցուք 'ի բանէ.
Տապիմ ցաւով ցորչափ ոք ինձ զարգոյն
զիմ տէրն յուշ ածէ.
Այլ օ՞ն 'ի բաց Թողեալ զերդումն, ո՛վ
Թէ Ոդիւս դայր արագ,
Ում ես անձկամ և Պենեղոպն և դիւցա-
նմանն Տելեմաք.
Անձկով անձկայ և ծեր Լայերտն. բայց
ես զարդիս լամ զորդին
Ըզ Տելեմաք, զոր իբր ուղէշ անուցին աս-
տուածք 'ի դրախտին.
Ես ասէի ոչինչ խոնարհ լինել որդւոյն
քան ըզհայր,
Զի հրաշացեալ էր 'ի հանճար, նոյն և
նորուն 'ի տիպար.
Բայց ոմն անմահ և կամ մարդ ոք շրջեաց
ըզնա 'ի մրտաց,
Քանզի զհօրէն համբաւ առնուլ 'ի մեծըն
Պիւղ եւ գընաց.
Արդ 'ի դարձին գոռ հոմանիք դարանա-
մուտք են նրմա,
Զի ձեռ բնաջինջ բարձցի յԻթակ դիւ-
ցանրմանն Արկեսեայ 56.

թողցուք և զայս. նա կամ ընկճի կամ
'ի հաղբից զերծանի,
Այլ աչ հրզօրն Արամազդայ լեցի նրմա
հովանի.
Բայց աղէ, ծեր, ըզքոյ աղէտս ճառեա՛
ինձ դու կարդ 'ի կարդ.
Ասա՛ ո՞ ես, և ուստի՞ ես, ո՞ւր քո ծընողք,
ո՞ւր քաղաք
Յո՞ր նաւ մըտեր, զի՞նդ ըզքեզ ածին
նաւազք յայս երկիր,
Զի՞նչ նաւաստիք էին նոքա. զի ոչ հետի
աստ եկիր »:
Բան խորագէտն Ոդիս հիւսեաց. « Քեզ
ես ճշգրիտ պատմեցից,
Աստ 'ի յարկիդ զբօսեալք յերկար 'ի կե-
րակուրս, յըմպելիս.
Սակայն այր այր իւրաքանչիւր պարա-
պեսցի 'ի գործել,
Զի տարի մի ոչ բաւեսցէ ողջոյն զաղէտս
իմ պատմել.
Յաղէտս անչափս 'ի դից կամաց ես չար-
չարեալ վշտացայ.
Լո՛ւր արդ զազգն իմ. ծընունդ եմ ես
առն հարըստի 'ի Կրետայ.
Զաւակք բազումք 'ի բուն կնոջէն ծընան
սընան 'ի յարկին:
Այլ զոր գընեաց, նա ծընաւ զիս, զի
հարճնորա կաց մայրն իմ.

Բայց ինձ շուք տայր զոյգ առաջնոցն
հայրն իմ Կասսոր Իղակեան.
Պանծամ նովաւ, զի 'ի Կրետէ պատիւ
ունէր աստուածեան.
Էր երջանիկ բազմահարուստ բերկրեալ
որդւովք քաջաբուն,
Մինչև վատեալ յօրահասէն էջ նա 'ի
ստուերս 'ի մահուն.
Վիճակ արկեալ մանկունք հրզօրք զինչս
հայրենիս բաշխեցին,
Ինձ դուշնաքեայ հանին 'ի բաշխ, և տուն
մի տան 'ի բաժին.
Ածի ինձ կին յարանց ճոխից, զի չէի իսկ
անաւագ,
Նա դիմագրաւ նահատակեալ էի 'ի
մարտս ես արագ.
Անցին ողջոյն. արդ տուայտեալ վշտոք
եմ ես ցաւալից.
Սակայն և քեզ հունձ զորայիցն է ճա-
նաչել 'ի յարդից 57.
Քաջարութիւնս ինձ և նախճիրս ետուն
Արէս և Աթենաս,
Երբ այրընտիր դարանամուտս տայի ընդ-
դէմ Թշնամեաց.
Աշխոյժ ոգւոյս անյուշ էր մահն. ես 'ի
մարտի նահատակ
Փախըստէին Թռուցեալ ըզհետ տէգ վար-
սէի 'ի քամակ.

Ինձ գործք անգոց ոչ քաղցրացաւ, ոչ հոգ անօրէն զաւակաց,
Այլ նաւք քաշտեօք, մարտք, և փրքինք, և սայրասուրք սրլաքաց.
Գործիք դաւինք և որ անշուշտ ածեն այլոց արհաւիրս,
Բայց ինձ սիրունք 'ի մարտ անելոյս, զոր ինձ աստուած եդ յոգիս.
Զի ոմն յայս ինչ և ոմն յայն ինչ թեւա-կոխեալ զուարճանայ.
Այլ դու լուր զիս, և որ ինձ դէպք նախ քան զշրշուկ Տրոյիայ.
Իններեցս ելեալն արանց, նաւաց, կացի ընդդէմ օտարաց.
Հարբստացայ վիճակընկէց և յինքընտիր յաւարաց.
Տունն իմ արագ բարգաւաճեալ առ կրե-տացիս գլուխ մեծ,
Մինչև ըզլուն զայն գուժալից կնքեաց Դիոս շանթընկէց.
Զու գուժարկու, որ և ըզծունգս կրթոյց բազմաց քաջազանց,
Եւ յայնժամ ինձ, 'ւ Իդոմենեայ յանձ-նեն զհանդէս ըզնաւաց.
Ածել ըզնաւսն յԵղլոն ձայն անհրա-ժեշտ կարդացին,
Եւ հրամանին չէր անսասանել հարկապա-հանջ խուժանին.

Ինն ամ կռուեալք 'ի տասներորդն հա-
րեալ զոստան Պրիամեան,
Նաւեմք 'ի տուն. իսկ ըզծովեալքս կա-
ցոյց աստուած ցիրուցան.
Այլ ինձ Դիոս ալէտ նիւթէր. զի էս
միայն ամիս մի
Ընդ կոյս ածեալ հարսինս 'ի տան և ընդ
որդւոց խնդացի.
Դրդիմ ապա գնալ յԵգիպտոս առեալ
կուռ նաւս, քաջ որեան,
Ինն նաւ կահեմ, և ինձ որեար արագ
արագ խմբեցան.
Վեց օր այնպէս կացեալ նոքա և միաբան
առնուն հաց,
Ըսպանդքս շատ յաղեմ ես դից և 'ի
խրախճան ընկերաց.
Յօր եօթներորդ նաւեալք հիւսին 'ի
պարզ 'ի հողմ յաջողակ,
Ընդ ծով կրեսայ ելբրու ընդ գետ 'ի յան-
դորրու ծովէաք,
Նաւքն անվընասք, մեք ողջանդամք, ա-
ռեալք բազմոց 'ի նաւին,
Հողմունք անոյշք, քաջ ղեկավարք ըզնա-
ւատորմն ուղղէին:
Ի յԵգիպտոս 'ի գետաՀոսն հասաք ող-
ջամբ հինգօրեայք.
Եւ անդ 'ի գետին Եգիպտոս 58 ետու
նաւացն ես դադարք.

Հրաման կարդամ իմ որերոյն մնալ առ
նաւս 'ի պահել,
Կիսոցն ելեալ 'ի դիտարանս զաշխարհն
երթալ լրտեսել.
Սոքա սոահակք զԵգիպտացւոց զանդրս
յուռթիս կապտէին,
Անսանձք 'ի թափ նաև զկանայս և ըզ-
մանկտին գերեցին,
Մահուանս գործեն և որերոյն. գուժեաց
ըշշուկն 'ի քաղաք.
Լուան ըզհէնն, յարեան եկին երբ ծա-
գեցաւ երևակ.
Դաշտն 'ի հետեաց ւ այրուձիոյն շողայր
'ի փայլ պըղընձեաց,
Եւ յիմն որեար Ամպրոպայինն թիկնա-
դարձոյց ահ թափեաց.
Ողջ դիր և տար 'ի ցանց անել աշխար-
համած շաղեցան.
Հարան բազումք, կէսք կենդանւոյն 'ի
գործ 'ի խիստ վարեցան:
Ինձ Արամազդ 'ի տագնապիս խորհուրդ
'ի միտս իմ էարկ.
(Աւա՜ղ, ընդէր անդ յԵգիպտոս մահուն
չեղէ նըշաւակ.
Լաւ էր ինձ անդ մատրն լինել նախաւախ-
ճան օրհասին,
Զի տակաւին կոծք և աշխարք ինձ դա-
ղանեալ մընային.)

Որ զինչ և է. ըզսաղաւարտ կուռ 'ի գըլ-
խոյս վայր եդի,
Զասպարն յուսոյս, և 'ի ձեռաց զաշտէն
'ի բաց ձըգեցի.
'Դ առաջ 'ի կառըս արքային փարեալ
ըզծունկս համբուրեմ.
Նա արտասուացս գուլթ ած փրկեաց,
ամբարձ 'ի կառս իւր անդէն.
Ած յարքունիս, թէպէտ բազումք յիս
տէգ հացեան գոռային
Ի մահ անդէն զիս տարածել. զի յոյժ էին
զայրագին.
Նա սանձ դընէր, զի վանատրին Արա-
մազդայ ակն էած,
Այն որ ցասմամբ միշտ վրէժխնդիր է որե-
ցոյն հիւրատեաց.
Անդ յԵգիպտոս էօթն ամ շատ գանձ
կուտեմ յառատ ընծայից,
Ութերորդին 'ի հոլովել այր ոք փիւնիկ
էկն առ իս.
Այր դաւաճան, ցանցորդ չարեաց, բազ-
մաց չարիս էր գործեալ.
Համոզակեր յանկոյց բանիւք 'ի փիւնիկէ
ինձ երթալ.
Անդ էր նորա տուն և կալուած. ամ մի
կացի առ նրմա.
Մինչև ամիսք բոլորեցան, աւուրք անցին
'ի վերայ:

Դարձեալ տարին մեզ հոլովէր, գան եղանակք և տարւոյն,
Նա նաւագնաց 'ի Լիբիա առեալ եդ զիս 'ի նաւուն.
Սուտ կրցկրցեաց, իբրու առնուլ զիս բեռնաբարձ իւր սատար.
Եւ խորհէր չարն առնուլ գին մեծ հանեալ զիս անդ 'ի վաճառ.
Գնացի զհետ հարկաւորեալ թէպէտ սատանիկ խիթայի.
Անդէն հիւսին 'ի հողմ ուժգին նաւքն սուրայր 'ի ծովն.
Թևակոխեալ մեք ըզկրեռեաւ, ժամ հաս նոցա օրհասին.
Թողեալ զկրեռէ չէր այլ ցամաք, ծով երևէր և երկին.
Ի նաւն յայնժամ ամբ կապուտակ կախեաց Դիոս ամպահար,
Մուրճն պատեաց և 'ի նեղքոյ ծով ամենին թրխանայր.
Անդ խիտ առ խիտ որոտս հանեալ յանկարծ շանթեաց 'ի նաւին,
Սարսեալ գլեցաւ ողջ լաստափայտն 'ի շանթ հրացան Դիոսին.
Ծրծրմբահոտ վարակեցաւ. ալքն 'ի նաւէն հոսեցան,
Իբրև սակռունք շուրջ ըզլաստիւն ալէկոծեալք 'ի ծփման.

Օրհաս անզերծ գուժեաց աստուած.
այլ ինձ տագնապն 'ի վերջին
Զլաստափայտին ըզկայմն երկայն եւ ինձ
կրռուան 'ի ձեռին.
Գրկեալ ըզնա, ինն օր ծփեալ 'ի հողմակոծ 'ի յալեաց,
Ի տաճարորդն զիս կոհակ մեծ վարեաց
յերկիր Թեսպրոտեանց.
Էր մութ գիշեր. արքայն Փեդոն առ զիս
դիւցազն հիւրասէր.
Քանզի որդին իւր Նազելին դիպաւ ինձ
յայն ծովեզեր.
Ըզ ցրտահար վաստակաբեկս աջ կարկառեալ 'ի վեր առ,
Տարաւ ընդ իւր մինչև 'ի հօրն ած յարքունեանն 'ի տաճար.
Բաճկոն լոգիկ արկ ձորձ զինև. անդ զՈդիսեայ լուայ ես.
Պատմէր զիարդ զդարձեալն 'ի տուն հիւրընկալեաց մեծապէս.
Ցոյց ինձ և զինչսն Ոդիւսեայ պրղինձ, ոսկի և երկաթ,
Զոր նա կուտեաց. որ 'ի Թոշակ յազգ տաճարորդ էր իսկ շատ.
Այնչափ ինչ գանձք կային նորա յաւանդ 'ի տան արքային,
Այլ զՈդիսէս ասէր գնացեալ 'ի Դոդոնեայն 'ի բագին,

Առնուլ պատգամ յԱրամազդայ յամ-
բարձուցէն 'ի կաղնի 59,
Տարագիմեալն յԻթակ 'ի տուն զանխուլ
մրոցէ թէ յայանի։
Նաև երդուաւ, նուէր հանեալ, թէ
կազմ է նաւն և որեան,
Որ ուղեկիցք լեալ Ոդիւսեայ յերկիր
տարցին հայրենեան.
Այլ զիս Փեդոն նախ արձակեաց, զի
դէպք եռուն գեղեցիկ,
Նաև Թէսպրոտեանց ունէր գընալ ցորե-
նաւէտն 'ի Դուղիք.
Նա զիս յանքոյթս յաւանդ յըղէր Ակա-
տոսի արքային.
Որեան զինէն խորհուրդ նիւթէր զի տան-
ջեցայց տակաւին։
Այն ինչ մեկնեալք 'ի ցամաքէն, գըտայ
գերի վըտարակ.
Մերկեն ըզնլայս, լոդիկ, ըզձորձ. արկին
զինև գրգըլեակ.
Արկին բաՀկոն, ձորձ բրդգղեալ զոր
տեսանես դու ինքնին.
Երիկացեալք, 'ի բերկրալեցն հասին յԻ-
թակ 'ի կղզին.
Լար քաջոլոր առեալ 'ի նաւ զիս պրկե-
ցին պնդապէս,
Ինքեանք ելեալք յափրն կղզւոյն ընթրիս
առնուն փութապէս.

Աստուածք ինքնին լուծին զկապանս. Եւ
ձորձ արկեալ ըզգլխով,
Ընդ ղեկն յոկեալ սահեալ 'ի վայր Եւ
ըզլանջն իմ 'ի ծով.
Ի լիւղ ձեռամբք թիավարեալ փոյթ 'ի
նոցունց հեռացայ,
Եկն 'ի թաւս բազմածաղիկ 'ի վայր կաղ-
նուտ, անդ անկայ.
Աբքն 'ի խնդիր իմ հեծէին և յուսահատք
'ի գտանել
Մլոին 'ի նաւ. և զիս աստուածք անդ
ծածկեցին անարգել.
Առին ածին մարդոյ ուրուք ուշմագունի
'ի դաղար,
Կնքեալ ուրեմն է տակաւին կեալ տե-
սանել ինձ զաշխարհ »։
Զայն կարդացեր առ նա, Եւմէ. «Աւա՜ղ
հիւրոյդ վշտագեաց.
Յաղէտս քանիս թափառեցար. և Ճառ
բանիդ զիս խոցեաց.
Այլ զՈդիսեայն Ճառ ոչ գովեմ, ոչ
յանկուցես զիս խսպառ.
Զի՞ քեզ, ո՛վ ծեր, ծեր քաջամոյն, սուտ
կրցկրցել վայրապար.
Քաջ իսկ և Ես ըզտեառն իմոյ ըզՃառ
դարձին քաջ գիտեմ,
Գիտեմ նրմա դիք քանիսն կալան անջինջ
ոխ ընդդէմ.

Ձեռուն Նըմա'ի Տրոյիա կամ թէ'ի ձեռս սիրելեաց
Քաջիկ մահուամբ վախճան առնուլ ըղ-
կնի մարտին մրցանաց.
Եւ Յոյնք յայնժամ տային Նըմա դամբան
ոչինչ'ի ծածուկ,
Որ'ի յապայս իւր զաւակին փառս հան-
դերձէր մեծաշուք.
Իսկ այժմ, աւա՜ղ անփառունակ Ար-
սեանքն ըզնա կապտեցին,
'Ի ես թաքթաքուր կամ առ խոզեանն և
'ի քաղաք չերևիմ.
Բայց թէ կոչեալ Պենելոպեայ, երբ արք
ըսաբերք հասանեն,
Եւ շուրջ նստեալ մերքըն զարամբք ման-
ըախուզիւ հարցանեն,
Թէ որք ցաւեալք տասին ընդ կիրս թա-
փառական արքային,
Թէ որք ինդան, ւ անպատուհասք'ի գոյս
նորա պարարին.
Այլ ես ոչինչ հարցաքննեմ յօրէ յորմէ
զիս խաբեաց
Այլ որ թափառ այր մարդասպան 'ի
յԵտողեան սահմանաց.
Եկն յայս փարախ հիւրընկալայ. ասէր
տեսեալ իւր զՈդիս՝
Առ կրետացիս նաւս նորոգել ըզնորտա-
կեալսն 'ի յալիս.

Կացեալ նորա առ Իդոմին, գայցէ յա-
մառն կամ յաշնան,
Եւ դանձ բազում բարձեալ բերցէ ա-
ռեալ ընդ իւր քաջ որեան։
Արդ և դու ծեր ո՛վ ջարակրեալդ, զի
զքեզ առիս ած աստուած,
Մի՛ ընդ միտ իմ մոցես հիւսեալ 'ի քրմա-
զարդ պատմութեանց.
Զըտաց քեզ շուք վասն այսորիկ և ոչ
լեցիս փարելի.
Այլ զի գրեթամ, և զի Դիայն ես ակն
ածեմ վանատրի "։
"Նշուշտ 'ի քեզ, կրկնեաց Ոդիս, սիրտ
անհաւատ տալրանայ,
Որ 'ի հաւատ ըզքեզ ածել և ոչ երդմամբ
մարթացայ.
Բայց ա՛ղէ դու. մեք դաշնադիրք լեցուք
յանսուտ 'ի բանից,
Եւ 'ի բարձանց վըկայք ահա դասք երկ-
նաձեմ անմահից.
Թէ տէրըն քո գայցէ 'ի տուն, բաձկոն,
ըդիկ գեղեցիկ
Դու ա՛րկ զինև, և յըղեա՛ զիս յիմ փա-
րելին 'ի Դուվնք։
Իակ թէ ոչ գայ, զիս որերովդ ա՛րկ գա-
հավէժ 'ի ժայռէ,
Զի այլ մուրիկ ահաբեկեալ մի՛ ևս ըզքեզ
խաբեսցէ "։

« Վա՜շ, ծերունիդ, անդէն յայնժամ արդոյն Եւմէս ձայն կրկնեաց,
Եւ ո՞ր համբաւ ինձ կրօնաւէր լեցի 'ի կեանս և յապայս.
Թէ հիւրընկալս զքեզ յիմ մարդակ արկից 'ի մահ տարածեալ,
Եւ ո՞ր երես կայցէ յայնժամ ձեռս 'ի յերկին ամբառնալ:
Թո՛ղ անդր, արդ մեզ ժամ է ընթրեաց. ընկերքս ահա ասա ՃԵպին.
Ընթրիս առաս մեք կահեսցուք »: Զայս ինչ նոքա զլուցէին:
Ելն խոզեանն և խոզարածք երամակին տան խշտի.
Փակեն 'ի փակս. գեռնախշտեայցն խանջիւն հատաւ սոսկալի.
Զայն որերոյն կարդաց Եւմէս. « Ածէք ասա խոզ պարարակ.
Զենից հիւրոյս տարաշխարհիկ և խրախասցուք հասարակ.
Մեք խրախասցուք, որ ըզխոզից վիշտրս կրրեմք հանապազ.
Զի ըրբենիքն օտարք ըզմերն ուտեն ըզքիրտն երեսաց »:
Ասաց. կաղնի հերձ տապարաւ. խոզ պարարեալ արքն ածին
Խոզ հնգամեայ. և տուընթեր կրակարանին կացուցին:

Ուշիմն Եւմէս հանդերձեցաւ, էր անմա-
հից անմոռաց.
Մազս 'ի գլխոյն կորզեալ խոզին արկ 'ի
խարոյկն և մաղթեաց.
Զ Ոդիւսէսին ըզդարձն 'ի տուն մաղթէր
'ի դից Ջերմաբար.
Շերտիւ կաղնւոյն հար վերամբարձ արկ
զկենդանին ընչասպառ.
Փողոտեցին և խանձեցին և յօշեցին փու-
թապէս,
Ըզհում յօշուածս առ զանդամոց, պա-
տէր 'ի Ճարպին Եւմէս.
Առեալ ըզկէսն ըզյօշուածոյն՝ ցանեալ
նաշխհ արկ 'ի հուր,
Ապա և զայլն մանրախորտիկ կորեալ
հարին 'ի շամփուր.
Քաջ խորովեալք քարշեն ոչխոյն դընեն
զամէնն 'ի սեղան,
Յարեաւ Եւմէս խոհեմամիտն յեօթնն
բաշխեաց զամենայն.
Յաւերժհարանց և Հերմեսի Մայեայ
որդւոյն հան բաժին 60.
Յաղօթս եկաց. ապա և զայլն յայր այր
բաշխեաց առանձին.
Ըզթամբ զողին սպիտակ ժանւոյն շըքով
ձօնէր Ոդիւսի,
Ուրախ արար ըզսէրըն իւր. Ոդիւս ձայն
ետ խնդալի.

«Ո՞տայը, Եւմէ, հայրն Արամազդ այն-
պէս սիրէր միշտ ըզքեզ,
Որպէս և ես, որ դու այսչափ հիքացելոյս
շուք ածես».
Կարձեաց Եւմէս. «Կէր, արդոյդ հիւր.
բերկրեա՛ց 'ի տուրս աստուածեան.
Որ տայ զլանայ, որպէս կամի, քանզի կա-
րէ զամենայն».
Ասաց, ձօնեաց դից յաւերժից զերեխայ-
րիսն ըզզոհին.
Հրատապ գինի, հանեալ նուէր, եդ
Ոդիւսեայ 'ի ձեռին:
Անդ մեկուսի մեծն Ոդիւսէս առեալ էր
իւր բազմական.
Ձոքաւ յառաջ Մեսաւլիոս բաշխեաց
ըզհացն 'ի սեղան.
Ըզսա Եւմէս առ 'ի Տափեանց գընեաց
ընչիւքն առանձին.
Մինչ տարադէմ էր Ոդիւսէս, ոչ գիտէր
ծերն, և ոչ տիկինն:
Առնուն խորտիկ, առնուն բաժակ, մին-
չև ըզքաղցն հարկանել.
Ըզհացն եբարձ Մեսաւլիոս, յագեալք
ձեռին 'ի հանդչել:
Լոհաս գիշեր, մութ դժուարին. Զեան
անձրևէր անդադար,
Եւ ջրապարսպատ մեծ զեփիւռոս ընչէր
անդուլ և գուժայր:

Զայն եւ յայնժամ Ոդիս յԵւմէս, զիւ-
րըն փորձէր խնամածուն,
Թէ զվերարկուն տայցէ ինքեան, և կամ
տացէ տալ այլում.
“ Լուր արդ, Եւմէ, լուարուք և արք.
կամիմ խօսել ես պարծանս.
Զայս հրամայէ գինին շամբուշ, որ զմարդ
հանէ 'ի խելաց.
Սա և ըզմեծ զայր իմաստուն դրդէ յան-
չափրս երգել,
Եւ մեղկաբար տայ ծիծաղել, նաև կա-
քաւս հարկանել.
Սա և երբէք տայ բարբառել, զոր չա-
սելն էր լաւագոյն 61.
Այլ զի կալայ ես կարկաչել, ոչ ծածկե-
ցից ինչ 'ի բուն:
Ո՛վ թէ յարբունս էի տիոց կորովու-
թեամբ ես աւագ,
Որպէս յորժամ 'ի Տրոյիա դարան ծա-
ծուկ լարեցաք.
Իշխան էին անդ Ոդիւսէս և Մենեղաւ
Ատրեսեան,
Եւ 'ի նոցայն 'ի հրամանէն երրորդ կացի
ես իշխան.
Հասեալք յոստանն բարձրապատուար,
շուրջ ընդ թաւուս քաղաքին,
Դարանեցաք մեք ընդ զինուք յամուրս
պրտուոցըն Ճահճին.

Գիշեր դրժար հաս 'ի վերայ պաղ հիւսիսին 'ի շնչմանց.

Զիւնէր ցրտին իբրև զեղեամն, ասպարքն եղեն սառնամած.

Այլք վերարկուաք և բաճկոնիւք վահանափակք ննջէին.

Անմրսացեալ ես ընկերացս ըզվերարկուն թողի զիմ.

Զի և այնչափ ոչ կարծէի լինել ինձ անդ ցրտահար,

Ասպար միայն առի ընդ իս և զլուսափայլն իմ կամար:

Եհաս երրորդ պահ գիշերոյն. աստեղք գնացեալ մեկնէին.

Ես յադգրդեալ յարմուկն, ասեմ ինձ առընթեր Ոդիսին.

Վըճարեալ է վասն իմ, Ոդիս, գիւցազն ուշիմ Լայերտեան.

Զիս ձրմերունք պաշարեցին, անվերարկու ես զուիամ:

Խաբեաց զիս Քաջն. եմ բաճկոնիւ և ապրանաց չեմ ես արդ.

Լուաւ անդէն այր բազմահնարն և 'ի խորհուրդս և 'ի մարտ:

Զայն ետ մեղմով. "Լո՛ւռ լեր, ասէ, մի ոք լուիցէ 'ի Յունաց".

Ասաց. անդէն և զարմրկամբն ըզգլուխն առեալ ձայն կարդաց.

“ Լուարձուք ով քաջք, ինձ 'ի քունելս
երազ մատեաւ ասուածեան.
Ազդէր խորհուրդ՝ թէ 'ի նաւաց մեք
յոյժ անկաք բացական.
Արդ ոմն 'ի մէնջ գնասցէ յարքայն Ագա-
մեմնոն ազդարար.
Հրաման տացէ, գայցէ անդուստ մեզ զօ-
րավիգ շատ որեար ”:
Լուաւ Թոմաս Անդրէմոնեան, ճեպ տայր
'ի կոյս 'ի նաւաց,
Աճապարեալ ըզվերարկուն զիւր ծիրա-
նին արկ 'ի բաց.
Առի ըզձորձն ուրախութեամբ ընկող-
մնեցայ պաշտպանեալ,
Մինչև ծագեաց մեզ արշալոյսն առաւօ-
տուն ոսկեփայլ:
Ո՛վ թէ և արդ յայն տխս էի քաջարու-
թեամբ ահարկու,
Ինձ և յայս փակ խոզարածից տայր ոք
անշուշտ վերարկու,
Ակն ածելով միանգամայն 'ի սէր 'ւ 'ի
շուք քաջութեան.
Իսկ ատ տեսեալ ըզդրդելեակս իբր ան-
կածի շուք ոչ տան ,,.
“ Ո՛վ ծերունիդ, կրկնեաց Եւմէս, քաջ
են քո բանքդ և արդար.
Եւ ոչ անձահ և վայրապար ինչ 'ի վնպիդ
խօսեցար.

Բայց ոչ և աստ 'ի ձորձ և յայլս երբէք
կացցես անխընամ.
Ողբաւոր հեքացելոյն պարտ է ունել
զամենայն :
Այլ դու վաղուն արկ ըզնոյն ձորձդ
աստ չի՛ք բազում պատմուճան,
Եւ ոչ բաճկոնք փոխանակաւ. այր այր
ունի մի միայն.
Երբ Ոդիւսեայ գայցէ որդին, առաստ-
պէս քեզ տացէ
Լոդիկ, բաճկոն, քեզ 'ի ծածկոյթ, և
ո՛ւր կամիս, յըղեսցէ ":
Ասաց. առ հրոմն արկ անկողին նրմա սի-
րով մեծապէս,
Եւ յոդենիս և յայծենիս ընկողմնեցաւ
Ոդիւսէս.
Արկ ծերունւոյն և զվերարկուն զիւր
թաւամազ մեծ և լայն,
Զոր նա ունէր փոխանակաւ 'ի դառնա-
շունչ ձըմերան.
Այսպէս անդէն հանգեաւ Ոդիս և պա-
տանիքն առ նովաւ.
Բայց Եւմէոս հեռ' 'ի խոզից իւր անկո-
ղին ոչ արկաւ :
Ելեալ 'ի դուրս 'ի զէն վառէր, անդուստ
խնդայր Ոդիւսէս
Զի և գոյից բացականին այնչափ տանէր
հոգ Եւմէս.

Նախ սայրասուր առեալ սուսեր շուրջ
նա կախեաց 'ի յուսոց,
Աւկ և ըզթաւն ըզվերարկուն ամրածա-
ծուկ 'ի հողմոց.
Աւրկ և ըզմորթ յոյժ թաւամազ ըզքա-
ջաբոյծ յաղթ զայծուն,
Առ և սրլաք մեծ սայրասուր, մարդկան,
գամփռանց զահարկուն.
Ազքաւ հանգչել առ սեւազգեաց մեծ
երամակն խոզաց,
Ընդ փապ վիմով ննջէր անքոյթ հիւսի-
սայնոյն 'ի շնչմանց։

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԵ·

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա՛թենաս երևի Տելեմաքեայ՝ի գիշերի, և քաջալերէ դառնալ՝ի Սպարտիոյ յԻթակէ։ Հրաժարեալ Տելեմաքի՝ի Մենեղաւեայ, հասանէ՝ի Պիւղ ընդ որդւոյն Նեստորի. անդուստ նաւագնաց լինի առեալ ընդ իւր զայր ոք գուշակ արդոսացի՝ անուն Տէոկլիմենոս, այր վտարական առմարդասպանութեանն։ Իսկ անդ յագարակի խոզերամակին դարձեալ զրուցատրութիւնք Ոդիւսեայ և Եւմէոսի, որ տակաւին յանծանօթս պատմէ Ոդիւսեայ զանցս գերութեան իւրոյ՝ի հինից Փիւնիկեցւոց, և զվաճառիլ իւր՝ի տուն Լայերտեայ հօր Ոդիւսի։ Բայց յայնժամ հասեալ Տելեմաքի ողջամբ յափունս Իթակայ, առաքէ զնաւն՝ի քաղաքն, և ինքն միայնիկ դէմ եդեալ գնայ՝ի տուն Եւմէոսի հաւատարմին իւրոյ յագարակն, ուր հիւրացեալ կայր Ոդիս յանծանօթս։

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԵ.

Ռուցց Ամենաս եմուտ յայնժամ 'ի Սպարտիա լայնատարը,
Քաջի որդւոյն մեծն Ոդիւսեայ դարձին 'ի տունն ազգարար.
ԸզՏելեմաք և զՊիսիստրատ Մենեղաւեայն յօթեվան
Ընկողմանեալ գիտ 'ի գաւթին, անոյշ ննջէր Նեաստրեանն։
Իսկ Ոդիւսեան Տելեմաքեայ քուն քաղցր յաչաց հատեալ էր,
Ի լուռ խաղաղ 'ի գիշերին 'ի հոգ ծնողին տագնապէր։

Խաժակն 'ի մօտ արձանացաւ, բարբառ կարդաց, և ասէ.

« Շատ է քեզ արդ, ո՞վ Տելեմաք, կալ տարադէմ'ի տանէ.

Արանց ժանտից մի տար ըզգոյսդ ողջոյն 'ի յառ և յապուր,

Նոքա ըզկեանսդ 'ի բաշխ հանեալ, ուղիղ լիցի քեզ'ի զուր.

Թողուլ ըզքեզ Թախանձ արկցես Մենե-ղաւեայ արքային,

Զի և զպարկեշտ ըզմայրըն քո գտցես 'ի տան տակաւին.

Արդէն եղբարքն և հայր նորա Եւրիմա-քին 62 տան ըզնա,

Զի օժտագանձ քան զայլ սեղեխս 'ի տուրս գրտաւ գերակայ.

Փութա՛, զի մի քեզ յակամայս ինչ մի բարձցի 'ի տանէ.

Գիտես իսկ քաջ, եթէ կին մարդ որո՞վ հոգւով զգածեալ է 63:

Նա զերկրորդի զառըն ինդրէ ըզտուն առնել բարգաւաճ,

Եւ առաջնոյ իւր ամուսնոյն մոռացօնք են զաւակաց.

Եւ ում յառաջ 'ի տունն եմուտ կոյս հարսն ամբիծ սիրաբուն,

Ըզնա խսլաւ նա մոռանայ հոգ ինչ չառ-նէ մեռելոյն:

Այլ դու հասեալ, զերս առտընին լա-
ւագունի նաժշտին
Յանձն արասցես, մինչև Աստուած ցուցցէ
քեզ զերծ ամուսին։
Բայց դու մի՞ դիր. հաղբ քեզ այժմիկ
'ի հոմանեաց լարեալ կայ,
Դարանն նստի քեզ յապառաժն յանձուկս
Սամեայ, և Իթակայ.
Մինչև 'ի տուն քո ժամանեալ զմահ քո
խնդրեն, բայց 'ի զուր.
Զի հացկատակքդ այդ հոմանիք տա-
պաստ անկցին նախ 'ի սուր.
Կղզեացն 'ի բաց կալցես ըզնաւդ և նա-
ւարկեա՛ գիշերի.
Ածցէ քեզ հողմ ոմն յանմահից, որ միշտ
կայ քեզ հովանի.
Հասեալ Իթակ յափն առաջին, յղեա՛
ըզնաւդ և զորեան,
Գնասցեն յոստանն. դու ուղղոյ լեր
գտանել զԵւմէս խոզապան.
Սիրող է քո հաւատարիմ, օթեա՛ առ նա
զայն գիշեր.
Եւ զնա յղեա՛ դու 'ի քաղաք Պենելոպեայ
'ի բանբեր.
Նա պատմեսցէ, թէ 'ի Պիւղեայ դարձ
արարեր ողջանդամ՞».
Ասաց Պալլաս, վերասլացաւ 'ի տունն
անդորր Ողիմպեան։

Եւ զՊիսիստրատ յանոյշ քընոյն զարթոյց խըրթեալ աքացի.
« Արի՛, արդոյդ, ըզքաջ նըժոյգսդ 'ի կառս լծեա՛ մեզ յուղի »։
Սա ձայն կրկնեաց. « Ո՛վ Տելեմաք, թէպէտ և ՀԵպ տամք ուղւոյն,
Զի՛ք մեզ ընդ մուրթ կառավարել. վաղ ծագեսցէ լոյս այգուն։
Թո՛ղ քեզ 'ի կառս դիցին հիւրոյթք Մենեղաւեայ յարքայէն,
Եւ քաղցրամոք տացէ բանիւք մեզ արձակուրդ 'ի տանէն.
Զի անմոռաց է ցանգ հիւր ոք բարեկամին հիւրասէր »։
Այն ինչ ասաց, և ոսկեգահն արեւագալն հասանէր։
Զարթեաւ արքայն Մենեղաւոս ընդ վարսագեղն Հեղինեայ.
Եկեալ անդէն յառագաստէ գայր մերձենայր առ նոսա.
Ըզգաց ուշիմն Տելեմաք ՀԵպոով զբաՀկոնն արկ մարմնոյն
Ըզլուսափայլն, և առ զուսով զամրածածուկ վերարկուն.
Եկն առ արտաքս. եկաց ձայն ետ. « Դիւցազն արքայ, Աարիդէս,
Խնդրեցեալն իմ հայրենիս ուղւոյ դիր զիս փութապէս.

Անձկացեալ եմ 'ի տուն դառնալ »։
Լուաւ, կրկնեաց քաջ արքայն,
Քեզ, Տելեմաք, անձկով դարձիդ չեղէց
յերկար ես խափան.
Առեամ ես զայրըն վանատուր, որ ըզսի-
րոյն չափ չունի,
Ձունի և չափ զատելութեան. միջասահ-
մանն է բարի.
Զոյգ յանցանէ որ զդանդաղկոտ հիւրըն
վարէ 'ի տանէ,
Եւ որ դարձեալ զձեպեալն 'ի դարձ յու-
ղղոյն իւրմէ խափանէ.
Պարտ է զյամեալն հիւր ժողովել և զա-
կամայն արձակել.
Այլ կաց, տեսցես մինչև 'ի կառս զիմ
պերճ զընծայս տաց բերել.
Նաև ճաշ քեզ տացեն կանայք, յորոց 'ի
նեղքս 'ի յարկի,
Չէ ճահ, չէ շահ անկերակուր առնել
զերկայն քեզ ուղի.
Իսկ թէ ուղղեալ ես յԵլլադա և 'ի ՅԱՐ-
գոս, ընդ քեզ գամ.
Լծեալ նրժոյգս և ընդ քաղաքս գնաս-
ցուք շրջել միաբան.
Ոչ ոք ըզմեզ 'ի մարդկանէդ արձակեսցէ
ձեռնունայն.
Ի ձօն տացէ կամ պղնձեայ զեռոտանի
կամ ըզսան.

Եւ կամ ջորեաց զոյգ կորովեաց և կամ բաժակ ոսկեղէն „.

Լուաւ ուշիմին Տելեմաք, ձայն արքային էտ անդէն:

“Դիւցազն արքայ, Մենեղաւէ, ես 'ի դարձն եմ անձկայրեաց.

Քանզ' 'ի մեկնելս զոք պահապան չեդի իմոց կարասեաց.

Զի մի թերևս 'ի խնդիր հօրս ես գլխովին հնքացայց,

Եւ 'ի գոյիցս հայրենատուր բոլորովին մերկացայց „:

Լուաւ արքայն, ձայն ամուսնոյն էտ, նաժշտացն և խմբի.

“ Հապա, խահիցն 'ի պահելոց ճաշ մեծահաց կազմեսցի „.

Զարթեաւ անդէն, եկն առ արքայն և Ետուինէս Բոեթեան,

Զի չէր նորա 'ի յարքայէն յարկ անկող նոյն բացական,

Առ 'ի խորով հրաման կարդաց հուր բորբոքել 'ի ժամուն,

Նա ժիր 'ի գործն. իսկ ինքն արքայն էջ 'ի բուրեան տուն գանձուն.

Ձէր միայնակ. էր Հեղինէն և Մեգապենթն ընդ նրմին.

Ի տան գանձուն կային մրթերք և պատուական կարասին:

Ինքնին անդուստ Մենեղաւոս առ զերկն-
ունկին դաշխուրան.
Մեգապենթեայ որդւոյն բառնալ ետ
զարծաթին խառնարան.
Բաց Հեղինէ զսապատս շարից երփնա-
զարդից, գործք ձեռին.
Շար մի չքնաղ, մեծ, երփներանգ եբարձ
անտի Տիրուհին,
Նման աստեղ ճաճանչն հատաւ, կայր նա
'ի տակ սապատուն.
Ազքան այնպէս առ Տելեմաք 'ի ձեռս ըն-
ծայք գերաբուն:
Զայն ետ ազքայն. „Ո՞վ Տելեմաք. զան-
ձուկն 'ի տուն հայրենեան
Լցցէ ողջիկ քեզ Արամազդ փեսայն Հե-
ռայ ամպրոպեան.
Տաց քեզ ընծայ զիմ տաճարիս ըզգեղե-
ցիկն աննման,
Համակ արծաթ և ոսկեշուրթն հրաշա-
կերտեալ խառնարան.
Գործ Ճարտարին Հեփեստեայ, զոր և
սիրովինձ ձօնեաց
Փեդիմ դիւցազն, որ էր ազքայ Սիդոնա-
ցւոց քաջ արանց.
Նա մեծապէս զիս ժողովեաց 'ի տրուա-
կան 'ի դարձին.
Արդ ես ըզնոյն քեզ տամ յաւէժ կընիք
սիրոյս մըտերիմ՝՝:

Ասաց, և եդ 'ի ձեռս նորա ըզդաշխուրան բոլորշի,
Եւ զխառնարանն քաջ Մեգապենթին եդ հանդիպոյ զարծաթի։
Իսկ Հեղինէ զքնաղն ըզշար 'ի ձեռս կալեալ բարբառէր.
"Տաց քեզ և ես, ընկա՛լ դու զայս որդեակ սիրուն, 'ի նուէր.
Այս յիշատակ գործած անկուած իմ Հեղինեայ է ձեռին,
Յօր անձկացեալ քոց հարսանեաց արկանելի քում հարսին.
Առ այժմ 'ի տան կացցէ յաւանդ առ մօրըն քո նազելւոյն,
Դու խրախամիտ դարձցիս ողջամբ 'ի հայրենին քո 'ի տուն"։
Ասաց և եդ 'ի ձեռս նորա. առ ընկալաւ ինդագին.
Պիսիսարատոս զննեալ ողջոյն առ ամփոփեաց յանօթին։
Իսկ Մենեղաւ խարտիշագեղն առեալ ըզհիւրսն երկոսեան,
Ած յարքունիս և տայր գահոյս նոցա շքով բազմական.
Ջուր 'ի լուացումն յարծաթ լական յոսկի զքնաղ յանօթոյ
Հեղոյր նաժիշտն, և սրբափայլ սեղան ձգեաց հանդիպոյ.

Կինքն տնօրէն հաց կերակուր ած եդ
յառաջեռն 'ի խահից,
Եւ մերձ կացեալ Եոէոփնէս, բաշխէր ըզ
միսն 'ի բաժինս.
Աղքայորդին Մեգապանթէս անդ մա-
տրուակ էր գինւոյն.
Մինչ 'ի խահից և բաժակաց վայելս առին
զսեղանոյն:
Լ ընծեալ ըզձիս և յերփնազարդ ելին 'ի
կառս երկոքին,
Ի նախադրանց ընդ ձայնատու գաւիթն 'ի
դուրս վարեցին.
Գայր ընդ նոսա խարտեաշ արքայն, ու-
նէր 'ի ձեռն անապակ
Ուղի հորդել. բայց նախ նուէր ձօնէր
յոսկի 'ի բաժակ.
Հանդէպ ձիոցն եկաց ձօնեաց. "Գնա-
ցէք, ասէր, խնդագին.
Ո՛ղջ լիք, ո՛վ քաջք, և մեծ ողջոյն տո՛ւք
Նեստորայ արքային.
Նա հայրօրէն ինձ խնամածու էր 'ի մար-
տին Տրովական".
Լուաւ, անդուստ Տելեմաքոս ուշիմն ա-
ղար պատասխան.
"Այո՛, դիւցազն, ոճով մեք զայս պատ
մեմք նմա զամենայն,
Այլ ո՞ տայր ինձ և Ոդիւսեայ հասեալ
յԻթակ ողջանդամ.

Քանի՞ 'ի քէն սէր և համբոյր հիւրամե-
մեծար ընկալայ,
Եւ զքոյն զառատ տուրըս չքնաղս ցուցա-
նէի ես նրմա »։
Մինչդեռ խօսէր, արծիւ թռեաւ սա-
ւառնաթև 'ի յաջմէ
Կորզեալ մագլաք սագ մի սպիտակ յաղթ
ընտասուն 'ի գաւթէ.
Ըզհետ արծուոյն աղք և կանայք գոչիւն
բարձին անպայման,
Նա մօտ նոցա յաջմէ կուսէ Ճախրեաց
ձիոցն յանդիման.
Խնդամիտեալք առ հասարակ, նախ Պի-
սիսարաս ձայն կարդաց.
"Արդ ո՞ւմ արդեօք ցուցաւ նշանս, դիւ-
ցազն աղքայ, դու խորհեա՛ց.
Ո՞վ մեզ արդեօք թէ քեզ ինքնին եցոյց
Աստուած զայս նշան »։
Լուաւ աղքայն, գումարեցաւ. խոկայր
ասել ինչ արժան.
Կանխեաց զաղքայն, "Լուարո՛ւք, ասէր
քօղաղարդեալն Հեղինէ.
Ինչ զոր ասեմ, անմահք սադրեն. գու-
շակութիւնս յանդ էլցէ.
Որպէս արծիւն մագլցի կորզեաց ըզսագն
ընտասուն,
Սաւառնելով յափափայից՝ ուր են իւր
ձագք լեռնասուն,

Այսպէս Ոդիւս տանջեալ թափառ 'ի
տուն դարձցի վրէժինդիր,
Կամ թէ դարձաւ, և հոմանեաց նիւթէ
ըզմահն անյարիր »։
« Ո՛վ, տայր ինձ զայդ վեհն Արամազդ,
եւ Տելեմաք ձայն կրկին,
Յաշտիւք յայնժամ իբր Աստուծոյ քեզ
կանգնէի ես բագին ».
Գ.սաց, գանեաց, և ձիք թռուցեալք ան-
դուստ 'ի դաշտ դիմեցին,
Ըզսանձն անդուլ թօթափելով ըզտիւն
ողջոյն սուրային.
Արևն եմուտ, մթնին ուղիք, նոքա հա-
սին 'ի փերայն,
Ի տուն Դոկղեայ որ էր որդի Որսիղոքեայ
Ալփոսեան.
Անդ օթեցան, առին հիւրոյս մինչ վար-
դամատն այգածին
Ծագեաց նոցա, լրծին ըզձիս և յերփնա-
զարդ կառս ելին.
Ընդ հնչական գաւիթն 'ի դուրս ձիք
մտրակեալք Ճեպեցան,
Թռչին սրավարք մինչև հասին Պիւղեայ 'ի
բարձր 'ի յոստան։
Յայնժամ դարձաւ Տելեմաքոս առ Պի-
սիստրատ եւ բարբառ.
» Քաջ Նեստորեանդ, ըստ քում խոստ-
ման զիղձն իմ լընուս մինչ խաստառ.

Հիւրք հայրենիք եմք համատիք, և սերտք յաւէտ յայս ուղւոյս

Լիցուք միմեանց, մի այլ վարեր թող զիս աստէն մերձ նաւուս.

Զիս յակամայս անշուշտ կալեալ առ իւր արգոյ ծերունին,

Զիս գգուեսցէ. բայց ես, ո՛վ քաջ, ձեռ ալիմ փութամ 'ի տուն իմ՝՝:

Լուաւ. խորհէր Պիսիատրատոս ընդուլ զոր ինչ խոստացաւ.

Յանկոյց ըզմիտս. դարձոյց ըզկառս յափրն ծովուն մերձ 'ի նաւ.

Զընծայսն շրքեղ զՄենելաւեայ եբարձ և եդ 'ի նաւուն,

Զայն ետ նրմա. «Արի՛ ել դու և տո՛ւր հրաման որերոյն,

Մինչև 'ի տուն ես ժամանեալ և հօրս պատմեալ ըստ կարգի,

Զի գիտեմ քաջ ըզծերունւոյն սրտմրտականն զոգի.

Զարձակեսցէ, ինքն հրաւիրակ աստ եկեսցէ մերձ նաւու,

Լցեալ ըզձեռնդ ուղւոյ գիցէ. բայց և սաստիկ ցանուցու՝՝:

Ասաց, վարեաց զձիս գիսապանծ յոստան Պիւղեանց, հաս 'ի տուն.

Եւ Տելեմաք ձայն տայր իւրոցն. «Ա՛ռէք զկազմածս ընդաւուն.

Յարդարեցէք ելցուք 'ի վեր, անկցուք յուղի նոյնհետայն ».

Լուան, և փոյթք մոքին 'ի նաւն, առին զքաշտեաց նստարան։

Մինչ նա 'ի խելս ՃԵպէր յաղօթս և ձօն ձօնէր Պալլասայ,

Մատեաւ առ նա այր մարդասպան այր ՅԱրգոսէն փախստեայ.

Էր նա այր իզձ տարաշխարհիկ Մելամպոսին 'ի զարմէ.

Էր Մելամպոս նախ բնակաւոր 'ի խաչնաւէտն 'ի Պիւղէ.

Սա անդ ընչեղ տէր պերճ յարկաց, չոքաւ յայլ ազգ տարադէմ,

Լեալ փախստեայ 'ի հայրենեացն ւ 'ի հոյակապ Նեղոսէն.

Սա բռնացեալ ամ մի ողջոյն ունէր ըզգանձս Մելամպեայ,

Որ տարաշխարհ 'ի խիստ կապանս տանջէր 'ի տան Փիւղակեայ.

Վասրն դատերըն Նեղոսին, դարձեալ և զի մեծապէս

Յանցեաւ յանցանս, զոր սոսկալին սադրեաց Նըմա Երիննէս.

Լեալ անձնապուր 'ի Փիւղակեայ, մեծաբառաչ ջոկ զանդեայց

Վարեաց 'ի Պիւղ և վրէժ էառ ըզ Նեղոսին յանցանաց.

Կին և եղբօրն ած նա 'ի տուն, ինքըն
չոքաւ տարադէմ,
Նստաւ յԱրգոս 'ի ձիաւէտն, արքայա-
ցաւ նա անդէն.
Կին ած, շինեաց տուն բարձրաբերձ,
ծընաւ կրկին քաջորդիս,
ԶԱնտիփատէս և զՄանտիոս, և Անտի-
փատ զՈիկլիս.
Մեծն Ոիկլիս զԱմփիարոն ծընաւ զազ-
գին ախոյեան
Զոր Արամազդ և Ապողոն սիրէր սիրով
աննըման.
Այլ զծերութեան ոչ կոխեաց սեամն,
տապաստ անկաւ 'ի Թեբէ,
Զի մատնեցաւ Ամփիարոն 'ի յընչաքաղց
կընոջէ.
Բայց և որդիք ծընան նըմա Ամփիլոքոս,
ւ Աղկմէոս.
Իսկ Մանտիոս ծընաւ որդի զՊողիփիդէս
և զԿլիտոս,
Այլ զԿլիտոսն զաննըման չքնաղագեղն
'ի դիտակ
Յափշտակեաց Այգն ոսկեգահ կալ յան-
մահիցն 'ի դասակ.
Ընդքաջն արանց Պողիւփիդէս գուշակ
մարդկան վեհագոյն
Ելից ոգւով մեծն Ապողոն Ամփիարեայ
յետ մահուն.

Որ ընդ իւրում հօր ցասուցեալ չոքաւ բնակէր յԻսպէրիս,
Եւ անդ մարդկան գուշակօրէն 'ի վեր բերէր ըզգաղտնիս.
Արդ որ յայնժամ մատեաւ 'ի նաւն Տելեմաքեայ 'ի ձօնին,
Թէոկլիմէն անուն նորա Պողիւփիդեայ էր որդին:
Ելհաս առ նա, յորժամ ձօնէր. կարդաց յողոք 'ի ձայնէն.
"Զ' 'ի ժամ ձօնիդ ըզքեզ գլուխ, ո՞ բարեկամ, քեզ մաղթեմ.
Մաղթեմ 'ի ձօնդ, և 'ի յաստուածն, մաղթեմ 'ի գլուխս քո ինքնին,
Մաղթեմ 'ի դաս քոց ընկերաց, մի՛ բան ծածկեր հարցողին.
Ասա՛ Ճշգրիտ, ո՞ ես, ուստի՞, ո՞ւր քո ծընողք, ո՞ւր քաղաք":
"Ահա՛ քեզ, հիւրդ, անսուտ բարբառ, կրկնեաց առ նա Տելեմաք.
Ես ինքս ծընունդ եմ յԻթակայ, և է հայրն իմ Ոդիւսէս.
Թէ արդեօք կեա՞յ, կամ թէ մեռա՞ւ, վարանեալ կամ մեծապէս.
Վասն այնորիկ խմբեալ ընկերս առի նաւ մի քաջամուր,
Եմ 'ի խնդիր իմ ծընողին, թերևս առից ինչ ըզլուր":

Թէոկլիմէն կրկնեաց դիւցազն, « Եւ
ես յերկրէս հայրենի
Կամ տարադէմ, զի յիմ ցեղէն զայր մի
ես ինքն ըսպանի,
Ոյր շատ եղբարք, Ճոխ բարեկամք են 'ի
յԱրգոս ձիաւէտ,
Ի ես անձնապուր դառն յօրհասէն փա-
խեայ անտի ետ ընդ ետ.
Արդ թափառիմ ես յաշխարհի. զիս մա-
հուանէս մօտալուտ
Մաղթեմ փրկեա, ընկալ 'ի նաւդ.
զհետ իմ մրտեալ են անշուշտ »:
Կրկնեաց ուշիմն. « Ամի և մնաս, քա-
ջամերժեմ ըզհիւրն իմ.
Կաց դու աստէն. առցես հիւրոյնթս որ-
չափ ունիմք 'ի նաւին »:
Ասաց, ըզտէգն առ և հանգոյց ասխտա-
կամածն ընդ երկայն,
Եւ ինքն 'ի նաւն, նստաւ 'ի խելս, մերձ
եդ հիւրոյն բազմական.
Լուծին զպարանսն. հրաման կարդաց
առնուլ զկազմածս ըզլաստին.
Ժրացաւ որեարն. կայմն եղևին կանգնեն
'ի գոգ խարսխին.
Հաստ կառանօք կապեալ ըզնա, և զա-
ռագաստան ըսպիտակ
Պարզեալ փոկովք քաջողորիւք, հողմն
շնչեաց յաջողակ.

Զայն սիւգ բարի մեծն Ամենաս մրրկեաց
ընդ օդ ուժգնապէս,
Արագ արագ չափել նոցա զաղի ծովուն
զասպարէս.
Արևն եմուտ, ուղք խաւարին, և նաւն
'ի սիւգ աստուածեան
Հաս 'ի Փերաս, 'ի մեծն Եղի ուր Եպա-
ցիք են իշխան.՝
Անոի միսեալ յառաջագէմ մուտ 'ի
դժուարրս կղզեաց.
Եւ վարանէր, զերծցի՞ արդեօք թէ ըմ-
բրոնի 'ի դարանս։
Բայց 'ի գաւթին Ոդիս, Եումէս ընդ ո-
րերոյն ընթրէին.
Ըզքաղցն հարին, ձայն եա Ոդիս փորձէր
զԵումէս զայրն ուշիմ,
Եթէ արդեօք այն հիւրասէրն յաւեր-
ժանա՞յ 'ի խնամել,
Խնդրէ՞ ըզնա պահել առ իւր՝ թէ 'ի քա-
ղաք արձակել.
«Լո՛ւր ինձ, Եումէ, լուարո՛ւք և արք. յոս-
տանն գընամ ես վաղ քաջ.
Անդէն մուրամ, զի մի այլ քեզ և որերոյդ
ծանրացայց.
Բայց դու խորհուրդ, և առաջնորդ
տո՛ւր ինձ ուղղել 'ի քաղաք,
Ի մուր անկայց դուռն 'ի դրանէ. տացէ
ոք հաց և բաժակ.

Գնացեց 'ի տուն մեծն Ոդիւսեայ՝ լուր տալ կընոջն իւր ուշիմ
Եւ հոմանեացքն գոռոզից ես խառնեցայց յակմբին.
Նոքա յիւրեանց լիուլթենէ տացեն թերևս ինձ ընթրիս,
Եւ ժիրաժիր զինչ և հրամեն՝ ըսպաս նոցա ես հարից.'
Գիտեա՛, ո՛վ քաջ, զի 'ի շնորհացնուիրակին Հերմեսի
(Յորմէ գործոց կանացածնաց շընորհքն և փառքն ընծայի),
Ի գործ սպասուց մարդ ոք ընդ իս չէ բաւական 'ի մրցել,
Եթէ ըզկրակն 'ի յամիսոփել՝ եթէ ըզփայտ պատառել.
Յոչեմ ըզմիս, քաջ խորովեմ, քաջ մաստրուակ եմ գինւոյն,
Յոր ինչ ծառայք սպասահարկու լինին աւագ որերոյն "։
Լուաւ յայնժամ և զայրագին կրկնեաց Եւմէս այրն արդոյ.
" Աւա՛ղ հիւրոյդ, քեզ այդ խորհուրդ ուստի՞ անկաւ 'ի սիրտ քո.
Ըզմահդ անշուշտ խնդրես միսեալ դու հոմանեացն 'ի ջոկին,
Ոյց շամբշուլթիւնքն գոռոզից մինչ յերկաթին հաս յերկին.

Իբրև ըզքեզ կարծեաս թերևս զըսպասարկուս գոռոզաց.
Ընդքա առոյգ են պատանիք արկեալ բաճկոնս և խըլայս.
Վարսք 'ի գըլուխս ջինջք և օծեալք, 'ի գեղ դիմաց բարեմոյն,
Կան 'ի սպասու, հացիւք, խահիւք, գինեաւ սեղանն յակաղձուն.
Կաց դու աստէն, և մեզ յայս վանս ոչինչ իւիք ծանրացիս,
Ոչ ինձ անշուշտ և ոչ ումեք յայս որերոյն որ ընդ իս.
Եկեալ որդին մեծն Ոդիւսեայ, նա ինքն ըզքև ձորձ արկցէ,
Բաճկոն, խըլայ, և յըղեսցէ ուր և քո սիրտ փափաքէ "։
" Ոչի՛ եթէ, ով Եւմէոս, բարբառեցաւ Ոդիւսէս,
Սիրէր ըզքեզ վեհն Ատամազդ, որպէս զարդիս ես ըզքեզ.
Զի 'ի թափառ զիս 'ի կենաց և 'ի վըշտաց հանդուցեր,
Որ չիք յաւէտ քան զկեանս թափառ կանացածնաց դառնաբեր.
Ընդքա 'ի սակս սովատանջեալ որովայնին չարակրին
Եւ թաքթաքուր և տարաշխարհք ցաւովք մեծաք վարակին։

Արդ թէ կամիս մընալ ինձ աստ, Տելեմաքոս մինչև գայ,
Աղէ դու ինձ պատմեա ոճով յաղագս մորն Ոդիւսեայ,
Նոյն և վասն հօր զոր 'ի չուէն եթողըզ նա ծերացեալ,
Թէ արդեօք կեան և վայելեն նոքա յարփին լուսափայլ,
Եթէ թերևս արդէն մեռեալք 'ի դըժոխոց կան 'ի տուն »։
Լուաւ ըզբանն, և անդրադարձ ձայն եւ մէոան եւ արգոյն.
« Լաս քեզ, ո՛վ հիւր, ողջ պատմեցից բանիւ անսուտ 'ի լեզուէ,
Դեռ Լայերտէս կայ կենդանի, սակայն Դիայ ցանգ մաղթէ.
Յոգւոց հանէ, զի փուլթապէս լուծցի հոգին 'ի մարմնոյն.
Զի կարեվեր ցաւագնեալ է ծերն յանջատման իւր որդւոյն.
Թախծագին է նաև ընդ մահ ժիր ծնգասէր իւր հարսին,
Քանզի մեռաւ և թող ըզնա յայն ալևոյթ դըժուարին.
Հարսն հիքապէս մահ ճաշակեաց ցաւով իւր քաջ զաւակին.
Ո՛վ, մի առցէ մահ այնպիսի այր որ է ինձ մըտերիմ.

Նա ցորչափ կայր 'ի լոյս արփւոյն, թէ-
պէտ և էր տրտմազգեաց,
Քաղցր էր ինձ յոյժ բան կենակից ճա-
ռել նմա և հարցուած.
Նա սընոյց զիս 'ի մի ընդ պերճ իւրում
դստեր Կտիմենին,
Դուստրը ջքնաղ և տեռազարդ զոր նա
ծընաւ իւր վերջին.
Սննդակից եղեալ սրմա, գոգցես շուքս
էր մի և նոյն,
Մինչև հասաք մեք երկոքեանս 'ի տիս
յարբունս քաջամոյն.
Զնա 'ի Սամոս ետուն 'ի հարսն և ընկա-
լան ձիր անբաւ.
Եւ ինձ խրլայս ետ գեղեցիկս, և ձորձ
զինև նա արկաւ.
Ետ պատմուճանս, ետ և բաճկոնս, ետ
և ոտիցս իմ կօշիկ,
Եւ առ յղեաց զիս յագարակ, և միշտ
սիրէր զիս սաստիկ:
Աւաղ, ես արդ կարօտեալ կամ. սակայն
ինձ պարք աստուածոց
Ձեռին ետուն և կերակրիմ, նաև յիմոցս
տամ հիւրոց.
Բայց իմ տիկինս ինձ ոչ արդեամբք և ոչ
բանիւք ինչ օգտէ,
Զի տուն նորա ողջ է գրաւեալ առ 'ի
գոռոզ մարդկանէ.

Ոչ և ծառայք կարող ինչ են լեալ յան-
դիման դշխոյին,
Կամ ուտել ինչ և կամ ըմպել, կամ խօսել
ինչ առանձին.
Եւ ոչ կարեն ասա յագարակ բերել նո-
քա և ինչ մի,
Որ այս ըսպաս է հանապազ գործ ծա-
ռայից սիրելի »։
« Այ՝ն քեզ ուրեմն, ո՛վ Եւմէոս, մեծն
Ոդիւսէս բան կրկնեաց.
Դու դեռ մանկիկ վըտարեցար յերկրէ
քումմէ 'ի ծնողաց.
Այլ դու պատմեա՛ ինձ ճշգրտիւ, թէ
քանդեցա՞ւ հիմնովին
Շէն քո քաղաքն՝ յորում բնակէր հայր
քո և մայր նազելին,
Արդեօք ըզքեզ լքեալ մանուկդ առ 'ի
հօտից և յանդեայց
Հափտիելով յանկարծակի հէնքըն տա-
րան ծովագնաց.
Առեալ բերին զքեզ 'ի վաճառ աստէն 'ի
տուն արքային,
Որ ժողովեաց ըզքեզ առ ինքն ըզգին
տուեալ զարժանին »։
« Դու մանրամասն ինձ հարցանես, ո՛վ
հիւր, կրկնեաց այրն աւագ.
Արդ լո՛ւր ինչիկ և սփոփեսցիս, և աստ
բազմեալ ա՛ռ բաժակ.

Են իսկ գիշերքս երկայնաձիգք և գոյ մեզ ժամ ննջելոյ,
Գոյ մեզ և ժամ՝ի սփոփական առ՝ի բանից լսելոյ.
Քեզ ոչ է պարտ, նախ քան զգժամն զքուն առնուլ ընդ երկար,
Զի քուն երկայն չօգտէ մարդոյ, նաև է իսկ վնասակար։
Այլ՝ եթէ ոք ախորժեսցէ, ՝ի դուրս ելեալ ննջեսցէ,
Վաղ քաջ ընդ այգին կերակրեալ զմեր խոզեանն հոգասցէ.
Բայց մեք ասասէն ընդ մարդակաւս զհացն առեալ և գինի,
Մեր իսկ ցաւովքս ըսփոփեսցուք ածեալ մեզ զայն՝ի յուշի.
Զի զվշտաց և զաղէտից բան ճառելով սփոփի այր,
Որ չարագան շատ տանջեցաւ և շատ եղև նա թափառ։
Լարդ ես ճշգրիտ քեզ ճառեցից ըստ քո հարցմանդ առ յինէն.
Գոյ կղզի մի, եթէ լուար, անդ՝ի վերոյ յՈտրիւգէն.
Անուն նորա է Սիւռիէ, ուր են և դարձք արևուն 64.
Ոչինչ այնպէս մեծ է կղզին, սակայն է նա բարեբուն.

Խաշնաւէտ է, և եղնաշատ, և գինեւէտ, հացալից,
Անդ ոչ երբէք սովին մարդիկ, և ոչ լկին 'ի յախտից.
Այլ անդ մարդիկ մինչ ծերանան, մեծն Ապողոն անդուստ գայ
Արծաթաղեղն ընդ Արտեմեայ, և հեշտ փքնօքն օրհաս տայ 65:
Եւ են անդէն կրկին քաղաքք, են բարգաւաճք երկոքեան.
Դիւցանըման հայրն իմ իշխան էր Կտեսիոս Ռրմենեան.
Անդ արք Փիւնիկք, արք խաբեբայք, եկին հասին քաջք նաւաղ,
Բարձեալ 'ի սեաւ լաստափայտին բիւր խաղալկաց աղխամաղխս.
Եւ էր յայնժամ 'ի տան հօրն իմ կին մի Փիւնիկ գեղապանծ
Կին առոյգանձն և կին ճարտար 'ի հրաշարուեստ գործ մատանց.
Սա առ նաւուն մինչ լուանայր, 'ի յայնց արանց կարթեցաւ,
Եւ նախ միոմն յայն որերոյն անդ ընդ նմա շամբչեցաւ.
Քանզի և սէր մլտերմութեան ըզլոյծ տկար կանանի՝
Թէպէտ ի՞նչ և 'ի զգաստից՝ հեշտ ըմբռնէ 'ի վարմի:

Կընոջն ապա, ուսաքնա էկն, և ո՞ է ինքն,
հարցանէր.
Իսկ կինն անդէն նրմա ըզտուն հօրս մատ-
նանիշ ցուցանէր.
Իմ քաղաքն է, ասէր, Սիդոն Ճոխն և
առատ 'ի պըղինձ
Եւ այրըն պերճ և ընչաւէտ մեծն Արիւ-
բաս հայր է ինձ:
Օր մի եղև զի ես գայի դարձ արարեալ
'ի յանդէն,
Եւ յանկարծոյն հէնք Տափացիք զիս յար-
ձակեալք հափաքեն.
Առին բերին զիս 'ի վաճառ յայս 'ի տա-
ճար Իշխանի,
Առ զիս 'ի տուն և ժողովեաց՝ ըզգինն
տուեալ զարժանի:
Լուաւ և փորձ փորձեալ յայնժամ այրըն
շամբուշ և ասաց.
Արդ դու ընդ մեզ ո՞չ կամիցիս անդրէն 'ի
տունդ առնել դարձ.
Տեսցես անդէն ըզքոյ ծընողսդ, ըզքո՞ շէն
տունն հայրական,
Քանզի նոքա կեան տակաւին և ընչա-
էսք յօրանան.
Զայն կրկնեաց կինն, եկից ընդ ձեզ եթէ
երդնուք ինձ ողջիկ,
Զի զիս ողջամբ և անվընասանդ անդրէն 'ի
տուն դարձուսջիք:

Այս նա ասաց, նոքա ողջոյն երդուան երդումն անվեհեր.

Ապա 'ի բանս իւր յաւելեալ կինն առ նոսա զայս ասէր.

Դուք լուռ կացէք. երբէք ընդ իս մի ոք 'ի ձէնջ խօսեսցի,

թէ առ աղբեր թերևս ուրեք և կամ յուղղոջ դիպեսցի.

Զի մի գուշակ ոք 'ի տան անդ ըզխէթ ծերոյն զարթուսցէ,

Եւ զիս պրկեալ 'ի խիստ սարիս և ձեզ ըզմահ նիւթեսցէ.

Լի՛ք դուք ուշիմք և ձեր ուղղոյն պատրաստեցէ՛ք ըզթոշակ,

Լցէ՛ք ըզնաւըդ պարէնիւք, և տո՛ւք ինձ ազդ հրաւիրակ.

Ես ձեզ ոսկի առեալ բերեմ՝ որ ինչ յիմ ձեռն անկանի,

Նաև այլ վարձ նաւուղղութեանդ վարձ մի տամ ձեզ փարելի.

Սան ես ունիմ ինձ զարքային զորդին մանուկ բարեկիր,

Մանուկ առոյգ, շոյտ և ուշիմ, նաև աշխոյժ ժիրաժիր.

Ըզնա ես ձեզ առեալ բերեմ և նա ձեզ դանձ եղիցի,

Երբէք ուրեք թէ 'ի վաճառ հանջիք ըզնա յաշխարհի։

Զայս խօսեցեալ երթ կինն 'ի տուն, իսկ նոքա անդ զաժն ողջոյն
Դեգերեցան, լցին ըզնաւն շատ կարասեօք ակաղձուն։
Իբրև այնպէս բեռնաբարձեալ և կազմ էր նաւն առ 'ի դարձ,
Յըղէն կընոջ զայր ազդարար զայր ոք հրեշտակ խորազգաց.
Այս այր 'ի տուն հօրն իմ եկեալ, և առ եբեր մեզ մանեակ
Մանեակ ոսկի ընդելուզեալ էր 'ի սաթից գերունակ.
Մայր իմ 'ի ձեռս առեալ զմանեակն անդ և երամք նաժշտաց
Կային յակՃիռս և հրաշանան և խոստանան տալ ըզվարձ.
Պարապ գտեալ այրն այն կընոջն եա լուռ նըշան ակնարկի,
Եւ փութապէս 'ի նաւըն կոյս ինքն անկանէր 'ի յուղի.
Իսկ կինն առեալ ըզձեռանէս ած զիս արտաքս առանձին,
Եւ գլուանէր նա անդ բաժակս նաև սեղանս 'ի գաւթին.
Էին ըսպասք այն հօրն իմոյ սեղանալից որերոյն,
Սակայն գնացեալ էին ողջոյն յոստանն յատեան խորհրդոյն.

Նա ձեպ ընդ ձեպ եդ 'ի ծոցին երիս ըս-
կահս 'ի ծածուկ,
Եւ ես ըզհետ նորա գնայի խակախոր-
հուրդ զերթ մանուկ։
Ի մուտս արեգն էր լուսատուն, և մութ
պատէր փողոցաց.
Մեք ձեպընթացք եկաք ողջամբ յան-
դոյր դադարըն նաւաց.
Կայր անդանօր նաւ Փիւնիկեանց նաւն
այն արագ 'ի ծովին,
Մեք ամբարձեալք 'ի լաստափայան և հա-
տանեմք լոյծ զուղին.
Հողմ յաջողակ առ 'ի վերուստ Ամպրո-
պայինն առաքէր
Եւ նաւեցաք մեք վեցօրեայք յաջողք ըզ-
տիւ ըզգիշեր.
Իսկ յորժամ մեզ յԱրամազդայ եօթնե-
ւորդին օր ծագեաց,
Նեստակաքաւըն Արտեմիս հար ըզկին զայն
և խոցեաց.
Գլեալ անկաւ նա դոփելով 'ի խոր 'ի
գոգն 'ի նաւին.
Եւ անդ մընաց չուառական զերթ խոց
կիւիւ ծովային 66.
Ըզնա 'ի ծովըն ամացին 'ի կեր փոկոց և
ձրկանց,
Եւ ես ելեալ անդ մընացի յոգի հարեալ
տրտմազգեաց։

Հողմունք ըզմեզ և ծուփք ալեաց առին արկին յԻթակա,
Գընոց գընեաց զիս Լայերտէս, յայնժամ զերկիր զայս ծանեայ »։
Լուեալ ողջոյն մեծն Ոդիւսէս և անդրադարձ զայս կրկնէր.
« Լուր քոց Ճառիցդ, ո՛վ Եւմէոս, հար զիս խոցեաց կարեվէր.
Դու քանիցն չարչարեցար յոգիդ, 'ի սիրտ ցաւագին,
Այլ Արամազդ առ և խառնեաց քեզ ըզչարիս ընդ բարին.
Քանզի տանջեալ գըտեր զարդիս զառըն հեզոյն ըզմարդակ,
Որ գըլթուլթեամբ տայ և ջամբէ քեզ կերակուր և բաժակ.
Զի դու աստէն կեանըս վարես բարոյրուլթեամբք լիուլի,
Իսկ ես ընդ շատ քաղաքս անցեալ թափառական ասա հասի »։
Զայս անդ զրուցեալք 'ի քուն մըտին այլ ո՛չ բազում ժամանակ,
Քանզի արագ լուսածագեաց ոսկեգահիկն Արևակ։
Մինչ այս մինչ այն, որեարն յայնժամ զոր յինք խմբեաց Տելեմաք,
Փոյթ զառագաստն ամփոփեցին ժամանեղեալք 'ի ցամաք.

Փոյթ և ըզկայմն ի՝ջուցեալք և Թիակք վարեցին

Ըզ լաստավայոն անդ 'ի դադարն, առին խարիսխ ձրգեցին։

Կուռ կառանոքն հաստատեալ, յափրն ծովուն ելանեն,

Եւ բաժակոք անոյշ գինւոյն անդէն ընթ-ըիս պատրաստեն.

Իբրև կերան և ըզգինւոյն զիղձն հարին անուշակ,

Ձայն քաջուշիմն առ իւրն որեար բար-բառեցաւ Տելեմաք.

“Ընդլաստավայոդ առէք դուք արդ և վարեցէք 'ի յոստան,

Ի յայց հովուացն ելանել 'ի յագարակն ես գընամ.

Անդ վըճարեալ և երիկուն 'ի մեր քա-ղաքն առնեմ դարձ,

Եւ առ վաղիւն ձեզ վարձ քրտանց տայ ես ընթրիս մեծահաց”.

“Իսկ ես ապա, սիրուն որդեակ, թէ-ոկլիւմէն ձայն կարդաց,

Ո՞ւր ուղղեցայց, և յո՞ր 'ի տուն Իթակա-ցւոց իշխանաց.

Գնացից արդեօք առ մայրդ արդոյ և 'ի քոյինդ 'ի տաճար”.

Տելեմաքոսն քաջուշիմ լուեալ զհար-ցումն էոն բարբառ.

« Ըստ պատեհի ժամանակին ես ինքն ըզ
քեզ 'ի յիմ տուն
Ժողովէի, և անդ հիւրոյթ չէր քեզ այլ
ինչ լաւագոյն.
Սակայն զարդիս քեզ չէ բարի, զի ես
անդ քեզ մերձ ոչ կամ,
Նա և ոչ մայրն իմ սիրելի տեսցէ ըզքեզ
անդ 'ի տան.
Քանզի և ոչ նա հոմանեսացն յաճախա-
գոյնս երևի,
Այլ 'ի յարկին իւր վերնատան նրստի հե-
նու մեկուսի:
Ես քեզ այլ այր հիւրամեծար ցուցից
զարդիս զԵւրիմաք,
Որ դիւցազնին Պողիւքեայ է հոյակապ
նա զաւակ.
Այր լաւ է նա, և շուք ըզ դից Իթակա-
ցիք տան նրմա,
Եւ մեծապէս զիմ մայրն արդոյ 'ի կին ա-
ծել նա տարփայ.
Անձկացեալ է նա ժառանգորդ գահուն
լինել Ոդիսեան',
Բայց Արամազդ գիտէ ճշգրիտ վեհ երկ-
նաբնակն ողիմպեան,
Եթէ արդեօք չար օրահաս ըզհարսանիս
կանխեսցէ՞ »,
Այն ինչ նորա բանքն 'ի բերան, հաւ մի
թռեաւ 'ի յաջմէ.

Էր այն բազէ արագաթռիչ հրեշտակ բանբեր Փեբոսի,
Եւ 'ի մագիլս կալեալ ունէր նա ըզքունքուշն ալաւնի.
Ըզթիւս զփեռոուրս զաղաւնոյն փեռէր բազէն այն վիրագ,
Եւ թօթափէր ընդ մէջ նաւուն, և ուր կայր ինք Տելեմաք.
Թէոկլիւմէն առեալ զաջոյն Տելեմաքեայ մեկուսի,
Բարբառեցաւ, «Լուր ինձ, ասէր, ո՞ Տելեմաք նազելի.
Բա՛ ոչ առանց ինչ աստուծոյ հաւրն թռեաւ ընդ աջմէն.
Զայն ակներև ես դիտելով քաջ դիտացի, հրմայք են.
Ձեզ քան ըզձերն այլ առաւել ճեռ արքունի յԻթակէ,
Այլ դուք ասէն միշտ զօրաւորք քաջ պանծասջիք 'ի թագէ».
Կից ընդ բանին և Տելեմաք հաւահմային ձայն կրկնեաց.
«Ցի՛ւ եթէ, ո՛վ հիւրընդ քաջ, լինէր ըզձիդ կատարած.
Արագ արագ սէր և պարգև քեզ նաւթճէի անսահման,
Զի և տեսողք մեծ երանիս քեզ կարդային յանդիման»:

Գնաց, անդէն բարբառեցաւ ձայն մը-
տերմին իւր Պիրեայ.
« Ա՛ղէ Պիրէ՝ ո՛վ Կլիւտոսեան դու յիմ
ընկերս գերակայ.
Որչափ 'ի Պիւղ ինձ միանգամ նիզակա-
կիցք զհետս եկին,
Դու առաւել յամենայնի քաջ դիւրեցեր
իմ սրտին.
Դու և զարդիս զայս զիմ հիւր մեծ 'ի քոյդ
ածցես յօթեվան,
Եւ գրգանոք շուք մատուցցես մինչ ես
դարձայց միւսանգամ։
Ձայն Պիրէոս կրկնեաց անդէն. « Լո՛ւր
ինձ, արգոյդ Տելեմաք.
Լէր անվեհեր, թէպէտ և ասս դու ձիգ
կացցես ժամանակ.
Դա անկարօտ լեցի բնաւին, և յիմ վերայ
հոգն ողջոյն »։
Ասաց և եկ անդէն 'ի նաւն, և ձայն կար-
դաց որերոյն։
Հասա 'նդ նրմա եկին, և դուկ անդէն
տային կառանաց,
Եւ փուքթասպէս նստան նոքա 'ի բազմոցին
թիակաց։
Տելեմաքոս կապեաց 'ի յոտս զիւրն ըզ-
կօշիկ գեղանի,
Եւ ձեպ 'ի ձեռն առ 'ի նաւէն ըզ տէգն
ըզկուռ պրոնձի.

Լուծեալք զկառանըս նաւաստիք և շարժէին ըզթիակ,
Ծով հատանէն ուղղեալք յոսատանն, որպէս ասաց Տէրն մաք.
Իսկ ինք դիմեալ 'ի յագարակն և առ խոզեանն հասանէր,
Որոց 'ի մօտ ընկողմանեալ ննջէր Եւմէս տիրաւէր :

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Խնդայ յոյժ Եւմէոս ընդ ողջամբ դարձ Տելեմաքեայ. և առաքի 'ի նմանէ 'ի քաղաքն աւետիս տալ մօրն զդարձին իւրոյ: Ամենասն երևի Ոդիւսեայ և անդրէն փոխէ զնա յառաջին կերպարան իւր. և հրամայէ նմա ծանօթս տալ որդւոյն զանձնէ իւրմէ: Անկարծելի դիպացն հրաշալիպ նկարագրութիւն: Իսկ անդուստ հոմանիքն դարանակալք 'ի դարձն Տելեմաքեայ, 'ի դերևս ելեալ դառնան ամօթով 'ի քաղաքն: Եւմէոս կատարեալ ըզհրեշտակութիւն, դառնայ անդրէն յադարակն առ Տելեմաք, չճանաչէ տակաւին զՈդիս զմիւսանգամ փոխակերպեալն յԱմենասայ:

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱ.

Ա՛ՂՔԱՔ ընդ այդ մեծն Ոդիսէս և
Եւմէոս առանձին,
Յարեան և Ճաշ պատրաստէին լուցեալք
ըզհուրն 'ի վրանին.
Ճեպ տան հովուացն և արձակեն ըզմեծ
խոզիցն երամակ,
Մենչդեռ անդուստ բազմահաչեան շուն-
քըն տեսին զՏելեմաք.
Ոչ հաչէին, այլ ըզնովաւ մօտ քծնէին
սիրապէս,
Եւ ըզքրծինս յակն իւր արկեալ դիտեաց
քաջիկ Ոդիսէս.

Լսէր 'ի նոյն միանգամայն և 'ի մօտոյ զոտնաձայն,
Անդէն և անդ առ Եւմէոս արագաթև կարդաց ձայն.
„Անշուշտ զարդիս, ո՞վ Եւմէոս, գայ ոք առ քեզ մշտերիմ
Եւ կամ ծանօթ, քանզի և շունք ոչինչ հաչէն, այլ քծնին.
Նա և 'ի մօտ ես ականջեմ ասուէն զոտից ըզշառաչ".
Այն ինչ ասէր, անդէն առ սեամն Տէրէ մաքոս էկն եկաց.
Տես Եւմէոս, յապուշ հարաւ, անդէն 'ի վեր նա վազեաց,
Եւ խառնարանքն անոյշ գինւոյն անկանէին 'ի ձեռաց:
Եւ ընթացաւ ընդառաջեալ տեառն իւրոյ դրկալեր,
Նա և համբոյր տայր կրկնակի աչաց նորա լուսալեր.
Համբոյր սիրով տայր և գլխոյն, նա և ձեռացըն կրկին,
Եւ գերարտօսր հեղոյր Եւմէս այն սիրասէրն առ ինդին.
Զոր օրինակ հայր սիրասուն փարեալ զորդին իւր գրգայ,
Զդարձեալն յերկրէ առ 'ի ծագաց ըզկնի աւուրց ասանամեայ.

Զաւակ բազմաց իւրոց ցաւոց, և միա-
ծին, ծերածին,
Այսպէս յայնժամ քաջն Եւմէոս եռեռ
ըզպերճ պատանին.
Նա գիրկ ընդ խառն համբուրելով իբրև
ապրեալ յօրհասէ,
Եւ համբուրիւ ոչինչ յապեալ, յոգւոց
եհան և ասէ.
"Ողջամբ եկիր, Տելեմաքէ, լոյս մեր
աչաց աննման.
Ո՞ինձ ասէր ըզքեզ ողջիկ յակն արկանել
միւսանգամ:
Դու առ 'ի մէնջ անդր 'ի Պիւղոս 'ի չու
անկար յանկարծոյն.
Այլ ասղէ մուտ 'ի Նեղքս առ մեզ, ով դու
որդեակ սիրաբուն.
Ընդ քո այցելդ մեզ 'ի հեռուստ արդ 'ի
տես քո բերկրեցայց,
Որ դու յաճախ աստ ոչ գայիր յայց մեր
գաւթիս և հովուաց:
Մնայիր յոստանն, քանզի սիրտ քո բազ-
մատագնապ ոչ ժուժայր,
Եւ գիտէիր ըզհոմանեացն ըզչարաշուք
զայն որեար":
"Այո՛, ով հայր, բարբառ կրկնէր Տե-
լեմաքոսն արդոյ,
Դամաւադիկ զքեզ տեսանել, նաև լսել
ըզբան քո.

Արդեօք 'ի բուն յիւր ապարանս մայրն
իմ մընաց տակաւին,
Եթէ արդեօք այր ոք օտար առեալ ըզնա
ած 'ի կին.
Արդեօք այրի ամայացեալ եկաց մահիճն
Ոդիւսեան,
Եւ ձրգեցան սարդիոստայնք և խրթնա-
ցաւ սրսկական »:
Կրկնեաց Եւմէս իշխանն հովուաց էտ
քաջալեր զաւակին.
« Հանդարտ լեր, քաջ. մայր քո արդոյն
կայ 'ի տան քում տակաւին.
Մինչ անսասան կայ 'ի յոգին, սակայն
և միշտ տրտմազգեաց,
Թացեալ ըզտիւ և ըզգիշեր կայ յորդա-
հոս յարտասուաց »:
Ապաց, էառ նա 'ի ձեռացն ըզպըղնձի
կուռ զաշտէն,
Մուտ Տելեմաք անդէն 'ի նեղքս անցեալ
ընդ սեամն քարեղէն.
Ըզնա յայնժամ հայրն Ոդիւսէս յիւրն
աթոռակ մեծարէր,
Բայց և անդուստ Տելեմաքոս հրաժեշտ
տուեալ և ասէր,
« Ելի՛ սա դու ո՛վ հիւր. մեք այլ աթոռ
'ի յայս 'ի մեր հանդերձուան
Գոցուք անշուշտ. կայ աւադիկ մեզ սպա-
սարկուդ յանդիման »:

Լուաւ զայն հայրն, դարձաւ անդրէն և յաթոռակ իւր նստէր.

Իսկ Եւմէոս ջովքս զոստոց առ և յերկիր տարածէր.

Աչ 'ի վերայ և ըզմորթ թաւ, և բազմեցոյց զՏելեմաք,

Եւ եդ նոցա 'ի հանդիպոյ ըզխորովն ըզպընակ.

Խահք նշխարեալք էին մնացորդք օր մի յառաջ կերոզաց,

Նաև հապճեպ այրն հիւրասէր 'ի սակառիս կուտէր հաց:

Առ և խառնեաց նա յըմպանակն նոցա գինի քաղցրութեան,

Եւ ինքն անցեալ էառ բազմոց Ոդիւսէսին յանդիման:

Իբրև վայելքս կշտացինդ առին զխահից, ըզգինւոյն,

Հարցուն առնէր Տելեմաքոս առ Եւմէոսն այն արդոյն.

"Աստ ինձ, հայր. այդ հիւրդ առ քեզ ո՞ւստ ուստեք աստ եկեալ է.

Չխորդ ըզդա արք նաւաստիք առեալ աչին յԻթակէ.

Եւ ոչք ոմանք էն նաւաստիքն. զի նա հետի աստ չեհաս,,.

Լուար դու զայն, քա՛ջդ Եւմէոս, և անդրադարձ եառուր զայս.

« Այնասահման դա 'ի Կրետայ ազգա-
տոհմիւ սերեալ է,
Թափառական ընդ շատ քաղաքս այր
ձրգձրգեալ 'ի Քաջէ.
Զարդիս ըզսա Թեսպրոտացիք նաւար-
կելով ասա ածեն,
Եւ էին առիս 'ի յայս փարախս, զոր արդ
ես քեզ յանձն առնեմ.
Եւ արասցես դու ըստ կամի, զի քեզ յո-
ղոք անկեալ է »:
Լուաւ ըզբանդն Տելեմոքք, բարբառեցաւ,
« Ով Եւմէ.
Յոյժ դրժուարինդս խնդրեցեր. իսկ
զի՞արդ ես պատանիս
Հիւրընկալու այդ ծերունւոյդ կարեմ լի-
նել 'ի յարկիս.
Զեմ անվեհեր ես 'ի բազուկս քաջ 'ի դի-
մի հարկանել,
Յորժամ ոք այր ըզծերունիդ յարձակեա-
ցի 'ի գրձձել.
Նաև արդոյ մայրն իմ զարդիս յերկուս
վարանս է ծրփեալ,
Եթէ արդեօք մնասցէ առ իս և լիցի տանս
խնամակալ,
Առն անկողնոյն իւր անդն ածցէ նաև ձայ-
նին խուժանի,
Եթէ քաջի և ընչաւէտ նա տարփածուին
կին լիցի.

Բայց ես հիւրոյդ, զի 'ի տուն քո դա
ընկալաւ Իյեվան,
Խրլայս, բաՃկոնս առատապէս տաց և
չքնաղ պատմուՃան.
Տաց և ոտից նորա կօշիկս, տամ և սուր
մի երկայրի,
Եւ յրղեցից ըզնա ողջամբ ուր միանգամ
փափաքի.
Իսկ թէ կամիս ատոէն ունել, դու քոյ
հիւրոյդ ած խընամ,
Եւ ես 'ի հիւղդ ձորձս առաքեմ, նա և
ըզկահ զամենայն.
Զի մի իւիք քեզ ծանրասցի, մի և քոյին
ընկերաց.
Բայց ծերունւոյդ չառնում ես յանՃն
գալ յերևան հոմանեաց.
Զի են նոքա ալք ալաջուրք և ալք ժը-
պիրհք անրմբեր,
Եւ թէ ըզդա ինչ գրՃՃեսցեն, ինՃ ցաւես-
ցէ կարեվեր.
Մի այր 'ի մէջ արանց բազմաց թէպէտ
և այր զօրաւոր,
Զի՞նչ մարթասցի ինչ ատակել, ալք են
նոքա յոյժ հզօր »:
Եբաց յայնժամ ըզբերան իւր համբերա-
տարն Ոդիւսէս,
«Ի՞նչ և ինՃ արժան, ո՛վ քաջ, խօսել ինչ
մի յայս հանդէս.

Զիս օ՞ն և օն տանջէ տապէ այդ լուր ճա-
ռիդ հոմանեաց.

Ո՛վ քանիօն խեռացեալ են քեզ 'ի տան
քում յակամայս.

Այլ ասա՛ ինձ, եթէ արդեօք դո՞ւ տեղի
տաս մըտադիւր,

Կամ թէ քաղաքդ ատեա՞յ ըզքեզ 'ի
պատգամաց ինչ 'ի լուր.

Կամ թէ լքեալ կաս դու յեղբարց որ
քաջ մեզ են ապաստան,

Եւ լինին մեզ նիզակակից 'ի մարտ սաստիկ
գոռութեան.

Իցէ՞ թէ արդ յայս իմ աշխոյժս ես լինէի
պատանի,

Կամ թէ որդի եղեալ էր իմ մեծ դիւցա-
զինն Ոդիւսի.

Եւ կամ թէ ինք քաջն Ոդիւսէս թափա-
ռականն գայր այժմիկ,

(Որովհետև 'ի դարձ նորա չէ մեր հա-
ստեալ յոյսն ողջիկ).

Եւ յայնժամ ինձ սուր սայրասուր ա-
ռեալ անդէն այր օտար

Եւ ըզկառափն իմոյ գլխոյն թող ինքն
հարցէ չարաչար,

Թէ ոչ վնասեալ ես ինքն յոխորտ 'ի բուն
'ի տուն Ոդիսի,

Եւ բոլորիցքն հոմանեաց օրհաս մահու
գուժայի.

Իսկ թէ նրկուն առ 'ի բազմայ ես լինէի միայնակ,
Բա՛ յիմում տան ես ընտրէի կալ դիտապատ նրշաւակ,
Քան զոր ամէն ինձ ոգետանչ յակն արկանել գործ դժնի,
Գձձել ըզհիւրս, և զաղախինս բռնաբարել 'ի յարկի,
Քամել զբաժակն արբեցութեան, և ըսպառել ըզցորեան,
Եւ անիրնայ ընդ վայր ծախել, և յանուգուստ, անվախճան »։

Ինդէն ուշիմրն Տելեմաք ձայն զայս կարդաց անդրադարձ.
« Ես քեզ, ո՛վ հիւր, արդ ճշգրտիւ բան զամենայն մերկացայց.
Ո՛չ թէ սրտնեալ և կամ ատեայ զիս արդ քաղաքն իմ ողջոյն,
Եւ չեմ լքեալ և ամայի ես յիմ եղբարց երամոյն,
Որք և քաջ իսկ մեզ զօրավիգ են մարտակիցք յանձկութեան,
Այլ զի ըզմերն ըզճետն անդուստ առ մենացոյց Ողիւմպեանն.
Մեծն Արկիսոս իւր միածին որդի ծընաւ զԼայերտէս,
Եւ սա դարձեալ որդի միակ 'ի լոյս էած զՈդիսէս.

Իսկ Ոգիւսէս զնս յիւրում տան եթող
ծընեալ միայնիկ,
Եւ ոչ խնդաց. ուստի 'ի տան իւր խռնե-
ցան թշնամիք.
Քանզի ողջոյն իշխանք կղզեաց յաւա-
դանւոյն 'ի զարմէ,
Ի Դուլիքոս, և 'ի Սամէ, և յանտառուա
Զակիւնթէ,
Նաև ոչք աստ 'ի յապառաժ մեր յԻթա-
կէն են իշխան,
Ողջ տարփածուք են մօրն իմոյ, և են իսկ
ցեցք իմում տան.
Իսկ մայրս արդոյ 'ի յայս վարանս դը-
ժոխըմբեր հարսանեաց
Տագնապեալ կայ, ոչ մերժէ ինչ և ոչ տայ
ինչ կատարած.
Նոքա զիմ տունն վատնեն ծախեն, և զնս
վաղվաղ ծախեսցեն,
Սակայն առ ծունկըս աստուածոց այս
ամենայն կարգեալ են:
Բայց դու ով հայր 67, առ քաջուշիմ
Պենելոպէն Երթ փութա,
Տո՛ւր աւետիս եթէ ողջ կամ ողջամբ դար-
ձեալ 'ի Պիւղեայ.
Եւ ես աստէն կամ աւադիկ և դեգերեալ
մընամ քեզ.
Ե՛րթ դու զայս մօրս ասա միայն, և աստ
դարձիր փութապէս.

Ո՛Չ լուիցէ ամենեքին զք յորերոյն Ա-
քայեանց,
Քանզի բազումք իմոյ արեանս էն ծարա-
ւիք մարդասիանՀ ,, ։
Զայն Եւմէոս կրկնեաց անդրէն. « Քաջ
իսկ գիտեմ Էս զարդիս,
Եթէ ընդ այր զք խելամուտ դու զայդո-
սիկ բարբառիս.
Այլ ասա՛ ինՀ, գնացիցՀ նոյնպէս աւե-
տաբեր ազդարար
Նաև ծերոյն մեր Լայերտեայ հորդեալ
ընդ նոյն Ճանապարհ.
Զի նա՝ի սակս Ոդիւսէսին թէպէտ յոյժ
էր տրտմազգեաց,
Ուստէր սակայն ընդ ծառայիցՀ նաև տե-
սուչ կայր դաշտաց.
Իսկ աւադիկ յետ չուելոյն քո արդ՝ի
Պիւլ գաղտասպէս,
Ասեն, թէ նա դեռ չէ կերեալ և չէ ըմ-
պեալ նայասպէս.
Ոչ ելանէ նա յագարակ, հաշի մաշի ար-
տասուք,
Ցանգ հառաչէ, ծնգեալ ծիւրեալ կայ
ցամաքեալ ոսկերք ,, ։
Յոգւոց եհան Տելեմաքոս. « Ո՛հ ցաւ
ինՀ կարեվէր.
Այլ մեք թողցուք ըզծերունին նաև վայր
մի վշտիմբեր.

Քանզի եթէ իրաւ ամենայն էր իսկ 'ի ձեռս մահացուաց,
Նախ առաջին ըզհօրն իմոյ ես սադրէի աստ ըզդարձ.
Բայց դու իմ մօրս ազգեա՛, դարձի՛ր. և մի՛ գընար յաղարակ.
Ասա՛ ցըմայրս, նաժիշտ առ նա զոք յըղեսցէ նուիրակ.
Տընակալուէ կինն տացէ զիմ աւետիս դաղտ ծերոյն՝՝.
Զայս պատուիրեալ Տելեմաքոս, և էա Եւմեայ ճեպ ուղղոյն:
Ո՛ء ըզկօշիկս իւր Եւմէոս, գընայր յոստանն ճեպընթաց.
Այն ինչ 'ի դուրս էլ 'ի գաւթէն և էջ յերկնից Աթենաս.
Էր նա մարմնով համանմանեալ քաջ 'ի կընոջ 'ի տիպար,
Ձքնաղագեղ, բարձրահասակ, կին աչալուրջ և ճարտար.
Մօտ առ դրանդիս եկեալ եկաց և երևէր Ոդիսին,
Տելեմաքոս ոչ ինչ ետես և ոչ ըզգաց գլխովին.
Քանզի աստուածք ամենեցուն ոչ երևին յայտնապէս,
Այլ շարք գամփռանց տեսին ըզնա, տես և միայն Ոդիւսէս.

Շունքն ահաբեկք ոչինչ հաչեն 'ի յակն
արկեալ զդիցուհին.
Այլ կաղկանձեալք և սարսափմամբ ղօղին
յալուցս 'ի գաւթին:
Պալլաս յօնիւքքն ակնարկեաց և փոյթ
ըզգաց Ոդիւսէս,
Յարեաւ յարկէ 'ի խորանին, էլ նա ըստ
ցանգ փուլթապէս.
Ի հանդիպոյ կաց դիցուհւոյն, և Ամե-
նաս բարբառէր.
"Ո՞վ Լայերտեանըդ խորագէտ ժամ է,
ըզքեզ հան 'ի վեր.
Խօսեա՛ց զարդիս դու ընդ որդւոյդ, և
գընացեալ 'ի քաղաք,
Անդ դիտապաստ արկէ՛ք ըզխեռ ըզհոմա-
նեացըդ դասակ.
Նիզակակից եմ ես ընդ ձեզ և մարտ
մըղեմ քաջապէս":
Այն ինչ ասաց, և ցուպ զոսկին իւր հը-
պեցոյց Ոդիւսէս.
Շուրջ ըզնորա արկ զկրանաք մաքրափայ-
լեալ պատմուճան,
Կորով յորդեաց նա և մարմնոյն, էա և
հասակ բարձրութեան.
Առ նա դարձեալ ըզթուփս ըզգոյնն նոյն
և այտք իւր պարզեցան,
Եւ հերք մօրուացն 'ի ծընօտին կապու-
տակեայք ծաղկեցան:

Զայս Աթենաս հրաշագործեալ և էլ սրացաւ նա արագ.

Եւ Ոդիւսէս մուտ 'ի խորանն, յապուշ հարաւ Տելեմաք.

Անդէն զաչս իւր դարձոյց այլուր. զի խռովեցաւ ոչ հայէր.

Վարանեցաւ թէ աստուած է, բայց և ձայն ետ անվեհեր.

"Այլ ոք, այլ ոք դու ինձ ո՞վ հիւր արդ երևիս յանդիման,

Այլ են քո ձորձքդ, և այլ մարմինդ, դու քեզ այժմիկ չես նման.

Անշուշտ ոմն ես դու յաստուածոց, անշուշտ անմահ երկնաբնակ.

Այլ դու լիս, տէր. լեր դու քաւիչ. և քեզ հանցուք պատարագ,

Քեզ ձօնս ոսկւով հրաշակերտեալս, և խընայեա՛ դու 'ի մեզ":

Անդէն ձայն զայս բարբառեցաւ համբերատարն Ոդիսէս.

"Ոչ եմ ես աստուած. և հի՞մ ասես դու անմահից զիս նման.

Հայր քո եմ ես որ աղագաւ յոգւոց հանես յարաժամ.

Գիտեմ, զի շատ ցաւիս, զրկիս դու չարաշուք յորերոյն":

Զայս ինչ ասաց մեծն Ոդիւսէս, 'ի նոյն համբոյր ետ որդւոյն.

Ողջոյն ընդ այոս Ոդիսէսին յորդ Թա-
վիէին արտասուք,
Զոր նա ցայնվայր ժուժայր սանձէր և
սլինդ ունէր 'ի ծածուկ։
Ա՛յլ Տելեմաք ծըփայր 'ի միտս արդեօք
ըզհա՞յր տեսանէ,
Եւ վարանեալ նա 'ի խորհուրդս հրա-
ժեշտ տուեալ և ասէ.
" Քա՛ւ չէս դու հայր իմ Ոդիսէս. այլ
քաջ խաբէ զիս աստուած,
Զի կրկնատանջ ես տակաւին 'ի ցաւ սըր-
տիս հաշեցայց.
Զէ այս, չէ՛ այս գործ մահացուի, այլ
սէտք են մեզ անմահի,
Որ զծերունի զայրըն փոխէ, և հեշտ գոր-
ծէ պատանի.
Զի մինչև ցարդ դու ծեր էիր, արկեալ
էիր գըրդըլեակ,
Սակայն զարդիս երկնաբնակաց ես աս-
տուածոց հանդուն։ "
" Ո՛չ, քեզ զարդիս, Տելեմաքէ, կըրկ-
նեաց նոմա Ոդիսէս,
Չի՛ք ընդ հայր քո, որ հանդէպ կայ, քեզ
վարանել մեծապէս.
Մի՛ դու յանչափըս հիանար, և մի՛ սար-
սիր յերկիւղէ,
Չի՛ք այլ ուրեք, չի՛ք այլ Ոդիւս, որ այս-
առ քեզ եկեսցէ,

Եւ նոյն հայրդ եմ, հայր քո սիրուն,
բազմաչարչար վշտակիր,
Են ամք քրան ահաւասիկ, դարձայ ի կի
յիմ երկիր.
Բայց այս հրաշից է գործ ձեռին Աթ ե-
նասայ հրզօրի,
Որ զիս գունակ գունակ շրջէ և փոփոխէ
ըստ կամի.
Մերթ ցնցոտեօք զիս ընծայէ իբրև ըզ-
ծեր մուրացիկ,
Մերթ քաջառոյգ և պատանի ըզձորձ
արկեալ գեղեցիկ.
Երկնաբնակաց այս անմահից գործ է
հեշտին անարգել,
Զազգ երկրածին մերթ բառացի և մերթ
անշուք յարդարել,,:
Ելաց Ոդիւս, և բազմեցան. այլ Տելեմաք
ոչ ժուժեաց,
Եկ փարեցաւ ըզհարբ իւրով, լայր և հե-
ղոյր յարտասուաց.
Լան և ողբան զոյգ երկոքեան և կակա-
նին և կոծեն,
Եւ յարկն հնչէր սաստկագոյն ևս յոր-
ժամ թռչունք հեծեծեն,
Եւ կամ արծիւքն մագլաւորք և կամ
անգեղք 'ի բունին,
Յաւուր յորում ձագքն անփետուրք առ
'ի գեղջկաց հափահին,

Նոյն օրինակ լային ողորմ. և մինչ 'ի մուտս արեգին
Բա կոծային, թէ ոչ պնդեալ հօրն հարցանէր զայս որդին.
" Իսկ ո՞ր նաւաւ ըզքեզ ո՛վ հայր, մարդիկ ածին ասա յԻթակ.
Եւ ո՞յք էին այն նաւաստիք. զի ասա չէ՝ կիր հետեւակ ,, :
Զայն կրկնեաց հայրն, " Արդ Ճշգրտիւ քեզ ո՛վ որդեակ մերկացայց.
Զիս Փէակեանք առեալ բերին արք քաջահմուտք ծովագնաց.
Նոքա հիւրոց և պանդխտաց են ռահահորդք բարեմոյն.
Ըզծով հատեալք յարագ 'ի նաւ ասա հասուցին զիս 'ի քուն.
Նաև եառն ինձ 'ի պարգև ձիրս հոյակապս և արգոյս.
Բազում ոսկի, շատ և պըղինձ, և ըզհանդերձս անկուածոյս.
Արդ ասասուածոցն խորհրդով այս գանձք պահին 'ի յանձաւս.
Եւ զիս ասասէն ած Ամենաս օրհաս ածել հոմանեաց.
Զարդիս խորհուրդ մեք խորհեացուք. դու ինձ թուեա զհոմանիս,
Ո՞յք այն որեարն իցեն արդեօք, և քանիք էն գիտացիս.

Զի անվերջապէս ես կշռեցից, մեք միայնակ մարտ դիցուք,
Եթէ արդեաք և այլ որեարս մեզ 'ի թիկունս խնդրեսցուք »։
Զայն քաջուշիմն ետ Տելեմաք. « Ո՞վ հայր, ես ցանգ լրսէի
Ըզքոյ համբաւն հզօր 'ի մարտ և ըզհանճարն 'ի սրտի.
Սակայն զարդիս բան կարի մեծ բարբառեցար ինձ զարմանս.
Զի՞արդ երկու արք ժոեսցին երբէք կռուել ընդ բազմաց.
Նոքա բազումք են և հրզօրք, չեն նոքա տասն, ոչ քրսան.
Յոգնաթիւք են, և ըզհաշիւն տաց քեզ զարդիս ըզնոցայն.
Յիսուն թուով են և երկու արք պատանիք Դուլիքեայ,
Քաջք այրընտիր. և արբանեակք են վեց թուով ընդ նոսա.
Քաջք ամբարձան և 'ի Սամեայ քրսան և չորս պատանիք,
Քրսանք դարձեալ 'ի Զակինթեայ ազգայեցւոց արք մարտիկք.
Իսկ 'ի մերոյն են յԻթակայ արք զորաւորք երկտասան.
Այլ և Մեդոնն այն մեծ Քարոզ է ընդ նոսա միաբան.

Եւ ընդ Նոսա և այր երգակ Նուագածու
քաջավարձ,
Են և երկու այլ սպասարկուք քաջ խահա-
մոքք կերակրոց.
Թէ ընդ Նոսա մեք կքրեսցուք, խռնեալ
խուժանն ըզմեր տամբ,
Մեր եւք իրաց վրէժխնդրութեան լի՛ լե-
նիցի դառնութեամբ.
Բայց դու ո՛վ հայր, 'ի զօրավիդ ունել
քեզ զոք թէ կարես,
Զայդ խորհեսջի՛ր, որ քաջապէս նիզա-
կակից լիցին մեզ ,, :
,,Յեզ աւադիկ, կրկնեաց անդէն, համ-
բերատարն Ոդիւսէս,
Ասեմ յայանի. դու քաջ միտ դիր, և
խորհեացիս ուշմապէս.
Արդեօք մեզ ասա վերն Արամազդ և Ա-
թենաս քաջ մարտիկ
Շա՞տ ինչ լցեն, եթէ այլ զոք ես խնդրե-
ցիս զօրավիդ ,, :
Այն ինչ ասաց, և ձայն անդէն եւ քաջ
ուշիմ Տելեմաք.
,, Բա՛ռնէ, ո՛վ հայր, քան ըզնոսա մեզ ո՛ւր
գտցին օգնականք.
Թէպէտ նոքա կան տարակայք վերա-
բաղմեալք բարձր յամբոց,
Սակայն իշխանք են երկրածնաց և անմա-
հից աստուածոց ,, :

«Եւ արդ նոքա մերձ կացցեն մեզ, կըրկ-
նեաց անդրէն Ոդիսէս,
Երբ մեք դիմեալք այդ հոմանեաց գու-
ժամք ըզգոռըն զԱրէս.
Բայց դու արի՛ և 'ի տուն մեր գնասցես
վաղքաչ ընդ այգուն,
Ե՛րթ և խառնեաց ընդ գոռոզից այդ
տարփածուաց ժողովոյն.
Իսկ ըզհետ քո զիս Եւմէոս առեալ տար-
ցի 'ի քաղաք,
Զիս Իբրև այր ոք ծերունի և այր մուրիկ
անաւագ.
Եւ թէ 'ի տան վէսք հոմանիք զիս գձձես-
ցեն յայսպանաց,
Դու անվրդով տար և ժուժեա, թէպէտ
և ես վշտացայց.
Եւ թէ նոքա նաև 'ի դուրս զիս քարշես-
ցեն զոտանէ,
Թէպէտ և նետ ինձ կշռեացեն, դու մի լի-
ցիս այլ յայլմէ.
Այլ աղուաբար քոյին բանիւք ցածո՛
զլինեալն և սանձեա.
Գիտեմ, չանսան. զի մօտալուտ չար օ-
րահաս կայ նոցա:
Արդ զոր ասեմ, դու քաջ միտ դիր. յոր-
ժամ սադրէ ինձ Պալլաս,
Ես քեզ գլխով անդ ակնարկեմ, և դու
լե՛ր ինձ խորագգաց.

Որչափ ինչ կան 'ի տան մերում զէնք և անօթք արեսեան,
Բարձ դու ողջոյն, տարեալ դիցես անդ 'ի յարկի վերնատան.
Թէ խընդրեսցեն զայն հոմանիք, դու հեզաբար զայն ասա.
Ըզզէնան առեալ ես պահեցի և 'ի ծրխոյն զգուշացայ.
Զի խանձ հրոյն ողջոյն ըզզէնան արդ մրճոտեաց մեծապէս,
Եւ չեն այնպէս որպէս 'ի չուն եթող ասա զայնս Ոդիւսէս.
Ա՛ռ այս դարձեալ և Արամազդ խորհուրդ ինձ եդ 'ի սրտի,
Մի՛ դուք յանկարծ լեալ գինեհարք և կաց 'ի ձեզ յուզեսցի.
Վէրըս դիջիք դուք այր յընկեր, և հարսանեաց սեղանոյ
Խըռով հարջիք. քանզի երկաթ չար հրապուրիչ է մարդոյ:
Բայց մեզ նիզակ թողցես երկու, թո՛ղ մեզ սուսերս և կրկին.
Նաև ասպարք մեզ կրկնակի իցեն պատրաստք 'ի ձեռին.
Զի մեք դիմեալք առցուք ըզզէնան, և ըզնոսա 'ի ժամուն
Մեծն Ա՛թենաս և Արամազդ ենթադրեսցեն մեզ նրկուն:

Ինչ զոր ասեմ, լուր և անսա թէ իմ անշուշտ արիւնն ես,

Մի՛ և մի՛ ոք մարդ գիտասցէ եթէ մերձ կայ Ոդիսէս.

Ոչ Լայերտէս, ո՛չ Եւմէոս, և ո՛չ այլ ոք 'ի մեր տան,

Եւ ոչ ինքնին Պենեղոպէ, այլ այժմ ընդ իս դու միայն.

Ի միասին մեք զաղանեայս և ըզծառայս փորձեսցուք,

Յինչ միտս ելցեն և յինչ խորհուրդ ըստուգապէս ծանիցուք.

Ո՞ ոք արդեօք 'ի նոցանէն մեզ շուք եղեալ ակն ածէ,

Եւ կամ ո՞ ոք զանց արարեալ քեզ պատանուոյդ ունչս առնէ՞՝՝:

Զայն քաջուշիմն Ետ Տելեմաք. ՝՝ Քաջ ծանիցես 'ի մտոյ

Զիս ինքն, ո՛վ հայր, թէ չեմ ես վատ և չեմ անկած 'ի յոգւոյ:

Սակայն զարդիս ըզբան քո զայդ մեզ 'ի յօգուտ ոչ կարծեմ

Եւ ըզդոյն զայդ քեզ միւսանգամ խորհել կշռել ազդ առնեմ.

Զուր 'ի դաշտի դու շուրջ գայցես առ 'ի փորձել ըզծառայս,

Եւ ըզդոյս տանդ սեղեխքն անդուստ քեզ վատնեսցեն յանխնայս.

Սակայն ըզդաս ըզկանանուոյն քաջիկ զընեա 'ի յարկին,
Ոյք ըզքեզ, հայր, յընչաց քերեն, և ոյք անմեղք գլխովին.
Իսկ մեր զորեարն որ յագարակն մեք փորձեսցուք այլ անդամ,
Թէ արդ անշուշտ քեզ Արամազդ էտ ըզնըշանն յաղթութեան »:
Մինչ անդանօր զայս զրուցէին, նաև այն եհաս 'ի քաղաք
Որ համախումբ ընդ ընկերացն ած 'ի Պիւղեայ զՏելեմաք.
Անդէն 'ի խոր նաւահանգիստն արքըն մտեալ յաջողակ,
Դատարկեցին ըզլաստափայտն և քարշեցին 'ի ցամաք.
Ըզձօնս ջքնաղ զՄենեղաւեայ առ Կըղլուտոս տանէին,
Նաև Քարոզ զոք արձակեն 'ի յապարանս Ոդիւսին,
Պենելոպեայ տրամազդեցին գոլ աւետեաց հրաւիրակ,
Եթէ ողջամբ Տելեմաքոս էկն և մընաց յագարակ.
Ինքն հրամայեաց իւր որերոյն գալ 'ի քաղաքն ընդ նաւուս,
Զի մի անդուլ պերճ թագուհին ըզդիրգն հեղցէ զարտասուս.

Բայց այն Քարոզն և Եւմէոս հանդիպե-
ցան իրերաց,
Եւ միահեռք մեծ դշխոյին գնային բան-
բերեալ աւետեաց։
Ինեալքս 'ի յարկին նաժշտաց ձայն հնչե-
ցաւ Քարոզին.
« Քեզ աւադիկ, ով Թագուհի, ողջամբ
եհաս քո որդին »։
Բայց Եւմէոս մատեաւ ուրոյն և յուն-
կըն մօր գաղտաբար
Ծանոյց ողջոյն, զոր ինչ նըմա Տելեմա-
քոս ազդ արար.
Բան կատարեալ զհրեշտակութեանն և
դարձ արար նոյնհետայն,
Թողեալ անդէն պերճ զասպարանն,
ինքըն փուԹայր առ խոզեանն։
Յարեան յայնժամ հացկատակաց դասք
հոմանեաց Թախծագին,
Եւ ըստ գաւիԹն եղեալք յարկին մերձ
առ դրանդեօք նստէին.
« Բա՜ԹԷ, ով քաջք, բարբառեցաւ ձայն
Պողիւբեանն Եւրիմաք.
Բա՜ԹԷ, գործ մեծ արդ կատարեաց զիւրոյ
ուղղոյն Տելեմաք.
Զեր զայս յաջող ո՞ ոք կարծէր. այլ
ա՛ղէ մեք զաւ հանցուք,
Նաւ քաջամուր և նաւաստիս խմբեալ
անդէն յըղեսցուք,

Երթալ ազդել մեր որերոյն, զ' 'ի տուն դարձցին փութապէս »։

Այն ինչ էին բանքն 'ի բերան, և Ամփի-նոմ նաւ ետես։

Քանզի դարձոյց զակն իւր 'ի ծով, և նաւն 'ի խոր նաւակայս

Անդ զառագաստս զիւր ամփոփէր, 'ի բաց բառնայր ըղթիակս։

Անդէն նա մանր 'ի ժպիտ հատեալ բար-բառեցաւ և ասէ։

« Զեն մեզ այլ պէտք բանբեր յըղել, մեր նաւն ահա 'ի ներքս է։

Զայն կամ ասատուած ազդեաց նոցա, և կամ տեսին յանդիման

Զի նաւն էանց Տելեմաքեայ, զոր և ու-նել վերջացան։

Լուան ըզբանն և յարուցեալ ծովափն 'ի կոյս երթային,

Եւ դատարկեալք ըզլատապիսյան և 'ի ցամաք քարշեցին։

Եկին յատեան ժողովեցան, և անդ բազ-մել թոյլ չետուն

Ոչ պատանւոյ ոչ կրսերոյ և ոչ աւագ ծերունւոյն։

« Բաբէ, ո՞վ քաջք, Անտինոոս պեան Եւպիթեան ձայն կարդաց,

Զիարդ ասատուածք ըզլատանիդ Հոլոպ-րեցին 'ի չարեաց։

Ո՞Չ դէտք ըզտիւն 'ի ծայրս նաւուն 'ի հողմահարս միշտ անքուն
Նստեալ կային ժիր պահանորդք մինչև ցրմուտս արևուն.
Ի ցամաքի երբէք յայնժամ ոչ անցուցաք ըզ գիշեր,
Այլ յալէտանչ ծով ծրփէաք մեք մինչև ցայգ լուսաբեր.
Դարանամուտք նստեալք մահուն մեք Տելեմաք պատանւոյն,
Նրմա աստուած հովանացեալ առ և էբեր ողջ 'ի տուն.
Այլ ոչ զերծցի Տելեմաքոս, մեք աստ ըզմահ նիւթեացուք.
Զի ցորչափ դա լոյս տեսանէ, մեք գլխովին վատասցուք.
Է իսկ 'ի բնէ դա քաջուշիմ, և ջոգնեսցէ մեզ խուժանն.
Օ՞ն արի՛ք քաջք, մինչև դորա ըզՅոյնս խմբեալ է յատեան.
Անշուշտ սրտնեալ նա բոցավառ յոտն յարիցէ յատենին,
Բողոք բարձցէ ըզմեր դաւոյն 'ի սնավասուակ դարանին.
Ըզմեր զոՃիրն Հելլենք լուեալ սրտմըտեացին միաբան,
Եւ զմեզ յերկրէս տարաշխարհիկ արասաքսեսցեն յայլ սահման.

Օ՞ն կանխեացուք 'ի մահ նորա կամ անդ 'ի դաշտ յամային
Եւ կամ յուղղոջ, և զգոյս նորա մեզ բաշխեացուք 'ի բաժին.
Իսկ զապարանս մօր դշխոյին հանցուք մեք մասն 'ի բաժնէ
Եւ փեսային որ ըզդշխոյն երջանկացեալ կին ածցէ.
Ապ' եթէ բանս ձեզ չէ հաճոյ, և կեալ դրմա փափաքէք,
Եւ հայրենեացըն ժառանգորդ ըզպատանիդ հաստատէք,
Հիմ աստանօր ըզգոյս նորա մեք ըմբոշխնեմք 'ի յարկի.
Օ՞ն առեալ ձեր, և 'ի տուն իւր այր այր ելեալ մեկնեսցի.
Յիւրմէ տանէն նա տարփացեալ ըզվեհ դշխոյն խնդրեսցէ,
Լիցի նա առն որ բազում տայ և որում բաղդն յաջողէ »։
Լուան ողջոյն ելբռեցին. մինչև ձայն էտ յատենի
Ամփինոմոս պերճն Արետեան որդին Նիսեայ արքայի.
Սա ինքն իշխան էր հոմանեացն որ յարգաւանդ Դուլիքին,
Էր և մրոջք նա քաջուշիմ և էր հաճոյ դշխոյին.

Բարբառեցաւ. «Քա՛ւ ես ընդ մահ չեմ
ինչ հաճեալ պատանւոյն.
Զարքունական ճեռն անճիտել, ո՛վ դը-
ժնդակ է համբուն,
Ա՛ղէ, խորհուրդ ո՛ բարեկամք հարց-
ցուք մեք արդ առ 'ի դից.
Թէ այս կամք են Արամազդայ, բա՛ մահ
նըմա ես ածից.
Նա՛ ձայն ինքնին տաց և այլոց 'ի զօրավիգ
ինձ լինել.
Իսկ թէ աստուածք ոչ հաճեսցին, ձեզ
ազգ առնեմ հանդարտել»:
Զայս ինչ ասաց Ամփինոմոս, և հաճե-
ցաւ ողջ առեանն,
Յարեան մըտին յարկն Ոդիւսեայ և անդ
շըքով բազմեցան:
Բայց քաջուշիմն Պենելոպէ դարձեալ
խորհուրդ հաստատեաց,
Գալ երևել և յանդիման ձայն մի կար-
դալ հոմանեաց.
Քանզի լուաւ նա 'ի յարկին զօրահասին
գոյժ զորդւոյն,
Զոր հան 'ի վեր նըմա Մեդոն լեալ իրազ-
գած խորհրդոյն:
Վերնատանէն էջ նա 'ի յարկն ընդ նա-
ժշտաց իւր դասուն,
Եւ հաս 'ի ջոկըն հոմանեաց, շուքն այն
և զարդ կանանւոյն.

Եկաց առ սեամն մեծի սրահին գիրգ իւր այտիւք քօղազգեաց,
Զայն թագուհին բարբառեցաւ, զԱնտինոոս կշտամբեաց.
“Անտինոէ, վէս դու գոռոզ, չար աչուեստիւք ծայրալիր.
Դու յԻթակեան 'ի համատիպ համբաւեալ ես, բայց նանիր.
Զի համբաւիս իբրև ըզվեհ և 'ի հանճար և 'ի բան,
Բայց զրաբանեն համբաւաբերքն, զի համբաւոյդ չես նման.
Վա՜յ քեզ շամբուշ, հիմ դու մանկանս մենքենայես օրահաս,
Եւ զմեր մաղթանս, ում վկայ է ինքն Աստամազդ, ոչ հոգաս.
Զարիս նիւթել ոչ է բարի. նաև ինքնին յուշ չածէս,
Յորժամ քո հայրն ահաբեկեալ առ մեզ փախեաւ հիւքապէս.
Ընդ նա խուժանն էր ցասուցեալ, զի նա ընդ հէնան ընդ Տափեանս
Համախորհուրդ միաբանեալ և չար հասոյց թեսալրոտեանց.
Մեզ բարեկամք էին սոքա և ըզմահ հօրդ խնդրէին,
Նաև բնաջինջ առնուլ վատնել ըզգոյս նորա զհայրենին.

Ամ՛ Ոդիւսէս էանց 'ի մէջ և ըզմոլիսըն սանձեաց,
Զորոյ դու արդ ուտես ըզտունն և ամուսնոյն ցանկանաս,
Որդւոյն նորա ըզմահ նիւթես, ինձ ցաւառթեաս կարեվէր.
Լըռեա՛ այր դու, և ըզզովոզդ սանձակոծեա՛ անվեհեր »:
Արկնեաց յայնժամ ձայն դշխոյին Եւրիմաքոս Պողիւբեան.
« Քաջալերեաց, Պենելոպէ, դուստր իմաստուն Իկարեան.
Մի՛ խռովեսցիս, չի՛ք արդ այն մարդն, և ոչ եղև, 'ւ ոչ լիցի,
Որ յաւակնեալ ըզձեռն հարցէ քում քաջառոյդ զաւակի.
Ցորչափ ես կեամ 'ի կենցաղումս և լոյս զարփւոյն տեսանեմ,
Խոստումն անսուտ տամ քեզ այսօր նաև անշուշտ կատարեմ.
Թուխ ապաժոյժ արիւն մարդոյն ընդ գեղարդն իմ շաղեսցի,
Քանզի յիշեմ ըզգուլթ գորով ես զՈդիւսեայ ըզքաջի.
Նա շատ անգամ առ իւր ծնգովք ինձ խորովոյս տայր ջամբէր
Եւ գիրկ ընդ խառն ինձ անուշակ նաև գինի կարկառէր.

Ուստի սիրուն ինձ Տելեմաք մեծ է 'ի մէջ
երկրածնաց,
Եւ մահ նրմա ոչ ածցէ մարդ, բայց թէ
կամի ինքն աստուած "։
Մօր քաջալերը զայս եւ յայնժամ, բայց
ինքն որդւոյն մահ նիւթէր.
Իսկ եւ դշխոյն 'ի վերնատունն և անդ
զՈդիս արտասուէր.
Նորա աչացն նիրհ եւ Պալլաս 'ի դիւր
լալեացն հեզահոս,
Մինչդեռ անդուստ ընդ երեկոյն եհաս
'ի վայրն Եւմէոս։
Անդ գլուանէր նա զՈդիսէս, կայր առ
ընթեր և որդին.
Խոզ փողոտեալ, խոզ տարևոր, անոյշ
ընթրիս կազմէին։
Բայց Ամենաս անդ մերձ եկեալ առ
Ոդիսէս լայերտեան
Եհար ցրպուն, անդէն ըզ նա ծեր փո-
փոխեաց միւսանգամ.
Ըզգերգելեակն արկ ըզնովաւ, զի մի Եւ-
մէս ծանուցեալ
Բանբեր կրնոջն յոստան գնասցէ ճեպ
առ խնդին անժուժկալ։
" Ողջամբ եկիր, քաջդ Եւմէէ. նախ ձայն
կարդաց Տելեմաք.
Զինչ մեզ զբրոյց բերեր անդուստ, զինչ
ինչ խօսին 'ի քաղաք.

Դարձան արդեօք յետս հոմանիք զուր
վաստակեալքն 'ի դարան,
Թէ տակաւին դարանեալ կան սպասեալք
իմում գալըստեան »։
« Ես 'ի քաղաք մեր ընթացեալ, ձայն
զայս կրկնեաց անդրադարձ,
Ինչ մի ումեք ոչինչ հարցի և ուշ չեդի ես
զրուցաց.
Հոգ փուքթասկէս միայն կալայ ես զիմ
պաշտօն կատարել,
Երթալ բանբեր մեր դշխոյին և փոյթ
այսրէն դարձ առնել.
Բայց այր հրեշտակ ոք ճեպընթաց հան-
դիպեցաւ ինձ յուղին,
Նա յընկերացդ էր, և մոր քում նա սե-
տեաց առաջին.
Այլ ինչ դարձեալ ունիմ ասել զոր ես
տեսի յանդիման,
Անդ 'ի վերոյ մեր քաղաքին առ 'ի բլրոյն
Հերմեսեան.
Նաւ ես տեսի ճեպով իջեալ 'ի խոր 'ի
մեր նաւակայս,
Շատ էր որեարն, շատ և ասպար, շատ
երկայրի և աշտեայս.
Զայն նաւ կարծեմ ըզհոմանեացն, այլ
ինչ բնաւին ոչ գիտեմ »։
Այն ինչ լուեալ Տելեմաքոս և ժպտեցաւ
նա անդէն.

Գաղտ ընդ ակամբ նա առ հայր իւր հայ-
եացս արար և ժպտէր,
Բայց և 'ի նոյն առ 'ի յաչաց Եւմէոսին
խուսափէր։
Կազմեալք ապա քաջ ըզխորտիկն, ակումբ
առեալ ընթրէին,
Եւ լիաբաշխ և անկարօտ այր այր ուն էր
զիւր բաժին.
Առեալք վայելքս կշտասինդ առ 'ի խա-
հից, 'ի գինւոյն,
Ընկողմնեցան և զանուշակ առին պարգևն
ըզքընոյն։

ՈԳԻՍԱԿԸՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԷ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Հասանէ Տելեմաք նախ 'ի քաղաքն, ապա և Ոդիւս ածեալ յԵւմէոսէ։ Մելանթէս անուն այծարած նախատէ զՈդիս։ Ծերացեալ շունն Ոդիսի՝ անուն Արգոս, յետ քսանամեայ պանդխտութեան տեառն իւրոյ Ճանաչէ զտէրն, և առ ինդին մեռանի։ Մտանէ 'ի սրահ պալատան իւրոյ Ոդիս 'ի կերպարան մուրկի ծերունւոյ, և շուրջ եկեալ մուրանայ 'ի հոմանեացն։ Անտինոոս գոռոզ գլխաւորն հոմանեաց վարէ զնա 'ի բաց, և պատուանդան մի ևս ընդդէմ արձակէ նորա։ Պենելոպէ դշխոյն կին Ոդիւսեայ, 'ի ձեռն Եւմէոսի խնդրէ խօսել ընդ նորեկ մուրկին։ Պատասխանին Ոդիսեայ։

ՈՊԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԷ.

Ա՛ՐԴԱԾԸՂԻՆ ծագէր յաշխարհ գայր առաւօտն այգածին,
Եւ Տելեմաք ըզգեղեցիկ կապէր կօշիկս 'ի յոտին.
Ըզկուռ զաշտէն առեալ 'ի բուռն եղ և գընայր 'ի յոստանն,
Առ Եւմէոս բարբառեցաւ, „Հայր, 'ի քաղաքն ես գընամ.
Ի յայց եղից արագ արագ ես մօրն իմում սրգազգեաց,
Զի մինչև զիս նա ոչ տեսցէ, ոչ ըզուեսցէ յարտասուաց.

Բայց դու զայդ հիւր ծեր հիքացեալ առ
ած ընդ քեզ 'ի քաղաք.
Թող մուրացի, և հաց նրմա կարկառես-
ցեն և բաժակ.
Ոչ ժամանեմ իրնամ ածել ես ամենայն
պանդխտաց,
Զի եմ իսկ արդ ոգւով մարմնով ես
վշտահար և ցաւած.
Թէ հիւրդ ընդ բանս իմ զայրանայ, նա
վիշտ բարդէ իւր անձին,
Զի միշտ սիրեմ ճշմարտութեամբ ըզբան
խօսել զարժանին »:
Զայն Ոդիւսէս ետ խորագէտն. « Եւ ես
ինքնին ասա ոչ կամ.
Զի այր մուրիկ, քան 'ի դաշտի, հաց գը-
տանէ 'ի յոստան.
Անդ ինձ պարէն, լուր բարեկամ, տացէ
մարդ ոք ըստ կամի,
Զի չեմ առոյգ ասա տեառն ըսպաս ես
հարկանել 'ի գաւթի:
Դու երթ առ այժմ, և այրըս այս, ում
հրամայես, զիս ածցէ
Յորժամ արևըն բարձրասցի և տապ նորա
ջերուսցէ.
Զի այս իմ ձունձ է պահ մարմնոյս. զի
մի զիս ցուրտ վաղորդայն
Վընասեսցէ, քանզի զոստանն ասէք լի-
նել բացական »:

Այս Ոդիւսէս. իսկ Տելեմաք էլ 'ի գաւթէն ճեպընթաց.

Անկաւ յուղի, և խոճոճէր չարիս, աղէտս հոմանեաց.

Եհաս 'ի տունն 'ի բարեշէնն, և եդ զաշտէն առ մեծ սեան,

Էանց ընդ սեամբն մարմարեայ, և եկն եմուտ յօթեվան.

Նախ առաջին եռես ըզնա Եւրիւկլեա իւր դայեակ,

Որ զգառնենիս արկեալ սփռէր անդ 'ի յաթոռս երփնուռնակ.

Աչք իւր յարտօսր անդէն վազեաց և ընթացաւ ընդ առաջ,

Ապա և շուրջ վազեն խռնին անդ և այլ դասք աղախնեայց.

Գիրկս արկանեն և ըզգըլուխն 'ի նոյն և զուսն համբուրեն,

Մինչև անդուսա Պենեղոպէ դայր Եւանէր 'ի յարկէն,

Արտեմիսեայ և Աստղկանն ոսկեղենիկ կինն հանգոյն

Արկ ըզբազուկն գրկալիր արտասուալից իւր որդւոյն.

Եա ըզհամբոյր գլխոյն նորա, եա և աչաց լուսալիր,

Եւ ձայն կարդաց ձայն աղէկէզ. «Տելեմաքէ, ո՞ղջ եկիր.

Յոյս իմ 'ի տեսդ ողջ հատեալ էր, ո՛վ
իմ քաղցրիկ լոյս աչաց,
Յորժամ 'ի Պիւղ դու դաղտագնաց ինձ
ծով հատեր յակամայս.
Այո՛, սիրուն քոյ ծընողիդ դու 'ի համ
բաւն ընթացար.
Արդ զի՞նչ զբրոյց, և զի՞նչ տեսեր, մոր
քում պատմեա՛ կարդաբար »:
Երկնեաց անդէն Տելեմաքոս. « Մի՛ ո՛վ
մայր իմ, ըզկոծն իմ
Մի՛ նորոգեր, զի մաղապուրս յօրահասէն
ցաւագնիմ.
Բայց դու զարդիս Երթ լուացիր և ա՛րկ
քեզ ջինջ պատմուճան,
Եւ ընդ դասուն քոց նաժշտաց ելցես 'ի
յարկ վերնատան.
Անդ աստուածոց հարիւրեզնեան ուխտ
մի դիցես նուիրաց,
Երբ Արամազդ մերոյ վրիժուն տայ գե-
ղեցիկ կատարած:
Իսկ ես 'ի մեր 'ի հրապարակն այժմիկ
գընամ տալ հրաւէր
Իմոյ հիւրոյն, որ 'ի յուղղոջ եկն յարե-
ցաւ ինձ ընկեր.
Ընդնա ընդ իմ համահարզիցն ինձ յառա-
ջոյ յըղեցի,
Եւ օթեվան տալ իմ հիւրոյս Պիրէոսին
յանձնեցի.

Մինչև ես գամ, նա շուք հարցէ և գուրթ
ածցէ ըզնովաւ ».

Զայս պատուիրեաց Տելեմաքոս, և մայրն
ընդ բանն հաճեցաւ։

Եւ լուացաւ պերճ թագուհին, և շուրջ
զանձամբ արկ ջինջ ձորձ,

Եւ յաշտ առնել զհարիւրեզնեանն ուխտ
մի դնէր աստուածոց,

Թէ վրիժահան մեծի գործոյն եւք յա-
ջողին յՈրմըզդէ.

Ապա զաշտէն առ Տելեմաք և էլ արտաքս
'ի տանէ։

Բարակք նորա այն տիրասէրք էին նըմա
զուգընթաց,

Իսկ աստուածեան շուք և շընորհս հեղոյր
զնովաւ Աթենաս.

Հիացեալք յակռիոս կան ժողովուրդք
ընդ քայլս ոտից պատանւոյն,

Եւ հոմանիք բակ ըզնովաւ յառաջ եկեալ
տան ողջոյն.

Ողջոյն տային, բայց 'ի սրտի չարիս նըմա
նիւթէին,

Այլ քաջուշիմն առ 'ի նոցունց խոյս
տայր յայնժամ պատանին.

Ուր Անտիփոս և ուր Մենտոր և Ալիթերս
նստէին

Քաջ համահարզքն իւր հայրենիք, նա
երթ նստաւ մերձ նոցին։

Ուրքա յայնժամ բան մի առ մի կան հարցանեն պատանւոյն,
Մինչև անդուստ և Պիրէոս քաջագօտին հաս 'ի նոյն.
Նա ընդ քաղաքն ընթանալով բերէր ըզհիւրն 'ի յատեան.
Մատեաւ առ նա Տելեմաքոս և ոչ եկաց բացական:
Զայն Պիրէոս կարդաց յայնժամ. «Արդ առ յղեա, Տելեմաք,
Զի կանանւոյն տացին 'ի ձեռս 'ի յիմ տանէն քո ընծայք.
Պերճ այն ընծայք, զոր մեծ արքայն Մենեղաւոս քեզ ձօնեաց».
Կրկնեաց առ նա Տելեմաքոս. «Ո՛վ Պիրէէ, լուր ինձ, քաջ.
Եկից իրաց ինք հաւաստիք. գուցէ զիս գաղտ հոմանիք
Յոգի հարեալ, և ողջ իմ դոյք 'ի բաշխ հանցին հայրենիք.
Արդ դու յայնժամ, քան թէ այլ ոք, 'ի յայն ընծայս վայելեա.
Բայց թէ թերևս ես յաջողեալ մահ և հարուած տաց նոցա.
Եւ դու յայնժամ լի ցնծութեամբ ինձ դարձուսցես զայն ողջոյն».
Զայս խօսեցաւ, և առ ըզհիւրն ըզհիւրացեալ ած 'ի տուն:

Հասեալք 'ի յարկն և 'ի յաթոռս 'ի բաց
եդեալք ըզխըլայս,
Մըտին անդէն և լուացան 'ի մաքրափայլ
լոգարանս.
Լուացին նաժիշտքըն ժիրաժիրք, առեալք
իւղով օծեցին,
Եւ թաւամազ խըլայս, բաճկոնս, պա-
տուասիրեալք շուրջ արկին.
Ելեալք նոքա 'ի բաղանեաց և առնուին
բազմականս,
Մատեաւ նաժիշտն և զարծաթին ածէր
ըզկոնք, ջուր ձեռաց.
Հեղոյր ըզջուրն 'ի յամանոյն նա 'ի ջքնաղ
և յոսկի,
Ապա և ջինջ նոցա սեղան տարածանէր
առաջի.
Տընակալուչ կին ընդսեղանըն զարդա-
րեաց հացալից,
Եւ լիացոյց 'ի համադամ զայն 'ի պատ-
րաստ 'ի խահից.
Իսկ առ սեմքըն տաճարին մայրն հան-
դիպոյ զաւակի
Էառ բազմոց, նիւթէր մանէր ըզթել
բարակ ծիրանի.
Անդ բազմականք խնդամտեալք վայելս
առին զսեղանոյն,
Մինչ կշտասինդք եղեն նոքա առ 'ի խա-
հից, 'ի գինւոյն:

Զայն տայր յայնժամ մայրն առ որդին,
« Ո՛վ իմ որդեակ, լոյս աչաց,
Բաբէ, 'ի տանս ինձ չէք ինչ այլ, բայց
սրսկական սրգաղդեաց.
Եւ 'ի յարկիս 'ի վերնատանս յարտօսր
անդուլ զայն թանամ,
Յօրէ անտի յորում Ոդիւս 'ի մարտ չու-
եաց Տրոյական.
Եւ արդ ժուժա՛ս, մինչչև աստէն համա-
խմբեալ հոմանեաց,
Ոչինչ պատմել ինձ յայտնապէս ըզլուր
ծնողին քո 'ի դարձ »:
« Այո՛, մայր իմ, անդէն կրկնեաց Տե-
լեմաքոս պատասխան,
Քեզ ճշդրտիւ ես ճառ արկեալ ողջ
պատմեցից զամենայն.
Մեք 'ի Պիւղոս անդ առ Նեստոր առ
հովուապետս մեծ ազգին
Նաւեալ հասաք. և նա առ զիս որպէս և
հայր զիւր որդին,
Ըզդարձաւորն ըզբազմամեայն զայն ինչ
եկեալն 'ի ծագաց,
Այնպէս և ծերն 'ի պերճ 'ի տանն զիս
ընդ որդւոց իւր դրդուեաց.
Սակայն, ասէր, զՈդիւսէսեայ ըզվշտա-
կիր դիւցազնէ,
Կամ ըզկենաց կամ ըզմահուն ոչինչ լու-
եալ յումեքէ.

Համայն առեալ զիս նա կառոք երիվա-
ղոք արձակեաց
Առ Արևսեան Մենեղաւոս խարտեաշ
արքայն քաջ արանց.
Ես անդ տեսի ըզՀեղինէն, որ աղագաւ
ամս յոլով
Յոյնք և Տրովեանք շատ մրցեցան անդ
աստուածոց խորհրդով 68:
Օ՛խս ինքն ապա այն քաջ արքայն առ
իւր առեալ և եհարց,
Եթէ 'ի մեծն 'ի Սպարտիա ես յինչ եկի
պատճառաց:
Ես զամենայնն մերկացայ, և նա «Բա-
բէ, ձայն կրկնեաց,
Զի՞ ըզքաջին զայն սրսկապան գձձեն զար-
դիս արք անկած.
Այլ որպէս զորթն իւր ըստընդիցաց ժո-
ղովեալ էին անարի
Առեալ գիցէ 'ի կաղաղի գոռ առիւծուն
ամեհի,
Եւ ինքն 'ի սարս և 'ի հովիտս արածեսցի
խոտաբուտ,
Մինչև գազանն գայ հուսկ ուրեմն և 'ի
յորջ իւր առնէ մուտ.
Անդ նորածնաց, 'ի նոյն և մորն օրհաս
գուժայ գիշախանձ,
Այսպէս և քաջն այն Ոդիւսէս մահ առ-
թեսցէ հոմանեաց:

Իցի՞ ելթէ, ո՞ Արամազդ, ո՞ Աթենաս, և Փեբոս,

Լիցի Ոդիս քաջ այնպիսի որպէս երբեմն 'ի Լեսբոս.

Երբ մրցեցաւ դօտէմարտիկ ընդ քաջորդւոյն Փիլմելեան 69.

Եւ արկանէր ըզնա տապաստ, և Յոյնք ողջոյն ցնծացան.

Ո՛վ թէ, լիցի նոյն ընդ սեղեխս արդ Ոդիսէս քաջմարտիկ,

Եւ կարձեսցին կեանք հոմանեաց և դառնասցին հարսանիք:

Իսկ զոր բան դու ինձ հարցանես, քեզ աւադիկ անսուտ բան,

Զոր ինձ ասաց անկեղծութեամբ այն ծերունին ծովական.

Քա՛ւ, ես 'ի քէն ոչ քօղարկեմ զոր ինչ պատմեաց ծերունին,

Քանզի, ասէր, տեսեալ զՈդիս ինքն 'ի կղզւոջ ցաւագին.

Իսկ էր կղզին այն Կալիփսեայ, ուր կայ Իբրու յարգելան,

Եւ դարձ առնել չէ բաւական նա 'ի յերկիր հայրենեան.

Զեր անդ նորա ոչ լաստափայտ, և ոչ քաշտիք, ոչ ընկեր,

Նաւագնացիկ ընդ մրկանունս ընդ ծով կռուել ալեբեր:

Զայս ինձ պատմեաց Մենեղաւոս. լուայ և դարձ արարի.

Եւ ինձ աստուած հողմ յաջողակ ետ գալ յերկիրս հայրենի »։

Զայս Տելեմաք. և դշխոյին սիրտն աղէկէզ տոչորէր,

Մինչև յարեաւ Թէոկլիւմոս և ետ պատգամ անվեհեր.

« Արդ և ինձ լուր, տիկին արդոյ Ոդիւսէսին լայերտեան.

Ոչ, ոչ գիտաց նա զամենայն. դու արդ անսուտ լուր պատգամ.

Վրկայ է ինձ մեծն Արամազդ, վրկայ սեղանս վանատրի,

Վրկայ լեցի ինձ և մարդակն մեծն Ոդիւսեայ, յոր էկի.

Քաջն Ոդիւսէս աստ 'ի յերկրիս արդ նստեալ կայ, կամ շուրջ գայ,

Ըզգործ լըսէ ըզհոմանեաց, հնարի նիւթէ մահ նոցա.

Եւ հաւահմայս տեսի ինքնին 'ի քաջանիստ 'ի նաւուն,

Եւ զայն անդէն ազդ արարի այս հոյակապ պատանւոյն »։

Բարբառեցաւ Պենեղոպէ. « Ցէ՛ էթէ, հիւր բարի,

Ինձ քո պատգամն յանգ էլանէր, և ես ձոնիս քեզ տայի,

Զանիս առատ. և լինէիր սերտ բարեկամ դու ընդ իս,

Զի և տեսողք բիւրապատիկ տային հիւրոյդ երանիս »։

Մինչդեռ անդէն զայսօրինակ բանք զրուցէին 'ի նոսա,

Եւ հոմանիքն ըզբօսնուին տանն յանդիման Ոդիսեայ.

Մականախաղք, գիլս արկանեն 'ի հրաշակերտ յատակին,

Ուր և որեարն այն խեռուութեամբք զօրհանապազ լինէին։

Ժամ մերձեցաւ նոցա ընթրեաց, և անդ բացուստ 'ի դաշտաց

Գային օդիքն 'ի պատրուճակ, 'ի տուն վարեալք 'ի հովուաց.

Բարբառ յայնժամ կարդաց Մեդոն, այրն հոմանեացն էր սիրուն,

Որ և նոցա միշտ առընթեր կայր նա կոչնոցն 'ի ժամուն.

«Օ՞ն արդ արիք ո՛ պատանիք, որ ափոփեցայք 'ի մրցանս,

Արիք մըտէք արդ ընդ յարկաւ, և մեք հարցուք ձեզ ըսպաս.

Լաւ է և չէ ինչ անբարի ըզհաց առնուլ 'ի ժամու».

Լուան, յարեան փոյթ պատանիքն հրավիրակին լեալ հըլու.

Հետևէին 'ի պերճ 'ի յարկն և մըտանէն դասադաս,
Եւ 'ի գահոյս և 'ի բազմոցս 'ի բաց եդին ըզխըլայս։
Օդեաց հօտիցըն մեծամեծք, դիրապարքն և յայծից
Յազին զենուն 'ի պատրուճակ, և պարարակքն 'ի խոզից.
Դարձեալ և եղն 'ի յանդէոց փողոտէին յայն ընթրիս,
Մինչդեռ յոստանն առ 'ի դաշտէն գայր Եւմէոս և Ոդիս։
Բայց հանդերձեալք ուղղոյ լինել, ասէր ցՈդիս քաջն Եւմէս.
« Արդ դու ուրեմն, հիւր ծերունիդ, յոստանն այսօր փափաքես.
Այո՛, ըզնոյն ինձ և տէրն իմ քոյ չուելոյդ ետ հրաման,
Բայց ես ըզքեզ իմ փարախիս ատ կամէի պահապան.
Սակայն պատկառ կամ տեառն իմոյ, զի մի ապա գձձեցայց,
Զի և քաջ իսկ դըժոխըմբեր կշտամբութիւնք են տերանց.
Օ՞ն արդ առեալ անկցուք յուղի զի օրըս մեզ կարձատի,
Եւ յամելոցս ընդ երեկոյս օդ ցրտագին հարկանի »։

Անդէն Ոդիս ետ անդրադարձ. «Գիտեմ և ես զայդ քաջիկ.
Դու գիտողիս ինձ յոռչ ածես. զի՞ և ես ապա դանդաղիմք.
Սակայն դու ինձ լեր նախընթաց, նաև ցուպ մի հաստաբուն
Հատեալ տացես ինձ 'ի նեցուկ, զի է ուղին լըպրծուն».
Ասաց և առ զիւր ըզհնոտին ըզ ծակոտկէնն ըզմաղախ,
Եւ արկ զուսովըն ոլորեալ հաստ ջըլանաւն առ 'ի կախ.
Հատ Եւմէոս և ետ նըմա ըզցուպ խընդրեալն 'ի ձեռին,
Անկան յուղի. իսկ փարախին շունք և հովիւք պահ ունին:
Ընկէս Եւմէս 'ի քաղաք անդր առեալ բերէր զիւր արքայն
Իբրև մուրիկ և ծերունի 'ի յայն թշուառ կերպարան.
Նեցուկ ունէր ցուպ 'ի ձեռին և էր արկեալ գըրդըլեակ,
Մինչև հատեալք զառապարուստս և մերձեցան 'ի քաղաք.
Հասին 'ի վայրն ուր կայր աղբիւր դեղահոսան հրաշալի,
Ուստի անհատ ջուր առնուին միշտ ժողովուրդք քաղաքի.

Մեծն Իթակոս և Նեբիտոս 70 զաղ-
բիւրն անդէն շինեցին,
Էր ընդ Նոսա և Պողիւկտոր. Նաև ան-
տառ տնկեցին.
Ջրասուն ծառոց կաղամախից շուրջ
անդ մայրի բոլորեն,
Եւ ջուր հոսէր ցուրտ և յստակ առ 'ի
բարձանց 'ի վիմէն.
Նաև կանգնեալ բագին, սեղան էր յա-
ւերժից անդ հարսանց,
Ուր և ուխտիւք արք ուղևորք ձօն ձօնէին
Նուիրաց:
Ընդ Մելանթէս որդին Տողեայ հանդի-
պեցաւ ընդ առաջ,
Որ 'ի յայծից ըզքաջընտիրս ածէր յընթ-
րիս հոմանեաց.
Ընդ Մելանթեայ նաև երկու արք 'ի հո-
վուաց հետևին.
Այն ինչ 'ի յակն արկ ըզնոսա, և բան
պարսեաց սաստկագին.
Յոյժ վիսացաւ և կարի յոյժ բան դժպա-
տեհ բարբառէր,
Եւ զՈդիւսեայ քաջին զոգի նա սրտնե-
ցոյց կարեվէր.
« Այր աւադիկ այր վատ արանց ածէ
զայդ այր վատութեան,
Քանզի աստուած միշտ ըզնրմանն առնու
յարէ առ նրմանն 71.

Ո՞ւր դու առեալ զայդ պորտաբոյծդ ա-
ծես, ոմ հէգ խոզարած,
Ըզծեր մուրիկդ զայդ դժալրհի, զայր լափ-
լիզող խրախճանաց.
Անշուշտ առ դուրս դա ընչէղաց առցէ
թիկանց շատ հարուած
Փշրանս միայն մուրանալով, ո՛չ թէ կաթ-
սայս կամ թէ սանս.
Եթէ ըզդա իմ փարախացս դու ինձ
տայիր պահ ունող,
Եւ աւելոր իմոյ գաւթիս և գիրգ ուլոց
ջով բերող,
Դա օ՞ն և օն և 'ի շինձկէն ըստուարանայր
'ի յիրանն,
Այլ դա 'ի մոյր դատարկապորտ ըզգործ
ուսաւ վատութեան.
Աշխատութիւն չառնու նա յանձն, այլ
մուրացիկ ընդ քաղաք
Խնդրէ անգործ ցանգ բուծանել դա զո-
ւսվայն իւր զանյագ։
Այլ քեզ ահա ասեմ, այր դու, որ և ան-
շուշտ լինիցի.
Թէ դա երբէք 'ի տուն մտցէ մեծ դիւցա-
զին Ոդիւսի,
Շատ պատուանդանք 'ի հոմանեաց 'ի
գլուխ դորա արձակին,
Եւ ջարդեսցին անդ կողք դորա չար հա-
ւուածովքն 'ի յարկին »։

Զայս Մելանթէս, և մօտ չոքաւ Եհար զՈդիս աքացի,
Եհար մոլին յաղդեր նորա, այլ ոչ կա-
ցոյց զարտուղի.
Զոտս իւր 'ի բոյս հարեալ Ոդիւս, և ընդ
միտ իւր խոճոճէր.
Արդեօք բըրաՀն իւր հաստաբուն հա-
ըուած տացէ մահաբեր,
Արդեօք 'ի վեր առեալ անդ զայրն և
պտուտակեալ շուրջ զօդով,
Եւ զարկուսցէ թափ ընդ գետին թաւա-
լագլոր ըզգլխով.
Այլ ժուժկալեաց համբերատարն: իսկ
այր արդոյն խոզարած
Կշտամբելով խոժոռ ակամբ, մեծապա-
ղատ ձեռս ամբարձ.
"Ո՞վ աղբերաց դուք պարք հարսանցըն
մաղդեղանց յաւերժից,
Թէ ձեզ Ոդիս այրեաց երբէք ըզ թամբըս
յոյրս ճարպալից
Զօդեաց գառանց նաև զուլուց, դուք
արդ ըցէք զիմ ըղձանս.
Ո՛հ եկեսցէ ասա Ոդիւսէս, ածցէ ըզնա
մեզ աստուած.
Եւ յայնժամ դու քո սէգ յօնիւքդ ան-
կեալ այր դու, հիքասցիս,
Որով և միշտ դու սոնքացեալ և ընդ քա-
ղաք թափառիս.

Սակայն թափառ և յոյլ հովիւք վընասակարք են խաշանց ».

Այն ինչ լուաւ և արտնեցաւ յոյժ Մելանթէան այծարած.

Ամբարձ ըզձայնն, ասէր, « Վա՜շ վա՜շ զինչ չարարուեստդ հաչէ շուն,

Զոր անդ 'ի սեաւն 'ի նաւ փակեալ 'ի ձեռս տուեալ որերոյն,

Եւ զայդ ըզշունդ 'ի յԻթակայ տարասահման վարեցից,

Զի բազմօրեայ շատ պարէնից դա այդ պատճառք լիցի ինձ.

Ո՛վ թէ այսօր ըզ Տելեմաք մեծն Ապոլոն նեռաձիգ

Շէշտ հարկանէր, կամ թէ ըզնա արդ ընկճէին հոմանիք.

Զի չիք այլ մեզ ահ և երկիւղ քաջն Ոդիւսեայ 'ի դարձին ».

Ասաց, էթող անդ ըզնոսա, որք և յուշիկ գընային:

Իսկ ինքն անցեալ արագ արագ էհաս 'ի յարկն Ոդիսեան,

Եմուտ անդէն առ հոմանիս, և առ անձին բազմական.

Էր բազմականն 'ի հանդիպոյ Եւրիւմաքեայ մըտերմին,

Եւ զնա անդէն առ 'ի խահից ըսպասարկուք պաշտեցին.

Առեալ և կին տընակալուչ հաց եդ նրմա
'ի սեղան,
Մինչդեռ Ոդիս և Եումէոս հասին 'ի մօտ
յօթեվան։
Ըզկայ առին, և ձայն հնչէր փոր գո-
գաւոր կիթառի,
Եւ Փեմիոս անդ առաջնորդ էր նուա-
գացն հանդիսի։
Բայց Ոդիւսէս կալաւ զաջոյն Եումէոսի
և ասէ.
« Անշուշտ այս յարկք են գեղեցիկք Ո-
դիւսեւսեայ, ո՛վ Եումէ.
Յերևանի կան ապարանքդ իբրև այլոց
գերակայ,
Եւ դստիկունք կան բարձրայարկք միմեանց
կանգնեալ 'ի վերայ.
Նաև գաւիթ կայ որմնափակ և զարդա-
րեալ ձողաբարձ,
Եւ հրաշակերտ և քաջամուր դուռք երկ-
բացիկք կան դրանդեաց.
Արդ ո՞ք այր յաւակնեսցի առ 'ի վա-
նել զայդ տաճար.
Եւ անշուշտ է զի 'ի կոչունս արդ բազ-
մեալ կայ շատ որեար.
Անոյշ բուրէ հոան 'ի խահից. և ձայն
հնչէ կիթառին,
Զոր մեզ աստուածք մեր խրախուԹեանց
զարդ և ընկեր կարգեցին »։

Լուաւ Եւմէս և զարմացաւ. “ ԲաՀէ, դու հիւր, քաջ ծանեար.
Անշուշտ դու ծեր, նաև յայլ դէպս ոչ անխորհուրդ ոք ցուցար.
Արդ խորհեացուք, զինչ մեզ գործել. կամ մնաս դու նախ առաջին,
Մնաս և խառնեաց ընդ որերոյդ և ես աստ կամ 'ի գաւթին.
Կամ դու կացցես, եթէ կամիս, և ես մրտից յօթեվան.
Այլ անսա ինձ, մի յամենար և դու գալ մեզ յերեան.
Մի արտաքոյ տեսեալ զքեզ ոք գործ գործեսցէ ժպրհութեան,
Կամ վարեսցէ և կամ հարցէ. արդ խորհեսջիր դու զարժանն ”:
Արկնեաց դիւցազ ըն Ոդիւսէս. “ Զոր ինչ ասես, քաջ գիտեմ.
Հա դու 'ի նեղքս մնաս առաջին, և թող կացից ես աստէն.
Ես հարուածոց, գանից, վիրաց, ընդելական եմ 'ի բուն,
Համբերատար սիրտ ըստացայ ես 'ի կենցաղս իմ ողջոյն.
Բազմաչարչար վշտակրեցայ ես և 'ի մարտս և յալիս,
Թող բարդեսցին և այս կարիք 'ի վերայ իմ և զարդիս:

Սակայն զանխուլ ոչ ժուժայ կալ այս որովայն սովատանջ,
Խուժադուժ է և բազմադէմ ածէ մարդկան 'ի չարեաց.
Որա 'ի սակս և լաստափայտք շատք քաջաղէնք հանդերձին,
Եւ 'ի ծովուն յանբուսաբեր մարտրս մըղեն ահագին »:
Մինչդեռ նոքա յայսօրինակ բարբառէին 'ի զրուցաց,
Շունն ըզգլուխն ուղղեաց կանգուն և զականջս իւր շականջեաց.
Սա այն շունն էր Արգոս անուն շուն վշտաառեան Ոդիւսեայ,
Զոր վաղ ուրեմն ինքն սընոյց, բայց չառ վայելս ըզնորա.
Քանզի կանուխ մեծն Ոդիւսէս էլ և չուեաց յԵղիոն,
Եւ շունն ապա զորսականին անդ հարկանէր ըզվաշուն.
Առեալ ըզնա և տանէին արք պատանիք յորս քաջուս,
Եւ ըմբռնէր նա զայծեմուն, ըզնապատակս, զեղջերուս.
Սակայն յայնժամ լքեալ թողեալ յիւրմէ տեառնէն բացական,
Կայր նա անկեալ ընդ աղբախուղին որ էր դրանդեաց յանդիման.

Զի զաղբակոյսն անդ շեղջէին նոքա զՔորեաց և զեղանց,
Եւ բառնային տանել աղբել զՈդիւսեւ-սին անդաստանս.
Անդ պառակեալ կայր հեքապէս Ար-գոսն այն շուն քաջարին,
Հոծեալ յաղբուտ՝, 'ի շանաճանճս, որ ըզ նովաւ բզզային.
Ծանեաւ Իսկոյն տիրասէր շունն ըզտէրն Ոդիւս որ մերձ գայր,
Շարժէր ըզձեան իւր առ ինդին և առ զականջս իւր 'ի վայր.
Յառնել 'ի մօտ և ըզտերամբն քծնիլ գգուել ոչ կարաց,
Եաւես Ոդիս, և 'ի յԵւմեայ գաղտ զար-տասուս իւր սրբեաց:
Հիացմամբ անդէն զայս հարցանէր. "Բա՜ի, զարմանք են համբուն,
Ա՛ղէ ասա ո՛վ Եւմէոս, զի՞ յայս աղբոց կայ այս շուն.
Շուն է մարմնով դա գեղեցիկ. այլ սա-կայն չեմ ես տեղեակ
Եթէ արդեօք և ըստ գեղոյն ցցէ և յոտս իւր արագ.
Կամ թէ ցցէ հէգ և ումպէտ իբրև ըզ-շունս 'ի սեղանս,
Զորովք գրգեալ տերանց իւրեանց բու-ծեն միայն 'ի բերկրանս":

"Սա ինքն է շուն, զոր տեսանես կրկնեաց
Եւ մէս ձայն անդէն,
Շունն աղքային է Ոդիսեայ, այն որ մե-
ռաւ տարադէմ.
Եթէ այդ շունդ յառոյգ մարմնոյն իւր
և յարդեանցն 'ի հանդէս
Էր այնպիսի, որպիսի ինչ Թոզ աստ 'ի
շուն Ոդիւսէս,
Դու ինքն արդեօք ըսքանչացեալ յակ-
ճիռս կայիր 'ի զընին,
Զիարդ այնպէս դա արագոտն էր և աշ-
խոյժ 'ի յոգին.
Յանտառս 'ի Թաւս առ 'ի սմանէն չէր
անձնապուր ոք գաղան,
Սա ըզհետոցն հասեալ ունէր երբ շա-
կանջէր միանգամ.
Կայ արդ Թշուառ, զի և տէր իւր Թշուա-
ռացաւ յօրհասէն
Եւ կանանուոյն դասն յուլացեալ հոգ ինչ
սրմա ոչ ածէն.
Քանզի ծառայք երբ 'ի տերանց իւրեանց
չառնուն ըզհրաման,
Ձեռն ըզմիջովք հարեալ նոքա յիւրեանց
պաշտօն վատանան.
Զի Արամազդ ըզկէս խելացն առնու
բառնայ 'ի մարդոյն,
Երբ ըզվիճակ նա յանձն առնու ըզ ծա-
ռայի ըզնրկուն"։

Այն ինչ ասաց, եմուտ 'ի ներքս 'ի հայկական 'ի տաճար.

Երթայր ուղիղ ուր հոմանեաց բազմեալ կային պերճ որեար:

Սակայն Արգոսն 'ի սեաւ մահուն կափոյց զիւր զաչս յօրհասին,

Երբ միանգամ տես զիւրն Ոդիս 'ի քսաներորդ 'ի յամին:

Բայց Տելեմաքն քաջուշիմ նախ առաջին տես զԵւմէս,

Եւ ակնարկի կոչեաց առ ինքն յառնել և գալ փութապէս.

Նա շուրջ դիտեաց, էառ զաթոռն ըզխահարար ծառային,

Յորում նստեալ նա միս բաշխէր կոչնականաց ակմբին.

Եդ զաթոռակն և բազմեցաւ 'ի հանդիպոյ պատանւոյն,

Եւ հաց նրմա առ եդ Քարոզն և ըզ բաժինն 'ի մրսոյն.

Եմուտ ապա և Ոդիւսէս ցուպ 'ի ձեռին օժանդակ

Իբրև ըզծեր, իբրև մուրիկ զանձամբ արկեալ գըրգլեակ.

Եմուտ նստաւ նա առ սեմովք փայտակերտեալն 'ի հացի,

Եւ բազմեցաւ ետ ըզթիկունսն 'ի յենարանն 'ի նոճի.

Յայն զոր երբեմն հիւսրն Ճարտար քա-
ջիկ տաշեաց և յղկեաց,
Եւ հիւսնական Ճշգրիտ լարիւ կըշիռ
գործեալ անդ կանգնեաց։
Բայց զԵւմէոս Տելեմաքոս կոչեալ յայն
ժամ առանձին,
Էառ ըզհացն որչափ ինչ կայր 'ի գեղե-
ցիկ 'ի խանին,
Առ և 'ի նոյն միս բռնալիր, և հրա-
մայեաց Եւմէայ,
" Երթ տուր, ասէր, տուր զայս հիւրոյդ
և առ յինէն պատուիրեա.
Թող դա 'ի մոյր անկցի այժմիկ առ հո-
մանիս մի առ մի,
Զի ամաչէլն ոչ է բարի տնանկ մարդոյ
և մուրկի "։
Լուաւ Եւմէս, յարեաւ անդէն, մատեաւ
ձայն եառ և ասէ.
" Տելեմաքոս քեզ զայս, ով հիւր, յիմ
ձեռս տուեալ, հրամայէ.
Զի դու 'ի մոյր ելցես այժմիկ առ հո-
մանիս մի առ մի,
Զի ամաչելն, ասէ, չէ լաւ առըն մուր-
կի տընանկի "։
Զայն խորագէտն եառ Ոդիսէս։ " Ըզտե-
լեմաք երջանիկ
Արա ով Զևս. և իւրն ըղձանք միշտ ելս
առցեն գեղեցիկ ".

Նա զայս ասաց, և զառաքեալսն ողջ առ ձեռաքն իւր կրկին,

Եդ զայն առ ոտս անդ 'ի վերայ իւր քՃքՃեալ մաղախին.

Նստաւ ուտէր. և երգահանքն չէր հանէր նուագաց.

Լռեաց Ոդիս 'ի յուտելոյ և երգողին ձայն լռեաց։

Սակայն ամբոխ յոյժ խառնամբոխ էր հոմանեաց 'ի սրահին,

Եւ էին յայնժամ մեծն Ամենաս և մերձ եկաց Ոդիւսին.

Կայր յորդորէր հաց մուրանալ 'ի յակըմբէն հոմանեաց,

Զի ծանիցէ ոչք 'ի նոցունց են ապառուսք, ոչք գթած։

Թէպէտ և այր 'ի նոցանէն չէր ապրելոց յօրհասէն,

Սակայն չոքաւ նա մուրանալ 'ի յակըմբին 'ի յաջմէն.

Շուրջ առ այր այր գայ և զաջ իւր մուրուղաբար կարկառէ,

Որպէս եթէ նա այր մուրիկ լեալ էր անդուստ 'ի բընէ.

Ողորմելով հաց ջամբէին, բայց էր նոցա սքանչելի.

Այր այր ցընկէր իւր հարցանէր, ո՞ է մուրիկն, և ուստի.

Յարեաւ յայնժամ ձայն Միլանթէս եւ այծապանն ակրմբին.

« Ինձ ունկըն դիք, ո՞ հոմանիք մեծ քաջ նափայլ դշխոյին.

Ընդ հիւրըդ զայդ, տեսի ես ինքն, սատ խոզապանն ած Եւմէս.

Այլ թէ ուստի՞ ազգըն դորա, ոչինչ գիտեմ յայտնապէս »:

Այն ինչ ասաց, և Անտինոս առեալ զԵւմէս կշտամբէր,

« Հիմ խոզապանդ զայդ մուրացիկ սատ դու ածեր անվեհեր,

Ո՞չ շատ իցեն մեզ աւադիկ արք թափառեալք և մուրիկք,

Արք լափլիզօղք մեր խրախճանաց և պորտաբոյծք գժպրհիք.

Շատ չիցէ՞ քեզ, զի արդ ըզկեանս տեառնըդ ուտեն կոչնականք,

Դու և այլուստ զի՞ սատ ածեր զայդ ծերոունիդ և տընանկ ».

« Անտինոէ, անդէն Եւմէս արդոյն ուշիմ ձայն կարդաց,

Ոչ գեղեցիկս բարբառեցար, թէպէտ և ես քաջ արանց:

Ո՞վ ոք 'ի մէնջ զայր ոք այլուստ հիւր կոչէսցէ իւր յարկին,

Բայց թէ իցէ հիւրն այր գործօն և պիտուական քաղաքին,

Կամ թէ գուշակ, կամ թէ բժիշկ, և կամ թէ հիւսն այր ճարտար,
Եւ կամ ի՞նչ քաջ երաժիշտ իւր նուագ դաքն հեշտարար.
Այո՛ 'ի մէնջ ալք այնպիսիք հիւրք մեծապէս հրաւիրին.
Իսկ աղքատաց չենք ինչ հրաւէր, զի մի՛ ինչ մեզ ծանրասցին:
Այլ սակայն դու 'ի հոմանիս քան զամենայնսն ես դժնեայ
Մեզ ծառայիցըս Ոդիւսի, և ինձ յաւէտ 'ի նոսա.
Այլ չէ՞ ինձ փոյթ, ցորչափ ինձ կեայ Պենելոպէն այն ուշիմ,
Ցորչափ շնչէ և դիւցանմանն Տելեմաքոս քաջարին ,,:
Կարձեաց ըզբանն Տելեմաքոս, ,, Ո՞վ Եւմէէ, դու լո՛ւռ լեր,
Եւ ընդ մարդոյդ 'ի վեդ բանից մի՛ դու երբէք ելաներ.
Անտինոոս քաջ իսկ 'ի բանս ընաւորեցաւ անընդեալ,
Նա կագ յուզէ, նաև այլոց է նա սադրիչ 'ի կագեալ ,,:
Այն ինչ ասաց, և յԱնտինոս կոյս դարձաւ ինքն ետ բարբառ.
,, Վա՜շ քեզ, այդպէս Անտինոէ դու զիս հոգաս հայրաբար.

Դու, որ զայդ հիւրն իմ 'ի տանէն այդ-
պէս վարես դահճաբար.
Այլ մի լեցի, քաւ թէ զայդ բանդ ած-
ցէ աստուած 'ի կատար.
Ա՛ղէ և դու, տուր ինչ մուրկիդ, ո՛չ ինչ
խանդամ, նա՛ ստիպեմ.
Մի՛ դու երբէք յիրիդ յայդմիկ մի՛ ակն
ածցես յիմ մօրէն.
Ո՛չ և մի ոք 'ի ծառայից հօրս Ոդիւսեայ
դիւցազին,
Մի՛ ինչ խիթար, ոչ լինիցի խափանարար
քոյ շնորհին.
Սակայն երբէք միոք քաջամոյն չի՛ք տար-
ցացեալ չի՛ք 'ի քեզ.
Զի քան ջամբեալ ինչ մի այլում, դու ինքն
ուտեալ միտեալ ես »:
« Բարձրաբարբառեալդ Տելեմաք, ձայն
Անտինոս էտ հրավառ,
Դու պատանիդ, անսանձ յոգիդ զի՞նչ
արդ ասեալ ժլատեցար.
Եթէ մուրկիդ ողջոյն բազմեալքն այնչափ
ինչ շատ ջամբեսցեն,
Անշուշտ ամիսս դա երիս չէլցէ արտաքս
'ի տանէն »:
Ասաց. անդէն և 'ի նեղքուստ 'ի սեղա-
նոյն առ էցոյց
Ըզպատուանդանն, յորում հանգչէր շամ-
բուշն այն այր պորտաբոյծ.

Սակայն և այլք 'ի միս, 'ի հաց, զմուրկին մաղախքն լըցին.

Եւ Ոդիւսէս 'ի Ճաշակել կամէր դառնալ յիւր տեղին։

Սակայն եկաց նա վայրիկ մի Անտինոսեայ յանդիման,

Բարբառեցաւ. «Ա՛ղէ, ասէր, տո՛ւր և դու ինձ, բարեկամ.

Այր անաւագ դու չէրևիս ինձ 'ի Յունաց յակըմբի.

Նա՛ այր աւագ. նաև 'ի քեզ պատկեր բերես զարքունի.

Արժանէ քեզ վասն այնորիկ տալ առատ ևս 'ի հացէն,

Եւ ես ողջոյն ընդ տիեզերս ըզ գովութիւնդ հռչակեմ։

Էի երբեմն և ես երջանիկ, և յարկս պայծառս ունէի,

Եւ ողջ մուրկաց և կարօտից ես հաց ըստէպ ջամբէի.

Նաև բազում դասք ծառայից 'ի հանդիպոյ ինձ կային,

Եւ 'ի վայելըս Ճոխութեանց իմ զեղանէր կարասին։

Ոտնհար եղև ինձ Արամազդ, և ըզ պատճառն ինք գիտաց,

Որ ինձ ընդ հէնըս թափառիկս 'ի յԵգիպտոս ուղ հորդեաց,

Ուղի երկայն և մահագոյժ. և ես 'ի գետն յԵգիպտոս
Ընթաւատորմն իմ կացուցի ի Թիակաք խիտ և հոծ.
Զայն կարգացի իմ նաւաստեաց կալանդ նաւուց պահապան,
Եւ լրտեսաց առ 'ի դիտաց դիտել զընթել զայն սահման.
Սակայն նոքա խեռք ըստահակք ջրհանդուրժեալք Թափ յանսանձ,
Աւարեցին զԵգիպտացւոց ըզգեղեցիկ զանդաստանս.
Տար վարեցին և զկանանի և զմանկըտոյն գիրգ զերամ,
Եւ մըշակաց մահ հասուցին, մինչև շըռինդն հաս յոստան.
Լուեալք ըզգոյժ ըն միագունդ գայր վաղ ընդ այգն այրուձի,
Դաշտըն ըցաւ ողջ 'ի հետիս և 'ի փայլիւն պըղընձի.
Անդ զարհաւիրս ըզփախստեան արկ զընկերօքս Ամպրոպեանն,
Եւ շաղեցան առ հասարակ իբրև յանզերծ արգելան.
Շատք համհարզեցս տապաստ անկան 'ի սուր 'ի սայր սուսերի,
Կէսքն 'ի պահակս դըժոխըմբերըս վարեցան կենդանի.

Զիս Յասոնեան Դիմեատրեայ անդ 'ի Կիպրոս յանձնէին
Որ հիւր յայնժամ հանդիպեցաւ, և թագ կապէր Կիպրոսին.
Անդուստ եկի 'ի յայս երկիր յոյժ վշտակիր չարաւանջ ».
Լուաւ ըզձառն Անտինոոս, ձայն դրժպատեհ արձակեաց.
« Բաբէ, ո՞ր Քաջ մեզ զայդ ժանտախտ յղեաց կոչնոցս Թունաբեր.
Օ՞ն անդր, այր դու, Էրթ կաց 'ի մէջ, յիմ սեղանոյն 'ի բաց լեր.
Զի մի՛ ըզդառըն զԵգիպտոս և ըզ Կիպրոս վշտակիր
Ասա փորձեսցես դու միւսանգամ, ով ծեր մուրիկ լերբ ժըպիրհ.
Ե՛րթ առ մէն մի 'ի բազմելոցն, Էրթ և մուրա՛ կարգաբար,
Դոքա ահա քեզ յանխորհուրդըս ջամբեսցեն վայրապար.
Զի լիաձեռն առնուլ ջամբել 'ի յօտարին նըն գոյից
Ոչ է խնայել, ո՛չ ողորմել. են իսկ ահա հացալից »։
Լուաւ Ոդիս, վերջոտնեցաւ. այլ բան պարսեաց խոհական.
« Վա՜շ քեզ, ո՛վ քաջ, որ քո հոգիդ քում պատկերիդ չէ նրման.

Անշուշտ ուրեմն ւ ոչ 'ի տանէդ դու աղ
տացես խնդրողին,
Որ յօտարին 'ի սեղանոյ հաց մի չէտուր
մուրողին.
Եւ այն զի ատ 'ի կերակրոց են իսկ տրա-
պիզք լիուլի ».
Նա զայս ասաց, և Անտինոս յոյժ զայ-
րացաւ 'ի յոգի:
Սեթի աչք ձայն արձակեաց. « Եւ արդ
կարծեմ, ո՛չ ելցես
Դու շաղակրատ քոյին լեզուաւդ ողջ ան-
դամքդ 'ի տանէս ».
Ասաց և առ ըզ պատուանդանն ձգեաց
'ի յուսն ընդ աջմէն
Եհար 'ի ծայր թիկանց նորա. այլ կաց
Ոդիս իբրու վէմ.
Նա ունչս արար իւր հարուածոյն, կաց
անսասան 'ի կայի,
Եւ լուռ միայն գլլուխս շարժեաց և չար
խոկայր 'ի սրտի.
Դարձաւ անտի և միւսանգամ երթ բազ-
մեցաւ յիւր տեղին.
Եդ ըզմտաղիս զիւր լիուլի, ձայն զայս
կարդաց ակամբին.
« Ինձ ունկըն դիք, զոր ձեզ ասեմ, ո՞ տար-
փածուք դշխոյի.
Անշուշտ յորժամ մարդ 'ի պատճառս իւր
կարասւոյն մարտնչի,

Կամ թէ երբէք վան անդէոց և լուսա-
կիզին օդեաց,
Ոչինչ ցաւի, ոչ և սրգայ եթէ առնու
ըզհարուած.
Սակայն 'ի սակըս բռնաւոր և հէգ պոր-
ոոյն չարաչար
Զիս աւադիկ ըզսովատանչս Անտինոոսդ
այդ եհար.
Այլ քանզի դիք և Երիննէսք քաջ 'ի
կողմն են աղքատաց,
Օրհասն առցէ զԱնտինոոս մինչև եղեալ
հարսանեաց ,, :
Յաւեաւ ընդ բանն Անտինոոս և անդրա-
դարձ ետ ձայնի.
,, Նի՛ստ, կէ՛ր լըռիկ, ո՛վ ծեր հիւր դու,
և կամ արի՛ է՛լ այսի.
Մի՛ զքեզ յանկարծ այս պատանիք, քան-
զի անսանձ բարբառիս,
Կամ ըզձեռացդ և կամ զոտից ըդ քար-
շեսցեն 'ի յարկիս.
Անդ արտաքոյ հարեալ մարմնով ջախջա-
խեսցիս դու ողջոյն ,, .
Լուան ըզբանն, և բազմականք ողջ բրդե-
ցան 'ի ցասումն :
Լաւ գոռոզ յայն պատանեաց զայս ոք
անդէն բան պարսէր,
,, Անտինոէ, դու ոչ բարուոք ըզ հէգ մու-
րիկ զայդ հարեր.

Ա՛յ ջուառական. զի՞նչ, թէ ելցէ դա
երկնաւոր ոք աստուած.
Քանզի աստուածք առեալ երբեմն ըզտիպ
հիւրոց զօտարաց,
Այլակերպեալք և այլազգեստք ընդ
մեր քաղաքս 'ի շուրջ գան,
Եւ լրտեսեն ըզխեռութիւն, ըզ լաւու-
թիւն ըզ մարդկան »:
Լսէր ըզխրատն Անտինոոս, սակայն
քերէր 'ի յընչաց.
Իսկ Տելեմաք գորովեցաւ ընդ ծընողին
իւր հարուած.
Աղէկիզէր ընդ ծէր մուրիկն, այլ զար-
տասուս իւր սանձէր.
Լուռ կաց և նա, գըլուխ շարժեաց, և
ըզչարիս խոՀՀէր:
Բայց հարուածոյ աղքատ մուրկին առ
մեծ դշխոյն լուր եՀաս,
Յոգւոց եՀան Պենելոպէ և զայս ասէր
ցաղախնեայս.
« Երանի՛ թէ, զայնօրինակ և զայն ըզվէան
հոմանի
Արդ դիպաղեղըն Ապողոն հարեալ խոցէր
շեշտակի »:
Այլ կին տնօրէնն Եւրինոմէ յաւել 'ի
նոյն և ձայնեաց,
« Երանի՛ թէ ըստ ըզձանացս, և ջոկ ող-
ջոյն հոմանեաց

Զոսկեգահիկքն զարշալուրշ ոչ տեսա-
նէր ըղվաղուեան ».
Ի լուր բանին և Պենելոպ զայս անդ կըրկ-
նեաց միւսանգամ.
« Լո՛ւր ինձ, դայեակ, արք ոխերիմք և
չարանիւթք են ողջոյն.
Սակայն դժխեմն Անտինոոս տիպ սեա-
թոյր է մահուն.
Ահա օտար հէգ այր մուրիկ ընդ տուն-
նըս մեր 'ի շուրջ գայ,
Ի խորտակաճաշ յայդ որերոյդ ինքքն սո-
վեալ հաց մուրայ.
Այլքն ամենայն սիրով ջամբեն և ըզմուր-
կին պարկ լընուն,
Իսկ սա ձգեալ ըզպատուանդանքն հար-
կանէ զուսն աջոյն »:
Դշխոյն 'ի պերճ սրսկապանին զայս ընդ-
նաժիշտս բարբառի,
Եւ մեծ դիւցազ ըն Ոդիւէս ընթրէր
յայնժամ 'ի գետնի:
Բայց զԵւմէոս կոչեաց առ ինքն արդոյ
դշխոյն և ասէ.
« Արի՛ դու երթ և ձայն հիւրոյդ կարդա
զի ասա եկեսցէ.
Խօսել կամիմ, բան հարցանել ըզվշտա-
կիրն Ոդիսեայ.
Լուա՞ւ արդեօք, տե՛ս ինչ արդեօք, քան-
զի շրջող այր է դա »:

« Իցէ՞ եթէ, արդոյդ դշխոյ, ձայն եւ-
մէոս արձակէր.
Ո՞վ թէ Աքեանքդ արդ լըռէին, և դա
միայն բարբառէր.
Քանզի խօսի դա գեղեցիկս և բերկրա-
բարս քում սրտին,
Զի ես ըզդա հիւր վայելուչ ժողովեցի 'ի
հիւղն իմ.
Զերիս ըզտիւս զերիս գիշերս դա ինքն
առ իս հիւր եկաց,
Զի 'ի նաւէն իւր փախստեայ նախ առա-
ջին յիս դիմեաց.
Բայց նա զաւուրս երիս պատմեալ ըզ-
ճառ վշտացն յանդ չեհան,
Զոր ինչ 'ի կեանս, դէպք նորանոցք, տա-
բաւ կրեաց միանգամ.
Զոր օրինակ մարդ կայ յակճիռս առ ե-
բաժիշտ դիւցազգեաց,
Որ շէր, նուագ հանեալ երգէ յոյժ
հեշտալուրս ականջաց,
Մարդիկ անյագ գեղգեղելոյ նորա ձայ-
նին 'ի լուր կան,
Այսպէս նա զիս ուրախ առնէր նստեալ
'ի յիմն հանգըրուան.
Ասէր, եթէ ինքն Ոդիւսեայ հիւր է կա-
ցեալ հայրենի,
Քանզի բնակէր սա 'ի Կրետէ, ուր էն
ծընունդք Մինովսի.

Անդուստ այս հիւր բազմաչարչար եհաս
այժմիկ յայս երկիր,
Եւ մեզ յողոք անկեալ է արդ իբրև ան-
տուն վշտակիր։
Եւ վրկայէ, եթէ ինքնին համբաւ լուաւ
զՈդիւսին,
Զի Թեսպրոտեանց 'ի ճոխ յազգի նա
կայ ողջամբ տակաւին.
Նաև ըզպերճ դանձ կարասւոյ առեալ
'ի տուն իւր ածցէ ,,։
Յոյժ ցնծացաւ Պենելոպէ, դարձաւ ան-
դէն և ասէ։
"Արի՛ փութով երթ ասա կոչեա՛, և
պատմեացէ յանդիման.
Իսկ այդ որեար, թո՛ղ կամ առ դուրս
ըսփոփեացին միաբան,
Կամ թէ 'ի նեղքս 'ի մեր յարկին զուար-
թասցին 'ի յոգի,
Դա այդ որեար, որոց զեղեալ է տունն
իւրեանց 'ի գինի.
Զեղեալ իսկ է նաև 'ի հաց, յորս և ծա-
ռայք վայելեն,
Սակայն ինքեանք 'ի տան մերում ասա
թարթափին զօր ամէն.
Յազեն ըզհօտս, յազեն զանդեայս, յա-
զեն և այծ պարարակ,
Առնուն ըզճաշն և զաստրաշէկ քամեն
գինւոյն ըզբաժակ.

Յօրացեալք էն և շուայտին և մինչ իսպառ ցէ՛ցք էն տան,
Զի չեք մեզ արդ իբրև Ոդիս մերոյ յարկին պահապան.
Իսկ թէ յանկարծ 'ի տուն իւր արդ դարձցի ողջամբ Ոդիւսէս,
Բա՛ ընդ որդւոյն յայդ լրբելոցդ ըզվրէժն առցէ քաջապէս »:
Այն ինչ ասաց, և Տէլեմաք ուժգին յայնժամ փրռնգաց,
Եւ սոսկալի ընդ յարկին ողջոյն 'ի տաճարին ձայնն հնչեաց.
Դիծաղեցաւ Պենելոպէ, և ձայն կարդաց Եումէեայ.
« Հա՛պա ձեզ տո՛ւր, և փութապէս ըզհիւր մեր զայդ աստ կոչեա՛.
Մի՞ոչ եդեր, զի իմ որդին արդ առ բանս իմ փրռընգաց 72.
Անշուշտ ուրեմն արդ մօտալուտ մահ կայ առ դուրս հոմանեաց.
Ոչ մասամբք ինչ, այլ հասարակ օրահասիւ կորացին.
Բայց ես այլ ինչ քեզ արդ ասեմ, և դու 'ի յուշ ա՛ծ մուրկին.
Եթէ երբէք գըտից ըզդա ճշմարտախօս յամենայն,
Ես պերճ խըլայս ընդ իւր ձնձոյն տաց և չքնաղ պատմուճան »:

Ոքաւ Եւմէս, մատեաւ կարդաց.
“Ընդքեզ, հիւր հայր, մեծ դշխոյն
Պենելոպէ մայրըն կոչէ Տելեմաքեայ պատանւոյն.
Բան ըստիպաւ խնդրէ տիկինն հարցումն առնել զփեսային,
Թէպէտ և ցարդ լուրքն ամենայն նմա ըզցաւ առթեցին.
Բայց թէ երբէք դըտցէ ըզքեզ նա յամենայնն ուղղատես,
Զորձ և խըլայս արկցէ ըզքեզ, որոց դու արդ կարօտ ես.
Նաև ըզհաց 'ի դիւր քաղցուդ գտցես առատ դու ո՛վ հիւր,
Զի ընդ քաղաքս անկեալ 'ի մոյր քեզ ջամբեսցեն մրոտադիւր ,,:
Հրաւիրակին կրկնեաց Ոդիս. “Ես Ճչգրտիւ զամենայն
Բան Ճառեցից Պենելոպեայ մեծի դըստերն Իկարեան.
Զի ես ինքնին, ո՛վ Եւմէէ, քաջ իսկ գիտեմ զՈդիսեայ,
Եւ բազում ինչ ես ընդ նմա տրտմահաղորդ վշտացայ.
Սակայն ես յայդ ըրբեցելոցըդ հոմանեաց կամ յահի,
Որոց անսանձըն խեռութիւնն ելհաս յերկին երկաթի.

Զի այն ինչ ոմն 'ի ստահակացդ 'ի շրջելն
իմ 'ի սրահին,
Աղքատ մուրկի ինձ անյանցիս հարուած
եհար ցաւագին.
Եւ չարգելաք ոք յինէն զհարուածն և ոչ
ինքնին Տէրեմաք.
Վասն այն և դու Պենելոպեայ Երթ տուր
յորդոր կալ յիւրն յարկ.
Անդ նա կացցէ և ժուժեսցէ մինչև 'ի
մուտս արեգին.
Հարցցէ ապա 'ի յանդորրու ինձ զոր
դարձի փեսային.
Ինձ առ հրրով տացէ բազմոց, զի այս
ձունձս է իմ ծածկոյթ.
Դու գիտես զիման, որ առաջին առ քեզ
ջոքայ ես յանքոյթ ,,:
Դարձ Եւմէոս արար յայնժամ գոլորշ
խոյին 'ի բանբեր,
Եգիտ ըզնա մօտ առ սեմովք, մինչ նա
արտաքս ելանէր.
Բարբառեցաւ Պենելոպէ. ,,Զի՞ ոչ ա-
ծեր, ո՛վ Եւմէ.
Զինչ ինչ արդեօք այդ հիւր մուրկդ
արդ 'ի խորհուրդս իւր յածէ.
Մի՞ թէ յիրաց ինչ խիթացեալ և յեր-
կիւղէն զանգիտէ,
Կամ թէ 'ի մեծ 'ի յամօթոյն նա թաք-
թաքուր խուսափէ.

Սակայն մուրիկ, որ ամաչէ, ինքն ընդ անձին ոգորի ,, :

“Ո՛վ, այդ մուրիկդ, անդէն Եւմէս ձայն զայս կրկնեաց դշխոյի.

Անշուշտ ուշիմ բան բարբառի իբրու ըզ մարդ ուղղատես,

Քանզի խուսէ լրբեցելոցն յանդիմանել 'ի հանդէս.

Նաև ըզքեզ ինքն յորդորէ, մինչև մոցէ արևակ,

Կալ ժուժկալել և միայնիկ տալ և առ նուլ համարձակ ,, :

“ Բա՛ւէ, մուրիկդ այդ անծանօթ, Պենելոպէ զայս կրկնեաց,

Քաջուշիմէ. զի և են իսկ այդ հոմանիքդ լիրբք անսանձ ,, :

Դարձաւ Եւմէս առ բազմականսն կատարեալ զամենայն,

Եւ մատուցեալ առ Տելեմաք 'ի յուն կանէն ասէր բան.

“Լո՛ւր ինձ, սիրուն, ես փարախին ըզ պահն ունել արդ գընամ.

Քոյ են և իմ որ անդ պարէնքն. իսկ դու աստէն կա՛լ իրնամ.

Բայց առաջին լի՛ր դու ուշիմ և անձնապահ 'ի չտրեաց,

Քանզի 'ի մէջ արդ թարթափիս մենքենագործ թշնամեաց.

Ո՛վ թէ, մինչև մեզ վընասեալ, Զևսն նոցա շանթեսցէ ,,.

Կրկնեաց 'ի նոյն Տելեմաքոս ձայն ըղձական և ասէ.

„Օ՛հ թէ այդպէս լեցի ո՛վ հայր. բայց դու հաց ա՛ռ զերեկոյն.

Գնասցես ապա, գիրգ պատրուճակս ածցես առ մեզ ընդ այգուն.

Իսկ ինձ աստէն և անմահից յանձն եղիցի ամենայն ,,.

Զայս նա ասաց, և Եւմէոս առ միւսանգամ բաղմական:

Զընթրիսն էառ և արբ բաժակ, և էլ գընալ յագարակ,

Եթող ըզյարկ զայն խառնամբոխ 'ի շամբ շէլոցն 'ի դասակ.

Ուք յափրացեալք պատկառ կային յայնժամ երգոց և պարուն,

Քանզի և օրըն կարճատեալ պահն հասանէր երիկուն:

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԸ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի սրահին հոմանեաց ըմբշամարտք կռուին, Ոդիւսէս կեղծեալ մուրիկ և բուն մուրիկ քաղաքին Իրոս անուն՝ յաղթանդամ. նկուն լինի Իրոս։ Պենելոպէ գայ յանդիման երևի հոմանեաց. քանքարտայ, զի զզուեն նոքա զՀիւրս. և տարփածուք իւր փոխանակ ընծայաբերուելեանց առ ինքն, ուտեն և վատնեն զգոյս նորա 'ի տան նորա։ Ընծայաբերուելիւնք հոմանեաց առ Պենելոպէ։ Ի գալ հասանել գիշերոյն, միւսանգամ նշաւակեն զՈդիս. նախ՝ յաղախնեայց ոք Մելանթիա անուն՝ բանիւք, ապա և արդեամբք 'ի հոմանեաց անտի Եւրիմաքոսն, արձակելով ընդդէմ Ոդիսեայ պատուանդան մի իբրու զԱնտինոսն։

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԸ.

Հաս անդ մուրիկն հասարակաց, մեծ մուրացիկն Իթակայ,
Այր գինեՃան, մուրիկ անյագ, այր անՆրման որկորեայ.
Էր տեսողաց նա հրաշացեալ 'ի յաղթանդամն իւր հասակ,
Այլ 'ի սրտին այր անարի էր և 'ի յուժն անաւագ.
Ի ծննդեանէն իւր Արնէոս մայրն իւր անուն եդ Նրմա,
Սակայն Իրոս զնա կարդային ողջ պատանիքն Իթակայ 73.

Քանզի ըզսա 'ի պէտս իւրեանց առաքէին
'ի բանբեր.
Արդ սա յայնժամ եկն և զՈդիւս յիւրմէ
տանէն արտաքսէր.
Մատեաւ եկաց հանդէպ նորա և բան
պարսեաց նըշաւակ.
" Ե՛լ ել'ի բաց, ո՛վ ծերունիդ, առ 'ի
դաւթէդ ել արագ.
Զի մի յանկարծ իբրև առակ դու քար-
շեսցիս զոտանէն.
Ո՞չ իսկ տեսեր. քարշել ըզքեզ ինձ բազ-
մականքն ակնարկեն.
Այլ քաւ լինէն, չառնում զայդ յանձն
և ակնածեմ. հապա ել.
Մի կագեսցուք, և զայրասցուք մինչ մուր-
ցացի 'ի կռուել: "
Տիգաք աչաց խաղաց 'ի նա, բարբառեցաւ
Ոդիւսէս.
" Քեզ, ա՜յ չուառ, ոչ 'ի գործ լինչ և ոչ
'ի բան ինչասեմ ես.
Ոչ և խանդամ, թէպէտ և մոյր ոք ջամ-
բեսցէ քեզ զեղուն,
Ո՞չ աւադիկ մեզ երկոցուն բաւական է
սեամս ողջոյն.
Սակայն և դու մի զօտարին լինչ մի երբէք
խանդասցիս,
Քանզի և դու, որպէս կարծեմ, այր ես
մուրիկ իբրև զիս.

Թոռ, մեծն աստուած զընչէղութիւն
Թոռ տեղասցի, ում կամի,
Սակայն ինձ վէգ դու մուրցացի ձայն մի
տացես 'ի կռուի.
Զի մի յանկարծ 'ի հուր ցասմանս էս
ծերունիս զքեզ կալայց,
Եւ ապաժոյժ արեամբ զչրթունսդ ողջ
գունեցից և ըզ լանջ.
Իսկ ինձ յայնժամ դիւր առ վաղիւն դիւր
առաւել եղիցի,
Զի դու դարձ այլ ոչ մարթասցիս առնել
'ի տուն Ոդիսի ,, :

Ի մեծ ցասումն բրդեցաւ Իրոս մուրիկն
հարբատի.
" Վա՜շ վա՜շ, զիա՞րդ պորտաբուծիդ լե-
զուն արագ հոլովի.
Կարկաչուն է իբրև պառաւ կին ցանդ
կծկեալ առ կրակի,
Որում շատ է եթէ յանկարծ տաց հա-
ղուած մի բրդընցի.
Անդէն ըզշարրս զառամանց 'ի ծամելեաց
թափեցից
Իբրև զխոզի բոհբոհելոյ աղարտողին ո-
ղայից.
Հապա, ծեր դու, ա՜ծ ըզգօտի. տեսցեն
մարդիկ կազմ ըզմեզ.
Բայց դու զի՞արդ ընդ քաջառոյգ ընդ
պատանւոյ մարտ դիցես ,, :

Զայս ինչ մուրիկքըն յանդիման բաղ-
ձըր դրանդեաց տաճարին,
Առ քաջողորկ բարաւորոքըն Ջերմագոյնս
կագէին։
Դիտեաց անդուստ զայն Անտինոս, և
ծիծաղեալ հեշտաբար,
Ասէր. “Բան մի, ո՛ բարեկամք, դիտեմ
ահա բերկրարար.
Յարդ մեզ ասուած 'ի խրախուլթեանս
չետ այնպիսի ըզբօսանս.
Իրոս մուրիկն և հիւրդ այդ ծեր արդ
պայքարին ընդ միմեանս.
Ջեռեալ են յոյժ մինչև 'ի վէգ արդ
մուրցացի ելանել,
Ա՛ղէ մեք ա՛ռք, ըզբոց կրռուոյն բորբոքեաց-
ցուք առաւել”։
Այն ինչ լուան, և հոմանիք քրքիջ բար-
ձին, ողջ յարեան.
Եկին և շուրջ ըզբրդգեալ անդ ըզ
մուրկօք պատեցան.
Բարբառեցաւ Անտինոոս. “Ինձ արդ ո՛վ
քաջք, ունկըն դի՛ք.
Ահա այծեաց դիրգ փորոտին մերոց ընթ-
րեաց մեծ խորտիկ
Արդ 'ի վերայ կայ խարուկին, է ճար-
պալից ւարեամբ լի.
Զայն ջամբեացուք 'ի մրցանակ մեք յաղ-
թողին 'ի կռուի.

Զոր և կամի, ինքն ընտրեսցէ, առ 'ի մա-
սանց փորոտւոյն,
Եւ բաժանորդ նա ցանգ լինցի մեր խրա-
խուլթեան սեղանոյն.
Իսկ այլ մուրիկ և այլ աղքատ մի մուտ
գոցէ յայս տաճար ».
Զայս խօսեցաւ Անտինոոս, և հաճեցան
հաւասար:
Բայց Ոդիւսէս բազմահընարն և խորա-
գէտ զայս ասէր.
« Ինձ չէ արժան ո՞ բարեկամք մըղել ըզ-
մարտ անվեհեր.
Բաբէ, զնա՞ր ծեր վշտակիր և պարոտա-
սեալ 'ի յոգւոյ
Յաւակնեսցի 'ի վեդ մրցիլ ընդ քաջա-
ռոյդ պատանւոյ.
Սակայն զարդիս ինձ բուռն առնէ այս ո-
րովայնս սովատանջ,
Զի յանդգնեալ ինձէն յիս վերս ես յա-
ւելից և հարուած.
Բայց աղէ դուք անխաբ լեզուաւ լերուք
ինձ արդ երդմընի,
Եթէ 'ի շնորհս Իրոսին մի ոք ասա յիս
բռնասցի.
Զի չէ արդար թէ 'ի մրցանս ոք գործեսցէ
զիս նրկուն ».
Լուան զինդիրն և հաստատուն երդումն
անուտ տան ողջոյն:

Յաև անդուստ Տելեմաքոս « Քա՛ջ լեր,
հիւր դու, ձայն կարդաց.
Եթէ վանել դու զախոյեանդ վստահ ես
յանձն, յաջողեա՛ց.
Մի՛ ինչ ուստեք մի՛ խիթասցիս. թէ ոք
յանկարծ զքեզ հարցէ,
Ընդդէմ նորա 'ի մարտ կրռիւ բազում
որեար յարիցէ.
Ես ինքն եմ աստ հիւրընկալու, և ինձ հա-
ւան են արքայք,
Այս հանձարեղ ամուք քաջաց Անտի-
նոոս, Եւրիմաք »:
Նա զայս ասաց. և բանն հաճոյ եղև ող-
ջոյն յատենի.
Իսկ անդ Ոդիս զիւր հընոտիան առեալ
զմիջովքն ած գոտի.
Նա զգեղեցիկ, յաղթահարուստ զիւր
կողն եբեր յերևան,
Ի նոյն և զուստ իւր Թիկնաւէտ անդ հո-
լանեաց յանդիման.
Ըզհաստ բազուկն ըզքաջամուր ցոյց ա-
տենին և ըզլանջ,
Նա և յերկնից 'ի զօրավիգ մեծն Աթե-
նաս մերձ եկաց.
Շուք բարգաւաճ յաւել յորդեաց յաղթ
իրանաց արքային,
Յակձիուս սեղեխք և յոտնիմատն հայե-
ցան, սարսեցին.

Առհասարակ ըսքանչացեալ այր բարբառէր ընկերի,

« Արդ չէ՞ք Իրոս, չէ՞ք արդ Իրոս, նա բըուն համահ քարշէսցի.

Ո՞չ իսկ տեսէք. երբ ծերունիդ այդ մերկացաւ 'ի հնոսեաց,

Զիարդ եցոյց ըզքաջակուռն ըզ պնդութիւնն իրանաց »:

Այն ինչ Իրոս լուաւ ըզբանսն, ահիւ խուսէր կորակոր,

Սակայն բռնի զնա պաշտօնեայք 'ի մէջ ածէն գօտեւոր.

Յապուշ Իրոս էր թալացեալ, մարմինք սարսին 'ի յանդամս,

Տես Անտինոս և կշտամբեաց, պարսաքարեաց երդիծանս.

« Արդ պայթեսցի՞ս, դու պոռոտեալդ, մեռի՞ր այժմէն. զի՞ ծընար,

Որ արդ այդչափ 'ի ծերունւոյդ ահաբեկեալ դողացար.

Ո՞չ աւադիկ ծեր վշտահար է դա վատեալ ալեւոր.

Այլ քեզ ահա ես բան անսուտ ձայնիւ կարդամ ահաւոր.

Թէ քեզ յաղթող մրցանաւոր այդ ծերդ ելցէ 'ի մարտէն,

Ես 'ի նաւ սեաւ արկեալ ըզքեզ 'ի յԵպիռոս արձակեմ.

Անդ թագաւորն է Եքետոս, կանացա-
ծնացն օրահաս.
Նա քո զունդունդ մօտ կարեացէ, 'ի նոյն
դարձեալ և զականջս,
Եւ կորզեացէ քո զամօթոյն և չանց արկ-
ցէ գիշախանձ »:
Զայս Անտինոս, և առ զԻրոս մեծ սար-
սափիւն ոսկերաց.
Բայց յասպարէզ ածեալ ըզնա և 'ի մի-
ջի կացուցին.
Զայն կարդացին ըմբշամարտիկքն և
ձեռս 'ի վեր ամբարձին.
Զի՞նչ ինչ գործել անդ վարանէր դիւ-
ցազն Ոդիս բազմիմաստ,
Արդեօք զԻրոս 'ի միհարուած արկցէ՞ ան-
դէն դիտապատ,
Եթէ արդեօք մեղմով հարեալ և ընդ
գետին ձգեացէ.
Նա ըզվերջինն ընտրեաց յաւէտ, զի դեռ
զանխուլ մընասցէ:
Համարձակեաց, եհար Իրոս յաջոյ 'ի
յուսն Ոդիւսեայ,
Իսկ Ոդիւսէս հարուստ բըռամբն զուլըն
կալաւ ըզնորա.
Եհար սաստիկ նա ընդ ունկամբն և անդ
զոսկերս ջախջախեաց,
Եւ ընդ բերանն ապաժոյժ էլ թուխ
կարմիր բուղխ արեանց.

Թաւալագլոր անկաւ Իրոս, մեծաբա-
ռաչ պոռոտէր,
Ի նոյն կրճեալ և զատամունս, և ընդ
գետին աքացէր.
Անդ ձեռամբարձք ողջ հոմանիքքն պայ-
թէին 'ի ծաղուէն,
Ոդիս ընդ սեամն առեալ զԻրոս քարշէր
տանէր զոտանէն.
Մինչև եբեր նա 'ի գաւիթն և 'ի դրան-
դիս սրահակին,
Նստոյց յեցոյց ըզնա 'ի յորմն անդ ար-
տաքոյ 'ի գաւթին.
Առ և ցուպ մի եդ 'ի ձեռին, և այսպիսի
ձայն կարդաց.
"Ասա նի՛սա դու այժմ 'ի բարապան,
լե՛ր շանց վանիչ և խոզաց,
Մի՛, վատ արանց, դու 'ի մուրիկս և մի 'ի
հիւրս ճոխանար,
Զի մի յանկարծ և այլ կարիք քեզ դի-
պեսցին չարաչար":
Ասաց Ոդիս, և ըզմաղախն իւր ծակոտ-
կէն արկ զուսով,
Եւ մուրկաբար կախեաց ըզնա քաջոր-
ռեալ չուանով.
Դարձաւ և եկն և առ սեմովքն բազմե-
ցաւ ինքն անդրէն.
Անդ հեշտաբար և հոմանիքն 'ի ծաղր հա-
տեալք դարձ առնէն.

Մըտին 'ի նեբքա և աղուաբար ձայն յՈ-
դիւսէս կարդային.

" Քեզ, ո՛վ հիւր դու, Զեւս և անմահք
լցցեն ողջոյն զնդձ սրտին.

Զի դու զանյագ զայդ որկորուստ և ըզ-
մուրիկդ վաղագոյն

Դիւր մեծապէս մեր քաղաքիս լըռեցու-
ցեր 'ի մուրոյն.

Արդ մեք ըզդա արագ արագ արձակեա-
ցուք յԵպիռոս,

Առ պատուհասըն աշխարհի առ Թագա-
ւորն Եքետոս "։

Զայս ասացին, և մեծապէս հրճուէր
դիւցազն Ոդիւսէս,

Զի և զըզձին իւր մաղթեցին նոքա լըման-
ըզհանդէս։

Էառ յայնժամ Անտինոոս ըզմեծ խոր-
տիկն, փորոտի.

Ըզ ճարպալիցն, ըզլին արեամբ, և եդ նը-
մա առաջի.

Էառ ապա Ամֆինոմոս և հաց կրկին 'ի
խանէն,

Եդ առաջի. նաև գինի տայր 'ի բաժակ
յոսկեղէն.

" Ո՛վ հիւր, ասէր, խնդա՛ ո՛վ հայր. դու
երջանիկ եղիցիս

Գո՛նեա յապայս. քանզի այժմիկ բազմա-
պատիկ չարչարիս "։

Ինդաց 'ի բանն և պատասխան զայս բազմիմաստն էտ Ոդիս.

« Դու ինձ անշուշտ, Ամփինոմէ, հանճարիմաստ երևիս.

Համանմանեալ ես ծընողին քոյ Նիսոսին Դուվլիքեան,

Զորոյ հռչակն ես քաջ գիտեմ ըզ մեծութեան, զլաւութեան.

Դու այր ինքնին ես մըտացի քանզի ճեռ ես յայն քաջէն,

Վասն այնորիկ քեզ բարբառիմ. դու քաջ միտ դիր, զոր ասեմ.

Բա՛ քան ըզմարդ ոչինչ տրկար մեզ այս երկիր բուծանէ,

Որչափ գոյակ աստ 'ի յերկրի շրջի, զերայ, և շնչէ.

Կանացածինն երբէք չասէ, եթէ յապայս տանջեսցի,

Ցորչափ 'ի դից կեայ երջանիկ և ցորչափ ծունկքն են յուժի.

Իսկ և յորժամ նոքին անմահքն յըղեն ինչ կիրս դըժնդակ,

Այո՛, բերէ նաև վշտաց, սակայն ոգւով դժկամակ.

Զի երկրածնաց միտ և խորհուրդ է իսկ անշուշտ այնպիսի,

Որպիսի օր ածէ աստուած հայրըն խնամող աշխարհի.

Էր զի երբեմն և ես ինքնին կեանս երջանիկ վարէի,

Նա և յոյժն իմ ես ապաստան ապիրատ ինչ գործեցի.

Յաւակնեցայ, լեալ 'ի հայրն իմ և յեղբարս իմ ապաստան,

Սակայն երբէք անիրաւ ինչ գործել մարդոյ չէ արժան.

Թո՛ղ մարդ լրիւիկ զայն կերիցէ զոր ինչ նրմա տայ աստուած,

Եւ ոչ որպէս անիրաւացդ այդ ժողովուրդ հոմանեաց.

Որ զօտարին ըզգոյս վատնեն և զօտարին կին գրաւեն,

Զոր ոչ կարծեմ թէ յամեցէ նա 74 տարաւիդ 'ի տանէն.

Նա՛ մանաւանդ և յոյժ մերձ կայ. սակայն մաղթեմ քեզ բարի,

Զի և 'ի տանն ինքնին աստուած քեզ լինիցի հովանի.

Յորժամ դարձցի այրն 'ի տուն իւր, մի աստ ըզքեզ յակն արկցէ,

Քանզի անշուշտ մարտն հոմանեաց ոչ անարիւն ինչ եղցէ »:

Ասաց Ոդիս, և հան նուէր, և արբ յանոյշ 'ի գինւոյն,

Եւ ըզբաժակն անդրէն դարձոյց Ամփինոմեայ պատանւոյն:

Բայց նա խռովեալ յոյժ 'ի սրտի, եւ 'ի սրահին և ՃեմՀր
Եւ ըզգըլուխն իւր տատանեալ յօրահասէն տագնապէր.
Այլ ոչ զերծաւ. զի և ըզնա կարթեաց յայնժամ Աթենաս,
Եւ 'ի նիզակ Տելեմաքեայ նրկուն եղեալ առ զօրհաս:
Զայս օրինակ Ամփինոմոս ամբոխեցաւ անդ յայնժամ,
Բայց և դարձաւ և յաթոռ իւր էառ բազմոց միւսանգամ:
Սադրեաց յայնժամ մեծն Աթենաս Պենելոպեայ դշխոյին,
Գալ յերևան առ հոմանիսն և արծարծել զյոյս նոցին.
Նա և արգոյ ևս ընծայել զինքն որդւոյն և ամուսնոյն,
Խնդաց յայնժամ Պենելոպէ, և ձայն եբարձ նա 'ի նոյն.
"Յանկամ զարդիս, Եւրինոմէ, ես հոմանեաց երևել
Եւ անդանօր բան պիտեան իմոյ որդւոյս բարբառել.
Մի՛ նա շատ ինչ կենցաղակից լեցի լըպիրշ հոմանեաց,
Այն որք աղու բան բարբառին, և նենգ լարեն 'ի թիկանց":

Լուաւ զայն կինն տընակալուէ և զայս կրկնեաց փոյթ ընդ փոյթ,

“ Քաջ են քո բանքդ, արի՛ ով դուստր, և ե՛ր թ խրատուու լեր որդւոյդ.

Բայց լոգարան տացես մարմնոյդ, և յայսոլս քո օծեսցիս,

Մի՛ դու գնասցես յայդ կերպարան, դէմք խրթնացեալք 'ի լալիս.

Լալիք անդուլք չեն ինչ բարի, և կիրք են այդ դրժնդակ,

Ո՞չ աւադիկ և Տելեմնքդ էառ զառոյգն իւր հասակ,

Զիարդ քաջի քոյ պատանւոյն արդ տէգ մորուաց ծաղկեալ է,

Զոր և ուխտիւք դու խնդրէիր 'ի յանմահիցն 'ի դասէ ”:

“ Քաւ, ինձ մի՛ դու, Եւրինոմէ, Պենելոպէ ձայն կարդաց,

Մի՛ խօսեսցիս, մի՛ յիշեսցես ըզբաղանեաց և զօծմանց.

Աստուածքն անմահք ողջոյն ըզդեղն իմ կապտեցին առ յինէն

Յորժամ դիւցազն իմ ամուսին եկն նաւադնաց տարադէմ.

Սակայն դու ինձ զԱւտոնոէ, զԻպպոտամէ ասա կոչեա՛,

Գայցեն փուքթով և յելանելս կացցեն ընթեր ինձ նոքա.

Զի պատկառեմ ես միայնիկ գալ յե-
րևան հոմանեաց ».

Լուաւ աւասրդն և ՃԵպ ոտիցն ետ և
ՃԵպեաց ըզկանայս։

Բայց և այլ ինչ հնարեաց յայնժամ
մեծն Ալթենաս դիցուհին.

Քուն անուշակ արտևանանց հեղ ծնդա-
սէր դշխոյին.

Մինչդեռ անդէն կայր 'ի բազմոց, նինջ
մի էառ խորութեան,

Եւ յօդք մարմնոյն առ հասարակ առ 'ի
հանգիստ գրգեցան.

Յայնժամ նրմա մեծ դիցանոյշն ըզշուքն
տայր զանմահից,

Զի Աքայեանք յակՃիռս կացցեն տեսոյն
նորա բերկրալից.

Յառաջ գեղով մաքրազարդեալ 'ի գեղ
անմահ աստուածեան,

Տիպ շնորհաշուք երևեցոյց 'ի պատկերին
աննման.

Յոր և Աստղիկն գեղասքանչակ զինքն հա-
սարակ օծանէ,

Յորժամ Շնորհաց նա 'ի պարուն նազա-
քայլեալ մըտանէ.

Եդ առոյգանՃն ըզնա համբուն, եդ և
կայտառ 'ի դիտակ,

Քան ըզփրղոսկը այն ինչ կարեալ եդ
ՃիւնափայլՃ ըստվերակ.

Զայս դիցանոյշքն կատարեալ թռեաւ 'ի ծայրն Ողիւմպեայ.
Եւ գիրգ նաժիշտքն յայնժամ տրուփեալք առ 'ի յարկէն գան առ նա.
Քունն անուշակ եթող ընկնա, և սթափեցաւ կաց 'ի վեր,
Եւ զայտսն առեալ սրբեաց ձեռօքն և զայս բարբառ արձակէր.
" Բաբէ, զի՞րդ քուն անուշակ 'ի թախծուլթեանս էառ զիս.
Երանի՜ թէ մեծ դիցանոյշն այն ողջախոհն Արտեմիս,
Զայս օրինակ մահ անուշակ արագ արագ արդ տայր ինձ,
Զի ոչ այլ ևս 'ի գերարտօսր ես հիւծէի վշտալից.
Լեալ անձկայրեաց իմ փեսայիս իմ տարփալի դիւցազին
Համբաւատենչ այն քաջարուոյն յԵլլադացւոց աշխարհին "։
Զայս ինչ ասաց, և 'ի յարկէ իւր վերնատանն իջանէր.
Ձէր միայնակ. այլ և նաժիշտք կային կրկին առընթեր.
Հասեալ 'ի դասն հոմանեաց Պենելոպէն գերափառ,
Եկաց առ դուրսն տաճարին, այտք քողարկեալք 'ի գիրգ շար.

Նաժիշտքն անդէն կային շքով մին յա-
հեկէն, մին յաջմէ,
Տեսին բազմեալքն և սրտառուչք եղէն
ողջոյն այլ յայլմէ.
Այր այր խնդրէր անձին իւրոյ ըզսրսկա-
պանն հարսանեաց,
Սակայն դշխոյն զայս առ որդին Տելեմա-
քոս ձայն կարդաց.
« Ձեզ այլ 'ի քեզ, Տելեմաքէ, խորհուրդ
ողջիկ, չեզ համբուն.
Դու որ 'ի տես քո մանկութեանդ էիր
ուշիմ և խոհուն.
Իսկ այժմ հասեալ քո 'ի յարբունս և
եղեալ քո այր աւագ,
Եւ այր օտար տեսեալ ըզքեզ 'ի գեղ քո
յայդ և հասակ,
Բա՛ ասասցէ, դա ինքն անշուշտ ձեռ է
մարդոյ երջանկի.
Բայց չեզ 'ի քեզ միտք քաջախոհ և ոչ
հանճար 'ի սրտի.
Զի՞ դու ըզգործըդ դըժպըհի գործեալ
աստէն 'ի տան մեր,
Ըզծեր հիւրոյդ գձձանս ասեմ, տեսեր և
զանց արարեր.
Բա՞ռնէ չարեացս. եթէ հիւր ոք 'ի տանդ
այսպէս դրժեսցի,
Ո՞չ և համբուն դու նըշաւակ ւ առակ
լեցիս յաշխարհի »:

Կրկնեաց անդէն Տելեմաքոս ձայն քաջուշիմն, « Ո՛վ մայր իմ,
« Քաւ մի լիցի, թէ ընդ սրանելդ ես 'ի ցասումն ինչ բրդիմ.
Թո՛ղ դու ըզտիս իմ մանկութեանս, զարդիս եմ ես խորագդաց,
Եւ խելամուտ առ հասարակ եմ ես ջաբեաց և բարեաց.
Բայց և բնաւից քաջ միտ դնել անշուշտ չեմ ինչ բաւական.
Կամ միայնիկ. և չարանիւթք բազումք զինև պատեալ կան.
Սակայն հիւրոյն և Իրոսին մարտին կրուոյն դրժընդակ
Զէր այն խորհուրդ գործ հոմանեաց. և հիւրն էառ մրցանակ.
Այլ ո՞վ եթէ, քաջդ Ապողոն, և Աթենաս, 'ւ Արամազդ
Ըզնոյն գունակ և հոմանիք սատ լինէին արդ տապաստ,
Դանդաչելով 'ի գլուխս իւրեանց կէսքն նոցուն 'ի գաւթին,
Եւ հաշմանդամք և խեղանդամք կէսքն 'ի նեբքս 'ի յարկին.
Որպէս զարդիս հէգ այն Իրոսն 'ի մեր գաւթին նստեալ է,
Եւ առ դրանդէօք նա 'ի գլուխն իբրև արբեալ դանդաչէ.

Ոչ ինչ կարէ կալ'ի յոտին և ոչ'ի տուն առնել դարձ,
Քանզի գոգցեա անդամքն ողջոյն են քայ-
քայեալք յերանաց »։
Մինչ յայսպիսեաց անդ 'ի զբուցաց մայր բարբառէր և որդին,
Զայն յանկարծոյն Եւրիմաքոս զայս ար-
ձակեաց դշխոյին.
« Եթէ ՅԱՐգոն յայն Յասոնեան 75,
ո՞ դուստր ուշիմ Իկարեան,
Դու բոլորից Աքայեցւոց գայիր այսպէս
յերևան,
Յայգուց աստէն բա՛ տարփածուաց դաս
մի խռնէր բազմագոյն,
Այնչափ հանճարդ, գեղդ, և հասակ է
իսկ կանանց վեհագոյն »։
Կրկնեաց անդէն Պենեղոպէ. « Ո՛վ, զնմին
ողջոյն, Եւրիմաք,
Ըզչուքն, ըզգեղն, և ըզկարն իմ առին
բարձին դիքն անմահք.
Յաւուր յորում Յոյնք յԵղիոն 'ի չու
անկան յարշաւան
Եւ Ոդիւսէս նիզակակից այն քաջարին
իմ փեսայն.
Թէ նա աստ գայր ինձ այցելու իմ մեծ
լինէր շուք փառաց,
Սակայն զարդիս թախծեալ եմ ես, քան-
զի գձձեաց զիս աստուած։

Նա 'ի չուեալն 'ի մեր տանէն զաջ իւր առեալ ետ յաջ իմ.

Անշուշտ որպէս կարծեմ, ասէր, միտ դիր քաջիկ, դու ով կին.

Ոչ Յոյնք ամէն դարձ արասցեն յարշաւանէն ողջանդամ,

Զի համբաւեն թէ Տրովացիք են արք մարտիկք քաջութեան.

Են արդնընկէցք են տէգընկէցք, և նետասաձիգք են համակ.

Նաև 'ի նուս օդապարիկ սօս նրժուգաց վերելեակք.

Որով նոքա փութանակի զելս կընքեսցեն ըզմարտի,

Եւ ոչ գիտեմ, արդեօք դարձայց, թէ անդ կացից ես գերի.

Արդ քեզ ասատէն իմքս ամենայն 'ի քո խընամս յանձնեսցին.

Եւ քեզ հայրն իմ, քեզ և մայրն իմ մի մոռացօնք լինիցին.

Եւ որպէս ցարդ դու քաջ նոցա խընամ ածեր 'ի մեր տան,

Ի նոյն դարձեալ և յաւելցես ցորչափ կամ ես բացական։

Իակ և յորժամ որդւոյն մերոյ տէգընն մօրուաց ծաղկեսցի,

Ում և կամիս, դու հարանացիր, թողեալ ըզտուն զայս յարկի։

Զայս ինձ ասէր. և արդ բանից նորա
եհաս ժամանակ.

Եւ այս գիշեր ընծայեսցէ զիս հարանա-
նալ դժկամակ.

Եղուկ եմ ես. զերջանկութեան զօրն իմ
Դիոս բարձ յինէն.

Սակայն զարդիս սրտցաւութեամբ ես մե-
ծապէս թախծեալ եմ.

Զի տարփացեալքն պերճ կընոջ նոյն և
դստեր ընչեղին,

Եթէ երբէք ընդ իրերաց 'ի վեգ տար-
փողքն գային,

Այս վաղնջուց էր սովորոյթ զայն օրինակ
տարփածուաց,

Զի յանդէոց յոյրս ածէին, նաև պա-
ղարտս 'ի յօդեաց.

Եւ ըզկընոջն ըզբարեկամն 'ի խրախու-
թիւն կարդային,

Եւ հոյակապ ձօնս ընծայից կընոջն այն-
միկ ձօնէին.

Սակայն զարդիս համարձակեալք և զ-
տարին տուն ծախեն »:

Ասաց տիկինն, և Ոդիսէս յոյժ ցընծացաւ
'ի բանէն.

Զի գիրդ բանիւք 'ի հոմանեաց կորզէր
քաղէր ըզնուէր.

Սակայն այլ ինչ կին քաջուշիմն յիւրում
սրտին խոստոտէր:

Անտինոոս յառաջադէմն առ նա յայն-
ժամ զայս կրկնեաց.
« Քեզ, ո՞վ դշխոյ, ձօնք և ընծայք փու-
թով ածցին յԱքայեանց.
Դու ա՛ռ ընկալ, ո՛վ քաջուշիմդ, քեզ
զընծայեալսն ըստ ըղձի.
Քանզի հրաժեշտ տալ յընծայից է ինչ
արդեօք դժպըհի.
Մեք կամք մընամք ասա՛ի յարկիս աստի
՝ի բաց ոչ գընամք
Մինչև դշխոյդ ՝ի հարսն ածեալ առըն
քաջի և աւագ »:
Զայս անդ ասաց Անտինոոս, և ընդ խոր-
հուրդն հաճեցան.
Այր այր յայնժամ վասն ընծայից զիւրն
առաքէր պաշտօնեայն:
Ընծայն ձօնեալն Անտինոսին էր հոյա-
կապ ձօն պայծառ,
Շըղաշատեռըն երփնազարդ գործած
ջքնաղ, լայնատարը.
Ի նմա համակ կուռ ոսկեղէնք էին ճար-
մանդք երկտասան,
Եւ կարթաւոր էին աղեսիւք քաջ յերիւ-
ղեալք անընման:
Եւրիմաքոս հրաշակերտեալ ձօն պար-
գևէր ոսկի քայռ,
Որ ընդ սաթի ընդելուզեալ իբրև արփի
բոցանայր:

Գինդրս ազնիւրս եռակնեայս Եւրիդամոս ընծայէր,
Որոց և շուքքն շնորհաշուք լուսանըշոյլ փայլակէր.
Պիսանդրոսին Պողիւկտորեան քաջին ապանց պերճ ընծայն
Մանեակ ձօնեալ գեղգեղափայլ էր յոյժ ջքնաղ զարդ ուլան.
Ընդնոյն և որք անդ համախուռք էին Յունացց արք աւագք,
Զընծայս նոցա ձօնս գեղեցիկս ածէին պաշտօնեայք:
Յարեաւ ապա եւ Պենելոպ 'ի յարկ իւրոյ վերնատան,
Նաժիշտքն ըզհետ բարձեալ զընծայսն զուգահեռք ընթացան:
Իսկ հոմանիքն 'ի ափոփութիւն յերգ նուագաց և պարուն
Դարձ արարեալ անդ մընային մինչև 'ի պահ երեկոյն.
Խնծղիւք այնպէս պարապելով մինչ եկին մութն եհաս,
Ի լոյս յարկին եդին արագ անդէն երիս կրակարանս.
Պատրաստեցին չոր վառնջուց այն ինչ հերձեալ փայտ անբաւ,
Ալեալ կուտեն շուրջանակի ճարակ բոցոյն անխոնաւ.

ժվր աղախնեայքըն Ոդիւսեայ լուցին և
ջահս և պաշտեն,
Մինչև նոցա բան Ոդիւսէս բարբառեցաւ
'ի վայրէն.
" Դուք Ոդիւսեայ, ո՛ աղախնեայք, թա-
փառական արքային,
Արեք գնացէք դուք 'ի տաճարն ուր Պե-
նելոպ կայ տիկինն.
Նըստա սփոփանս ընծայեցէք, անդ աղե-
կատ շարժեցէք,
Եւ կամ ասուիս նստեալք անդէն ձե-
ռամբք ձերովք սանդրեցէք.
Ես աստ կրակին իրնամ ածեալ, ողջոյն
յարկին տամ ըզլոյս,
Թէպէտ նոքա աստ յամեացեն մինչ յոս-
կեդահն արշալոյս,
Ոչ իսկ խոնջիմ, համբերատար եմ բնա-
ւորեալ անդստին ".
Լուեալ ըզբանըն կանանուոյն, այր ընդ
ընկեր ծիծաղին:
Բայց անարգու եկաց նրստա Մելանթիա
գեղանին,
Զոր Դոլիոս ծընաւ իւր դուստր, այլ էր
նա սան դշխոյին,
Գրգանս նրստա տայր մեծապէս և իբրև
դուստր առ սընոյց,
Համայն այնպէս նա ըզդշխոյն 'ի յոգին
իւր վշտացոյց.

Քանզի տարփայր նա յԵՒրիմաք, որ 'ի դասէն հոմանեաց.
Արդ սա յայնժամ ըզմեծն Ոդիս շատ զըզ ուանօք նախատեաց.
" Հէգ դու, ասէր, մուրիկ օտար և ծեր թափեալ 'ի խելաց,
Զի՞ դու չերթաս ընկողմանիլ 'ի պըղընձին յարկ դարբնաց.
Զի՞ և չերթաս դու յինչեվանս, այլ ասա կացեալ կարկաչես
Եւ յակմբի այս աւագաց դու Ճոխանաս ըրբասկես.
Առաս գինին քաջ քո զակամբ եկեալ է արդ չարաչար,
Կամ դու արբչիս ես հանապազ, քանզի խօսիս վայրապար.
Խայտաս թերևս, զի դու զԻրոս զայրըն մուրիկ պարտեցեր,
Այլ զի՞նչ, եթէ քեզ դոռասցի այր քան զԻրոս անվեհեր.
Որ բրուընցի ըզքեզ ջախեալ, և հէգ գըլ խոյդ տացէ գոյժ,
Վարեալ 'ի դուրս և շաղեսցէ ըզքեզ յարիւն ապաժոյժ "։
Խոժոռ 'ի նա ակնարկելով ահաբեկեաց Ոդիւսէս.
" Ըզքէն, ա՛յ շուն, ես արդ դուշակ գնա՝ ցից մատնել փուրթապէս։

Տելեմաքեայ քաջ պատանւոյն ըզքո լու-
տանագ մերկացայց,
Նա ասա ըզքեզ արագ արագ յօշատեսցէ
'ի յանդամս »։
Զայս Ոդիւսէս. և հասարակ սարսափե-
ցաւ կանանին.
Ծունկքն 'ի նեղքոյ լուծան նոցա, ահա-
բեկեալք խուճապին.
Համարեցան իբրև ըստոյգ ըզսասա բանին
զոր ասաց,
Բայց Ոդիւսէս չոքաւ յառաջ առ կրա-
կարանս մերձ եկաց.
Կայր արծարծէր, և անքըթիթ շուրջ
ակնարկէր յայն առեան.
Եւ 'ի խորհուրդսն յուզէր աղուն, որ և
չեղեն անվախճան։
Բայլ Ամենաս ոչ հանդարտէր նախա-
տանաց դուլ առնել,
Զի Ոդիսէս գամ քան ըզգամ բորբո-
քեսցի 'ի սրտնել.
Նախ առաջին Եւրիմաքոս բան պարսա-
քար արձակեաց,
Եւ զՈդիսէս 'ի հենդն արկեալ էաց ծի-
ծաղել հոմանեաց.
« Արդ ունկըն դիք, զոր ես ասեմ ձեզ,
տարփածուք դշխոյին,
Այս հիւր մուրիկ ասա առանց դից ոչ
եկն 'ի տուն Ոդիսին.

Բաբէ, զիարդ ինքն և գըլուխն իբրև ըզ-
ջահ ջինջ փայլի.
Ջինջ է համակ. զի և 'ի նմա 'ւ ոչ աղուա-
մազ երևի »:
Ջայս ինչ հենդնեաց. ապա ցՈդիս բան
հարցանէր անարդու.
« Անսա՛ ինձ, հիւր. կամիս լինել ինձ 'ի
մըշակ 'ի վարձու.
Յիմ ագարակն յըղեմ ըզքեզ, նաև շատ
ինչ վարձ տամ քեզ.
Անդ քաղեսցես դու փուշ ցանգոցս և
ծառըս յաղթ անկեսցես.
Եւ ես պարէն օրապահիկ քեզ հանա-
պազ առաքեմ,
Տամ և կօշիկ ոտիցըդ քոց, և ձորձ ըզքև
արկանեմ:
Այլ վա՜յ, դու կեանըս պարապորդս ու-
սեալ ես միշտ 'ի վարել,
Եւ ո՛չ կամիս ըզհաց զաւուրն աշխատու-
թեամբ ճաշակել.
Սիրես 'ի մոյր զօրհանապազ յառնել
շրջել ընդ քաղաք,
Դատարկ անգործ 'ի բուծանել զայդ
որովայն քո զանյագ »:
Ուշիմն յայնժամ ձայն ետ Ոդիս, » թէ
մեզ 'ի վեդ, Եւրիմաք,
Մըշակութիւն կայր 'ի դաշտի 'ի գար-
նայնոյն յեղանակ,

Յորժամ աւուրք երկայնաձիգ էն մշշակաց սիրելի,

Եւ ինձ յայժամ էր 'ի ձեռին սուր քաջաթեք գերանդի,

Նոյնպէս և քեզ. և ծոմք երկուքս 'ի խոտաւէտ 'ի դաշտի

Փորձ փորձէաք հնձել կտրել մինչև 'ի մութ գիշերի,

Կամ թէ հարկիք էին եզանց մեզ 'ի վարել, յաղթ եզինք,

Խարտեաշք կարմիր, և համազօրք, և կշտասլինդք, համառիք,

Եւ յարօրել էր առաջի չորս արտավար կոշտաբեր.

Տեսանէիր, զի՞նչ յիմ ձեռաց յայնժամ ակօս պատառէր.

Կամ թէ այսօր մեզ յանկարծոյն գոռ մարտ դրդէր Զրուանեանն,

Եւ տէգ կրկին էր յիմ բերին, նաև տայր ոք ինձ վահան,

Եւ պրպընձի համակ 'ի քունս իմ դընէին սաղաւարտ,

Տեսանէիր դու զիս յայնժամ քաջ նահատակ առ 'ի մարտ.

Ոչ պարսէիր նախատանօք զիս պորտաբոյծ ղերթ մուրիկ.

Բայց սիրտ է քո անագորոյն, և այր ես դու եղջերիկ.

Իսկ թէ այժմիկ դու այր աւագ և այր հրզօր երևիս,
Քանզի արանց դու սակաւուց և անարեաց կենակցիս։
Բայց երբ գայցէ քաջն Ոդիսէս աստ 'ի տուն իւր հայրենին,
Այս դուրք յայնժամ, թէպէտ և լայնք, քեզ կարի յոյժ անձկացին.
Յորժամ արտաքս ընդ այս դրանդիս խուճապեսցիս տագնապաւ՝՝.
Այն ինչ լուաւ Եւրիմաքոս իբրև ըզհուր վառեցաւ։
Տիգաք աչաց ընդ Ոդիւսէս ձայն զայրագին արձակեաց.
«Հէգ, ա՛յ չուառ. անշուշտ այսօր էս քեզ չարաւ դիպեցայց.
Զի՞ դու այդչափ աստ յաւագաց բանդագուշես յատենի,
Եւ անվեհեր մեզ ըբանաս իբր աներկիւղ 'ի սրտի.
Անչափ գինիդ զակամբդ անշուշտ եկեալ է արդ չարաչար,
Եւ կամ թէ ցանդ արբեալ էս դու, զի կարկաչես վայրապար.
Զի՞ շրփացար, իբր Իրոսին թէ դու դըրտար յաղթական՝՝.
Ասաց անդէն ըշտապեցաւ, առ և կալաւ պատուանդան.

Խոյս Ոդիւսէս եւ կծկեցաւ անդ առ ծնդովք բազմելոյն.

Էր սա քաջն այն Ամփինոմոս, այր խորհրդովք բարեբուն:

Եւրիմաքոս ըզմատուռուակն եհար յաջոյ 'ի ձեռին

Եւ ըսկահակին շառաչմամբ վայրհոսեցաւ 'ի գետին.

Վայ կարդաց այրն անդէն տապաստ տալ ծածեցաւ 'ի յորսայս,

Եւ խռովեցան ընդ մուրթ ընդ յարկն այն բազմամբոխն հոմանեաց:

Այր ընդ ընկեր իւր հայեցեալ զայս բարբառէր զայրագին.

"Ո՞տայր եթէ հէգդ այդ մուրիկ էր մատն եղեալ օրհասին,

Մինչեւ դորա ատո երևեալ 'ի մեր կոչունս 'ի չար ժամ,

Եւ մեզ չէր արդ այս դրժպրհի յուզեալ աղմուկ դառնութեան.

Արդ պայքարինք մեք ըզմուրկէ, մեք ալք աւադք հոմանիք.

Եւ զինչ վայելք ի ցեն կոչնոց, յորժամ յաղթող են յոռիք":

Յարեաւ անդուստ Տելեմաքոս ձայն արձակեաց տիրաբար.

"Անշուշտ, ո՛վ ալք, ձեր խօլացեալ են միտք ողջոյն և հանճար.

Զէզ առիմբ՞ ո՛չ քաղցրանայ արդ ոչ խոր-
տիկ, ոչ գինի.
Անշուշտ ուրեմն խէթ ինքն աստուած
յուզեալ է ձեր ակըմբի.
Եւ արդ կերեալք, դուք 'ի ձեր տան գնա-
ցէ՛ք առէ՛ք քուն ամոք,
Յորժամ և կամք ձեր լինիցին. քանզի վա-
ղեմ և ոչ զոք "։
Լուան ըզձայնն. մղձկեալք 'ի սիրտ ափ 'ի
բերան համրացան։
Յապուշ հարան, զի Տելեմաք ձայն ար-
ձակեաց իբր իշխան։
Բայց խորհուրդ քաջ Ամփինոմոս կար-
դաց յայնժամ յատենի
Վերն այն զաւակըն Նիսոսի Արեսոսեան
արքայի.
"Իսկ ո՞վ իցէ, ո՞ բարեկամք, որ խոչ ընդ-
դէմ կարդեսցէ
Ի վերդ ելեալ քաջ խորհրդոյ, և կամ
լուտանս ժայթքեսցէ.
Ա՛ղէ, ոչ հիւր և ո՛չ մուրիկ և ոչ ծառայ
գրձձեսցի,
Որ միանգամ ասա օթեանան 'ի տան մե-
ծին Ոդիսի։
Այլ՞ն առեալ արդ մատրուակըն բա-
ժակաց կարդ տացէ,
Եւ նուիրեալ այր այր 'ի մէնջ գնացեալ
'ի տուն նինջ առցէ.

Մեք սատ ըզհիւրն թողցուք, նրմա իր-
նամ ածցէ Տելեմաք,
Զի հիւր չոքաւ այդ ծերունիդ սատ
Յոդիսեան 'ի մարդակ »։
Զեռրն ետուն հաւանութեան. և զնատ-
նարանն Մուլիոս
Խառնեաց նոցա այրն հոյակապ Դու-
ղնքոսեանրն քարոզ.
Եր ժիրաժիր սա պաշտօնեայ Ամփինո-
մեայ իշխանին,
Որ կարդ առեալ շուրջանակի մատը-
ռուակէր ակրմբին.
Հանին նուէր, և 'ի գինւոյն առին բա-
ժակ քաղցրութեան.
Յարեան չոքան առնուլ ըզնինջ այր այր
յանցնիւր օթեվան։

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԹ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Յետ մեկնելոյ հոմանեաց 'ի տանէ խնձոյիցն, Ոդիս և Տելեմաք փոխադրեն զզէնսն 'ի վերին դատիկոնս։ Տելեմաք գնայ 'ի ննջել. Պենեղոպէ ինչանէ 'ի վերնայարկէն իւրմէ խօսել ընդ Ոդիւսեայ միայնացելոյ։ Ոդիւսէս կեղծէ նմա պատմութիւն մի, և 'ի գերարտօսր հատանէ զդշխոյն։ Դայեակն Ոդիւսեայ հինօրեայն աւսարդ Եւրիկլէ ճանաչէ զՈդիս 'ի սպեացն՝ 'ի ժամու լուանալոյն զնա. և խատիւ արգելանի յՈդիսեայ մի 'ի վեր հանել։ Պենեղոպէ պատմէ զերազն իւր, և զհնարս վտանգաւոր դաշնի իւրոյ ընդ հոմանեացն 'ի հարսնախօսութիւն. և ձեռն հաւանութեան տայ այնմ Ոդիւսէս։

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԹ.

Մ՚ԸՆԱՑ անդէն Ոդիւս միայն, և ժողովոյն հոմանեաց
Խոկայր ըզմահն, և հովանի ունէր անձին զԱթենաս.
Բարբառ կարդաց որդւոյն խրոյ. «Տէր լեմաքէ, ժամ է արդ
Բառնալ ողջոյն 'ի տաճարէս զարեսականն զէն և զարդ.
Թէ հոմանիք զայն խնդրեսցեն, աղու բանիւք դու ասա՛,
Բարձի ըզզէնան և պահեցի, և 'ի ծրխոյն զգուշացայ.

Զի խանձահոտն հրոյն ըզզէնան ողջ
մրճոտեաց սատակապէս,
Եւ չէն նըմանք յորժամ 'ի չուն եթող
աստ զայնս Ոդիւսէս։
Առ այս և ինձ խորհուրդ մի քաջ էարկ
աստուած 'ի սրտի,
Զի մի 'ի ձեզ, երբ գինեսջիք, կապ դառ-
նութեան յուզեսցի.
Դուք այր զընկեր վիրաւորեալ, և հար-
սանեաց սեղանոյ
Խրոով հարջիք. քանզի երկաթ չար հրա-
պուրիչ է մարդոյ"։
Լուաւ ըզխրատն Տելեմաք, և հնա-
զանդեալ ծընողին,
Զայն փութապէս բարբառեցաւ Եւրիկ-
լեայ դայեկին.
"Արի, մայրիկ, ըզկանանին 'ի նեբքս 'ի
յարկս արգելցես,
Մինչև ես հօրս 'ի յառագաստ զեռեղեցից
ըզպերճ զէնս։
Հայրն իմ չուեաց, և անխընամ թողան
աստ զէնքն և անշուք,
Մրճոտեցան զէնքն 'ի ծրխոյն. զի ես էի
դեռ մանուկ.
Եւ արդ եդից 'ի պահեստի, և խանձ հը-
րոյն ոչ դրժէ".
Կրկնեաց անդէն Տելեմաքեայ սիրուն
դայեակն Եւրիկլէ.

«Էր բարդաւաճ որդեակ սիրուն, և յա-
ւելցի քեզ հանճար.
Լեցիս դու տան քում պահապան և կա-
բասուոյդ հոգատար.
Այլ ովվլեցի քեզ ճրագակիր և գործա-
կից այդ գործոյ,
Զի ոչ ներես եթէ նաժիշտք քեզ լոյս
տացեն յառաջոյ»:
Կրկնեաց առ նա Տելեմաքոս. «Ինձ դա
այդ հիւրդ ընկերէ,
Քանզի անգործ ես ոչ թողում զայր որ
ըզ հացն իմ ուտէ,
Թէպէտ և այր է եկաւոր դա յաշխարհէ
բացական».
Նա զայս ասաց, և փութապէս բանքն 'ի
յարդիւնս փոխեցան:
Վաղեաց դայեակն, արդէլ փակեաց
պնդեալ ըզդուրս կանանուոյն,
Եւ Ոդիւսէս յարեաւ եկաց գօտէպն-
դեալ ընդ որդւոյն.
Ըզսաղաւարտսն բառնային և զկմբաւո-
ւրն զասպար,
Ըզսուր աշտեայս. և Ամթենաս անդ յա-
ռաջոյ ընթանայր,
Լոյս ի մեն հորդէր արփիահրաշ, ճրագն
ոսկի 'ի ձեռին,
Ընդանչացաւ Տելեմաքոս, ձայն արձա-
կեաց ծընողին.

“ Զինչ տեսանեմ ես, ո՛վ հայր իմ. և զինչ այս մեծ սքանչելիք,
Զի ինձ որմունք մեր տաճարիս և միջնատունք գեղեցիկ,
Նաև մարդակք մեր եղևինք և այս սիւնք մեր օդապար
Փայլատակեն աչացս իմոց իբրև ըզհուր բոցավառ.
Անշուշտ, ո՛վ հայր, ասա մուտ 'ի նեղքս յերկնաձեմից ոմն աստուած ”.
“ Կա՛ց դու լըռիկ. Ոդիս անդէն զորդւոյն ըզձայնըն կարձեաց.
Կապեա՛ յուշիդ զոր արդ տեսեր. և մի այլ ինձ դու հարցցես.
Այս աստուածոցն երկնաձեմից բոյս է բարուցն և հանդէս.
Բայց դու արի՛ երթ 'ի ննջել. և ես մընամ 'ի յարկին,
Լրտես քաջիկ կալ նաժշտաց, կալ և մոր քոյ 'ի զընին.
Ողբս 'ի բերան առեալ անշուշտ սա մի առ մի ինձ հարցցէ ”.
Ասաց Ոդիս և Տելեմաք եալ մեկնեցաւ 'ի յարկէ:
Ի լոյս ջահիցըն լուցելոց եմուտ ննջել 'ի սենեակ,
Յորում և միշտն ընկողմանէր ըզքունն առնուլ անուշակ.

Անդ հանդարտեալ մընայր պահուն արեգական լուսաբեր,
Մինչդեռ Ոդիս ընդ Պալլասայ մահ հոմանեացքն նիւթէր։
Դայր ելանէր Պենելոպէ զիւրքն թողեալ սրսկական,
ԶԱրտեմիսեայն բերեալ ըզտիպ և զոսկեղէնն Աստղական։
Նըմա ըզգահն իւր 'սեպհական զետեղեցին առ հըրոյն.
Էր 'ի փրղոսկը էր և յարծաթ այն գահ նորա զարդարուն.
Զայն Իկմալոս հիւանեաց Նըմա Ճարտարարուեստն աննըման
Եւ անդստին 'ի գահոյիցն եդ և ոտից պատուանդան.
Մորթ պատուական 'ի ձեռս առեալ զայն 'ի վերայ սփռեցին,
Եւ բազմեցաւ դշխոյն ուշիմ Պենելոպէն խնկելին։
Եկին նաժիշտքն առ 'ի յարկէն, ըզնշխարեալն բառնան հաց,
Բառնան զսեղանս և ըզ բաժակս ըզկնեալոցն հոմանեաց.
Ի կայծականցն առկայծելոց ըզ կրակարանս մաքրեցին,
Եւ կուտեցին այլ փայտակոյտ լոյս և ըզ ջեր տալ յարկին։

Բայց զՈդիսէս Մելանթիա առ միւսանգամ և զզուէր.

«Մեզ 'ի տաղտուկ, դու ով հիւր ծեր, լեցին դարձեալ զայս գիշեր.

Զի՞ քեզ յածել ասա 'ի յարկիս. մի թէ կանայս լսեսես.

Ե՛լէ՛լ արտաքս, ա՛յ չուառական. ո՞չ, զոր կերար, շատ է քեզ.

Արի՛, կամ թէ այդ խանձողիւդ հարեալ արտաքս վարեսցիս».

Ինա խոժոռ ակնարկելով, ձայն զայս ուշիմն էտ Ոդիս,

«Առ ի՞նչ այդպէս, դու լոբենիդ, յիս յարձակիս զայրագին.

Զի չեմ պայծառ, և գերգլեանկս այս հընոտի է ձորձն իմ.

Եւ զի մուրամ ես ընդ քաղաք բռնադատեալ 'ի քաղցոյն,

Համանմանեալ սինլոքորաց մուրիկ նրժդեհ որերոյն.

Բայց էր երբեմն, ւ էս երջանիկ 'ի տուն պայծառ բնակէի,

Եւ ողջ մուրկաց և աղքատաց էս ձիր առատ ջամբէի.

Ամբաւ յայնժամ էր կարասիս, ծառայքս էին բազմերամ,

Որովք 'ի կեանս արք բարեկեացք և արք ընչեղք պերճանան.

Մ ԵՐԿԵԱՑ գԸՃՃԵԱՑ զԼԻՍ Ա Ր ա մ ա զ դ , և ԻՆՔ
գիտէ ԸՂՂԱՍՏՃԱՌ .
ԵՐԿԻՐ ՕՎ ԿԻՆ զԼ ՄԻ և դու ԹՇՈՒԱՌԱՍՑԻՍ
ՄԻՆՉ ԻՍԱՌ .
Մ Ի 'Ի պայծառ 'Ի քո գեղոյն կողոպտեա-
ցիս դու ողջոյն ,
Որով զարդիս ՃՈԽԱՑԵԱԼ ԵՍ 'Ի նաժշտաց
'Ի դասուն .
Կամ ԹԷ գուցէ մի քեզ չարաւ զայրագ-
նեսցի և տիկինն ,
Եւ կամ դարձցի քաջն Ոդիսէս . քանզի
գոյ դեռ յոյս դարձին .
Ապ' ԵԹԷ նա կորեաւ անդարձ , մահուն
եղեալ Ներշաւակ ,
Բայց արդ շնորհօք Ապողոնին յարբունս
Եհաս Տելեմաք .
Ուշիմ է նա . կին ոք 'Ի տան ԹԷ գործեսցէ
ինչ մի չար ,
Ոչ ծածկեսցի առ 'Ի նմանէ , զի չէ տիոք
անկատար ՝՝ :
Պենելոպէն լուաւ ողջոյն զոր ինչ ասէր
Ոդիսէս .
Անդէն դարձաւ նա 'Ի նաժիշտն և ընդ
հարաւ սաստկապէս .
« Ա՜յ կին յանդուգն , այ դու լիրբ շուն ,
և անպատկառ 'Ի լեզուի .
ԸզժպրհուԹիւնդ գիտեմ ըզքո . գլուխ
քո զայն տուժեսցի .

Գիտէիր քաջ, եթէ կամիմ ես 'ի հիւրոյդ յայդմանէ
Ես թախծագին բան հարցանել զիմոյն թշուառ փեսայէ »։
Ասաց տիկինն, անդէն և ձայն առ կին տնօրէն արձակեաց.
« Եւրինոմէ, ած մեզ աթոռ, և 'ի վերայ մորթ սրփուեաց.
Հիւր ծերունիդ նստեալ առիս բարբառեսցի անարգել,
Լուիցէ յինէն և կրկնեսցէ. շատ ինչ կամիմ հարցանել ».
Վազեաց արագ, բերեալ զաթոռն և յարդարուն մորթ սրփուեաց.
Նստաւ անդէն համբերատարին Ոդիւսէս վշտազգեաց։
Լռեաւ յայնժամ 'ի հարցանել Պենեղոպէն քաջուշիմ.
« Ա՛ղէ, ո՛ հիւր, ասա՛ ինձ դու, զոր հարցանեմ առաջին.
Ո՞ւր է քաղաքդ, ո՞ւր են ծընողքդ, և ուստի՞ ես, և ո՞ ես ».
Ի լուր հարցմանն այլ պատասխան ետ խորագէտն Ոդիսէս.
« Անշուշտ, ո՛վ կին, քեզ բիծ դընել ո՞ ժըտեսցի յերկրածնաց.
Քանզի մինչև յերկին անդորր է հաս քոյին շուք փառաց.

Որպէս ուրուք աստուածանման թագաւորասակ արքայի,
Որ ամբոխիցն քաջարեաց միշտ իրաւունս խօսեացի,
Նըմա երկիրքն բուսուցէ զառատ ցորեանն, ըզգարին,
Եւ ակաղձուն տունկք մրգաբերք և ծառք պտղովք ծանրացին,
Հօտք խայտացեն և ոչխարաց, լեռք անսրխալք 'ի ծընունդս,
Եւ ծով նըմա ընծայեացէ կայտառս բազումս և ձրկունս.
Քանզի վարիչ իմաստութեամբ 'ի ձեռն ունի գաւազան,
Եւ ընդ նովաւ ազգք ժողովուրդք երկանկութեամբ յօրանան։
Եւ արդ դու ինձ աստ 'ի քում տան հարցցես այլ ինչ զոր կամիս,
Բայց ինձ զազգն իմ մի հարցաներ, մի ինձ և զիմ հայրենիս.
Ցաւ 'ի ցաւս իմ բարդես կուտես զայն բերելով ինձ 'ի յուշ,
Զի այր եմ ես տարաշխարհիկ և վշտատես կարի յոյժ.
Ոչ ինձ արժան 'ի տուն օտար զիմն աշխարել երաշխէպ,
Քանզի ողբալ անխորհրդաբար ուր և ի՞նչ, չէ 'ի դէպ.

Զի թէ դու ոչ, սակայն գուցէ ոք նա-
ժշտացդ 'ի դասուն
Համարեսցի զիմ արտասուսն հեղուլ 'ի
շատ 'ի գինւոյն »։
Պատասխանի զայս ինչ յայնժամ ես
հանձարեղ Թագուհին.
« Անսա, ով հիւր. զարդիս զիմ փառս
աստուածքն անմահ կապտեցին,
Ոչ շուք, ոչ գեղ մընաց ինձ արդ, յոր-
ժամ նաւեաց յԵղիոն
Իմն Ոդիսէս ընդ հելլենաց անդր 'ի մար-
տին 'ի պաշտօն.
Թէ աստ դառնայր ինձ խնամածու այն
բազմիմաստն իմ փեսայն,
Ո՞վ հրաշանայր իմ շուքն յայնժամ, 'ի
նոյն և փառքն իմոյ տան.
Բայց ես զարդիս Թախծագին եմ, քան-
զի գձձեաց զիս աստուած.
Նաև ողջոյն նեղեալ եմ ես յաւագանւոյն
մեր կղզեաց.
Զի 'ի Դուլիք, և 'ի Սամոս, և յանտա-
ռուտ Զակիւնթէ,
Ուրեմն աւագք կան անդանօր, 'ի նոյն և
աստ յԻթակէ,
Են ինձ նոքա ողջ տարփածուք. Թէպէտ
և ես կամ ընդդէմ,
Ոչինչ անսան. և ցանգ խռնեալք աստ
զարքունիս իմ ծախեն.

Ես ոչ յողոք ինձ անկեալոց եմ ինչ զար-
դիս պիտեան,
Եւ ոչ հիւրոց, և ոչ արանց՝ այն որ
Քարոզքն են մարդկան.
Ողիսեսին եմ անձկայրեաց և 'ի սիրտ
իմ հիւծեալ եմ.
Բուռն հարսանեաց առնեն նոքա, բայց
Էս նոցա նենգ լարեմ.
Ինչ մի 'ի միտս էարկ աստուած, ինձ
անկանել մեծ ոստայն,
Ոստայն բարակ. և հոմանեաց ձայն մի
ապա զայս կարդամ.
Լուարուք ինձ զայս, ո՞ տարփածուք.
անշուշտ մեռեալ է Ողիս.
Բուռն ինձ ապա դուք մի առնէք, և մի
ձեպէք հարսանիս.
Ժուժկալեցէք մինչև լըրումն Էս տաց
մեծի պատանին,
Զի մի նանիր թեալք առիչոյն ինձ վատ-
նեսցին ոստայնին.
Էս արդ մարմնոյն ծեր Լայերտեայ ձորձ
'ի պատան զայն հենում,
Յորժամ դիւցազն այն զանյարիր քուն
ննջեսցէ ըզմահուն.
Զի մի թերևս ոք հեգնեսցէ զիս 'ի Յու-
նաց բամբըշաց,
Թէ անպատան ահա թաղեալ կայ ծե-
ռունին բազմագանձ:

Զայս ասացի, և հաճեցան. և ես ըզտիւ նիստայի,
Իսկ ըզգիշեր 'ի լոյս ճրագաց զանկեալն ոստայն քակէի.
Ի նեղգ հաղբից յայս եռամեայ ըզհոմանիս կարթեցի.
Կային ըզռիկ, մինչև չորրորդն եհաս յայնժամ մեզ ասրի.
Ամսոց յամիսըս փոփոխմունք եղանակաց շրջեցան,
Եւ յոգնաթիւ աւուրք յաւուրըս յաւելեալ բարդեցան,
Յայնժամ ինքնին ես կարթեցայ 'ի յանըզգոյշ կանանւոյն,
Զի այն վատ շունք իմըս նաժիշտք պահ ոչ եդին իմ գործոյն.
Յանկարծակի իմն հոմանիք թափ 'ի վերայ իմ հասին,
Ծանեան ըզնենգն և յարձակեալ զիս անդ բանիւք գձձեցին.
Թէպէտ և լեալ յոյժ դժկամակ, այլ հարկեցայ ես յայնժամ
Հենուլ ողջոյն 'ի յանդ հանել զայն զիմ զոստայնն, մեծ պատան:
Եւ արդ այժմիկ ես ոչ հրաժեշտ տալ ինչ բաւեմ հարսանեաց,
Եւ ոչ իւիք ինչ խուսափել նենգ լարելով հնարիմաց.

Եւ իմ ծընողք ինձ յորդորակ տան հարստանեաց հանդիսին,
Իսկ և որդիս յոյժ է սրտնեալ, զի ողջ գոյք մեր ըսպառին.
Քաջուշիմ է, գեղեցկապէս է խնամակալ իւրում տան,
Որում և Զևսն հովանի արդ շուք յորդէ յարաժամ։
Բայց դու ուստի՞ ես, ծերունիդ, ա՛ղէ ասա՛ ինձ զազգ քո,
Զի չես անշուշտ դու 'ի քարէ, ոչ հնախօսեալ 'ի կաղնւոյ ,, 76։

“Ո՛վ կին արգոյ մեծն Ոդիսեայ, դու տակաւին ո՞չ կասիս
Զազգէն իմմէ ինձ հարցանել, ձայն քաջուշիմն է տ Ոդիս.
Բայց հաճեցիս ըզքեզ, տիկին. թէպէտ և ինձ ցաւ բարդես.
Զի եմ իսկ ես այր բազմամեայ տարադիմեալ 'ի յերկրէս.
Այր թափառեալ ընդ շատ քաղաքս և վշտակիր անաւադ.
Այր ոք անշուշտ յոյժ ցաւեսցի այր ինձ եղեալն հանդունակ.
Համայն այնպէս յանձնառութեամբ քեզ հետախոյզ դշխոյի
Հանդերձեցայց զիմոյ ազգէն բան ճառել կարգ ըստ կարգի։

Լայնասահմանն երկիր Կրետէ կայ 'ի ծովուն կապուտակ,
Շէն, գեղեցիկ, և արգաւանդ, ողջոյն յալեաց շրջափակ.
Բազմաժողով և մարդաշատ, են անդ քաղաքք իններսուն.
Այլայլաձայն և բազմադէմ է անդ բարբառն և լեզուն.
Զի են անդէն Աքայեցիք և բնակասուն Կրետացիք,
Նաև Կիդոնք, և Պելասգեանք, և երեք բաշխք Տորեցիք 77.
Կնոսսոս անուն է քաղաք մեծ, ուր և Մինովս թագ կապեաց,
Եւ իններեայ էր նա Զևսայ կենցաղակից խորհրդաց.
Նա հայր եկաց իմոյն քաջ հօր Տեւկալիոն դիւցազին.
Եկաց ծընող Տեւկալիոն ինձ 'ւ Իդոմէն արքային.
Սա էլ չուեաց 'ի Տրոյիա ընդ քաջազանց Ատրեսեանց.
Ես եմ կրսեր Եթոն անուն, նա էր աւագն և այր քաջ.
Անդ ես ինքնին տեսի զՈդիս և ձիրս ետու ես հիւրոյն,
Քանզի ըզնա 'ի մեր Կրեաէն վարեաց հողմոյն բռնութիւն.

Ելեալ գընայր նա յԵղիոն, և վարեցաւ
'ի Մալեայ,
Մինչև եկեալ հաս յԱմնիսոս, ուր է
քարայր Իլիթեայ.
Այս քարանձաւ անդ 'ի դադարըս դըժ-
ուարինս էր նաւաց,
Եւ Ոդիւսէս հալիւ և հազ ճողոպրեցաւ
'ի յալեաց:
Այն ինչ եմուտ նա 'ի քաղաքն, և զԻ-
դոմէն հարցանէր.
Քանզի ըզնա իւր սիրելի և հիւր արդոյ
ճանաչէր:
Սակայն յայնժամ քաջ տաներորդ կամ
մեռասանն այդ ծագեաց,
Յորժամ արդէն նա յԵղիոն չուեալ իսկ
էր նաւագնաց.
Բայց զՈդիսէս ես հիւր առեալ ածի
սիրով յիմ տաճար,
Եւ գրգեցի զնա յարգանօք, ըստաս հա-
րեալ ճոխաբար.
Եւ տուն նրմա և համհարզից նորա պաշար
'ի յուղի
Մեր յոստանէն ալիւր առատ, եւ տուն
հրաշէկ և գինի.
Նաև յեզանց մեծ պատրուճակըս յազեցի
'ի խրախճան,
Յորչափ հիւրքն իմ անդ արգելան առ իս
աւուրս երկտասան.

Քանզի ըզբու�հողմ հիւսիսին յայն-
ժամ քաջ ոք ոսերիմ
Յոյժ դիւաշունչ մրրկեր թափով, և ոչ
թողոյր կալ յոտին։
Այն ինչ ծագեաց երեքտասան մեզ
առաւօտ լուսաբեր,
Հողմն լռեաց. հիւրքն իմ ելին ծովա-
գնացիկք անվեհեր »։
Սուտ բազմադէմ յօդեաց Ոդիս, հիւ-
սեաց նրմանս ճշմարտին,
Լուաւ տիկինն և արտասուօք ողջոյն թա-
նայր ըզմարմինն.
Զոր օրինակ ձիւն տեղացեալ զեփիւռոս-
ին 'ի շնչմանց,
Եւ յԵւրոսէն հարեալ հալեալ թանայ
ըզծայրըս լերանց,
Իսկ 'ի յուղխիցն հալելոց գեսքն յոր-
դեն դիզանան,
Նոյնօրինակ այսք գեղեցիկքն 'ի յարտա-
սուս հալեցան։
Նստեալ և լայր անդ կինն զայրն՝ որ մերձ
առ իւր նստեալ էր,
Եւ զայն տեսեալ Ոդիսևսին աղէտ սիրոյն
տոչորէր.
Այլ անթարթափ աչքն կացին իբրև
եղջիւր կամ երկաթ.
Զի խորագէտն 'ի նեղքս առեալ ծածկէր
զարտօսրն յորդառատ։

Մինչ յագեցաւ Պենելոպէ 'ի գերարտասր 'ի կոծոյն,
Կրկնեաց անդրէն և առ 'ի փորձնա հարցանէր ծերունւոյն.
« Եթէ անշուշտ ընդ համհարզեցն հիւրդու առեր զՈդիւսէս,
Կամիմ փորձել, ով ծերունիդ, արդ ըզբանիցըդ հանդէս.
Աղէ, ասա, զինչ էր զգեստուն նորա յայնժամ հանդերձանք,
Նաև նորայն և ընկերացն որպիսի՞ ինչ հանգամանք »։
Զայն խորագէտն ետ անդրադարձ.
« Բա՛ւբէ ով կին, զի՞արդ ես
Ըզբազմամեայ Ճառ զանցելոցըն Ճշգրտիւ պատմեմ քեզ.
Ամ՛ք են քրսան, զի Ոդիսէս ել մեկնեցաւ 'ի Կրետեայ.
Համայն այնպէս քեզ պատմեցից զոր միանգամ 'ի յուշ գայ.
Նորա խրլայն էր թաւամազ և կրկնատակ ծիրանի,
Եւ ուղղաձիգ և կրկնակի աղն Ճարմանդին էր ոսկի.
Ի յառաջոյ հրաշակերտեալ ասղնէգործեալ գոյր դիմակ,
Եւ զորթ եղին կալեալ ունէր անդ բարակ մի քաջորսակ.

Սա պնդապէս երեւոյք իւրոյք զորթըն ունէր խայտաբղէտ,
Զահեղ ժանիսն արձակելով որսըն դողայր ահափեռ.
Տիպ դիմակին յոյժ հիասքանչ տեսանողացն երեւէր,
Զի էր յոսկւոյ համակ գործածն, այլ ճչգրտիւ տիպ բերէր.
Բարակն որթուն խեղդ արկանէր արձակելով ըզժանիս,
Որթըն ճգնէր առ 'ի փախուստ 'ի դողդոջուն իւր յոտից:
Տեսի դարձեալ, բաճկոն զիւրև արկեալ էր նա լուսազգեաց,
Եւ հանդուգնակ էր այն սոխոյն ջոր և ցամաք մրզանաց,
Այնչափ էր գիրգ և յոյժ քնքուշ և փայլակէր իբր արև,
Զի և բազումք 'ի կանանւոյն հրաշանային ակնէրև:
Զունիմ ասել, եթէ 'ի տան այն էր հանդերձն Ոդիսեայ,
Եթէ արդեօք ոք համհարզեցն յարշաւանին ետ նըմա,
Կամ թէ ուրեք ոք 'ի հիւրոցն. զի Ոդիսէս էր սիրուն,
Եւ վեհ էր նա 'ի մէջ բազմաց յԱքայեցւոց 'ի դասուն:

Եւ ձորձ կրկին Ոդիւսեսեայ եւոու ջըք-
նաղ, ծիրանի,
Եւ պատմուճան մի պճղնաւոր, և սուսեր
մի պրղընձի.
Շըքով ըզնա մեծարեցի մինչև 'ի նաւն
իւր արագ.
Էր ընդ նըմա և այր քարոզ, էր այր տիոք
խուն աւագ.
Ասացից քեզ և զհանգամանս ըզքարո-
զին զոր ունէր.
Այր էր նա կոր և թիկնաւէտ, և թըխա-
մորթ, գանգրահեր,
Եւրիբատէս անուն նորա. և էր յարգոյ
Ոդիսեայ,
Զի առաւել քան ըզհամհարզսն էր հա-
մախոհ ընդ նըմա »:
Լ ըռեաց Ոդիս. 'ի լուր բանիցն Պենե-
լոպեայ կոծն յորդէր.
Քանզի ծանեաւ նա ըզնըշանս, զոր Ոդիւ-
սէս ճշգրտէր:
Իբրև յապուրդ էառ դշխոյն 'ի բազմա-
կոծն արտասուաց,
Զայս փոխարէն հիւր ծերունւոյն ձայն
շըքադիր արձակեաց.
« Ցարդ դու, ո՛վ հիւր, 'ի տան իմում
Իբր հիքացեալ այր մուրիկ,
Սակայն զարդիս շուք մըտերիմ առցես 'ի
մէնջ գեղեցիկ.

Այդ պատմուճանք, զոր ասացեր, 'ի սրկապանն իմ կային,
Կային ծալեալ և ես առեալ եմուտ 'իմում փեսային.
Ի զարդ նրմա յերիւրեցի ես ըզճարմանդն լուսալիր.
Այլ եղուկ եմ, զի գալստեան մինամ նորա 'ի նանիր.
Աւաղ, զՈդիսն իմ միւսանգամ չառիցս ես յիմ սրկապան.
Ոչ այլ դարձցի դիւցազն արքայն 'ի տուն յերկիր հայրենեան.
Զիարդ չոքաւ նա յԵղիսն, զիարդ անկաւ անդ տապաստ.
Ո՞վ անանուն, անուն նզովեալ, ո՞վ չԵ-զիսն չարաբաստ »:
Գրգահատեաց, և քաջալեր յայնժամ Ոդիս տայր նրմա,
« Մի դու ըզքեզ, մի հիւծեսցես, ո՛վ կին արդոյ Ոդիւսեայ.
Փափուկ մարմնոյդ մի դրժեսցես քոյն փեսային անձկանօք.
Քա՛ւ, չայպանեմ ըզդուռն սրտին, զոր ցուցանես արտասուօք.
Այո՛, ողբայ կին ամենայն, որ որբացեալ է յառնէն
Որում նա կոյս 'ի հարսն ածաւ և ետ պըսուղ յարդանդէն.

Արդ քանիցն և զՈդիսէս, զոր այր դիւ-
ցազն համբաւեն.
Բայց դու զարդիս Հեմ դիր լալեացդ, և
քաջ միտ դիր զոր ասեմ:
Անաուտ անխաբէ պատմութիւնս. կեայ
Ոդիւսէս տակաւին.
Զայս ես ինքնին 'ի Թեսպրոտեանց լուայ
հարուստ 'ի յազգին.
Ինքն դարձցի աստուծանդամ գանձ ժո-
ղովեալ բազում յոյժ,
Սակայն զընկերսն ողջոյն կորոյս և նաւն
եղև ծովասոյզ.
Յորժամ ծովեալ նա ընդ մրկանսն գայր
'ի կղզւոյն Թրինակեայ,
Ծովն փլուզեալ 'ի յանդնդոց ողջոյն է-
կուլ ընծոսա.
Քանզի ցասեաւ վեհն Արամազդ, ցա-
սեաւ Արեգ գերարփին,
Քանզի զնորա ջոկ զանդէոց մարդիկն 'ի
սպանդ վարեցին 78.
Իսկ զՈդիսէս տաշտն նաւուն Էհան յա-
լեացն 'ի ցամաք,
Յերկիր Փեկեանց, որ աստուածոցն մեր-
ձաւորք են զաւակք.
Սոքա նրմա իբր աստուծոյ շուք և բա-
զում գանձ ետուն,
Պատրաստեցան 'ի յանդորրու յղել զՈ-
դիս ողջ 'ի տուն:

Էր իսկ Ոդիս 'ի վաղնջուց հասեալ ողջամբ յիւր տաճար,
Այլ նա խնդրեաց դանձ ժողովել թափառելով ընդ աշխարհ։
Այր խորագէտ յոյժ 'ի մարդիկ ըսքանչացաւ Ոդիսէս,
Եւ 'ի կըշիռ ոչ դայր նըմա մարդ հանճարոյն 'ի հանդէս։
Զայս ինձ Փիդոն պատմէր ոճով թէսպրոտացւոց քաջ արքայն.
Նաև երդումն երդնոյր անսուտ նուէր հանեալ յիւրում տան,
Եթէ անդէն քարշեալ է նաւն, կազմ են և իւր նաւաստիք,
Որ զՈդիսէս 'ի յանդորրու տարցեն յաշխարհն իւր ողջիկ։
Սակայն Փիդոն զիս կանխագոյն յերկրէն իւրմէ արձակեաց,
Զի 'ի Դուլիքն յայն հացաւէտ նաւ մի գընայր Թեսպրոտեանց.
Բայց նա կանխեաց ցոյց ինձ ըզգանձն ամբարեալ Ոդիսէն,
Որ մինչև յաղդ 'ի տասներորդ էր բաւական 'ի պարէն.
Նաև ասաց, թէ Ոդիսէս 'ի Դոդոնա ուղ հորդեաց,
Յամբարձուղէշ անդ 'ի կաղնւոյն գոլ 'ի Զևսայ խորագէտ.

Խորհուրդ առնուլ եթէ զիարդ ինքն 'ի
յաշխարհ իւր դարձցի,
Զի բազմամեայ օտարացաւ. արդեօք ծա-
ծո՞ւկ, թէ յայանի։
Անշուշտ ուրեմն արդ ողջանդամ կեայ
Ոդիսէս, և գայցէ.
Քաջ, մերձ ընդ մերձ, և ոչ յերկար ինչ
դեգերեալ 'ի բացէ։
Առ այս ես քեզ նաև երդումն անսուտ
կրռեալ պատրաստ եմ,
Եւ նախ ըզվեհրն զաստուածոց ըզ Զևս
վըկայ ինձ կոչեմ.
Երկրորդ անգամ, ուր ես եկի, յարկ զՈ-
դիսեայ դիւցազին.
Եթէ ողջոյն զոր ասացի, անվրէպ 'ի գը-
լուխս յանդեսցին։
Անշուշտ յայս ամ գայցէ Ոդիս, լե՛ր դու
'ի միտս հաստատուն.
Ի կատարեալ ամսոյս այսմիկ և կամ 'ի
մուտս 'ի նորոյն »։
Լուաւ ողջոյն Պենեղոպէ և առ խընդին
ձայն եբարձ.
« Բա՞ՀԷ, ո՞ տայր արդիւնանալ բանից
հիւրոյդ աւետեաց.
Յինէն յայնժամ տեսանէիր շատ ձիր և
սէր մըտերիմ,
Եւ երջանիկ նախանձելի տեսողքն ըզքեզ
կարդային.

Սակայն զոր ես ինքնին կարծեմ, որ և լեցի ճշմարիտ,

Ասա Ոդիսէս ոչ ես գայցէ գոլ յուղարկիչ նժդեհիդ։

Աւաղ բախտին. տուն մեր այսօր կայ 'ի վարչաց ամայի.

Ո՞ւր է Ոդիս, որ աստ նստէր. և արդ ելրազ ինձ թուի.

Եւ ո՞ւր արդեօք պանդըխտանայ արդ մեր դիւցազն հիւրասէր,

Որ ժողովեալ զարդոյ ըզ հիւրսն 'ի տուն իւրեանց յուղարկէր։

Բայց արդ արի՛ք, ո՞ աղախնեայք, և զոտս հիւրոյդ լուացէ՛ք.

Տո՛ւք և մահիճ, գորգ և իբրայս, նաև վերմակ ջինջ արկէ՛ք.

Զի ջերմնուցու մեր ծերունին մինչ յարշալուրջն արևուն.

Եւ լուացէ՛ք և տո՛ւք օծումն հիւրոյն վաղ քաջ ընդ այգուն.

Բազմոց առեալ ինքն առ որդւոյս և ճաշ առցէ 'ի յարկին.

Իսկ թէ ծերոյն ոք դրժեացէ, վա՛յ է այնմիկ ծառային.

Մ՚էք առ յասպայս գրեացուք ըզնա առարս ումպէտս անաւագ,

Թէպէտ և յոյժ ընդ անարգանս խոժոռեսցի դժկամակ։

Բայց դու զարդիս գիտիցես, հիւր, թէ
ի՞նչ վեհագոյն
Ես 'ի խորհուրդս քաջութեան 'ի դաս
այլոց կանանուոյն.
Զի ճաշ առ մեզ առնուս 'ի տան դու
բրդգրզեալդ մուրիկ.
Բայց ես գիտեմ, զի ծաղկընկէցք և կար-
ճակեացք են մարդիկ.
Որ ոք 'ի բնէ է աննուէր, և որ խորհի
զաննուէրս,
Նա ըզմարդկան առնու զանէծս անշուշտ
անձին իւր 'ի վերս.
Ի կեանս նորա սրտնին ընդ նա և 'ի թի-
կանց չար մաղթեն,
Իսկ 'ի մահուն ոտնհար եղեալ, յոյժ
դառնապէս բամբասեն:
Այլ որ 'ի բնէ ինքն է բարի և որ խորհի
ըզբարիս,
Նա 'ի հիւրոցն իւր ժողովէ զիւրոց բա-
րեաց զարդասիս.
Զի յընդհանուրս առեալ տանին հիւրքն
ըզնորայն ըզպարծանս,
Եւ շուք և փառքն յորդեն նորա 'ի բե-
ռանոց 'ի բերանս »:

Լուաւ կրկնեաց ուշիմն Ոդիս. « Լո՛ւր
ինձ, տիկին Ոդիսի.
Ես խըլայեց և վերմակաց երես երբէք
չարարի,

Յորժամ թողեալ ըզկրեատացւոց կղզւոյն զլերինս ձիւնեղէն,
Նաւագնացիկ ընդ ծովն մեծ չու առնէի տարադէմ։
Ընկողմնեցայց որպէս և միշտն 'ի տառապանս իմ ուղւոյն.
Ո՛վ, քանիցն յայնժամ գիշերս անցուցեալ եմ ես անքուն.
Զի ընկողմնեալ բազում անգամ'ի գարշահոտ 'ի մահիճ,
Մնայի աննիրհ ես այգածին արեգական նը շուվից։
Նաև չէ ինձ լուացումն ոտից բնաւին երբէք սիրելի,
Եւ չառնում յանձն, յայդ նաժշտացդ մի՝ ոք յոտս իմ մերձեսցի.
Բայց թէ լուացողն է կին աւասրդ և կին համեստ հինաւուրց,
Որ իբրև զիս տառապանաց տարեալ ելցէ նա բիւրուց.
Թէ այնպիսին յոտս իմ մերձի, երբէք ոչինչ դըժուարիմ՝՝.
"Բաբէ, ո՛վ հիւր. հիացեալ անդէն ձայն արձակեաց կինն ուշիմ։
Յարդ զայր օտար իբրև ըզքեզ առ 'ի վայրաց բացական,
Հանձարիմասա և սիրելի չառի ես հիւր յիմում տան.

Եւ զի այնչափ իմաստութեամբ բարբա-
ռեցար դու ինձ արդ,
Քեզ աւադիկ կին մի ուշիմ ունիմ առ իս,
կին աւսարդ.
Սա ինքն է կինն այն հինաւուրց որ զիմ
զՈդիսն ողբալին
Առ և եբարձ յիւր 'ի բազուկս 'ի յար-
գանդէ նորածին.
Իսնամ էած մինչև յարբունս նաև սընոյց
գրգաբար.
Արդ զոտրս քո առեալ լուացէ կինն այն
պառաւ ապիկար:
Աղէ արի, Եւրիկլիա, ով կին արգոյ և
ուշիմ,
Ըզհամասէք ըզտեառըն քո արի լուա
զծերունին.
Անշուշտ զարդիս և Ոդիսէս ուրեք յաշ-
խարհ բացակայ
Ունի համբուն ըզնոյն ըզձեռս ըզնոյն և
զոտս ըզդորա:
Քանզի մարդիկ բազմաչարչարք տարա-
ժամու ծերանան".
Զայս ինչ ասաց Պենելոպէ, և կինն աւ-
սարդ յոգւոց հան:
Ել հանդուրժեաց, և իւր ձեռօքն առ
զիւր զերեսս և ծածկեաց,
Ջերմ արտասուս հեղոյր յաչացն և ձայն
ողորմ արձակեաց.

«Ի գուլթ գորով քո, ով որդեակ, զանձն իմ կոծեմ աւադիկ,
Եղուկ եմ ես, զի Արամազդ ատեաց ըզքեզ 'ի մարդիկ.
Իբրև ըզքեզ ո՞ ոք եկաց այր կրօնասէր երկիւղած,
Եւ թամբրս յոյրս այնչափ 'ի զոհ Արամազդայ ո՞ այրեաց.
Ո՞ ոք այնչափ հարիւրեղնեան եհան նըմա 'ի նուէր,
Որչափ ինքնին դու ձօնէիր, նաև ուխտիւք մաղթեցեր.
Զի մաղթէիր, որ յանդորրու ինքնին հասցես յաւելոյթ,
Եւ քո զորդին ըզհոյակապն դու հասուցես յաւագոյթ.
Եւ արդ 'ի քէն վեհն Արամազդ զոր նահանջեաց ըզդարձիդ.
Բայց դու, ով հիւր, զոր քեզ ասեմ, լո՛ւր ինձ վայր մի, ծերունիդ.
Բա՛ ո՞ գիտէ, եթէ ուրեք նաև զՈդիս տարադէմ
Ի տուն պայծառ մտեալ զերթ հիւր անդ կանանին գրձձեսցեն.
Որպէս և այդ շունք լոբենիք շատ գձձեցին աստ ըզքեզ,
Յոյց և 'ի կրից դու խուսափեալ արդ լուանալ ոչ ներես.

Վասն այնորիկ և զայդ ըսպաս լինձ մեր տիկինն յանձն արար.
Հարից ըսպաս և զոտրս քո ես լուացից կամակար.
Զի մեծարանս դընեմ շըքով պերճ երեսաց Թագուհւոյ,
Նաև 'ի գուԹ քո հարեալ եմ, քեզ վչտակիր ծերունւոյ.
ԲաՀբէ, զիս որ, ով սքանչելեացս, որ կիրք սիրոյն տոչորեն.
Արդ լուր լինձ դու, ով հիւր բարի, և քաջ միտ դիր, զոր ասեմ.
Աստ հիւրք բազումք տարաշխարհիկք աստ օԹեվան ընկալան,
Եւ ցարդ այսպէս ոչ զոք տեսի Ոդիսևսին համանման,
Որպէս ըզքեզ, որ հրաշապէս դու և մարմնով և ձայնիւ
Նաև ոտիւք զՈդիւսևսեայն ըզտիպ բերես Ճըշդրտիւ "։
" Լուր և լինձ դու, զայս Ոդիսէս ձայն խորագէտն էա անդէն.
Նաև նոքա, որ զմեզ զերկուսս 'ի յակն արկին, զայդ ասեն.
Քաջիկ դիտեալ, որպէս և դու կորովաբիբ դիտեցեր,
Զայս կնքեցին եԹէ դոքա առ 'ի միմեանց չեն տարբեր "։

Լաւ ապա Եւրիկլիա կոնք մի փայլուն
'ի ձեռին,
Առեալ ջուր ցուրտ արկ անդ բազում,
էարկ 'ի նոյն և ջերմին.
Կայր Ոդիսէս նստեալ յաթոռ 'ի հան-
դիպոյ առ կրակին,
Եւ փուլթապէս առեալ շրջեաց զանձն
իւր 'ի կողմն ըստուերին.
Քանզի երկեաւ եթէ պառաւն 'ի շոշա-
փելն 'ի բարձի
Ըզհին զբսպին 'ի յակն արկցէ, և իւր
խաբանքն յայտնեսցի:
Մատեաւ պառաւն և ջուր ոտից տայր
անդ իւրոյ արքային,
Այն ինչ լուանայր, ետես ծանեաւ ան-
դէն զնոռեալ հին զբսպին:
Զի էր երբեմն, ուր կինճ վայրի յահեղ
սպիտակ 'ի ժանեաց,
Նըմա 'ի լեառն 'ի Պարնասոս յոյժ կա-
րեվէր ետ հարուածՔ,
Երբ նա որդւոց յայց եկանէր Աւտոլիկայ
արքայի,
Սա ինքն էր հայր մօրն Ոդիսեայ, և էր
այր նա պանծալի,
Յառ և յապուռ և 'ի յերդումն ինքն
յաջողէր մեծապէս,
Եւ հովանի և ձեռնտու նըմա ինքնին էր
Հերմէս.

Քանզի և նա սրմա ըզթամբս ըզգիրգ զու-
լուց և զգառանց
Ի զոհ յաղէր, և սա նրմա էր հանապազ
զուգընթաց։
Էր զի երբեմն Աստուկիկոս եկն 'ի հա-
ռուատն Իթակէ,
Եւ անդ եգիտ այն ինչ ծնեալ մանուկ
յիւրմէ դստերէ.
Առեալ զմանուկն Եւրիկլիա էած առ
պապն յեռ ընթրեաց,
Եդ 'ի վերայ ծնգաց նորա և զայս բար-
բառ արձակեաց.
"Աստուկիկէ, սիրուն մանկանս դու գիտ
զանուն, զոր դիցես.
Զի զսա պրտուղ քոց աղօթից քո դուս-
տրն ահա ծընաւ քեզ"։
Լուաւ յայնժամ Աստուկիկոս և պատաս-
խան ետ անդէն.
"Լուր արդ, փեսայդ, լուր և դուստր
իմ. դիք դուք զանունն զոր ասեմ.
Ես շատ արանց, շատ և կանանց, որ
բնակեանան 'ի յերկրի,
Ի բարկութիւն 'ի մեծ բրդեալ, և արդ
ասա դամ ցասմամբ լի.
Եւ արդ սիրուն այս իմ մանկանս Ես
Ոդիւսէս տամ անուն 79.
Եւ երբ հասցէ յարբունս սիոց դա յայց
եկցէ տան իմում.

Գայցէ առ իս, տեսցէ աչքն ըզմեծ տա-
ճար մայրենին
Անդ 'ի լերին 'ի Պարնասոս ուր կայ իմ
շատ կարասին.
Ես խնդալից առնեմ ըզդա և տամ նրմա
ձիրս պէսպէս ».
Եւ արդ ձըրիցս այս աղագաւ չոքաւ յայց
եղ Ոդիւսէս։
Գ. Ստոլիկոս և իւր որդիքն հիւրընկալուք
բարեզգեաց,
Ալ կարկառեալ ողջունէին, բան խօսէին
գրդանաց.
Գիրկս արկանէր Ոդիւսևսեայ Ամփիթէա
մայրն իւր մօր,
Եւ գեղեցիկ աչաց նորա նաև գլխոյն
տայր համբոյր։
Անդէն ընթրեաց ձայն ժիր որդւոցն Ա-
ստոլիկոս էտ արագ.
Եւ փութացան, ըզհնգամեայ զեզն անդ
ածին պատրուճակ,
Ջերծին ըզմորթն և կազմեցին. առեալ
ողջոյն յօշատեն,
Եւ 'ի խորտիկ մանրահատիկ փոյթ 'ի
շամփուրս հարկանեն.
Տակաւ քաջիկ խորովէլով, բաժինս հա-
նին բաշխեցին,
Եւ զօրն ողջոյն 'ի հացկերոյթ նստան ցը-
մուտս արեգին.

Անդ 'ի խահիցքն նոյնաբաշխ ոք կարո-
տեալ ոչ մընաց,
Դարձաւ արևն եմուտ 'ի մայրն և գիշե-
րոյն մութն եհաս։
Ընկողմանեալք և առնուին զանոյշ քը-
նոյն ըզպարգև,
Մինչև նոցա վարդածըղին այգ ծագեցաւ
ակներև.
Յարեան յայնժամ արքայորդիք, և բա-
րակօք 'ի յորս մեծ
Ի չու անկան, էր խմբակից նոցա ինքնին
Ոդիւսէս.
Գնացին եղին 'ի լեառն 'ի մեծ և յանտա-
ռուտ բարձրածայր,
Մինչև հասին 'ի Պարնասեայ 'ի յար-
տևանան հողմահար.
Նորեկ արփին 'ի խոր յանդորր ովկիա-
նուն հոսանաց
Ի վեր եղեալ խոցէր շանթեօքն ըզցօղալից
դաշտ մարդաց,
Աւրքն 'ի հովիտ իջեալք 'ի յորս, և շոյտ
բարակքն այն սրավար
Ի յառաջոյ հետախուզեն աստ անդ 'ի
վեր և 'ի վայր.
Յետահաղացք դային որդիքն Աւտոլի-
կեայ արքայի,
Այլ բարակաց մերձ կայր Ոդիս և տէգ
ձօձէր անարի։

Վարազ ժանեղ և ամեհի բուն էր'ի թաւ անտառին,

Անտառ, ուր ոչ հողմունք բրռունք և թունընկէցք շնչէին,

Ոչ արեգակն ճաճանչիւքն'ի նմա լինէր թափանցանց,

Եւ ոչ ամբուռք զայն թանային տեղատարափ անձրևաց.

Այնչափ անտառն աճունաճիւղ էր խիտ առ խիտ թաւացեալ,

Եւ յամբաւից 'ի սաղարթուց թանձրամայրին էր հոծեալ:

Այն ինչ'ի մօտ եկին որսորդքն ընդ բազակացն աննրկուն,

Եւ վարազուն յունկն հարկանէր տրոփեալ ոտից շառաչիւն,

Դիմեաց յորջոյն և ըղթիկանցն ըզքստաճնափուշ բաշ լարեաց,

Եւ խբրև բոց աչքն հրավառ հայեացս արար և եկաց.

Նահատակեալ քաջն Ոդիւսէս յարձակեցաւ անվեհեր,

Տէգ զանարին առ և ամբարձ տալ ըզհարուած կարեվէր.

Աճապարեաց կինճն ահագին էտ սոսկապէս թափ ահեղ,

Եւ'ի վերոյ ծընգաց նորա հար ըզժանիսառ 'ի շեղ.

Շատ ինչ մարմին 'ի յաղդերէն առ ա-
մեհին և կորզեաց,
Այլ ոչ 'ի խոր մինչև 'ի յոսկր հասոյց
զհարուածն ըզժանեաց.
Վարսեալ 'ի նա ըզտէգն Ոդիւս հար
զուան աջոյ կշռակի,
Եւ թափ ընդ թափ հրափայլ ըզսայրն
անցուցանէր նիզակի.
Խանչեաց վարազն ահագնաձայն անկաւ
տապաստ շնչասպառ,
Դիմեն համհարզքն և Ոդիւսեայ իրնամ
ածեն գրգաբար.
Շուրջ բակ առին և գիտնապէս ըզվէր
նորա պատեցին,
Եւ զապաժոյժս ըզսեաւ արեանն թով-
չաբար 80 սանձեցին:
Առեալ ապա արքայորդիքն յանձանձէին
փուԹապէս,
Եւ 'ի տաճար հօրն արքայի խնամով ա-
ծեն զՈդիւսէս.
Անդէն և անդ հայրն և որդիք դարման
տարան հմտաբար,
Եւ բուժեցին. և շատ նրմա պարգևեցին
ձիր պայծառ.
Ի ցնծութիւն հատաւ Ոդիս, և ցնծա-
ցան և նոքա,
Եւ խնդագին արձակեցին ըզնա 'ի տուն
յԻթակա:

Անդ հայրն և մայրն ուրախութեամբ ա-
ռեալ զՈդիս ողջանդամ,
Հարցանէին ըզհարուածոյն զոր ինչ կը-
րեաց նա յայնժամ.
Եկաց պատմեաց զիարդ ըզնա ժանեղ վա-
րազն 'ի յորսին
Յարձակեցաւ եդ վիրաւոր 'ի Պարնասոս
'ի լերին։
Արդ զայն զըսպին վիրաց նորա յորժամ
կըքեալ անդ պառաւ
Եւ լըւանայր և շոշափէր նա 'ի բարձին,
քաջ ծանեաւ.
Շուարեցաւ, թող 'ի ձեռացն անդէն
անդ զոտն Ոդիսին,
Անկաւ սըրունքն 'ի մէջ կոնքին և ձայն
հնչեաց պըղընձին.
Թաւալեցաւ և ողջ ամանն, և ջուրն հե-
ղաւ 'ի գետին,
Եւրիկլեա յապուշ հարեալ կայր առ ցա-
ւոյն, առ խնդին.
Աչքն արտասուք լըցան նորա, և հաստ
կըլեալ ձայն կարդայր,
Ոդիսեւսեայ առ ըզծընօան, յոգւոց
Եհան սիրաբար.
"Բաբէ, բաբէ, դու Ոդիսն ես, ով իմ
որդեակ սիրային,
Մինչև ողջոյն զքեզ շոշափեալ, ես ոչ
ծանեայ ըզտէրդ իմ"։

Այն ինչ ասաց, անդէն և անդ զաչս իւր դարձոյց առ դշխոյն.
Իբրու ազդել, եթէ ահա մերձ կայ փեսայն սիրասուն.
Սակայն չէտես Պենելոպէ և ոչ ուշ եդ 'ի ժամուն,
Զի այլ ուրեք մեծն Ամֆենաս առ յածեցոյց զուշն ողջոյն:
Բայց Ոդիւսէս ըզպառաւոյն կալաւ աջոմն զհագագէն,
Եւ ահեկաւ յինքն ձգեալ ասէր նրմա յունկանէն.
„Զինչ, 'ի կորուսա, ոչ իմ դայեակ, զիս արդ մատնել կամիցիս,
Զիս որ մանկիկ մատաղ 'ի գիրկդ ես դիեցի զքո զբստինս.
Իսկ և զարդիս բազմաչարչար թափառական ամ քրսան,
Եւ հուսկ ուրեմն ասա 'ի տուն իմ հասի, ահա ողջանդամ.
Եւ արդ դու ինքն որ զայս ծանեալ, զայն քեզ ասատուած կամեցաւ.
Ուշիմ լեր արդ. կաց ողջ լրռիկ. մի ոք լուիցէ զայս համբաւ.
Զի քեզ ահա ես բան կինքեմ, որ և անշուշտ լինիցի.
Լուր. ոչ և քեզ ես ներեցից, քեզ իմ սիրուն դայեկի.

Յորժամ յարիւն ես աստուծով շաղա-
խեցիլ զՀոմանիս
Եւ կանանուոյն մահ գուժեցիլ, և ոչ դու
ինքն ապրեսցիս »։
Սարսափեցաւ Եւրիկլիա. ձայն արձա-
կեաց, « Ո՛վ որդեակ,
Զի՞նչ բան զարդիս 'ի քոց շրթանց զի՞նչ
բան սրացաւ դրժնդակ.
Դու իսկ գիտես, յիս քանիցն սիրտ
տարրուցաւ անվրկանդ.
Լուռ կամ ողջոյն, և անսասան կամ իբրև
սալ կամ երկաթ։
Սակայն դու ինձ կա՛լ 'ի յուշի, զոր ես
զարդիս ասեմ քեզ.
Երբ աստուծով դու Հոմանեաց զարժա-
նահաս մահ ածցես,
Ես քեզ յայնժամ կարդ 'ի կարդէ տաց
ըզհաշիւն ըզկանանց,
Ո՞յք 'ի յընչաց քերեն ըզքեզ, և ո՞յք ի-
ցեն երկիւղած »։
« Զի՞նչ պէտք ի՞ցեն, ո՞վ իմ դայեակ,
կրկնեաց առ նա Ոդիսէս,
Զի դու հաշիւ ըզկանանուոյն տացես
յայնժամ կարգապէս.
Լրտես ինքնին ես դարանիմ, և ես զնեմ
ըզնոսա,
Դու լուռ համբուն կա՛ց և ողջոյն զայն
աստուծոյ յանձն արա »։

Լ՚սաց Ոդիս, և եկ արտաքս Եվրիկլիա
ընդ բանին,
Եկ ջուր բերել՚ի լուանալ, քանզի հեղաւ
առաջինն։
Ի յիւղ պարարտ օձ ընկա կինն, լուաց
սրբեաց մաքրապէս,
Եւ մերձ կրակին առ՚ի ջեռնուլ էառ զա-
թոռն Ոդիւսէս.
Ընդուշացաւ, և հանդերձիւք զսպին
վերացրն ծածկէր,
Մինչև անդուստ Պենելոպէ ձայն վեր-
ըստին արձակէր.
«Վայր մի ընդ քեզ ես միւսանգամ, հիւր,
խօսեցայց տակաւին.
Թէպէտ և ժամն հասեալ էցէ հանգիստ
առնուլ ըզմահճին։
Քուն անուշակ ննջէ և մարդ, թէպէտ
էցէ այր ցաւած,
Սակայն ինձ ցաւ յոյժ մորմոքիչ և ոգե-
տանջ էտ աստուած.
Ինձ մրխիթար՚ի տուընջեան են այս ան-
դուլ լալիքն իմ,
Գործոց իմոց ես հոգ տարեալ և աղախ-
նեայց՚ի յարկին.
Գայ մեզ գիշեր, այլքն ըզհանգիստ առ-
նուն զանդորր անկողնոց,
Ես՚ի մահճի բազմաչարչար մղձկիմ տա-
պիմ՚ի հոգոց.

Իբր օրիորդքն Պանդարեայ 81, դալա-
բասէրն այն սոխակ
Ըզդայլայլիկքն գեղգեղէ 'ի գարնայնոյն
յեղանակ,
Բազմասաղարթ 'ի մէջ ծառոց նստեալ
յանդորր 'ի յոստ թաւ,
Ճապուկ ըզթելս ըզհագագին արծար-
ծանէ յերգ ամբաւ,
Ըզտարփալին նա լայ զիտիւղ 82 զորդին
Զեթեայ արքային,
Զոր էր ներբեմն՝ անմրտաբար առ և մատ-
նեաց օրհասին.
Նոյն օրինակ ցանգ հեծեծեմ ես 'ի կըր-
կին տարակոյս.
Եթէ արդեօք կա՞ւ առ որդւոյս և ողջ պա-
հել մեզ ըզդոյս,
Զիմ զբստացուածն և ըզնաժիշտս և մեզ
զայս տուն գեղանի,
Ակն ածելով իմ փեսային նաև ձայնին
խուժանի,
Եթէ միտե՞լ յայր ոք 'ի լաւ յիմ տար-
փածուաց հոյակապ,
Որ հարսանեացս իմոց 'ի շուք պըռոյգ
տացէ ինձ անչափ:
Մինչդեռ որդեակս իմ խակամիտ էր 'ի
տիս իւր մանկութեան,
Թոյլ ինձ ոչ տայր 'ի հարսնանալ և զիմ
թողուլ սրսկապան.

Իսկ զի այժմիկ զարգուն տիոք և 'ի յարբունս հասեալ է,
Ինքնին և նա անձուկ բերէ իմոց էլեցն 'ի տանէ.
Քանզի սրտնի վասն գոյեցն զոր ցանգ վասնեն հոմանիք,
Բայց դու, ով հիւր, լուր ինձ երազ, և զայն մեկնեա՛ ինձ ողջիկ։
Սագք են քրսան յիմում գաւթի, և անդ ուտեն ըզցորեան.
Նոքա 'ի ջրոյ մինչ հատ քաղեն, ես 'ի զընին կամ խնդամ.
Յանկարծակի եկն 'ի լեռնէ անդ արծըռունկն յաղթ արծուի,
Ան և եբեկ զուլս ըզսագուցն և դիտապատ արկ յերկրի.
Նոքա այնպէս անդ շնչասպառք մի ըզմիով կուտեցան,
Եւ էլ արծուին և սրաթևեաց 'ի վերյեթերն աստուածեան։
Ըզմահ սագուցն ես ողբայի բարձեալ ըզձիչ յերազի,
Եւ բակ զինև եկին առին մեր գեղագէս կանանի.
Սակայն արծուին վերաթևեալն էջ եկն անդրէն 'ի բարձանց,
Եւ անց նստաւ նա 'ի վերայ այս քրիստոսոր մեր տանեաց.

Զայն արձակեաց նա մարդկեղէն՝, սան-
ձէր ղողքն իմ և ըզսուգ,
Քաջալերեաց ո՛ դուստր, ասէր, դու Ի-
կարեանդ գեղաշուք.
Զէ այդ երազ. այլ Ճշմարիտ տեսիլ ի-
րացն, որ լիցի.
Սադքն են սեղեխք, և յառաջմէ արծիւ
Թռչուն ես էի.
Արդ գամ փեսայդ, և ողջ նոցա զոր-
հան ածից դրժնդակ.
Նա զայս ասաց, և իսկ և իսկ Թող զիս
քունն իմ անուշակ՝:
Շուրջ հայեցայ ես 'ի գաւիթն և սադքն
իմ անդ ողջ կային,
Կայր անդ և կուրքն առաջի և ըզցորեանն
ուտէին »:
"Բաբէ, կին դու, ձայն արձակեաց
հանՃարիմասան Ոդիսէս,
Զայդ քո երազ ինձ չէ արժան քեզ
Թարգմանել այլապէս.
Ինքնին Ոդիս քեզ ցոյց ահա զոր ինչ ինքն
է գործելոց.
Ահա առ դուրս կան հոմանեաց անշուշտ
աղէտք բազմակոծ.
Ո՛չ ապրեսցի և ոչ մի ոք. մահ գուժաս-
ցէ բոլորից »:
Կրկնեաց անդրէն Պենելոպէ. » Քաջ
էս, ո՛վ հիւր. բայց լսուր ինձ.

Անշուշտ երազք են անքննինք, և բազմա-
դէմ թակարթեն,
Եւ ոչ տեսեալքն ամենայն յանդ ճըշ-
գրտիւ ելանեն.
Զի անկայուն մեր երազոց դուրք կըրկ-
նակի են դրանդեաց,
Մին է գործած 'ի փըղոսկրէ, և մին գոր-
ծեալ յեղջերաց.
Որ միանգամ 'ի փըղոսկրեայ հարթեալ
դըրանց յառաջ գան,
Բազմապատիկ են խաբուսիկք և են իսկ
բանք ուրուական.
Իսկ որ արտաքս յառաջ խաղան 'ի քաջ
յղկեալ եղջերաց,
Ճշմարտապէս են հանգուցիչք սըրտից
իւրեանց տեսողաց.
Այլ ոչ կարծեմ զիմ մեծ երազն 'ի սոյն
լինել 'ի հանդէս,
Այլ ՀՇ, լիներ. և խնդայաք ես և որդիս
մեծապէս:
Այլ դու միտ դիր, զոր արդ ասեմ. այդ
ձախողակ գալով գայ,
Եւ հարկ է ինձ, եղուկ եմ ես, ըզտուն
թողուլ զՈդիսեայ:
Սակայն մրցանս ինչ փորձ արկից ես
հոմանեաց առաջի,
Զայն իսկ մրցանս, զոր Ոդիսէս ինքն
փորձէր 'ի յարկի.

Քանզի նա ցիցըս հարըստէր կարգ առ 'ի կարգ երկոտասան,

Ցիցքըն էին ողջ օղաւորք իբրև ըզմոյթս նաւական.

Անցեալ կայր ինքն առ 'ի բացեայ և քաջ կշռեալ անվեհեր,

Թափանց ընդ օղըն անցուցեալ շեշտ ըզ փրքինն արձակէր։

Եւ արդ ըզ նոյն փորձ ըզմրցմանըն հոմանեաց ես արկից,

Տեսից ո՞ ոք քաջ պնդասպէս լարեալ քարշէ զլայնալիճ.

Թէ կշռակի շեշտ ըզփրքինն 'ի քաջաձիգ 'ի բազկէն

Թափ անց ընդ օղն երկոտասան շեշտ անցուսցէ համօրէն,

Նա ինք լեցի ինձ 'ի փեսայ, և ես ըզտուն զայս Թողից,

Տուն կուսական իմ հարանութեանս, տուն գեղեցիկ, հացալից.

Տուն որ անշուշտ և յերաշի անգամ 'ի յուշ ինձ գայցէ "։

Այն ինչ լուաւ զայս Ոդիսէս, անդէն ձեպեաց և ասէ.

"Անսա՛ ինձ արդ ո՛վ կին արդոյ, դու զայդ մրցանս, զոր ասես,

Հա՛պա ձե՛ռ տուր, մի դանդաղեալ ժամէ 'ի ժամ ձրգեսցես.

Քանզի մինչև ըզլայնալիՃրն զաղեղան
փորձ փորձեալ,
Եւ մինչև լարրն հաստամուր առ 'ի
պողանց պինդ քարշեալ,
Եւ մինչև նետն ընդ օդսրն շեշտ թափ
անցուցեալ կշռապէս,
Քոյին փեսայն այն խորագէտն ասա է
կեսցէ Ոդիսէս »։

"Վաշ վաշ, ո՛վ հիւր, եթէ այդչափ,
Պենելոպէն ձայն կարդաց.
Գրգես դու զիս, անշուշտ և իմ ողջ քունն
հատցի 'ի յաչաց.
Սակայն և այն չէ հնարաւոր անդուլ
անքուն գոլ մարդկան,
Զի այս օրէնք 'ի յանմահից մահկանա-
ցուաց կարգեցան.
Վասն այն և արդ ես վերելեալ 'ի վեր-
նայարկն իմ դահլիճ,
Ընկողմանիմ վայր մի հանգչել յիմ ար-
տասուացն 'ի մահիճ.
Զի լամ անդուլ, յորմէ հետէ եկ իմ Ո-
դիսն 'ի գընալ
Ի յԵղիոն քաղաք անյուշ, այ չԵղիոն նը-
զովեալ։
Իսկ դու հանգիր աստ 'ի յարկիս խշտի
առեալ 'ի գետին,
Եւ կամ յո՛ր վայր մեր սպասաւորք քեզ
անկողնարկք լինիցին »։

Ասաց տիկինն, և ինքն 'ի յարկ իւր վերնատանն եկ անդրէն.
Զէր միայնակ. նա և նաժիշտք շուք դրշխոյին հարկանեն:
Անդ եկ եմուտ, լայր և ողբայր ըզտարփալին զիւր փեսայն,
Մինչև ուրեմն արտևանանց Պալլաս քուն արկ քաղցրութեան:

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ի·

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ոդիւսէս 'ի դաւթին ընկողմանեալ
ի բրև 'ի ննջել, զննէ և դիտէ զլբութիւն
զաղախնեայց պալատանն։ Խնդրէ յԱրա-
մազդայ նշան բարեգուշակ, և ընդունի։
Յանդուգն լբութիւն այծարածին Մե-
լանթէս անուն, և սիրալիր հիւրընկա-
լութիւն Փիլետեայ քաջի հովուապե-
տին։ Կտեսիպպոս սեղեխ ընդդէմ Ոդիւ-
սեայ արձակէ զկճղակ մի եղին 'ի հացկե-
րութին։ Գուշակութիւն մահագոյժ հո-
մանեաց 'ի Թէոկլիմենեայ յլղձէն. ծաղր
առնեն զայն հոմանիք, և կատակեալ այ-
պանեն զՈդիւսէս և զՏելեմաք։

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ի.

Մեծն Ոդիւսէս անդ 'ի գաւթին ընկողմանէր իբր 'ի քուն,
Եւ 'ի ներքոյ էր տարածեալ ըզ կարծըր մորթ զարջառոյն,
Աւրկ 'ի վերայ և զոգենիան ըզյազելոցն հոմանեաց,
Իսկ և վերմակ Եւրինոմէ էարկ նրմա և ծածկեաց։
Խորհէր ըզմահըն հոմանեաց ընկողմանեալ նա անքուն,
Եւ 'ի յարկաց ելին յայնժամ դասք ըրբենի կանանցն.

Այն սովորեալքն լըրբենիք ընդ հոմա-
նիս 'ի լինել,
Եւ առնէին անդ ըզմիմեամբք նոքա խընծ-
ղիւք ելեւել.
Դիտէր զընդէր ըզնեղկատակ ըզկնեալն
զայն հանդէս,
Եւ 'ի սրտին հաչէր մաչէր ուշիմն ար-
թուն Ոդիսէս.
Կայր վարանեալ, արդեօք յանկարծ մահ
տալ պագշոտ երամին,
Եթէ թողուլ դեռ ըզկնեալն զայն ընդ-
ուադ ըզվերջին։
Այնպէս դիւցազն ցաւագին գոգցեաս
հաչէր 'ի սրտի,
Որպէս ըզշուն յորժամ մատաղ իւրոց կո-
ւրեանց պահ ունի,
Կայ և հաչէ ընդ այր օտար, ձայն մոլե-
գին տայ մարտին,
Սապէս ընդ գործն կնեալոց սիրտն մըղձ-
կէր դիւցազին։
Առեալ ըզլանջն ինքնին կոծէր և ընդ
անձին ոգորէր,
Խրախոյս սրտին տայր համբերող.
«Ժուժեա, սիրտ իմ, անվեհեր.
Ո՞չ դու չարևրս մըղձկեցար և ժուժա-
ցեր 'ի յոգին,
Յորժամ Կիկղոպն այն ամեհի ուտէր զըն-
կերսդ 'ի յայրին.

Ո՞չ քո հանձարդ եհան ըզքեզ 'ի մահա-
հոտ յանձաւէն,
Եւ քո ժուժալըդ խնդացոյց լեալ մազա-
պուր յօրհասէն »։
Այս նա ասէր, զանձրն խրատէր և
քաջալեր տայր սրտին,
Մինչև իսպառ կալ համբերել իբր աննը-
կուն 'ի յոգին.
Բայց նա անդուլ յայսկոյս յայնկոյս
դառնայր շրջէր յանկողնի,
Որպէս թէ ոք ըզլի արեամբ ըզճարպալից
փորոսի
Առեալ դիցէ, և 'ի վերայ բորբոքելոց
կայծականց
Շրջշրջեսցէ հասուցանել փութանակի
խորոված.
Նոյնպէս Ոդիս զինքն անդադար 'ի վեր
'ի վայր տարբերէր,
Զիարդ ածել մահ հոմանեաց 'ի խոր սըր-
տին խոտոտէր.
Զիարդ, ասէր, մին ընդ բազմաց տալ
կքրեսցի օրահաս,
Այն ինչ 'ի նոյն կայր 'ի վարանս, էջ 'ի
յերկնից Ամենաս.
Էր նա մարմնով համանմանեալ 'ի կա-
նացի 'ի պատկեր,
Կաց 'ի վերոյ գլխոյն նորա, ձայն արձա-
կեաց և ասէր.

“Հիմ դու հակես, այ հիքացեալդ. ոչ այդ իսկ է քոյդ տաճար.
Եւ այդ տիկին անշուշտ ոչ քո է ամուսինն այն պայծառ.
Եւ ոչ մերձ կայ քոյին զաւակ, բազմաց կանանց տարփալի”.
Լուաւ Ոդիս ուշիմն, անդէն զայս անդրադարձ եւ ձայնի:
“Քաջ է, ո՛վ տէր, և գեղեցիկ են բանք ողջոյն դիցուհւոյդ.
Այլ իմ զարդիս միտք վարանին, իբրու բնաւին չեմ անքոյթ.
Զիարդ զիմ ձեռն ես միայնակ արկից 'ի դաան հոմանեաց,
Քանզի խուժան բազմաժողով աստէն խռնի լրբենեաց.
Դարձեալ և ինձ մեծ են վարանքս, յո՛ր վայր փախուստ ես առից,
Յորժամ Զևսաւ, և քեզ, ո՛վ տէր, ըզմեծ նախճիրդ յանդ հանից.
Եւ արդ այժմէն զայս զիմ վարանս քեզ, տէր, խորհել յանձն առնեմ”.
“Ա՜յ չուառական ոչ աւադիկ, ձայն Ամթենաս եւ անդէն.
Ո՞չ աւադիկ, այր մահացու հաւատ չնորհէ մահացուի,
Թէպէտ և այր քան զինքն անկած և անխորհուրդ 'ի սրտի.

Իսկ դու զարդիս ինձ քանիցն, որ ես
ասուած եմ համբուն,
Եւ յանձկութեան քեզ հովանի և պա-
հապան եմ անքուն.
Եւ արդ միտ դիր, թէպէտ յիսուն
գունդք խուժեսցեն քաջարեաց,
Եւ բակ ըզմեջք պաշարեսցեն արք կորո-
վեք արք արեանց
Լէր անվեհեր, ո՜ Ոդիսէս, թէ պարտես-
ցես ըզնոսա,
Նաև զանդեայս և զհօտ նոցա դու վարես-
ցես 'ի բացեայ.
Բայց դու զարդիս հանգիր, նինջ առ,
քանզի կիրք են դըժնդակ
Զողջոյն գիշերըն տքնաբար գոլ պահա-
կեր մինչև ցայգ.
Քաջալերեաց. դու մերձ ընդ մերձ յան-
դորը ելցես 'ի վշտաց".
Զայս դիցուհին, և Ոդիսեայ արկ հրսկո-
ղին քուն աչաց:
Անդորրաւէտ նինջ 'ի հոգոց էառ Ոդիս
և հանգչէր,
Եւ դիցուհեաց արգոյն Պալլաս 'ի յՈ-
ղիւմպոս էլ 'ի վեր:
Զարթեաւ յայնժամ Պենելոպէ 'ի
քնոյն իւրմէ 'ի յարկին,
Եւ լայր անդուլ նստեալ այնպէս յիւր
'ի փափուկն անկողին.

Իբրև զլալեաց զիղձքն հարեալ և վայրիկ մի ըսփոփէր,
Նուէր ապա զիւր աղօթիցն Արտեմիսայ զայս ձօնէր.
« Լո՛ւր ինձ, ո՛վ դուստր Արամազդայ վեհ, դիցանոյշդ Արտեմիս,
Փքնահարեալ դու ընդ լանջն իմ և ձեպ ընդ ձեպ ա՛ռ զոգիս,
Կամ թէ ընդ հետիս օդեղէնս մրրրկաձուփ թափ հողմոյն
Զիս ամասցի 'ի մեծ հոսանս 'ի ջրադարձից ովկեանուն.
Որպէս երբեմն առին հողմունք ըզմեծ դստերս Պանդարին,
Զորոց ըզծնողսն աստուածք անմահք տարաժամու կորուսին.
Որք մընացին արտասուելիքն, և անդ Աստղիկ տայր դարման,
Տայր ըզպանիր, և մեղր անոյշ, և ըզգինի քաղցրահամ.
Արդոյն Հերա շնորհեաց նոցա գեղ և հանճար գերագոյն,
Եւ ողջախոհքն Արտեմիս շուք և հասակ էտ զարգուն.
Ի ճարտարել հրաշակերտուածս նաւթձեաց նոցա Ամթենաս,
Մինչև կուսիցքն զարգացեալ և հարսանեաց օրն եհաս.

Ասողիկն յայնժամ եւ Յողիմպոս առ
մեծ արքայն Ամպրոպեան,
Եւ ի խնդրէր օրիորդաց տալ զզծաղկեալ
սրսկապան։
Սակայն քաջիկ ամենայնին խելամուտ է
Արամազդ,
Եւ ճանաչէ զվիճակ մարդկան զբարե-
բախտն և զանբաստ.
Յապուրակի այն օրիորդք հափափեցան
'ի յԱրպեայց
Եւ գրաւեցան նոքա 'ի սպաս անագորոյն
Երիննեանց։
Ո՛վ թէ այսպէս դիքն երկնաձեմք յօր-
հաս 'ի մահ տարցին զիս.
Կամ թէ այսօր իսկ վարսագեղն զիս հար-
կանէր Արտեմիս.
Թո՛ղ ես տեսից զնմին Ոդիսէս խաւարար-
գեղն 'ի վրհի,
Քան թէ փեսայ ոք անաւագ իմ հարսա-
նեաք բերկրեսցի։
Մարդ ցաւագին և վշտահար, որ զգե-
ղեկն 'ի յողբ կայ,
Գո՛նեա զգցայգն 'ի քնոյ իւրմէ նա վայ-
ելիկ մի գիւրանայ.
Զի քուն անդորր երբ զմարդոյ զկոպան
առեալ քօղարկէ,
Բարեաց, չարեաց միանգամայն նա մո-
ռացօնք արկանէ.

Բայց ինձ երազըս խաբուսիկս անրջա-
կանս տայ աստուած,
Զի 'ի յանուրջս և զայս գիշեր ինձ առ-
ընթեր կայր փեսայս,
Այն իմ դիւցազն Ոդիսէս ճշգրտատիպ
յայն պատկեր,
Յորում ելեալ նա ընդ զորուն 'ի յԵղիոն
արշաւէր։
Բաբէ, 'ի քուն քանի՞ յայնժամ ես հրը-
ճուէի խնդամիտ,
Զի ոչ երազ ինչ կարծէի, այլ բուն տե-
սիլ ճշմարիտ »։
Այն ինչ լռեաց, 'ի նոյն անդէն և ոսկե-
գահն այդ ծագեաց.
Սակայն անդուստ մեծն Ոդիւսէս ըսէր
ըզձայնն ըզլալեաց.
Վարանեցաւ նա մեծասքէս, եթէ ծա-
նեաւ զնա դշխոյն,
Թուէր նըմա իբր ակնեարև եթէ մերձ կայ
իւր դշխոյն.
Առեալ ըզմորթան և ըզվերմակն, եդ 'ի
վերայ աթոռոյ,
Սակայն ըզկարծր արջառէնին առ և տա-
ցաւ արտաքոյ։
Ամբարձ ըզձեռս իւր յԱրամազդ և պա-
ղատէր. « Լո՛ւր ինձ հայր,
Եթէ ընդ ծով և ընդ ցամաք դու զիս
ածեր սիրաբար,

Թէ դու 'ի տուն իմ հասուցեր զիս ընդ
քոյով հովանեաւ,
Տարաշխարհիկ թափառելով և կրրելով
վիշտ սմբաւ,
Արդ ոք գուշակ անքուն արթուն ինձ
լինիցի աստ 'ի տան,
Իսկ արտաքոյ հրաշից նշան ցուցցէ յերկ-
նից մեծ արքայն ՝՝.
Զայս ինչ Ոդիս մաղթեաց յայնժամ, և
խնամածուն Զևսն անսաց,
Անդէն 'ի ջինջ յՈղիմպոսէն իբր 'ի յամ-
պոց որոտաց.
Խնդաց յայնժամ մեծն Ոդիսէս, ըզձայն
լուեալ զաստուածեան.
Իսկ և գուշակ եկաց նրմա կինն որ աղայր
անդ 'ի տան:
Զի աղօրիք բազումք էին Ոդիսևսեայ
արքային,
Եւ անդ կանայք երկոտասան գօտե-
պնդեալք աղային.
Անդուլ շրջեալ փոխարկէին յալիւր
ցգարին, ըզցորեան,
Զաղբիւր կենացն անհատահոս կանացա-
ծնաց պահապան:
Այլք մետասանքին աղացեալ և դա-
դարեալք կան 'ի քուն,
Մին կայր անքուն և դեռ աղայր, և էր
տրկար 'ի յուժոյն:

Ելեալ և սա 'ի յաղաղոյ, և Ոդիսեայ 'ի նրշան
Գուշակելով զայս աղօթէր. «Լուր ինձ, ով հայր Ամպրոպեան.
Դու թագ մարդկան և աստուածոց արդէն կապես բոլորից,
Ըզքո զորոան ես ինք լուայ յաստեղաղարդն 'ի յերկնից.
Կամ հրաշացեալ ես աւադիկ, զի չէք ինչ ամպ 'ի յերկին,
Դու հրաշ ուրեմն յերևանի տաս զայս ումեք 'ի վշտին.
Արդ յիս, ով տէր. լոյց դու զուխտն իմ զոր ես առ քեզ պաղատիմ,
Դասուն խեռից այդ հոմանեաց այս լինիցի օր վերջին.
Զի այդ սեղեխքդ պորտաբոյծք Ոդիսեաեան յայս պերճ տուն
Ըզհաց յեռին առցեն դոքա քըմապարար սեղանոյն.
Նեղեալ եմ յոյժ 'ի յաղաղոյ, և խոնջ եմ ես և վատակ.
Յիս դու, ով հայր. ընթրիս վերջին առցեն դոքա զայս նուագ»:
Լուաւ Ոդիս և ցնծացաւ նաև յայս ձայն բերկրալի,
Մահ շամբշելոցն ածել անդէն էր անվեհեր 'ի յոգի:

Սակայն յայնժամ և այլ նաժիշտք ըսպասս
հարեալք տաճարին,
Առեալ ածին ըզկրակարանն և բորբոքեալ
հուր լուցին։
Յարեաւ եկաց 'ի յանկողնոյն Տելեմա-
քոս դիւցազգեաց,
Արկաւ ըզձորձն և ըզսուսերն ըզսուր
յուսոյն իւր կախեաց։
Առ ըզկօշիկսն ըզգեղեցիկ, կապեաց 'ի
յոտս մաքրափայլ,
Կալաւ տէգ յաղթ, տէգ 'ի պըղինձ 'ի
սայրասուր ագուցեալ.
Եւ և ջոքաւ եկաց առ սեամն, առ Եւ-
րիկլէն ձայն կարդաց.
"Լո՛ւր ինձ, դայեակ. զի՞նչ ինչ հիւրոյն
դուք արարէք մեծարանս.
Ետո՞ւք ըզհացն, ետո՞ւք մահիճ ընվայե-
լուչն 'ի յարկի,
Եթէ արդեօք լքեալ թողիք, և նա մընաց
ամայի.
Ո՜հ, զի՞նչ զարդիս ես ասացեալ. բա՛ սը-
խալէ և մայրն իմ,
Մի՞ոչ եդեալ թէպէտ և է հիւրընկալու
քաջուշիմ.
Է՛ զի երբեմն առն անարդի շուք յան-
խորհուրդս հարկանէ.
Է՛ զի դարձեալ զայր ոք արդոյ նա ան-
պատիւ արձակէ"։

«Մի դու այդպէս, անդէն բարբառ
Եւրիկլիա զայս կրկնեաց.
Քաւ քեզ որդեակ, մի անյանցին դու
բարդեացես բամբասանս.
Քանզի այդ հիւրդ բազմեալ աստէն արբ
'ի գինւոյն ըստ ըղձին,
Բայց կերակուր ոչ ախորժեաց յորժամ
եհարց զայն տիկինն.
Իսկ մինչ եհաս ժամն յերեկոյն ըզքուն
առնուլ քաղցրութեան,
Յայնժամ հիւրոյն գոլ անկողնարկ իւր
նաժշտաց ետ հրաման.
Այլ հիւրն իբրև այր վշտատես տար-
աշխարհիկ և անտուն,
Յանձրն չառնոյր 'ի յանկողնի 'ի մէջ
գորգոց առնուլ քուն.
Զարկնառենին և զոդենիսն առ տարա-
ծեաց իւր խշտեակ,
Ընկողմնեցաւ նա 'ի սրահին, սակայն
վերմակ մեք արկաք»:
Գ.սաց դայեակն, և Տելեմաք եկ յաղթ
աշտէն 'ի ձեռին,
Եւ բարակաց ամոլքն արագ ըզհետ նորա
երթային.
Եկ և չոքաւ նա 'ի քաջաց Աքայեցւոցն
'ի յատեան,
Մինչդեռ 'ի տան աւսարդն արդոյ անդ
աղախնեայց տայր հրաման.

Սա Եւրիկէ էր դուստրն արդոյ Պիսե-
նորեան Ոպոսին.

«Օ՞ն արդ, ասէր, կէսք ժիրաժիր ա-
ւել ածէք 'ի յարկին.

Առէք ջուր սուրբ և սրսկեցէք. և 'ի գա-
հոյս գեղանիս

Արկէք սրփռոց անդ 'ի վերայ ըզպերճ
ըզգորգս ծիրանիս.

Կէսք 'ի ջնջան առէք զբսպունգս և սրբե-
ցէք ըզսեղանս,

Եւ մաքրեցէք ջինջ և պայծառ ըզհրաշա-
կերտ սարկարանս.

Կէսք դուք վազեալ անդ 'ի յաղբիւրն
մեզ ջուր բերէք վաղագոյն,

Զի հոմանիք 'ի յայսմ աւուր ոչ յամես-
ցեն գալ 'ի տուն.

Վաղ եկեսցեն, քանզի նոցա այս օրս է օր
տօնական՝՝.

Զայս հրամայեաց. մէն մի նոքա 'ի պաշ-
տամունս փութացան:

Ի յաղախնեայց քըսանք ըզջրոյ անդ 'ի
յաղբիւր վազեցին,

Իսկ և մնացեալքն ժիրաժիրք գործ
պաշտէին 'ի յարկին:

Եկին մլոին և սպասաւորք և փայտ ճար-
տար պատառեն,

Գան և կանայքն 'ի յաղբերաց, և Եւ-
մէոս գայր անդէն.

Նա խոզս երիս առեալ ընդ՝ իւր ած սե
ղեխաց պարարակ,
Այլ՝ի ժամուն թող ըզնոսա ճարակ ու-
տել անդ՝ի բակ.
Ատեաւ ապա առ Ոդիւսէս, առ գըր-
գաբար հարցանել,
“Ասա՛ ինձ, հիւրդ. ուսա՞ն ինչ արքդ
քեզ վայրիկ մի ակն ածել.
Արդեօք նոքա, որպէս յառաջն, զքեզ
ըբաբար անկուշե՞ն”.
Լուաւ Ոդիւս, և արձակեաց ձայն՝ի խո-
րոց՝ի սրտէն:
“Ո՜հ, այդ արանց, քա՛ջդ Եւմէէ, թո՛ղ
քինահանք դիք լեցին.
Արք որ այնչափ արդ կրնճացեալք և են
ոտնհար աղքատին.
Լիրբք են համբուն, և ամօթոյ չիք՝ի նո-
սա կաթ անգամ,
Եւ զանպատեհս մենքենայեալ յարկ օ-
տարին աղուանան”:
Այն ինչ այսպէս ընդ Եւմէեայ զայս
բարբառէր Ոդիսէս,
Ի նեղքս՝ի յարկ մուտ առ նոսա և այ-
ծապանն Մելանթէս.
Ըզքաջառոյգս՝ի հօրանէն այծըս յընթ-
րիս հոմանեաց
Եբեր ընդ իւր. գային ըզհետ նաև եր-
կուք՝ի հովուաց.

Առ ըզբերեալն կապեաց առ ժամն 'ի ձայնատու 'ի գաւթին,
Ետես զՈդիս այն լրբենին, երգիծեցոյց վերատին.
„Դու միւսանգամ 'ի մոյր եղեալ աստ դառնասցիս մեզ 'ի տան.
Եւ 'ի յարկէս երբէք արտաքս ոչ ելանես միանգամ.
Անշուշտ ուրեմն այր 'ի յառնէ մեք ոչ արդեօք մեկնեսցուք,
Մինչև միմեանց բուռն ըզբազկաց աստ ըզճաշակն ոչ առցուք.
Զի դու ժրտեալ, ոչ վայելուչս աստ մուրանաս քեզ պարէն,
Մինթէ խրախճանք նաև այլուր 'ի քաղաքիս ոչ կայցեն „:
Լուաւ ըզսաստն համբերատարըն Ոդիսէս, կաց լրռին.
Եւ լուռ այնպէս գրլուխ շարժեալ չարիս խորհէր 'ի սրտին:
Այն անդ երրորդ Փիլիտիոս, և էր հովուաց սա աւագ.
Ած հոմանեաց կով մի ամուլ և այծս եբեր պարարակ.
(Առին զնոսա և անցուցին ծովագնացիկ նաւասատի,
Որ և զմարդիկ առնուն տանին միշտ 'ի կղզւոյ 'ի կղզի).

Առ զյազելին և 'ի գաւթին ած և կապեաց պնդապէս.

Եւ ասէ զՈդիս Փիլիտիոս, մատեաւ անդէն հարց ցԵւմէս.

"Ո՞վ է այդ հիւրդ նորոգ եկեալդ աստ 'ի տուն մեր, ո՞վ Եւմէ.

Եւ ոչք իցեն ծընողք դորա, և դա վասն իւր զինչ ասէ.

Ազգն ուրանօ՞ր իցէ դորա, և ո՞ւր երկիրն հայրենեան.

Վա՜շ ծերունւոյն. իշխանապանծ դա արքայի է նրման:

Սակայն աստուածք ըզտարաշխարհս սաստիկ գործեն վշտահար,

Յորժամ նոքա և արքայից կնքեն վարելկեանս թափառ":

Զայս նա ասաց, մատեաւ առ հիւրն, առեալ աջո

Զարիս բարդեալ դու 'ի չարիս, և վա-
րակես մեծ ցաւովք,
Տեսի, սիրտ իմ գորովեցաւ, և աչք ը-
ցան արտասուօք.
Յուշ ինձ անդէն եկն Ոդիսէս. մի, մի
արդեօք և իմ տէրս
Արկեալ ըզձունձն իբրև ըզսա արդ թա-
փառի վշտատես.
Սակայն եթէ կեայ տակաւին և ըս-
զարփւոյն տեսանէ,
Կամ թէ մեռեալ արդ խաւարին 'ի
ստուեր մահու նա բնակէ.
Եղե՞ւկ եմ ես, եթէ դիւցազն իմ Ոդիսէս
չիք զարդիս,
Որ անդէոց իւրոց դէտ եդ 'ի մանկու-
թեան զիս 'ի տիս։
Նա արձակեաց զիս 'ի պառակն անդ 'ի
կղզին Կեփաղեանց,
Ուր և անդեայքն իւր բազմացան այսօր 'ի
թիւ բարգաւաճ.
Յաղթամարմին լայնաձակատ ճեռք ան-
դէոց սերեցան,
Զոր արդ ածել ես հրամայիմ ասա յո-
տարաց 'ի սեղան.
Վա՜յ ինձ. նոքա և ոչ որդւոյն ակն ինչ
ածեն դիւցազին
Ոչ յաստուածոցն յերկնաստան պա-
տուհասէն երկնչին.

Այլ պնդեալ են բաշխել յիւրեանս զիմ արքային կարասի.
Եւ ես վարանս 'ի կրկնակի մղձկեալ եմ արդ 'ի սրտի.
Ո՞վ դառն է ինձ. ցորչափ կեայ ինձ Տէ՛ լեմաքոս քաջորդին,
Երթալ աշխարհս տար հարկանել ընդ անդէոցըս ջոկին.
Դառն է դարձեալ աստ կալ հսկել իբր անդէոց օտարաց,
Որ ես վաղուց ելեալ գնայի կալ առ ու՛ մեք յաւագաց.
Գնայի անշուշտ պանդխտացեալ յօտար աշխարհ տարադէմ,
Զի կիրք են ինձ այս դժնդակք, ես այլ ժուժալ ոչ բաւեմ.
Սակայն մնացեց դարձեալ վայր մի ես 'ի գալուստ դիւցազնիս,
Որ շամբշելոցըն հոմանեաց զօրհան ածցէ 'ի յարկիս »։
« Ինձ ունկըն դիր, քաջդ անդէորդ, պատասխանի եա Ոդիս.
Ձեզ դու անշուշտ այր ոք ումպէտ նա՛ ինձ ուշիմ երևիս,
Բան անպատիր ասեմ քեզ արդ, նաև երդնում մեծապէս,
Վրկայ ինձ Զևս, վրկայ սեղանս այս վա՛ նատրի լեցի քեզ.

Վրկայ և յարկըս Ոդիսեայ, ուր արդ առի ելջեվան,
Մեծն Ոդիսէս գայցէ 'ի տուն քո իսկ աչաց յանդիման.
Դու ինքն ըզնա, եթէ կամիս, քոյին աչք տեսցես ասա,
Յորժամ լինեալ այդ հոմանիքդ անկանիցին դիտապատ":
Փիլիտիոս անդ այլ յայլմէ ձայն առ խընդին արձակէր.
"Օ՜չ թէ զայդ բանդ աւետահրաշ քաջն Արամազդ կատարէր,
Քաջ իսկ յայնժամ տեսանէիր, զիարդ և ես նահատակ
Ընդ անձկացեալն իմ արքայի տէգ շարժէի և նիզակ":
Ի նոյն հանդէս և Եւմէոս անդ անմահից ողջ դասուն
Ովտիւք մաղթէր և փափաքէր զՈդիսեւսին դարձն 'ի տուն:
Զայս ինչ նոքա արգահատեն յանձուկ բերեալ Ոդիւսին,
Մինչդեռ անդուստ արենախանձքն մահ զաւակին նիւթէին:
Բայց յահեկէ սրացեալ նոցա գայր բարձրաթռիչ մեծ արծուի,
Յահեղ մագիլն ունէր կալեալ քընքուշ փափուկ աղաւնի:

Զհմայան 'ի յակն արկ Ամփինոմ. «Ո՞բա-
րեկամք, ձայն կարդայր.
Տելեմաքեայ մահուն խորհուրդն իսպառ
ճնաւցէ անկատար.
Թո՛յլ տուք, ո՛վ քաջք. և դուք այժմէն
ընթրեաց մի՛ տ դիք 'ի յարկին»:
Զայս ետ խորհուրդ Ամփինոմոս, և հա-
սարակ անսացին:
Յարեան անդէն, 'ի հոյակապ յարկն
Ոդիսեայ մըտանեն.
Զերծուն զլոգիկան, առեալ 'ի գահս և 'ի
բազմոցս արկանեն:
Յազեն յայնժամ օդիս պարարտս և մե-
ծամեծս և յոյր այծս,
Խոզ պարարակ փողոտէին նաև արջառ 'ի
յանդեայց.
Խորովէին ըզ փորոտին և 'ի խորտիկ բաշ-
խէին,
Եւ խառնէին 'ի խառնարանս մեծամեծս
ըզգինին.
Էր Եւմէոս 'ի տաճարին կարգաւ բաշխող
բաժակաց,
Իսկ և 'ի խանս գեղեցիկս Փիլիտիոս բաշ-
խէր հաց.
Իսկ ատրաշէկ անոյշ գինւոյն էր Մելան-
թէս մատրուռակ,
Եւ բազմականքն ըմբոշխնէին 'ի յայնց
խահիցն անուշակ:

Տելեմաքոս խորհուրդ նիւթեալ, ասայր Ոդիւսեայ բազմական
Անդ առ 'ի նեղքս 'ի տաճարին մօտ առ սեմովք մարմարեան.
Նըմա գրձուձ եդ աթոռակ, եդ և սեղան դուզնաքեայ,
Եւ 'ի խահիցըն փորոտուոյն եհան բաժին և նըմա.
Նաև գինի հեղ 'ի բաժակն 'ի յոսկեղէն և ասէր.
«Բազմեա՛ց դու այդր ընդ կոչնականն և կէ՛ր և ա՛րբ անվեհեր.
Ըզքեզ ո՛չ ոք 'ի հոմանեաց ո՛չ գրձձեսցէ. ես սանձ տամ.
Ոչ պանդոկի է այս տաճարս և ոչ մուրկաց իջևան.
Տաճար է այս և սարաւոյթ մեծ դիւցազնին Ոդիսեայ,
Եւ տաճարիս այս հոյակապ զիս ժառանգորդ եթող նա:
Ուստի և դուք, ո՞ հոմանիք, միա՛ դիք սանձել ձեր զոգիս.
Սանձել ըզձեռս և մի՛ խանգար առնել մեծի տաճարիս»:
Լուան ըզսասարն հոմանիք. ապ 'ի բերան համրացան,
Յապուշ հարեալք ընդ պատանւոյ բարբառ ձայնին ախրական:

Միայն յայնժամ Անտինոոս զայս ինչ ասաց յատենի.

“Լուա՛ք ըզսաստ Տելեմաքեայ. սակայն ժուժալ մեզ պիտի.

Թէ Արամազդ ո՛չ կայր դրմա հովանացեալ՝ի բարձանց,

Քաջ իսկ անշուշտ մեք սանձէաք արդ ըզլեզուն Ճոխասանծ”:

Լուաւ ըզբանըն Տելեմաք և սպառնալեացն ունչս արար.

Մինչ ընդ քաղաքն անդուստ Քարոզք զոհ ածէին զոհ պայծառ:

Լուէր արդոյ ձօն առտուածոց էր հարիւրոց զոհն եզանց.

Եւ յաշտ առնել համախմբէր ազգ գիսաւոր Աքայեանց.

Ժողովեցան առ հասարակ հովանաւոր յանտառի,

Էր այն ձօնիքն Ապողոնի դիպաղեղանն արքայի:

Սակայն՝ի նեբքըս հոմանիքն՝ի խորովեալ՝ի խորոկաց

Հանեալ՝ի բաշխ վայելէին անդ՝ի յընթրիս մեծահաց.

Մեծն Ոդիւսեայ սպասահարկուքն ընդ բազմականս հաւասար

Հանէն բաժին. քանզի այնպէս Տելեմաքոս յանձն արար:

Բայց Աթենաս թոյլ և յայնժամ ոչ տայր
ժուժալ գոռոզից,
Զի ուժգնակի 'ի բոց ցասմանըն վառեաց
ցի մեծն Ոդիս։
Էր 'ի սեղեխս այր ոք յայնժամ այր ան-
ըզգամ և վատթար,
Անուն նորա էր Կտեսիպպոս և 'ի Սամոս
բնականայր.
Սա վիսացեալ 'ի գանձ իւր հօրն 'ի մըթե-
ըեալ կարասին,
Եմուտ և ինքն 'ի յերախանըն տարփա-
ծուաց դշխոյին.
Եւ սա յայնժամ ձայն զայս կարդաց 'ի
յակմբին գոռոզաց.
„Վայր մի, ասէր, ինձ ունկըն դիք, ո՞
հոմանիք գեղապանծ,
Պարտ և արժան է և հիւրոյս բաժին
առնուլ հաւասար,
Քանզի զրկեալ մեզ ասա ըզհիւրս Տելեմա-
քեայ չէ արդար.
Եւ արդ աղէ այդ ծերունւոյդ ձիր տաց
և ես հիւրական,
Զի և նա ինքն ընծայեսցէ և առ այր ոք
բաղնական.
Կամ թէ ումեք 'ի ծառայից Ոդիսեւսեայ
դիւցազին՝՝.
Այն ինչ ասաց, և առ եբարձ նա 'ի խա-
նէն զոտն եզին.

Հարուստ բրռամբն առ ըզկՃղակն ձգեաց
յՈդիս ուժգնակի.
Նա խուսափեաց 'ի կողմն ըզգլուխ իւր
թեքելով վայրիկ մի.
Յայնժամ ժըպիտ ըզԱրդոնեան 83 մեծն
Ոդիսէս արձակէր,
ԿՃղակն եզին եղ 'ի ձեռացն և կուռ ընդ
որմն հարկանէր:
Արամբտեցաւ Տելեմաքոս և կշտամբեր
սաստկապէս.
"Դու բախտացի ո՞ Կաեսիպպէ եղեր
այսօր 'ի դերևս.
Ո՛չ կշռակի հարեր 'ի հիւրն, զի նա
խոյս էտ անվեհեր.
Ապա թէ ոչ, իմ սուր նիզակ արդ 'ի սիրտ
քո վարսեալ էր.
Ատէն թաղումն առնէր քո հայրդ քեզ
հարսանեաց փոխանակ.
Շատ է արդ շատ. մի՛ խեռասցի ոք յՈ-
դիսեան յայս մարդակ.
Յարբունս տիոց հասեալ է իմ, չեմ արդ
մանուկ անկատար.
Խելամուտ եմ և ճանաչեմ և՛ ըզբարի և
ըզչար:
Բա՛ւէ, զի՞արդ մեք ժուժասցուք ձեր այդ
կըրեց դժնդակ.
Դուք հօտս յաղէք, ըզհաց ծախէք, 'ի
սպառ քամէք ըզբաժակ.

Զիա՞րդ կըքրեալ մին ընդ բազմաց սան-
ձակոծել ժըտեսցի.
Եւ արդ շատ է, զիս այլ դրժել մի ոք 'ի
ձէնջ խեռասցի.
Ապ' եթէ ձեր տապին խորհուրդք ա-
րեան իմոյ ծարաւիք,
Լաւ ևս է ինձ արդ մեռանել. կամ յան-
դիման աւադիկ.
Զի ոչ տեսից ես զանպատեհս, զարդոյ
հիւրոյն հարուածել,
Եւ ոչ տեսից ըզնաժշտաց ըզբռնաբարն
աստ քարշել"։
Կացին յայնժամ ափիբերան լռեալք
նուսագ ընդ երկար,
Մինչև ուրեմն Ագեղայոս Դամաստո-
րեանն ետ բարբառ.
"Ա՛ղէ, ո՛վ քաջք, մի ոք զարդիս այս
գեղեցիկ խորհրդոյն
Ընդդիմամարտ պայքարելով ձայն ինչ
տացէ ապառում.
Մի և մի ոք աստ հիւր հարցէ, մի ոք և
զայր ըզծառայ,
Որ միանգամ բնակեն 'ի տան մեծ դիւցա-
զին Ոդիւսեայ։
Բայց ես արդ բան Տելեմաքեայ և մոր
նորա դշխոյի
Բան մի հեշտին բարբառեցայց, թէ հեշ-
տալուր լինիցի.

Յորչափ ինչ դարձն էր յուսալի քաջին այնմիկ դիւցազանց,
Զէր դանդաղէն ինչ անպատեհ, չէր այս և ծանր հոմանեաց.
Քանզի խորհուրդ էր քաջամիտ կալ ըստպատել Ոդիւսեայ,
Եթէ ողջամբ նա յանկարծոյն գուցէ 'ի տուն իւր դառնայ.
Սակայն զարդիս առանց կարծեաց յոյսն հատեալ է դարձին.
Աղէ դու է՛ր Թեղադիր լէր արդ մոր քում դշխոյին.
Թող հարանասցի այժմէն այսօր նա քաջի առն աւագի,
Որ միանգամ շատ օժտաբեր առ 'ի վարձանս լինիցի։
Իսկ դու 'ի գոյսդ հայրենիս նիստ վայելեա՛ խնդագին.
Եւ Թող քո մայրն հրճուեսցի առ իւր նորոգ փեսային »։
Զայն արձակեաց Տելեմաքոս. « Վէհն Արամազդ ինձ վրկայ,
Վրկայ աղէտք և հօրն իմոյ, որ արդ 'ի տար յԻթակայ,
Թերևս կորեաւ, Թերևս չրջի Թափառական տարադէմ,
Ես ըզմօրն իմ, Ագեղայէ, ըզհարսանիսն ոչ յամեմ.

Նա տամ նրան և յորդորակ, ում և կամի հարմնասցի,
Եւ յինքն առցէ զառատ վարձանս զիւր օժտագանձ փեսայի.
Այլ ինձ այժմիկ քաւ յաստուծոյ. մայր զակամայն 'ի տանէն,
Իբրև որդի ես դրժոլիս քաւ բռնաբար ոչ վարեմ»:
Ասաց, և անդէն Պալլասն ահեղ նիշ մահագոյժ հոմանեաց,
Յորդեաց ծիծաղ ինն անպայման, յուզեաց ծրփուումն և խելաց.
Նոքա 'ի յայտս իբր յօտարինս խեղկատակեալք ծիծաղին,
Եւ 'ի սպանդիցն յաղէլոց ըզմիս արեամբ ուտէին.
Նաև արտօսրը գառնապէս աչք ճնշէին եղկելեաց,
Ոգին ըզկոծ գառն օրհասին գոյժ գուշակէր նախազգաց:
Գուժեաց յայնժամ բարձրաբարբառ Թէոկլիմէն այն գուշակ.
«Բաբէ, զինչ այդ, ո՞ խօլացեալք, ձեզ կիրքդ ի ցեն դրժընդակ.
Գիշեր ահա ըստուերամած ձեզ ըզգրլխովք ծածանի,
Ծունկք 'ի նեղքոյ ձեր բաբախեն, և լոյս դիմաց մրթագնի.

Կոծ և գանչիւն դառրն գուժեաց, և արտասուք այաք լընուն,
Որմունք ջքնաղք և միջնատունք արդ ցայտեցան 'ի յարիւն.
Լի է գաւիթն, լի է և բակն արդ 'ի խօլաց ուրուական,
Որ հա՛ ձեպ տան և իջանեն անդ 'ի խաւարն Երեբեան.
Հա՛ ել արփին ել տարադէմ ելթող զերկնիցն ըզկայեան,
Եւ յանդիմանել 'ի մեզ, 'ի բաղ, ողջ տիեզերք պատեցան »:
Զայս նա գուժէր, և 'ի քրքիջ շամբշեալքն ողջոյն հատանին,
Եւ զայս յայնժամ ձայն արձակեաց Եւրիմաքոս յատենին.
« Անշուշտ, ո՛վ քաջք, հիւրդ այդ նորեկ բանդագուշեալ ցընորի.
Աղէ ըզդա, ո՛ պատանիք, առէք տարայք դուք աստի.
Թողէք 'ի մեր 'ի հրապարակն ելցէ դա արդ արտաքոյ,
Որ ըզյարկիս մերոյ ըզտիւն օրինակեաց գիշերոյ »:
Կրկնեաց անդրէն Թէոկլիւմէն գուշակն ասէր գիւցազգեաց.
« Ձեմ ես կարօտ, Եւրիմաքէ, չեն ինչ ինձ պէտք ուղեկցաց.

Են իսկ իմ աչք, են և ականջք, և ոտք կրկին հաստաբուն,
Եւ ողջ համբուն են իմ զարդիս միտք և խորհուրդք քաջամոյն.
Արտաքս ահա ես ելանեմ, այլ դառն հասցէ ձեզ արկած.
Եւ ապրեսցի 'ի զրմբաղէն և ոչ մի ոք հոմանեաց.
Ոք լրբաբար էք կրնձացեալք մեծն Ոդիսեայ 'ի յարկիս,
Եւ զարս օտարրս անկուշեալք և առակէք ըզչարիս "։
Ասաց գուշակն, և 'ի շրքեղ յարկէն արտաքս ելանէր,
Եւ երթ անկաւ առ Պիրէոս այր վանատուր հիւրասէր։
Բայց հոմանիքն այր ընդ ընկեր աչակաքաւք անառակ,
Ծաղածանակք նոքա զհիւրոյք, կրծանէին զՏելեմաք.
"Ձիք ոք և չիք, Տելեմաքէ, անդ զայս պարսէր ոճն այսպէս.
Ձիք ոք յոռի և անաւագ ոք հիւրընկալ քան ըզքեզ.
Մին 'ի հիւրոյդ այր է անկած, թափառական և մուրիկ,
Սովատանջեալ և ծարաւի, և ցանգ ժըտի պարէնիկ.

Այր անճարտար և այր անգործ և պակասեալ 'ի յուժի,

Եւ ասա նստեալ կայ աւադիկ իբր անպիտան բեռն երկրի։

Իսկ է և միւսն այր խելացնոր և կոկոզեալ վատ գուշակ.

Քեզ արդ խորհուրդ տամ ես քաջիկ, և ինձ անսա, Տելեմաք.

Մեք ըզդոսա նաւագնացիկս 'ի Սիկիլեանց 'ի սահման

Առաքեսցուք անդ 'ի վաճառ և գին տացեն բաւական »։

Ըզբանս լըսէր Տելեմաքոս, յընչաց քերեալ զանց առնէր,

Եւ լըռելեայն 'ի կողմն 'ի հայրն իւր անքըմթիթ ակնարկէր.

Կազմէ պատրաստ սպասեալ մընայր քաջադիպող հօր ժամուն,

Յորում դիմեալ 'ի հոմանիս նա գուժասցի զօր մահուն։

Բայց տաճարին 'ի հանդիպոյ յիւրմէ գահէն թագուհին

Կայր 'ի զընին ունկըն դընէր ողջոյն բանից ակըմբին։

Իսկ հոմանիքն յոյժ խնծ զալիցք ճաշ առնուին համահամ,

Ճաշ մեծահաց, զի շատ զայն օր անդ պատրուճակք յաղեցան.

Ա՝յլ դառն ընթրիսնոցա յայնժամ՝ քան
ըզդրժոխս դառնագոյն,
Եւ ճաշ լեղի պորտաբուծիցն այն պագ-
շոտից երամոյն,
Գոտէպնդեալք և ժիրաժիրք պատրաս-
տէին 'ի յարկին
Մեծ Դիցուհին այն ահաւոր և Ոգիսէս
կորովին։

ՈՊԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻՆ·

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պէնելոպէ ազգեալ յԱթենասայ, դաշն դնէ հոմանեաց հարսնախօսել ընդ այնմ՝ որ միանգամ բաւական ի՛ցէ քարշել զլայնալիճ հաստ զաղեղն Ոդիւսեայ, և զփքինն անցուցանել ընդ սահմանադրեալ օղան կշիռ։ Տելեմաք յարդարէ զնսաղն. և ինքն առաջին փորձ փորձէ զաղեղան և արգելանի 'ի հօրէն։ Փորձ զայն փորձեն ապա և կէսք 'ի հոմանեացն, այլ վայրապար։ Եւմէոս և Փիլետէս հաւատարիմք Ոդիսեայ ելանեն արտաքս 'ի սրահէն, զհետ նոցա ելեալ և Ոդիս, ծանօթս զանձնէն տայ նոցա. և ուսուցանէ նոցա զինչ առնել պարտ ի՛ցէ։ Միւսանգամ փորձ 'ի նանիր զաղեղանն փորձեն հոմանիք. Անտինոոս յերկարաձգէ զդաշնաւոր խաղն 'ի վաղուեան օրն։ Մտանէ 'ի նեղքս Ոդիս, կամի և ինքն փորձել զփորձ մրցանացն, զդէմ ունին վայրապար հոմանիքն։ Առնու զաղեղն, զննէ քաջ քաջ, լարէ հեշտաբար կորովի բազկաւն, և ընդ պայմանադրեալ օղամանեական թափ անցուցանէ առ հասարակ կշռակի, և սարսին հոմանիքն։



ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻՆ.

Բնութ Թելադիր Պենելոպեայ լինէր յայնժամ Ամթենաս,
Հաստ զաղեղանն և զերկաթեաց կարգել զողնցն ըզմրցանս.
Մահահրաւէր խաղ հոմանեաց եւ զայն մրցանս դառնութեան,
Եւ նախասկիզբն օրահասին նոցա 'ի տան Ոդիւսեան։
Եւ ընդ սանդուղս Պենելոպէ բարձրաստիճանս իւր յարկին,
Եւ գիրգ ձեռօքն առ զքաջամթէք և զամրակուռ բանալին.

Էր գեղեցիկ և ճարտարեալ էր 'ի նիւթոյ պրղնձեայ,
Նաև դաստակ 'ի փրղոսկրէ էր ագուցեալ 'ի նրմա.
Եւ և ջրքաւ ընդ նաժշտաց 'ի յառաջասան 'ի նեղքին,
Ուր մրթերեալ կային 'ի պահ դանձք Ոդիւսեայ արքային.
Ոսկի, պրղինձ բազմապատիկ, և գործք ճարտարք երկաթի,
Եւ լայնալեզ կայր անդ աղեղն և կուռ կապարձ փքնոք լի.
Զայն հաստ զաղեղն և ըզփրքինան ըզմահահոտս 'ի Սպարտա
Վեհն Իփիտոս Եւրիւտոսեան ձիր ընծայեաց Ոդիւսեայ,
Երբ 'ի քաղաքն 'ի Մեսսենա այս դիւցազունք քաջք կրկին
Հանդիպեցան 'ի տաճարի Որսիղոքեայ քաջազին.
Զի անդ ջրքաւ մեծն Ոդիսէս, առ 'ի բնակչաց Մեսսենայ
Ի պահանջել ըզսակ տուժին զոր հասուցին Իթակայ.
Քանզի ոչխարս երեքարիւր 'ի միասին ընդ հովուաց
Հափշտեցին 'ի յԻթակայ Մեսսենացիք նաւագնաց.

Արդ 'ի խնդիր այն վընասուն յերկայնաձիգն յայն ուղի
Հայրըն և ծերքն յրղեն դեսպան զՈդիսն յայնժամ պատանի.
Սակայն խնդրէր և Իփիտոս անդ ըզճայիկս երկոտասան,
Ոյց դիեցիկք նաև ջորիք կային նեբքոյ, և կորեան.
Այլ մահառիթք եղեն նրմա երկոտասան այն մատակք,
Յորժամ երթ նա առ մեծագործ քաջն Հերակլէս նահատակ.
Սա անդ ըզհիւրն, այ ապառում, ըսպան յայնժամ յիւրում տան,
Զոր ոչ ասատուածքրն ահեցին, և ոչ սեղանն հիւրական.
Իսկ ըզճայիկս սալատմբակս յինքրն տարաւ Հերակլէս.
Արդ Իփիտոս 'ի յայն խնդիր եաես յայնժամ զՈդիւսէս.
Զեւրիտոսին ըզհօրն իւրոյ շնորհեաց զաղեղն հաստաբուն,
Զոր հայրն ապա ձիր սեպհական եթող նրմա 'ի մահուն.
Իսկ Ոդիւսէս եաս սուր սուսեր, եաս և ըզսէգ զանարին,
Եւ այս հիւրոյթք եղեն նոցա անդ առաջին և վերջին.

Զի կենակիցք և հացակիցք էին նոքա ընդ միմեանց,
Քանզի կանխեաց մեծն Հերակլէս և զայրն ըսպան դիւցազգեաց։
Արդ զայն աղէղն առեալ յայնժամ յԻ-փիտոսէն Ոդիւսէս,
Ո՛չ տարաւ զայն 'ի յԵղիոն յարշաւանին իւր հանդէս.
Թող զայն 'ի տան 'ի յիշատակ հիւրոյն իւրոյ սիրայնոյն,
Եւ յԻթակէ միայն վարեալ մրցէր զբօս-նոյր նա 'ի նոյն։
Արդ յառաջաստն 'ի յայն նեղքին հա-սեալ տիկինն գերափառ,
Եկ նա ընդ սեամս զոր 'ի կաղնւոյն ա-ռեալ հիւանեաց այր Ճարտար.
Յղկեաց քաջիկ և Ճշգրտիւ ուղղորդ կը-շիռ հաստատեաց,
Եդ բարաւորս, և մաքրափայլ դրանդիս 'ի նոյն յարմարեաց։
Զոքաւ 'ի մօտ Պենեղոպէ, և զմանեկին լոյծ ըզլար,
Ընդբանալին էարկ 'ի նեղքս և փականաց բուռն արար.
Զայն ետուն աղնք խբրու ըզ ցուլ յաղթ արածող 'ի դաշտի,
Այնչափ 'ի դրանց դրանդիք Ճռնչեալք ձայն հնչեցին 'ի յարկի.

Բացան հանդէպ դուրք գեղեցիկք ըզ
թափն առեալ բանալւոյն,
Եւ յառաջեալ 'ի վերնայարկն 'ի հոյակապն էլ դշխոյն.
Ուր և սապաոք ամրածածուկք պատմուճանաց 'ի դարան.
Եւ ամփոփեալ 'ի մէջ նոցա կային ջքնաղ ձորձք բուրեան:
Զեռս կարկառեալ Պենելոպէ և զերծ զաղեղն 'ի սեպոյն,
Առ ընդ նրմա ըզլուսափայլ և ըզպատեանն ըզնորուն.
Նստաւ անդէն և առ ըզնա եդ 'ի վերայ իւր ծնգաց,
Լայր դառնապէս, և զլայնալիճն հաստ զարքային հոլանեաց:
Իբրև յագուրդ էառ դշխոյն 'ի գերարտասր 'ի կոծոյն,
Յերևանի գալ հոմանեաց քայլեաց յառաջ, էջ 'ի տուն.
Նա 'ի ձեռին իւրում կալեալ զաղեղն ուներ լայնալիճ,
Ունէր 'ի նոյն զպատկանդարանն մահակիր փքնալից.
Ըզհետ նորա ժիր աղախնեայք անդ բառնային սակառի,
Լի էր յերկաթ և 'ի պրղինճ. այս են մրցանք արքայի:

Յորժամ 'ի սրահէն հոմանեաց եհաս տիկնացքն տիկինն,
Եկաց այնպէս վայր մի առ սեամն հրաշակերտեալ սրահակին.
Քօղազարդեալքն դշխոյին այդքն ծածկեալ 'ի շարի,
Նորա շրջովնաժիշտք երկու կային ասի և անտի։
Զայն արձակեաց Պենելոպէ. «Լուարո՛ւք ինձ արդ, հոմանիք.
Որ յայս տաճար զօր ամենայն մըխեալ դուք բուռն արարիք.
Հանապազօր 'ի գիներբուաց պարապելով 'ի հանդէս,
Ճոխացարուք 'ի մեր յարկին, քանզի չէ մերձ Ոդիւսէս.
Իսկ բռնութեանդ չի՛ք առ 'ի ձէնջ այլ պատրրուակ գեղեցիկ,
Բայց զի տարփայք այր ըստ առնէ դուք զիմն ունել հարսանիք.
Եւ արդ աղէ օր ձեր ըղձին ձեր մրցանօքդ հասեալ կայ,
Եա 'ի մրցանս զաղեղն եդից ըզլայնալիճն Ոդիսեայ.
Ո՛ ոք 'ի ձէնջ զայդ լայնալիճըն հեշտաբար լարեսցէ,
Եւ ըզփրքինսըն կշռակի 'ի քաջաձիգ 'ի բազկէ,

Շեշտեալ ընդ օղն երկոտասան Թափ
համօրէն անցուցէ,
Ըզնա առեալ ինձ 'ի փեսայ մեկնիմ ես
յայս 'ի տանէ.
Տուն օթեվան ինձ կոյս հարսինս, տուն
հոյակապ հացալից,
Զոր և անշուշտ 'ի քուն անգամ ես յե-
րազի յիշեցից »։
Ասաց դշխոյն և ետ 'ի նոյն հրաման քա-
ջին Եւմէի,
Տալ հոմանեաց ըզլայնալիճն, 'ի նոյն և
զօղն երկաթի։
Առ Եւմէոս և ետ նոցա, սակայն աչք
իւր Թանային,
Լայր անդանօր և Փիլիտոս, ըզզէն տե-
սեալ զարքային։
Զայն յակին էարկ Անտինոոս և արտմտեալ
ձայն կարդաց.
« Ա՛յ դուք գեղջուկք և անիմաստք խոր-
հիք միայն զառօրեայս.
Ա՛յ չուառականք. զի՞ արտասուս արդ 'ի
յարկիս Թափեալ ձեզ,
Եւ արտաթունդ ըզդշխոյին զոգին շար-
ժեալ աղէկէզ.
Ո՞չ շատ արդեօք դա կարեվէր խոցեալ
իսկ է 'ի սրտին,
Իբրև անդարձ կորոյս դշխոյդ ըզտարփա-
լին զամուսին.

Նստա՛յք լռիկ և ճաշեցէ՛ք, կամ թէ լա-
ցէ՛ք դուք արտաքս,
Եւ ասա թողէ՛ք ըզլայնալեծն առ 'ի փոր-
ձել զայս մրցանս.
Այլ ո՛վ մրցանք, որպէս խիթամ, յոյժ
դըժնդակք հոմանեաց.
Ո՞ հեշտաբար ո՞ լարեսցէ զայդ լայնալեծ
գերապանծ.
Զի՛ք ոք 'ի մեզ, չի՛ք ոք ուրեք այր այնպիսի
աննըման,
Որպիսի մեծն էր Ոդիւսէս զոր ես տեսի
միանգամ.
Զանկաւ երբէք 'ի մոռացօնս, և ցանգ
ինձ նա 'ի յուշ գայ,
Թէպէտ տեսի ես զայն դիւցազն յորժամ
էի դեռ տըղայ »։
Զայս նա ասէր, յոյս իմն անխաբ ար-
ծարծելով 'ի յոգին,
Պինդ լար քարշել և թափ ընդ օդն ան-
ցուցանել ըզփրքին.
Այլ ըզփրքնոյն դառըն ճաշակ 'ի յՈդի-
սեանն 'ի ձեռաց
Ինքն առաջին ունէր առնուլ, զոր և դըժ-
ձեաց նա յառաջ.
ՅՈդիւսևին 'ի տուն նատեալ, և զՈդիւ-
սէս անկուշէր,
Եւ անզգաստն 'ի նոյն խորհէր և ըզզովղան
յորդորէր։

Բայց անդանօր Տելեմաքոս. «Ո՛վ բարի, զիս Արամազդ,
Զայն արձակեաց, բարի, անշուշտ եդ զիս այսօր անիմաստ.
Մայրն իմ ուշիմ, ասէ, մեկնիլ և յօտարին չուել տուն,
Եւ ես ասէն զծաղու եկեալ իբրև մանուկ ըզբօանում.
Արդ աղէ դուք, ո՛ հոմանիք ոչ ձեզ մերցանք այս եդան
Վասն կրնոջ, ում չիք նման 'ի սահմանին Աքայեան,
Ոչ 'ի յԱրգոս և ոչ 'ի Պիւղ և ոչ յերկիր Միւկենեա,
Ոչ յԵպիռոս 'ի սեահողն, և ոչ 'ի մերս Իթակա.
Քա՛ջ իսկ գիտէք. զի՞նչ պէտք իցեն ինձ ներբողել ըզմայրն իմ.
Բայց ա՛ղէ դուք. մի՛ առաւիր մեզ դանդաղանք լինիցին.
Եւ մի՛ լարել հաստ աղեղանն արդ յամեցէ վատապէս.
Օ՞ն ներեցէք և ինձ փորձել ըզլայնալիճն յայս կրկէս.
Եթէ լարեմ, և ըզփրքինն թափ ընդ երկաթն արձակեմ,
Մի՛ զիս ասէն մայրն իմ լքեալ և ինքն եկեալ տարադէմ.

Մի ամայի թողցէ զայս տուն, և մի զոր-
դին ցաւագին,
Որ 'ի մրցանսըն հայրենին ուժէ թերևս
'ի բազկին »։
Այն ինչ լռեաց, և յոտն եկաց և 'ի յու-
սոյն զծիրանին
Առ եդ 'ի վայր, 'ի նոյն ըզսուր զիւր ըզ
սուսերն առ նրմին.
Կարգ ըստ կարգէ առ նա ըզցիցսըն զողա-
ւորս 'ի ծայրի
Եւ նախ փորեալ փոս մի երկայն եդ հար-
ըստեաց կշռակի.
Առեալ և հող կոխեաց զնոքօք. յակճիռս
կային հոմանիք,
Զիաղդ քաջիկ գործ զայն գործեաց,
զոր բնաւ տեսեալ չէր կանխիկ։
Զոքաւ ապա ինքն առ սեմովք, և անդ
'ի բոյս զոտն եհար,
Էառ 'ի վեր ըզլայնալիճն և փորձ փոր-
ձէր, և յուսայր
Քարշել ըզլարրն պընդապէս հաստ զա-
ղեղանն հայրենի,
Եւ արձակել շեշտ ըզփրքինն անդ թափ
ընդ օդն երկաթի.
Երիցս անգամ ճիգրն թափեաց, և ընդ
գիրկ իւր մրտանէր,
Երիցս անգամ և 'ի թափոյն նա 'ի դերևս
ելանէր.

Իսկ 'ի նուագն 'ի չորրորդում երբ պինդ քարշեաց 'ի լարել,
Ի ձիգն որդւոյն անդուստ Ոդիս ակնարկելով զայն արդել։
Նկաց ապա Տելեմաքոս, ձայն զայս կարդաց ատենին.
"Բաբէ, բաբէ. ես կամ անկած ողջոյն եղէց 'ի կեանս իմ,
Կամ թէ գողով դեռ պատանի եմ անվբաստահ յուժ բազկի,
Եւ վերջացայց ես 'ի վանել զիմ ախոյեանն 'ի կրռուի.
Արիք դուք, քաջք, որ էք քան զիս յաւէտ հուժկուք 'ի բազկէ,
Փորձ փորձեցէք մեծ զաղեղանն և այս մրցանքս յանդ ելցէ"։
Նա զայս ասաց, և զլայնալիճն առեալ 'ի վայր 'ի գետին
Եդ 'ի վերայ տախտակամած կուռ յատակի տաճարին.
Արկ և ըզնետն 'ի գեղեցիկ մանեակն 'ի ծայրն աղեղան,
Ձոքաւ ապա ուստի յարեաւ և առ անդրէն բազմական։
Հրաւէր յայնժամ ետ Անտինոս. "Արդ ոչն արիք, դուք աջեայք.
Ըսկիզբն առեալ 'ի տեղւոջէն, ուր կայ բաշխէ մատրուակ"։

Իրաւիրակին Անտինոսեան միաբանեալք անսացին,
Եւ Լիոդէս Ինոպոսեան անդէն յարեաւ առաջին.
Սա կիւսահմայ էր հոմանեացն և էր գուշակ անվեհեր,
Եւ գեղեցիկ խառնարանին ցանգ կից նստէր առընթեր.
Եւ սա միայն ըզքարուականս ունէր անձին ատելիս,
Եւ սրտմտեալ ծանրացասու�էր յամենայն հոմանիս.
Ձոքաւ և առ ըզնետն 'ի ձեռն և զլայնալիճն աննման,
Մատեաւ առ սեամս, արձանացաւ, և փորձ փորձէր զաղեղան.
Ընդ գիրկն եմուտ, քարշեալ ճգնէր, այլ ոչ զօրեաց 'ի լարել,
Քանզի անփորձ ձեռքն և քնքուշքն իւր կանխեցին 'ի թօշնել.
Զայն հոմանեաց կարդաց յայնժամ. «Ո՛ բարեկամք, ունկըն դիք.
Ես ոչ բաւեմ. ա՛ղէ այլ ոք յառաջ գայցէ քաջաձիգ:
Սակայն անշուշտ այս լայնալիճ շատից ըզմահ գուժասցի,
Եւ մեռանեալ քաջ իսկ լաւ է նախաւախճան յօրհասի,

Քան կենդանեաւ անբաժ մընալ մեզ 'ի յուսոյն 'ի մեծէն,
Ոյր աղագաւ 'ի յայս տաճար մեք պեգե-ռիմք զօր ամէն.
Արդեօք յուսայ ոք և անձկայ 'ի կին ա-ծել զմեծ դշխոյն,
Սակայն փորձեալ զայս լայնալեզ, նա յուսաբեկ է ողջոյն.
Թող այնպիսին կին խնդրեսցէ իւր քո-ղաքարդ այլ տիկին,
Որում և ձիր յաճախեսցէ 'ի վարձանաց 'ի մասին.
Իսկ ըզդշխոյս կին ածցէ այրն, որ ըզվար-ձանս շատ տացէ,
Եւ ըստ բախտին յաջողելոյ այրն այն անշուշտ եկեսցէ »։
Ասաց, լռեաց. և զլայնալեզն առեալ 'ի վայր 'ի գետին
Եդ 'ի վերայ տախտակամած կուռ յա-տակի տաճարին.
Արկ և ըզնետն 'ի գեղեցիկ մանեակն 'ի ծայրն աղեղան,
Ձգաւ ապա ուստի յարեաւն և առ անդ-րէն բազմական։
Սրամիտեցաւ Անտինոոս, և մեծասաստ ձայն կարդաց.
« Իսկ զինչ է բանդ, ո՞ Լիոդէ, որ քոց սրացաւ 'ի շրթանց.

Բան քո սաստիկ զոր ժայթքեցեր , բոց
'ի սիրտ իմ բորբոքէ .
Զոր օրահաս մեզ կորովեացս այդ լայնա-
լիճդ առթեսցէ .
Թէ դու լարել ըզհաստ աղեղն յայս 'ի
մրցանս վերջացար ,
Նա դու մոր քում գընա մեղ դէր , որ
զքեզ երկնեաց հիքաբար .
Եթէ յաղեղն , եթէ 'ի նետ քաջ ոչ ծնար
յարգանդէն ,
Բայց հոմանիքս այս հոյակապք արդ քա-
ջաբար լարեսցեն " :
Ասաց և ձայն տայր հրամանի այծապա-
նին Մելանթեայ .
" Արի դու արդ , ո՞ Մելանթէ , և մեզ 'ի
տան հուր վառեա .
Ա՛ռ դէր զաթոռ քո առ ընթեր և 'ի
վերայ ըզմորթ ա՛րկ ,
Եւ 'ի տանէ քէր ասա փուրթով մեզ ըզ-
ճարպոյն մեծ գնդակ .
Թո՛ղ ջերասցի մեծ լայնալիճդ և կակ-
ղասցի յօծմանէն ,
Փորձ փորձեսցուք առ 'ի լարել և մեզ
մրցանքս յանդ եկցեն " :
Այն ինչ լուաւ Մելանթիոս , հուր բո-
ցավառ բորբոքեաց ,
Եւ եդ զաթոռն առ ընթեր և 'ի վերայ
ըզմորթն աց .

Ըզ մեծ գնդակ առ ըզ ճարպոյն և եբեր
անդ 'ի տանէն,
Եւ պատանիքն ըզլայնալիճրն ջեռուց-
ցեալ, փորձ փորձէն.
Անդ զաղեղամբրն հաստաձիգ առնեն
նոքա ելևել,
Այլ նուազեալք 'ի յուժ բազկին դերևա-
ցան 'ի լարել:
Բայց չև 'ի փորձ մատեան մրցմանն Ան-
տինոոս, և Եւրիմաք,
Այք նախաթոռք 'ի հոմանիս, և 'ի յուժի
այք աւագք:
Ոչ ոք ինչ յայնժամ եռուն արանց փի-
լիտոսի և Եւմեայ,
Եւ 'ի սրահէն ելին արտաքս, էլ և Ոդիս
ընդ նոսա.
Իբրև արտաքս քան ըզդրանդիսն և քան
ըզբակրն ելին,
Բան հեզաբար յայնժամ Ոդիս խօսէր
նոցա առանձին.
"Լուր Փիլիտէ, լուր Եւմէոս, խօսել
ինչ բան պարտ իցէ,
Եթէ լըռել. սակայն խօսել ինձ արդ ոդիս
բուռն առնէ.
Եթէ յանկարծ աստ Ոդիսէս աստուած-
առաք դայր առ ձեզ,
Դուք զի՞նչ նրմա 'ի զօրավիգ տայիք ար-
դեօք մեծապէս.

Արդեօք 'ի կողմէն հոմանեաց. եթէ 'ի կողմն Ոդիսի.
Ասացէք ինձ բան անպատիր զոր ինչ ունիք 'ի սրտի »։
Յոգւոց Եհան Փիլիտիոս զայս անդրադարձ կարդաց ձայն.
« Ո՜վ, երբ զուխտն իմ, հայր Արամազդ,
կատարեսցես միանգամ։
Թող ասա գայցէ մեծն այն դիւցազն,
ածցէ ըզնա մեզ ասուած,
Տեսցես յայնժամ, ով Ծերունիդ, զիմ զօրավիգն 'ի բազկաց »։
Ընդոյն ուխտիւք և Եւմէոս մաղթէր 'ի դէց Ջերմապէս,
Երբ 'ի տուն իւր դարձցի ողջամբ բազմահրնարն Ոդիսէս։
Իբրև նոցայն նա 'ի վերայ Եհաս մրտացն անվեհեր,
Անդէն և զանձն իւր մերկացաւ. « Ես Ոդիսէսն եմ, ասէր.
Ես ինքն Ոդիս, որ արդ դարձայ բազմաչարչար վշտագին,
Եւ կամ ահա 'ի տան իմում 'ի քսանեորորդ 'ի յամին.
Դարձին իմոյ էք ըղձակալեալք 'ի ծառայից դուք միայն,
Զի և զայլ ոք ես ոչ լուայ իմոյն տենչալ դալըստեան.

Լուարձուք յինէն արդ բան անսուտ. Է-
թէ աստուած տացէ ինձ
Օրհաս ածել այդ հոմանեաց, ես ձեզ
երկուց կին ածից.
Կահ կարասի տամ ձեզ, կանգնեմ ձեզ
մօտ առ իս տուն և յարկ,
Եւ լինիջիք դուք իմ որդւոյս բուն համա-
հարզք և եղբարք։
Այլ աղէ դուք զի աներկմիտ ճանաչի-
ցէք զիս զարդիս,
Ահանըշան ձեզ զանպատիրին մերկանամ
զիմ ըսպիս,
Զոր անդ երբեմն 'ի Պարնասոս էհար
յիս կինձն ահագին,
Մինչ յորս ելի ես ընդ որդւոց Աստոլի-
կեայ արքային »։
Ասաց Ոդիս, և անդ զըսպին իւր հոլա-
նեաց 'ի ձորձոյն.
Հիացեալք նոքա մօտ զննելով, անդէն
ծանեան զայն ողջոյն.
Ածեալ ըզձեռըս զՈդիսեաւ արտա-
սուէին դառնապէս,
Եւ գիրկս արկեալ զուս և ըզգլուխն համ-
բուրէին ջերմապէս.
Նաև Ոդիւս մատուցանէր համբոյր ձե-
ռացն և գլխոյն.
Եւ յերկարէր կոծն և լալիք մինչև 'ի
մուտս արևուն,

Թէ ոչ Ոդիս զայն հանդարտէր. «Սանձ դուք լալեաց դիք ձայնի.
Զի մի՛ ոք արդ ելեալ արտաքս, 'ի նեղքս ըզմէնջ լուր տարցի.
Արդ աղէ մեք մոցուք 'ի նեղքս մի զհետ միոյ, ես նախկին,
Դուք հետևեալք կազմ և պատրաստ կացէք իմում նըշանին։
Թէ հոմանիք ինձ զըլլացին զիմ լայնալիճն և զկապարճ,
Արի՛ յայնժամ դու քաջդ, Եւմէ. առ ըզնոսա առ իս ածՀ.
Գնացեալ ապա փուլթանակի պատուէր տալիր կանանուոյն,
Զի փակեսցեն նոքա ըզդուրսն սենեկաց պնդագոյն.
Թէ կոծ երբէք, և կամ ժըխոր, ձայն 'ի սրահէն լուիցեն,
Մի՛ և մի՛ ոք ելցէ արտաքս, այլ լուռք 'ի նեղքս գործեսցեն.
Իակ ըզբակին ըզդրանցն ըզհոգ, քաջ Փիլիտէ, յանձնեմ քեզ.
Աղխիւք փակօք կուռ փակեսցես նահ սարեօք պնդեսցես»։
Ասաց Ոդիս և մուտ 'ի յարկն. և յիւրոյինն աթոռակ
Ոքաւ անդրէն և բազմեցաւ. ըզհետ մըտին և ծառայք։

Յայնժամ զաղեղն առ Եւրիմաք, և շրջ-
շրջէր 'ի ձեռին,
Ի վեր 'ի վայր ջեռուցանէր անդ առ շո-
ղով խարուկին.
Համայն այնպէս զաղեղն ըզհաստ չէր 'ի
լարել բաւական,
Եւ հոմանուոյն գոռոզամիտ սիրտըն մրզ-
կէր յեռանդան.
Յոգւոց ելեալ, բարբառեցաւ. "Բաբէ,
սրտնիմ ցաւալից
Վասն իմ անշուշտ և վասըն ձեր քաջ համ-
հարզեցս բոլորից.
Արդ ես այնչափ ըզհարստանիան ոչ ցաւա-
գին արտասուեմ,
Քանզի հարստունք և այլ ուրեք կան յոգ-
նաթիւք և նազեն.
Կան ոչ միայն 'ի մեր բընիկն ասա յԻթա-
կէն ծովափակ,
Այլ վերբերիչք օրիորդաց են և բազում
այլ քաղաքք.
Բայց մեք նրկունք 'ի յուժ բազկին քան
զՈդիսէս դիւցազգեաց,
Ոչ լարելով զայս լայնալիճ Աբգ և առակ
եմք ապայց"։
"Ո՛չ, ո՛չ այդպէս, Եւրիմաքէ, Անտի-
նոոս բարբառէր,
Ոչ լենիցի յորմէ խիթաս քաջ լե՛ր 'ի սիրտ
անվեհեր.

Գիտես իսկ քաջ. Է մեզ այս օրս օր տօ-
նական քաղաքի,
Ապողոնին նուիրական արծաթաղեղն
արքայի.
Ո՞ոք երբէք արդ ժըտեսցի առ'ի լարումն
աղեղան.
Հ՚ապա առեալ դուք ըզզէն զայդ և դիք 'ի
վայր միաբան.
Դիք նաև զօղսին զերկաթիս, և յա-
պահովս պահեսցին.
Քանզի ոչ ոք ինչ շոպեսցէ 'ի տուն մը-
տեալ Ոդիսին։
Բայց արդ աղէ, մեզ մատրուակ բաժա-
կակալ շուրջ եկցէ,
Մեք հասարակ հանցուք նուէր, իսկ լայ-
նալիճն աստ կացցէ։
Բայց Մելանթեայ պատուէր տալիք.
եկցէ այգուն նա վաղքալ
Եւ այծս ածցէ մեզ պատրուճակս ըզքալ
ընտիրս հօրանաց.
Ըզթամբ զըստիցն 'ի ձօն հանցուք մեք
հաստաղեղն արքայի,
Առցուք ապա փորձ զաղեղանն, և մրցա-
նաց յանդ լիցի"։
Հաւանեցան. առին Քարոզքն և ջուր
ձեռաց արկանեն,
Եւ զխառնարանն անոյշ գինւով շուրջ
պատանիք պըտակեն.

Ժիր մատրուակք կարդ ըստ կարգէ
տան և բաշխեն ըզբաժակ,
Նոքա ձօնեալք նուէր հանեն և ճաշակեն
մինչ ցլյապ։
Յամ առ Ոդիս բազմահրնարն ետ ձայն
յայնժամ ակրմբին.
"Արդ վայրիկ մի ինձ ուշնկրն դիք, ո՞հ հո-
մանիք դշխոյին.
Զեւրիմաքոս ես աղաչեմ և զԱնտինոս
դիւցազգեաց,
Որ ըզխորհուրդ զայս քաջադէպ ձեզ և
այսօր ճարտարեաց.
Դուք ասա զաղեղն ամէ թողէք, և բանն
յաստուած յանձնեացի.
Եւ առ վաղիւն ինքնին աստուած կորով
տացէ, ում կամի.
Այլ տուք ինձ, քաջք, զայդ լայնալիճ,
և ես 'ի փորձ ինչ մատեայց,
Ի փորձ տիոց իմ ծերունեայս, 'ի փորձ
ուժոյն իմ բազկաց.
Նոյն եմ արդեօք զինչ և երբեմն 'ի քաջ
առոյգն իմ յիրան,
Եթէ արդեօք վատեաց զիս արդ կեանք
իմ թափառ ։ անդարման "։
Ի բոց հատան և սրտմրտեալք ողջ հոմա-
նիք սարսեցին.
Բա՛, մի գուցէ ըզլայնալիճ զայն լարեացէ
ծերունին.

Զայն մեծասաստ էտ Անտինոս. «Ո՞վ հէգ այր դու և բախտած,
Ա՛յ հիքացեալդ 'ի մէջ հիւրոց, ոյ ծեր թափեալ 'ի խելաց.
Այդ ո՞չ է շատ, զի դու Ճաշէս ընդ ա-ւագացն Երամից,
Եւ բաժանորդ էս սեղանոյն, նաև ընդ մեզ խօսակից.
Հիւր ոք աղքատ ո՞ կաց երբէք մեր բաղ-մակից ակըմբի.
Անշուշտ ըզ ծերդ արդ վընասեաց հրա-շէկ անոյշդ այդ գինի.
Դա և այլոց զեան մեծապէս շատից գոր-ծեաց 'ի յոգին,
Որք միանգամ յայն մոլեցան և կշտասկինդ քամեցին.
Դա այդ գինի և ըզպարիկն Եւրիտիոն խանդարեաց,
Յորժամ 'ի տուն Պերիթոսին էկն 'ի կո-չունս Ղապիթեայց.
Զի նա անդէն գինեհարեալ և 'ի չարիս շամբեցաւ,
Սրտմտեցան դասք դիւցազանց ընդ Պե-րիթեանն ընդ յարկաւ.
Յարձակեցան յԵւրիտիոն և 'ի յարկէն վարեցին,
Եւ զբռընգունս, նաև զականջն 'ի սուր յերկաթ կտրեցին.

Նա խեղանդամ չուառացաւ և թափե-
ցաւ 'ի խելաց,
Եւ կորակոր զարժանահան յանձին տա-
նէր պատուհաս.
Յայնժամ Պարկաց և Ղապիթեայց բոր-
բոքեցաւ գոռ մարտին.
Սակայն կանուխ տուգանեցաւ բանդա-
գուշեալն 'ի գինին:
Ըզնոյնն և քեզ աղէտ գուժամ, եթէ լա-
րես զայնալիճ,
Եւ զօրավիգ 'ի քաղաքիս գտցես անձինդ
և ոչ ինչ.
Ի նաւ 'ի սեաւ յրղեմք ըզքեզ մեք յԵ-
քեառս 'ի յարքայն,
Այն որ հարուածն է աշխարհի. և դու
չելցես ողջանդամ.
Նիստ, ուրբ, ուվ ծեր, և մի 'ի վեդ պայ-
քարեսցիս պատանեաց "։
Պենելոպէն լուաւ ըզ սաստն, և զԱնտի-
նոս կշտամբեաց:
"Անտինոէ, այդ ծերունիդ հիւր է որ-
դւոյս, այր օտար.
Եւ բուռն առնել մերոց հիւրոցն ոչ է ար-
ժան և արդար.
Կարծեսցես թերևս, եթէ այդ ծերդ 'ի քաջ
ամուրն 'ի բազկէ
Ըզայնալիճըդ լարելով առեալ 'ի կին զիս
ածցէ.

Բա՛ և ոչ ինքն յայն ինչ խորհի, քանզի գործ է դժպըհի.
Եւ ոք 'ի ձէնչ 'ի յայդ պատճառս մի թախծեսցի 'ի սրտի »։
Եւրիմաքոս կրկնեաց առ նա. « Լո՛ւր ինձ, դշխոյդ քաջուշիմ.
Ոչինչ խիթամք, եթէ այդ հիւրդ ըզքեզ ածցէ ամուսին.
Եւ ոչ անգամ ինչ յերազել ըզ բանդ արդեօք արժան է.
Այլ մեք խիթամք 'ի մարդկանէ և կանանուոյն 'ի լեզուէ.
Թերեւս յոյն մարդ մեզ պարսեսցէ ոք վայրախօս 'ի լեզուին,
Ա՜հ արք անկածք մեծ դիւցազին պերճ ամուսնոյն տարփացին.
Եւ այդ անկածքդ ըզլայնալիճն առ 'ի լարել յետնեցան,
Իսկ հիւր աղքատ ոք եկամուտ դիմագրաւեաց 'ի մրցման,
Լարեաց հեշտին, և թափ կըշիռ անցոյց ընդ օղն երկաթի.
Զայս պարսեսցեն, և մեք յապայս առակ լեցուք խուժանի »։
Ընդէն դշխոյն կրկնեաց ուշիմն. « Ինձ ունկըն դիր, Եւրիմաք.
Ասա՛, զո՞ր շուք 'ի խուժանէն առցէ այր ոք հայկատակ.

Ո՞Չ դուք ըզտուն զառըն քաջի ասա վայ-
ըապար ըսպառէք,
Եւ նըշաւակ անձամբք զանձինս ո՞Չ դուք
արդէն առակէք.
Ո՞Չ և այդ հիւրդ այր է աւագ, այր քաջ-
ամուր 'ի յանձին,
Նաև պանծայ հայր իւր ունել զոք 'ի զար-
մէ քաջածին.
Օ՞ն արդ առեալ, թողէք տեսցուք · ըզ-
լայնալիճն տո՛ւք ծերոյդ,
Եւ ես խոստումըն հաստատուն կուեցից
դրմա, բան անսուտ.
Եթէ լարէ, և շուք նրմա փառաք նաւթ-
ճէ Ապողոն,
Ես ձորձ զանձամբն արկից նրմա և պերճ
խըլայ և բաճկոն.
Տաց սուր սրլաք նրմա 'ի զէն վանել ըզ-
շունս, ըզմարդիկ,
Նաև սուսեր տամ երկայրի, կապեմ ո-
տիցն և կօշիկ,
Եւ առաքեմ ըզդա յերկիր, ուր միան-
գամ փափաքէ ".
Այն ինչ ասաց, Տելեմաքոս ձայնեաց առ
մայրն և ասէ:
" Զայդ լայնալիճ, անսա՛ մայր իմ, յԱ-
քայեցիս ես միայն
Ո՛ամ և կամիմ տամ զայն 'ի ձեռն, ո՛ւմ
և կամիմ զըլանամ.

Որչափ և տեարք կայցեն աւագք 'ի յա-
պառաժն Իթակէ,
Եւ որչափ ինչ անդ 'ի կղզիս 'ի ձիաւէտն
Յելիդէ,
Դոքա ողջոյն ոչ լինիցին ինձ խոչ ընդ-
ոտն և արգել,
Թէ կամիցիմ զայդ լայնալիճ եւ այդ հիւ-
ղոյդ ընծայել։
Բայց դու, մայր իմ, մուտ 'ի տուն քո
և պաշտամանդ պատկառ կաց,
Առցես զոստայնն և զաղեկատն, և գործ
տացես աղախնեայց.
Դու մեզ արանցս թողցես ըզհոգն ըզ-
լայնալիճն աղեղան,
Եւ ինձ յաւէտ որ արդ 'ի տանս ես ինքն
եմ տէր և իշխան »։
Յապուշ հարաւ Պենեղոպէ, և դարձ
արար վերատին.
Զի յոյժ աղդեաց 'ի սիրտ նորա բան
քաջուշիմ զաւակին։
Ի վերնատունն եկ ընդ նաժիշտս, անդ
լայր զՈդիսն իւր սիրուն,
Մինչև՝ աչացն իւր Ամթենաս զանոյշն յայն-
ժամ արկ ըզքուն։
Եբարձ ապա քաջն Եւմէոս ըզլայնալիճն
և տանէր.
Ամբոխեցան դասք հոմանեացն և սաստ
կարդան դառնաբերը.

Ոմն 'ի դասէն 'ի գոռոզեցն ամբարձ ըզ-
ձայնն և լուտաց.
«Ո՞ւր դու տանիս ըզլայնալիճդ ո՞ւր, ա՛յ
ապուշ խոզարած.
Ըզքեզ շարք շանց, զոր առ խոզեանքն
սընուցեր, գէշագէշ
Ա՛յ սինլըքոր և այր անկած, արդ գոչեա-
ցեն դառնապէս.
Եթէ արդեօք մեծն Ապողոն է մեզ զար-
դիս աջակից,
Եւ հովանի ամրածածուկ կան մեզ դա-
սակք անմահից »:
Սարսափեցաւ անդ Եւմէոս, և եդ զա-
ղէղն 'ի տեղին,
Լուեալ զբազմաց 'ի հոմանեաց ձայն մե-
ծասաստ 'ի յարկին:
Յարեաւ անդուստ Տելեմաքոս, և սպառ-
նալեօք ձայն կարդայր.
«Քեզ, ո՛ւմ և է հնազանդ լինել չէ լաւ
Ե՛ւմէս, յառաջ տա՛ր.
Երկիր մի զքեզ քարկոծելով ես վարե-
ցից յագարակ.
Այո՛ քան զքեզ եմ մանկագոյն, սակայն
ուժով եմ աւագ.
Այլ ո՞ տայր ինձ, թէ ուժաւոր ես արդ
այնչափ լինէի,
Որչափ ինչ աստ դասք հոմանեաց համա-
խըմբեալք 'ի յարկի.

Օ՛ն և օն դէք. ես Ճոխաբար յայնժամ
'ի մեր տաճարէն
Զոք կորակոր արտաքսէի. քանզի չարիս
հայթայթեն »։
Լուան ըզբանն, և ընդ Եւմէս անդ 'ի
քրքջանըս հատան.
Իսկ ակն ածեալ Տելեմաքեայ, հանդարտեցին 'ի ցասման։
Ընդլայնալեաւն յայնժամ Եւմէս բարձեալ
տանէր 'ի յարկին,
Եկաց հանդէպ Ոդիսևսեայ, եդ զայն 'ի
ձեռս դիւցազին։
Գնացեալ ապա կոչեաց առ ինքն և ըզ-
դայեակն Եւրիկլէ.
«Քեզ, քաջուշիմըդ Եւրիկլէ, Տելեմա-
քոս պատուիրէ.
Արի փութով և քաջամուր փակեա՛ ըզ-
դուրս ըզյարկի,
Եւ թէ կանանց կոծ'ի սրահէն կամ աղա-
ղակ յունկն հարցի,
Մի՛ և մի՛ ոք ելցէ արտաքս, այլ լուռք 'ի
ներքս գործեսցեն »։
Նա զայս ասաց. և հապ ընդ ձեռ ար-
դիւնք ողջոյն բանքն եղեն։
Վաղեաց պառաւն ողջոյն փակեաց ըզ-
դուրս արձակ սենեկաց.
Իսկ Փիլիտոս արացաւ անդէն և լըռե-
լեայն էլ արտաքս։

Ազքաւ և նա փակեաց ըզդուրս զամրա-
ծածուկ ըզգաւթի,
Եգիտ պարան ըզնաւականն անդէն ձը-
գեալ 'ի բացի.
Էր այն պարանն հիւս բիբղոսեան, նո-
վաւ պրկեաց պնդապէս.
Եմուտ 'ի նեբքս, էառ զաթոռն, հայէր
անքթիթ յՈդիսէս:
Օ աղեղն յայնժամ առեալ Ոդիս զնեբ
'ի վեր և 'ի վայր,
Եւ շրջշրջէր զայն 'ի ձեռին և սայր շշաւփ
մանրաբար.
Եթէ արդեօք կուռ այն եղջիւրք ճարակ
որդանց լեալ էցեն,
Երբ դեգերեալ տէրն աղեղան կայր 'ի
բացեայ 'ի տանէն:
Յայնժամ մի ոմն 'ի հոմանեաց ակնար-
կելով առ ընկեր,
„Անշուշտ, ասէր, դա աղեղանց է քաջ
նեբկուռ անվեհեր.
Այդ ծերունւոյդ կամ առ տընին հասատ
աղեղունք գոն նրման,
Եւ կամ թէ ինքն 'ի յայդպիսեաց ճար-
տարեսցէ առ յապայն.
Տեսէք իսկ քաջ, զնաՀրդ այդ հիւր բաղ-
մաչարչար այր թափառ
Էառ 'ի ձեռն ըզլայնալիճն, մանրը զընն-
նեաց վեր 'ի վայր":

Իսկ և այլ ոմն 'ի բազմելոց բան բարբա-
ռէր այսպիսի.

« Թող լարելո�ն այդ ծերունիդ, թող
մեծապէս օգտեսցի »:

Բայց խորագէտըն Ոդիսէս յորժամ զա-
ղեղն հաստատիդ

Առ և կշռեաց և վեր 'ի վայր եռեաց զըն-
նեաց զայն քաջիկ,

Զոր օրինակ այր երաժիշտ, և այր նէր-
հուն քընարին

Դաշնակելով նա երկուստեք ըզկուռ զա-
ղիս ոչխարին,

Նորոգ սեպոյն 'ի պրտուտկաց հեշտին
ձգտէ նա ըզլար,

Նոյնպէս լարեաց և Ոդիսէս ըզլայնալիծն
հեշտաբար.

Ապա և փորձ ըզկուռ լարին փորձէր
ձեռամբն իւր աջեակ,

Լարըն ճայթեաց և զիլ հնչէր, ձայնի
ծիծռան հանգունակ:

Լուան սեղեխքն, յապուշ հարան և թախ-
ծեցան մեծապէս,

Գոյնք երեսացն առհասարակ գոյն շրջե-
ցան 'ի պէսպէս.

Որոտընդոստ ձայն եռ Դիոս, և էր
հրաշիւ այն նշան.

Լուաւ Ոդիս յոյժ ցնծացաւ, զի ձայն
աղդեաց Զըրուանեանն:

Ու փրքին մի երեքթեւեան, որ անդ զատ
կայր 'ի սեղան.
Իսկ այլ փրքինք կային ամփոփ գոգ կա-
պարձին 'ի դարան.
Այն են փրքինքըն դառնութեան, զորոց
ընդ փոյթ ըզձաշակ
Էր հանդերձեալ 'ի ճաշակել խեռ հո-
մանեացն այն դասակ:
Ընդ գիրքն եմուտ Ոգիս փրքնաւն յիւր
աթոռոյն բազմոցէն,
Ընդ խազն ըզլարըն պինդ քարշեաց 'ի զ-
բաւոր պըտղանէն.
Ընդ առաջին շեշտեալ ընդ ծակն, և հետ
ընդ հետ կշռակի
Թափ արձակեաց նա ըզփրքինն ողջոյն
ընդ օղան երկաթի.
Զայն ետ յորդին. «Տեղեմաքէ, արդ ոչ
յամօթ զքեզ արար
Այս հիւրդ 'ի քում նստեալ 'ի տան իրրև
ըզհիւր վայրապար:
Թափ 'ի թիրախն ես աւագիկ կըշիռ
անշուշտ գործեցի,
Եւ 'ի լարել ըզլայնալիճն ես ճիգն ոչինչ
թափեցի:
Կորով բազկիս է տակաւին 'ի պընդու-
թեան իւր ողջիկ,
Մի զիս ուրեմն այլ ճոխաբար այդ գըձ-
ձեացեն հոմանիք:

Եւ արդ ժամ է, մինչ աւուր կայ, աւա-
գանուոյդ ընթրելոյն,
Հապա առցին երգք և քընարք. զի այս է
զարդ սեղանոյն »։
Այն ինչ ասաց, և խորագէտն յօնիւքն
որդւոյն ակնարկեաց.
Ապաղ անդէն և Տելեմաք ըզսայրասուր
սուրն էած։
Առեալ 'ի բուռն այն քաջորդին և զհաս-
տակուռըն զաշտէն,
Մօտ յաթոռ հօրն եկն և եկաց 'ի զարդ
հրափայլ և 'ի զէն։

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԲ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Սկսանի Ոդիւսէս ահեղազօր զմեծ կոտորածն Հոմանեաց, յԱնտինոսէ արարեալ զսկիզբն. և ծանօթս տայ զանձնէն. Եւրիմաքոս հնարի 'ի հաշտ ածել զնա. խուժեն Հոմանիք յՈդիւս. սպանանի և Եւրիմաք աղեղնահար յՈդիսեայ: Տելեմաք տապաստ արկանէ զԱմփինոմ: Ոդիս զինավառի, և զինավառէ զերկուս 'ի հովուաց իւրոց: Կոտորած շեղջաշեղջ Հոմանեացն: Ամթենաս 'ի կերպարան Մենտորի քաջալերէ զՈդիս, և Եգեան վահանաւն խուճապեցուցանէ զՀոմանիսն: Ապրին միայն Փեմիոս քերթող, և Մեդոն քարոզ: Մեղանչական կանանին կրեն արտաքս զդիակունսն, ապա պատուհասին ենդքա: Ոդիս հրով և ծծմբով մաքրէ զտունն. և զպարկեշտ կանանին կոչէ առինքն, և կատարեն սօն ցնծութեան:

ՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԲ.

Յարեաւ յայնժամ զերծ Ոդիսէս ըզցըն-
ցոտիան 'ի յանձնէն,
Ապա հանդէպ 'ի մեծ 'ի սեամն էլ և վա-
զեաց 'ի վայրէն.
Ունէր զաղեղն և ըզկապարծ ըզփքնալեցն
'ի ձեռին,
Անդ առ ոտիւքն արկ ըզփըքինան և ձայն
կարդաց ակըմբին.
" Բազմավըտանգ մրցանքդ, ո՛վ քաջք,
ահա առին ըզկատար,
Արդ նըպատակ ես զայլ փորձեմ, զոր այլ
ոք այր ցարդ չէ հար.

Եթէ ինձ փառս տացէ Փեբոս քաջ դիպ-
աղեղն այն արքայն ».
Ասաց, անդէն և Յանտինոս փրքին կըշ-
ռեաց դառնութեան.
Նա ըզչբքնաղ ըզդաշխուրանն առնոյր
յայնժամ 'ի ձեռին,
Էր այն ոսկի և երկունկնեան, խնդրէր
ըմպել ըզգինին.
Ընդ միտ երբէք նա զդառնութեան զիւր
օրահասն ոչ յածէր,
Քանզի և յայն 'ի բազմախումբ յերախա-
նին ո՞ կարծէր,
Եթէ մի ոք թէպէտ և այր հաստահա-
րուստ 'ի բազկի
Յաւակնելով յանձնապատուան մահ խա-
ւարին գուժասցի :
Կըշռեաց ըզնետն Ոդիսէս, Էֆար ընդ
դուռն ըմբանին,
Եւ ընդ փափուկ ընդ պարանոցն 'ի թափ
անցոյց ըզփրքին.
Թէքեալ 'ի կողմն և դաշխուրանն անդ
անկանէր 'ի ձեռաց,
Յայտեաց անդէն և ընդ ունգունս յոր-
դահոսան բուղխ արեանց.
Դոփեաց ոտիւքն հար ըզսեղանն թա-
փեաց ըզխահան 'ի գետին,
Եւ հացն և միսք խորովածոյք ընդ ապա-
ժոյժ զանգէին :

Մնկաւ անդ այրըն դիտապատ, զահի հարեալք խռովեցան.
Յոտըն կացին առհասարակ, ձայնք և աղմուկք յուզեցան.
Խուճապեցան. ընդ կուռ որմունսն շուրջ հայէին հասարակ.
Ոչ գոյր կախեալ անդ ոչ ասպար, և ոչ գեղարդն, ոչ նիզակ.
Զայրագնեցան, և լի ցասմամբ կշտամբէին զՈդիսէս.
"Հիւր, քո արարդ է քարուական. դու նեռ 'ի մարդ արձակես.
Ընդ մեզ, չար ծեր, չկք յայլ մերցանս այլ չկք քո մահն և բաժին,
Նա՛ քեզ առ դուրս կայ աւադիկ ժամ դառնութեան օրհասին.
Զայր դու հարեր, զայր քաջ աւագ յԻթակացւոց պատանեաց,
Արդ ձեպ ընդ ձեպ կուր գիշախանձ արկցիս դու ասա անգեղաց"։
Զայն մեծասասա կարդան նրմա. քանզի ակահք չեն բանին,
Գործ վրիպակաւ և ակամայ զառն ըզհարուած կարծէին.
Յայն ինչ շամբշեալքն մերտախաբք չեն տակաւին խելամուտ,
Եթէ բնաւից դառն օրահաս գուժայր նոցա մօտալուտ։

Յայնժամ Ոդիս զակն իւր ահեղ ցոլացուցեալ 'ի նոսա.

«Ա՛յ շունք, ասէր. կարծէիք զիս իսպառ անդարձ 'ի Տրոյեայ.

Նստեալ ըզտուն իմ ծախէիք, և զաղախնեայս քարշէիք,

Եւ առ իմով կենդանութեամբս իմ ամուսնոյս տարփայիք.

Դուք ոչ ցասման ինչ անմահից ոչ ժանտք, երբէք ակն ածէք.

Եւ ոչ մարդկան ինչ բասրանաց ոչ լիրեք, երես արարէք.

Արդ ձեզ անշուշտ առ դուրս հասեալ կայ օրահաս դառնութեան».

Նա զայս գուժեաց. և հասարակ 'ի գոյն դարձան 'ի դալկան։

Այր այր 'ի շտապ տագնապեցաւ իւր փախստեան վայր խնդրէր.

Միայն յայնժամ Եւրիմաքոս եկաց միջնորդ և ասէր.

«Եթէ Ոդիւսդ Իթակացի աստ արդարև հասեալ կաս,

Իրաւացի են ողջոյն բանքդ և արդար է պատուհաս.

Քանզի և շատ խոհերականք եթէ 'ի քոյ յայս տաճար,

Եւ թէ 'ի քոյ 'ի յապարակս գործք գործեցան անպատկառ.

Սակայն բնաւից այդ խոհերից, այր որ
եկաց 'ի պատճառ,
Անտինոոս, կայ աւադիկ ասա դիտա-
պատա նեռահար.
Նա էր սադրիչն, և չէր այնչափ նա հար-
սանեացն 'ի տարփման.
Նա յայլ խորհուրդ մըտաբերէր, սակայն
արգել Զըրուանեանն.
Թագ յԻթակէ խնդրէր կապել ասա 'ի
յերկրիս քաջաբեր,
Եւ դա 'ի մահ քոյ զաւակին գաղանորդ-
գայթ դարանէր.
Արդ նա այժմն զարժանահան առեալ
ըզմահ տապատա կայ,
Դու արդ 'ի քոյ 'ի ժողովուրդ խնայեա
ով քաջ, և գրթա.
Ըզքեզ ահա համաշխարհաւ մեք հաճեա-
ցուք 'ի տուժի,
Որչափ ինչ ասա շուայտեցաք փնտռեալ
'ի քում 'ի յարկի.
Քանիցս եղանց տոյժն եղիցի զոր քեզ
այր այր տուժեսցուք,
Նաև ոսկի նաև պըղինձ քեզ, քաջ, կըշ-
ռով չափեսցուք.
Մինչև խապառ սիրտ դիւցազնիդ զըսար-
թացեալ բերկրեսցի,
Որ բոցավառ ցասմամբ յառաջ բորբոքե-
ցաւ յիրաւի »։

Տիգաք աչաց խաղաց Ոդիս. « Եւրիմաքէ, ձայն կրկնեաց,
Թէ և ողջոյն տայցէք ինձ սատ ըզ հայրենին ձեր ըզ գանձ,
Որչափ ինչ արդ կայ 'ի ձեռին, և կամ այլուստ բարդիցէք,
Ոչ և այնպէս ես դըլացայց 'ի հարուածոյն, ոչ երբէք.
Մինչև ողջոյն, մինչև խապառ ըզ վրէժ լուծցեն հոմանիք.
Բայց երկու ինչ ձեզ աւադիկ. հա՛ ընտրեցէք զոր կամիք.
Կամ մարտ ընդ իս եդեալ կռուել, և կամ խոյս տալ յօրհասէն.
Բայց և ոչ զոք 'ի հոմանեացդ արդ անձնասպուր ոչ կարծեմ »:
Ըզդողանի հարան նոքա, և սրտառուչք ծունկք լուծան.
Բայց և յայնժամ Եւրիմաքոս ձայն արձակեաց միւսանգամ.
« Բա՞ռք անշուշտ, ո՛ բարեկամք, դա յաղթ բազկին դուլ ոչ տայ,
Քանզի առեալ ըզլայնալիճն յանքոյթ առ սեամն անցեալ կայ.
Ա՛յ է փրքնոք պատկանդարանն, և մինչև ոչ դատարկէ,
Ոչինչ դըլայ, և դիտապատ ողջոյն ըզմեզ արկանէ.

Հ՛ապա 'ի մարտ, 'ի մարտ, ո՛վ քաջք 'ի
պատենից սուր ածէք.
Ընդդէմ փրքնացրդ մահահոտ ձեզ ըզ-
սեղանս թումբ առէք.
Հրոսակ թափով բուռն 'ի վերագդ յար-
ձակեսցուք մեք ողջոյն,
Եւ 'ի դրանդեաց վանեալ ըզդա դրդուե-
ցուսցուք 'ի սեմոյն։
Վազեալք ապա մեք ընդ ոստանն, գոյժ
անդ հարցուք և շըշուկ,
Եւ բըթեսցին մինչև խապառ դորա փը-
քինքն և բազուկ »։
Զ՚ն ինչ ասաց, և սայրասուր սուսեր
ձգեաց երկայրի,
Եւ յՈդիւսէս թափ յարձակեալ ձայ-
նիւ գոչէր սոսկալի.
Ճեպ եւ Ոդիս, և առ ըստեամբքըն փրք-
նաձիգ հար 'ի լանջ,
Եւ կըշռակի շեշտեալ 'ի լեարդն երեք-
թևեան նետ մխեաց.
Զօրհասական էառ ըզվերն և 'ի ձեռաց
սուրն անկաւ,
Ի գիլ'ի գիլ ըզսեղանով գըձեալ յերկիր
հոսեցաւ.
Ողջոյն ըզնահան և ըզ բաժակս անդ 'ի
գետին արկանէր.
Ինքն ընդ կառամն իւր ըզդեռնեալ և 'ի
յոգւոցըն պարզէր,

Եհար զաթոռըն սատակապէս, հար տա-
պալեաց աքացի,
Եւ պատեցաւ աչաց նորա մէգ խաւէ-
ժեան խաւարի։
Յապա անդուստ Ամփինոմոս ըզսուր
մերկեալ գիւցազին,
Վազեաց արձակ առ 'ի սեմոյն վանել
ըզնա մոլեգին։
Ճապարեաց Տելեմաքոս, եհար ըզնա
ընդ քամակ,
Եւ առ 'ի լանջն յայնկոյս թափով ան-
ցուցանէր ըզնիզակ.
Նա հար շըռինդն, անկաւ սապաստ,
զարկ ըզգըլուխն ըզգետնի,
Վերջոտնեցաւ Տելեմաքոս եթող ըզ-
տէգն 'ի մարմնի.
Քանզի երկեաւ, գուցէ կըքեալ թէ ըզ-
նիզակ քարշեսցէ,
Գաղտ 'ի թիկանց հարցէ ոք տէգ և կամ
յայտնի սուր ածցէ.
Վազեաց և էկն ինքն հատակըլեալ և ձայն
առ հայր իւր կարդայր.
«Ես քեզ, ո՛վ հայր, նիզակ կըրկին ածից
փուլթով և ասպար.
Ածեալ ամուր և սաղաւարտ քեզ քաջ
'ի քունս յարմարեմ,
Նաև զիրանս իմ վառեցից Ճեպով 'ի ջրահ
և 'ի ղէն.

Զինավառեմ և զՓիլիտոս, զինուորեցիս
և զԵումէս,
Զի զէն առնուլ 'ի շտապ ժամուս մեզ
արդ պէտք են մեծապէս »։
Զայն ճեպ ընդ ճեպ կրկնեաց Ոդիս.
« Հա՛, օ՛ն արի՛ և փութա՛,
Յորչափ կապարձս ինձ փքնալից ամրա-
պահեստ պաշտպան կայ։
Գուցէ դոքա ըզմենացեալս զիս վանեա-
ցեն 'ի սեմոյն »։
Ասաց. ճեպ ետ Տելեմաքոս 'ի լուր ծնո-
ղին բարբառոյն։
Գընայր սուրհայր 'ի յառագաստն հա-
ղուստ զինուցն 'ի դարան.
Առ ուրթ նիզակս, նաև քառեակ եբարձ
անտի ըզվահան.
Էառ անտի և սաղաւարտ չորս գլխա-
պանծ պըղընձի.
Յարեաւ վազէր, և առ հայր իւր սրա-
ցեալ եհաս շեշտակի։
Անդ ինքն յառաջ պղնձավառ ծածկեաց
ողջոյն զիւր իրանն,
Ըստ նրմանէն և պաշտօնեայքն 'ի զէն 'ի
զարդ վառեցան.
Բակ ըզդիւցազըն Ոդիսեաւ եկին նո-
քա և կացին,
Մինչ նա անդուլ գոռայր շեշտէր զերեք-
թևեանս կապարձին.

Ցանգ ըզմի ոք 'ի հոմանեաց տապաստ
ձգէր յիւրումն տան,
Մինչև սեղեխք մի ըզմիով անդ դիտա-
պաստ շեղջեցան։
Իբրև փըքինք ըսպառեցան աղեղնաւոր
արքային,
Ըզլայնալիճն առ և յեցոյց նա առ որ-
մովք տաճարին.
Ապա վահան քառատակեան առ ըզթի-
կամբքն և եբարձ,
Եւ յաղթ 'ի գլուխն առեալ դընէր կուռ
սաղաւարտ դիսապանծ.
Վերջքն 'ի ծայրէն փողփողելով տատա-
նէին ահագին.
Նաև կրկին տէգ պըղընձի առ և կալաւ 'ի
բըռին։
Ի հոյակապ սրահին 'ի ծայր անդ նրբու-
ղի կայր դռնակ
Բացեալ ընդ որմն հաստամուր կուռ
տախտակօք ամրափակ.
Ի յայն դռնակ կարգեաց Ոդիս ըզքաջն
Եւմէս պահապան.
Զի նա մօտ կայր, և 'ի վայրի անդ մի մի-
այն էր կածան։
Դիտեաց անդուստ Ագելայոս և ձայն
կարգաց ժողովին,
«Ա՛ղէ, ո՛վ քաջք, գնացեալ 'ի մէնջ ոք
տիրեսցէ դռնակին.

Գոյժ արտաքոյ տացէ անդուստ առ ժո-
ղովուրդն ուժգնակի,
Եւ նետաձիգ այդ վիրագիդ բազուկն 'ի
մէնջ կարձեացի »։
մարթ, ո՛վ քաջդ Ագելայէ, Մե-
լանթիոս բարբառէր,
Զի՛ք ինչ հրնար, զի դուրք գաւթին կան
անդ կարի առընթեր։
Նեղ և անձուկ է յոյժ կածանն. և թէ
կացցէ անդ այր մի,
Նա ըզհազարըս վանեսցէ, թէ այր ելցէ
կորովի.
Բայց ա՛ղէ քաջք դուք պինդ կացէք,
և ես մտեալ անարգել
Ի յառագաստն, անդուստ զէն զարդ ա-
ծեմ ես ձեզ 'ի վառել.
Քանզի անշուշտ ոչ այլ ուրեք ըզզէն և
զարդ ըզյարկին,
Այլ անդանօր ժողովեցին մեծն Ոդիսէս
և որդին »։
Ասաց, վազեաց Մելանթիոս 'ի յառա-
գաստն Ոդիսեան,
Եւ ընդ սանդուղսն աճապարեաց և առ
վահանս երկտասան,
Նոյնչափ և տեգ, նոյնչափ և կուռ բարձ
սաղաւարտս գիսապանծ.
Առեալ վազէր, և հապ ընդ հապ ետ
զայն 'ի ձեռս հոմանեաց։

Եաես Ոդիս և խռովեցաւ, և ծունկք
լուծան դիւցազին.
Եաես զինեալս, որք ըզնովաւ տէգրս եր-
կայնս ձօձէին.
Յայնժամ զձեռնարկ զիւրոյ մարտին նա
տեսանէր դժնդակ.
Դարձաւ կարդաց ձայն առ որդին. «Ա՛ղէ
դու լո՛ւր, Տելեմաք,
Անշուշտ ոք մեզ 'ի մեր յարկին 'ի կանա-
նուոյն 'ի դասէ
Ընդդիմամարտ մեզ մարտ գոռայ կամ
թէ ինքնին Մելանթէ»:
«Ես ինքն, ո՛վ հայր, ես ինքն յանցեայ,
Տելեմաքոս խօսեցաւ.
Ինձ մեզ դիցես, ես վրիպեցայ. գիտեա՛,
այլ ոք ոչ մեզաւ.
Զառագաստին թողի ըզդուռն անհո-
գացեալ թերաբաց,
Եւ վրիպակիս խմուտ եկաց անդ ոք լրտես
իրազգաց:
Այլ օ՜ն արի՛, ըզդուրս յարկին փուլթա՛
փակեա՛, քաջդ Եումէ.
Եւ կա՛ց անդ դէտ, եթէ արդեօք ոք 'ի
կանանոց զայդ սադրէ,
Եթէ արդեօք, զոր ես խնթամ, Մելան-
թիոսն է պատճառ».
Զայս ինչ այսպէս 'ի շտապ ժամուն անդ
զրուցէին այր ընդ այր:

Բայց Մելանթոս 'ի նոյն 'ի յարկն եւ միւսանգամ փուլթապէս,
Զէն զարդ առնուլ, տանել անդրէն. դիտեաց յայնժամ զայն Եւմէս.
Նա անդ մօտ կայր առ մեծն Ոդիս, և արձակեաց ձայն անդէն,
"Լո՛ւր, ո՛վ դիւցազն. այդ աւադիկ այր չարագլուխ եւ անդրէն.
Դա ինքն է այր, զոր խիթացաք, որ արդ ՀԵպէ յառագաստ.
Այլ դու այժմէն ինձ պարզ ասա՛, ո՞ Լայ-երտեանդ բազմիմաստ.
Արդեօք 'ի մահ մատնեմ ես զայրն, թէ նմա երբէք տիրանամ,
Եթէ արդեօք քարշեալ ըզնա աստ քեզ ածից յանդիման.
Լուծցէ ըզվրէժ նա զմատնութեան, զոր հնարեցաւ 'ի յարկիս".
"Ի ձեզ արդ զայրն ես յանձն առնեմ, պատասխանի ետ Ոդիս.
Մէք աւադիկ ըզհոմանիսն, ես ինքն և իմն Տելեմաք
Ատ սանձեսցուք. թէպէտ և բոց մեզ բորբոքեն դըժնդակ.
Դու քաջդ Եւմէ և Փիլիտէ, արկեալ ըզնա անդ տապաստ,
Եւ պրկեցէք ըզձեռս և զոտս, և փակեցէք զառագաստ.

Ի սիւնն 'ի մեծ քարշեալ ըզնա, կաչկան-
դեցէք սնդագոյն,
Եւ չարատանջ անդ յառաստաղն այն-
սէս կացցէ կենդանւոյն »։
Անդէն 'ի լուրն աճապարեալ 'ի յառա-
գաստ վերելին,
Անդ ծածկեցան. էր Մելանթոս յայն-
ժամ 'ի նեղքս 'ի յարկին.
Նա աստ և անդ զէնս որոնէր յառագաս-
տին 'ի դարանս,
Սոքա երկուք աստի անտի առ մեծ դրան-
դեօք կան արտաքս։
Այն ինչ ըստ սեամն էլ Մելանթոս իբր
անվեհեր 'ի յոգին,
(Պերճ սաղաւարտ բարձեալ տանէր նա
'ի միում 'ի ձեռին,
Իսկ 'ի միւսում ունէր վահան յաղթ և
հնացեալ ժանգահար,
Զոր Լայերտէս քաջն այն գիւցազն 'ի
տիան յառոյգ իւր բառնայր,
Լքեալ յայնժամ կայր 'ի յարկին և կալք
փոկոցն աղարտեալ,)
Թափ յանկարծոյն տուեալ 'ի նա, զայրն
արարին ձերբակալ.
Հապ ըզհերացն առեալ 'ի նեղքս 'ի յա-
ռագաստ քարշեցին,
Մինչդեռ վայէր անդ Մելանթոս, տա-
պաստ արկին ընդ գետին.

Արագ արագ ըզձեռս և զոտս պինդ պըրկեցին ըզնորա,
Ածեալ կապանըս ուժգնապիրկս ըստ հրամանին Ոդիւսեայ.
Ապա ողջոյն կաչկանդելով զերանն յանլոյծ 'ի սարեաց,
Եւ քարշեցին ընդ սիւնն ընդ մեծ մօտ առընթեր մարդակաց:
Իսկ դու յայնժամ, քաջդ Եւմէոս. զայս հեգնեցեր դառնապէս.
"Դու այդր անշուշտ, ո՞վ Մելանթէ, դու ողջ ըզցայգն հսկեացես.
Ունիս արդ դու քեզ փափկագոյն այդր անկողին 'սա արժանոյն,
Եւ 'ի բարձուէդ տես զայգն ելեալ 'ի հոսանաց Ովկիանուն.
Երբ ոսկեգահն 'ի վերս ծագեալ և քեզ լեցի աղդարար,
Զի այծս յընթրիս ածցես կանուխ դու հոմանեացն 'ի տաճար":
Մընաց այնպէս Մելանթիոս անդ կաչկանդեալ 'ի սարիս.
Սոքա զէն զարդ արկեալ զանձամբք, պինդ փակեցին ըզդրանդիս.
Ապա հապճեպ առ մեծն Ոդիս 'ի զորավիդ հասանեն,
Եւ գոռուԹիւնըս փորատեալ, բակ ըզնովաւ կան անդէն.

Սոքա ասսի առ կուռ սեմովք արք քաջք
թուով կան քառեակ,
Իսկ և անդուստ ճակատ մարտի տան բազ-
մահոյլ արք աւագք։
ԼՆչեկն յայնժամ վեհ մազդեզանց մեծն
Ամենաս յերևան,
Նա Մենտորին էր ճշգրտեալ 'ի բուն
մարմինն և 'ի ձայն.
Ետես Ոդիս և այլ յայլմէ յոյժ ցնծա-
ցաւ, ձայն կարդաց.
"Ինձ դու, Մենտոր, արդ 'ի յօգն հաս.
ըզհամահարզդ 'ի յուշ ած.
Քեզ անձնանուէր ցանգ լեալ է իմ. և
եմք 'ի տիս հաւասար".
Ասաց այսպէս, սակայն զՊալլաս իբրև
տեսեալ նա իսնդայր։
Բայց հոմանիքն երևելոյն ըսպառնալիս
կապէին,
Եւ նախ այսպէս Ագելայոս սաստեաց նը-
մա յատենին.
"Քաւ քեզ, Մենտոր, մի արդ հրապոյր
քեզ արբուցէ Ոդիսէս,
Զի զօրավիգ տացես նմա, և մարտ ընդ
մեզ մղեսցես.
Անշուշտ ահա մեք մահ ածեալ հօրն Ո-
դիսեայ և որդւոյն,
Նա և 'ի քեզ ոչ խնայեսցուք, ածցուք
օրհաս դառնագոյն.

Լուծցես ըզվրէժ քոյ կառափամբ, զոր
ինչ ասա մեզ խոնձոնձես,
Մինչև յաձիւն և 'ի մոխիր ողջ դարձուս-
ցուք մեք ըզձեզ.
Յայնժամ ըզդոյսդ, որ 'ի բացի, և որ 'ի
քոյդ 'ի տաձար,
Ընդ Ոդիւսեանցըն խառնեսցուք մեզ 'ի
յապուռ և յաւար.
Ո՛չ քո զուստերս, ոչ ըզդստերս թողա-
ցուսցուք 'ի յարկին,
Եւ ոչ զպարկեշտ քո զամուսինդ յԻթա-
կացւոց յոստանին »:
Լուաւ ըզսասան, և Ալթենաս սրտմրտե-
ցաւ մեծապէս,
Դարձաւ անդէն և զայրագին յանդիմա-
նեաց զՈդիսէս.
» Զի՞նք քո այլ ևս, ո՛ Ոդիւսէս ոյժ և կո-
րով չի՞նք բազկաց,
Որպէս յորժամ վասն Հեղինեայ անդ գո-
ռայիր դու յառաջ.
Լուսածըղի այն հօրամոյն դրստերն այն-
չափ շուք հարեր,
Եւ ինն ամեայ ընդ Տրովացւոց դու մարտ
անդուլ մղեցեր.
Շատ քաջորեար տապաստ արկեր բոցա-
վառեալ 'ի գոռին,
Եւ քև առաւ Պրիամոսին մեծ շահաստան
լայնուղին.

Եւ արդ զիաղդ յորժամ ողջամբ աստ 'ի տուն քո հասեալ կաս,
Դու մարտս մըղեալ ընդ հոմանեաց այնչափ այսօր վատանաս.
Բայց աղէ դու, արի ոչ քաջ, եկ առ ընթեր կաց առ իս,
Եւ թշնամեաց քոց 'ի դիմի արդ զիմ տես ցես ըզնախճիրս.
Եա քեզ Մենտորս Աղկիմոսեան տաց քոց բարեացդ փոխադարձ՝.
Ասաց այսպէս. բայց դլխովին ըզյաղթուն թիւնն ոչ կնքեաց։
Քանզի խնդրէր մեծ դիցուհին փորձ անդ փորձել տակաւին
Ըզքաջուութեանն զՈդիսեայ և զհոյակապ զաւակին.
Ինքն յանկարծոյն վերամբարձեալ 'ի յառաստաղ մեծի տան,
Նստաւ անդէն տիպ ճչգրտիւ յանձին բերեալ ըզծիծռան։
Բայց հոմանեաց խրախոյս յորդէր Ագեղայոս առաջին,
Եւրինոմոս, Պտղոմէոս, 'և Ամֆիմեդոն 'ի կարգին.
Էր ընդ նոսա և Պիսանդրոս, և Պոլիբոս խորագգաց,
Սոքա աւագք արք 'ի սեղեխս և զօրութեամբ գերազանց.

Սոքա անդ դէռ յոտին կային և վասն
ոգւոց կրռուէին.
Այլք փքնահարք տապաստ անկան 'ի լայ-
նալիճն Ոդիւսին։
Զայն եա ապա Ագեղայոս առ հասա-
րակ ակըմբի.
«Լուարո՛ւք, ո՛վ քաջք. արդ ձեռն ան-
շուշտ այդ վերագիդ կարձեացի.
Քանզի Մենաոր էլ և գընաց այն մեծա-
պանծ վայրաբան,
Եւ արդ միայն դոքա քառեակքդ անդ
առ սեմովքն անցեալ կան.
Դուք մի հաղոյն, այլ վեցք միայն նախ
լինիցին արդնընկէց,
Եւ փառս տացէ մեզ Արամազդ եթէ հար-
ցուք զՈդիսէս.
Ո՛է հոգամ զայլս, և շատ է մեզ, եթէ
տապաստ նա անկցի»։
Հաւանեցան. և տէգընկէցք արք վեցք
եղեն կշռակի.
Այլ 'ի դերևս առ հասարակ էհան ըզ-
տէգան Աթենաս.
Մին զարտուղի արձակեցաւ էլ կուռ յար-
կին հար ըզսեամն.
Իսկ մին թռուցեալ և շեշտակի բախէր
ընդ դուռն ամրափակ.
Իսկ թափ ընդ որմն էլ և անկաւ մին 'ի
հացւոյն կուռ նիզակ.

Այսպէս յաշտեայցըն հոմանեաց յան-
դորը ելեալք անվեհեր,
Դիւցազն ապա մեծն Ոդիսէս ձայն համ-
հարզիցն արձակէր։
"Օ՜ամ աւադիկ է, բարեկամք, արդ
տէգընկէց գոլ և մեզ,
Այդ գոռոզիցըդ բազմամբոխ լիրբ հոմա-
նեացդ 'ի հանդէս.
Աբք լրբենիքդ ոչ ասեն շատ մեզ զա-
ռաջին ըզգձձանս,
Նաև զարդիս յաւակնեցան գոլ կենա-
խուզ մեր անձանց"։
Այն ինչ էին բանքն 'ի բերան, և միաբան
շարժեցին
Եւ ըզնիզակս սայրատուրս թափ կշռա-
կի ձրգեցին.
Մեծն Ոդիսէս հար առաջին զՊողոմէոս
զայր աւագ,
Քաջն Եւմէոս հար զԵլատոս, զԵւրիա-
դէս Տելեմաք.
Փիլիտիոս ըզՊիսանդրոս շէջտ հարկանէր
'ի յոգի,
Ողջ դիտապատոն անդ 'ի յորսայս զարկան
նոքա ըզ գետնի.
Ի խորս յայնժամ մեծի սրահին վերջոյ-
նելով հոմանեաց,
Սոքա թափով քարշեն ըզտէգս 'ի յան-
կելոց դիականց։

Բայց և անդուստ մարտ տէգընկէց յու-
զեն կրկին հոմանիք,
Եւ միւսանգամ Պալլաս ըզտէգս հան 'ի
դերև գոգ ողջիկ.
Մին հար ըզսեամն, և մին բախեաց թա-
փով ընդ դուռն ամրափակ,
Եւ շեշտ ընդ որմն էլ և անկաւ մին 'ի հա-
ցւոյ կուռ նիզակ:
Ամփիմեդոս ըզՏելեմաք եհար 'ի ձեռն
'ի պտղին,
Այլ կեղևեաց սայր նիզակին միայն ըզ-
մորթն ըզվերին.
Տէգ Կոռեսիպպոս ձրգեաց յԵումէս և ընդ
վահանն հար անդուստ,
Զուարն խազեաց. իսկ տէգն անդէն
թռուցեալ անկաւ 'ի վերուստ:
Նոքին դարձեալ և զՈդիսեաւ բոլորեցան
միւսանգամ,
Եւ 'ի յամբոխին հոմանեաց շեշտ արդն-
ընկէցք ցոլացան.
ԶԵւրիդամոս մեծն Ոդիսէս եհար 'ի
սայր դրժընդակ.
Ըզ Պողիւբոս քաջն Եումէոս, զԱմփիմեդոս
Տելեմաք.
Ըզ Կոռեսիպպոս Փիլիտիոս քաջ ան-
դէորդն հար 'ի լանջ,
Ոտնհար եղև, և անկեալն ձայն զայս
կարդաց մեծապանծ.

«Ա՛յ հեգնասէր Պողիւթերսեանդ, այ դու անմիտ մեծաբան,
Արդ ուշիմ լե՛ր, և հրզօրաց դու աստուածոց լե՛ր հաւան.
Ես զայս հիւրոյթ քեզ փոխանակ այն կճղակին տամ զարդիս,
Զոր դու եռուր մեծն Ոդիւսեայ որ մուրանայր 'ի յարկիս».
Հեգնեաց այսպէս քաջն անդէորդ. սակայն Ոդիս մօտ հասեալ
Զնգեղայոս եհար խոցեաց կշռեալ ըզ տէգ իւր հրափայլ.
Տելեմաքոս ձգեալ նիզակ զԼիոկրիդոս զԵնորեան
Հարեալ խոցէր և թափ ընդ մէջ անցուցանէր յորովայն.
Անկաւ յորսայս, և ընդ գետին սաստիկ ըզգլուխն իւր եհար.
Եբարձ յայնժամ մեծն Ամենաս ըզմահացուն զիւր զասպար.
Ըզքէնն ըզզարդ իւր զայն ահեղն առ ցոլացոյց 'ի բարձանց
Եւ ափշութեամբ արկ արհաւիրս շամբշեալ դասուն հոմանեաց:
Ընդոստուցեալք 'ի վեր վազեն և խուճապին 'ի յարկին,
Ճչգրիտ որպէս ջոկք անդէոց ջոլորեալց 'ի դաշտին,

Յորժամ վայրագ բոռք և գոռեղք խայ-
թահարեալ ՃԵՆՃԵՐԱՆ
Ի յեղանակն ամարայնոյն, յորժամ ա-
ւուրքն են երկայն.
Զոր օրինակ և յաղթ անգեղք լիամա-
գիլք կորակառուց
Թափ սրաթևեալք առ 'ի լերանց շեշտ
խոյանան 'ի թըռչունս,
Սոքա յայնժամ 'ի դող հարեալք 'ի
յամպս 'ի վեր խուճապին,
Նոքա ըզկնիկ հետամըտեալք և շեշտակի
սաւառնին,
Ձիք ապաւէն, ջիք և փախուստ. թըռչ-
նոց ածեն կոտորած,
Եւ 'ի զընին որսոյն նոցա կան և խնդան
ամբք դաշտաց,
Ըզնոյն Ոդիւս և համահարզք թափ յար-
ձակեալ 'ի յարկին,
Յայսկոյս յայնկոյս տիգահարեալ մահ
հոմանեաց ածէին.
Մնջիւնք և գոյժք անդ դառնաղէտք, անդ
և ջարդոցք կառափանց,
Եւ թանային յատակք սրահին յապա-
ժուժիցն 'ի յարեանց:
Ճաչարեաց անդ զՈդիսեայ ոտիւք
փարեր Լիովդէս,
Կայր սրտառուչ մեծապաղատ ձայն ար-
ձակեաց դառնապէս.

«Քեզ կամ, Ոդիս, յողոք անկեալ. յիս դու ո՛վ տէր, ինձ գուրթ ա՛ծ.
Ձի՛ք իմ ինչ մասն, ո՛չ 'ի բանի, և ո՛չ 'ի գործ ինչ կանանց.
Նա՛ ես և զայրս 'ի հոմանեաց ըզխեռաց գեալս սանձէի,
Նոքա 'նդվզեալք և պագչոտեալք ոչ անսացին իմ ձայնի.
Անկան այնպէս ասա դիտապաստ ըզվրէժ լուծին ըզչարեաց.
Արդ ընդ նոսա պատուհասիմ և ես այր քուրմ այր անյանց.
Սա այս է դարձ փոխարինի, և սոյս պարգև լաւութեան».
Խոժոռ ակամբ յայնժամ Ոդիս զայս ետ անդէն պատասխան:
«Ըզքեզ այր դու, քուրմ 'ի դոսա ինքնին ահա դաւանիս.
Ըզքո զաղօթս եդիր ուրեմն 'ի խոչ ընդ ոտն իմ դարձիս.
Զի դու մտեալ առ ամուսինն և արասցես քեզ զաւակ,
Արդ և դու ինքն 'ի դառն օրհաս անկցիս աստէն նըշաւակ»:
Ասաց Ոդիս, և յաղթ ձեռամբն առ 'ի գեանոյն ըզսուսերը,
Զոր 'ի շտապել օրահասին Ագեղայոս արկեալ էր.

Առ և մրխեաց և շեշտ կրտրեաց ըզպա-
ռանոց ըզքրմին,
Եւ դեռ խօսուն նորա կառափրն խառ-
նեցաւ ընդ փոշին։
Այլ անձնապուր եղև յայնժամ Տեր-
պիոսեան այրն երգակ.
Այն Փեմիոսն, որ հոմանեաց բռնադա-
տեալ տայր նուագ.
Եւ մօտ ջոքաւ առ դռնակին, էր զելեքը-
նարն 'ի ձեռին.
Անդ պաշտպանեալ կայր և ծրփայր նա
տարակոյս 'ի կրկին.
Արդեօք 'ի դուրս ելեալ յայնժամ և
և նատիցի՞ 'ի պաշտման,
Ուր կայր Երկեանն 84 Արամազդայ մե-
ծին բագին և սեղան,
Ամ Այերտէս և մեծն Ոդիս ըզթամբս
եզանց այրէին,
Եթէ յողոքք անկեալ առ ծունկըս փա-
րեսցի դիւցազին.
Ի խորհրդոցն իւր կրկնակի նա ըզվեր-
ջինն առ ընտրեաց,
Զ Ոդիսևսին փարել ծնգովք և կալ յո-
ղոք մաղթանաց.
Էր 'ի վայրին տաշտ մեծ և գահ պալա-
րակապ արծաթի,
Առ ըզքընարն իւր ըզդոգեալ և եդ զայն
անդ 'ի միջի.

Ինքըն դիմեաց և փարեցաւ զՈդիսևսին ըզծնգօք,
Ձայն արձակեալ և պաղատէր. « Քեզ, Ոդիսէս, կամ յողոք.
Յիս դու ո՛վ տէր. բա՛ ստրջացիս եթէ հարցես զայր երգակ,
Որ ես մարդկան և աստուածոց երգ հարկանեմ և նուագ.
Եմ ինքնուսոյց ես երաժիշտ. և 'ի բընէ ինքն աստուած
Յիս տնկակից առ սերմանեաց աղգ աղգ երգոց նուագաց.
Նուագեցից ես ցնծալից և քեզ իբրև աստուծոյ.
Արդ խնդրիցես և յիմ արիւն առնուլ շաղել ըզսուր քո.
Թո՛ղ, ինձ որդին քո սիրասուն վըկայեսցէ Տելեմաք,
Զի՞արդ ես աստ, ես անկարօտս քարշեալ գայի դժկամակ
Ի ՃաՀ, յընթրիս խեռ հոմանեացն երգ հարկանել քընարի.
Բազում որեար և շատ հրզօրք աստ ածէին զիս բռնի »:
Այն ինչ լուաւ Տելեմաքոս, և հօրն անդէն ձայն աղդեաց.
« Կարձեա՛ ո՛վ հայր, և մի՛ մըխեր ըզձեռն քո յայր անյանց.

Նաև 'ի կեանս մեք ինայեացուք մեծ
քարոզին Մեդոնի,
Որ ինձ դարման 'ի մանկութեանս նա
ցանգ տարաւ 'ի յարկի.
Թէ ոչ յանկարծ նա Փիլիտեայ և կամ
յԵմեայ ձեռս անկցի,
Կամ թէ ինքնին քեզ 'ի գոռալդ յանկար-
ծակի դիպեացի »։
Զայս նա ասաց, և զայն անդուստ լուաւ
Մեդոն այրն արգոյ,
Որ առ ահին կայր պառակեալ անդ 'ի
ներքոյ աթոռոյ.
Շուրջ պարուրեալ էր նա զանձամբ այն
ինչ քերթեալ մորթ զեզին,
Ածապարեաց էլ 'ի ներքուստ, էարկ ըզ-
մորթն 'ի գետին.
Դիմեաց անկաւ յայնժամ 'ի գուշս և
զՏելեմաք աղերսէր.
« Ասա եմ, ասէր, ես ոչ սիրուն. դու
արդ փրկեա զիս ոչ տէր.
Ասա հօր քում. մի ընդ սեղեխս և զիս
հարցէ դառնապէս,
Ոչք ըզ նորա կերան ըզկեանս, և գրձձե-
ցին և ըզքեզ »։
Լուաւ Ոդիս և ժպտեցաւ, և ձայն կար-
գաց առ Մեդոն.
« Քաջ լեր, Մեդոն. Տելեմաքոս քեզ
արդ ըզկեանսդ էտ 'ի ձօն։

Գիտեա՛ դու ինքն, նա և այլոց քո իսկ բերան պատմեցէ,
Քան զչար գործել բարի առնել քանի՞ արդեօք լաւ իցէ.
Եւ արդ զերծեալք դուք արտաքոյ անդ նստարո՛ւք 'ի գաւթի,
Դու Մեդոնէ, և դու 'նդ նրմա այր ե՛ բաժիշտդ անուանի.
Մինչև աստէն ես 'ի յարկիս վըճարեցից զոր պարտն է՝՝.
Նա զայս ասաց, յարեան նոքա ելին արտաքս 'ի տանէ:
Նստեալք անդէն, ահաբեկեալք վեհին Դիայ առ բագին,
Շուրջ հայէին ժամէ 'ի ժամ սպասեալք Իւրեանց օրհասին:
Բայց Ոդիւսէս 'ի վեր 'ի վայր զննէր ըզ յարկ իւր ողջոյն,
Կացցէ՞ արդեօք ոք կենդանի և անձնապուր 'ի մահուն.
Սեղեիքն ողջոյն 'ի յապաւառ և յապաժոյժ 'ի յարեանց
Անկեալ կային անդ բաղմահոյլ իբրև վըտառս ըղձկանց,
Զոր արք ձկնորսք 'ի յափնաձիրն 'ի կապուտակ 'ի ծովէն
Ի ցանցս, յուռկանըս ծակոտկէնս պարփակելով և քարշեն,

Լուղակքն անձուկ բերեալ ջրոյն կան
յաւազուան անդ թշուառ,
Մինչև զնոսա տապն արևուն ողջ ծնգեաց
ցէ շնչասպառ.
Այնպէս անկեալ կայր խիտ առ խիտ մեծ
շեղջակոյտ հոմանեաց.
Բայց Ոդիսէս բարբառ յայնժամ առ Տե-
լեմաք արձակեաց։
«Ե՛ռթ դու զարդիս, կոչեա՛ առիս զԵ-
ւրիկլեան ըզ դայեակ,
Բան մի ասել ունիմ նրմա. արի՛ փութա՛
Տելեմաք».
Ի ձայն ծնողին Տելեմաքոս աճապարեալ
փութապէս,
Զոքաւ բախեաց ըզդուռն յարկին, կո-
չէր արտաքս զԵւրիկլէս.
«Արի՛ դայեակ դու մեր աւսարդ և ա-
ղախնեայց դէտ 'ի տան,
Հայրն իմ ըզքեզ կոչէ, արի՛. ունի՛ ինչ
քեզ ասել բան»։
Լուաւ, անդէն յարեաւ պառաւն և ըզ-
յարկին դուրս եբաց,
Ճեպէր յընթացս, և էր նրմա Տելեմա-
քոս նախընթաց.
Եկն և եգիտ նա զՈդիսէս 'ի դիականց 'ի
միջի.
Էր շաղախեալ նա ընդ արիւն, ընդ ա-
պաժոյժ, ընդ փոշի.

Իբրև առիւծ որ գարձ առնէ կերեալ ըզ-
ցուլն 'ի դաշտին,
Եւ ծամելիքն, և լանջք, կրզակքն իւր
ողջ յարեան թաթաւին,
Դէմքն իւր ահեղ, և 'ի տեսիլն է սոսկա-
լի անողոք,
Այսպէս Ոդիս էր շաղախեալ ողջոյն
ոտիւք և ձեռօք:
Լուեա պառաւն ըզդիակոյսն և զապա-
ժոյժ զայն անբաւ,
Եսեա և զայն ըզմեծ նախճիրն, և այլ
յայլմէ ցնծացաւ.
Սանձ Ոդիսէս տայր պառաւոյն թէպէտ
և կինն ոչ ժուժայր.
"Լուռ, կին, ասէր, խնդա յոգիդ. և այլ
յայլմէ մի ցնծար.
Ոչ է արժան պերճ ճոխանալ մեզ մե-
ռելոցն 'ի վերայ.
Օրհասն իւրեանց, ոճիրն իւրեանց նը-
կուն արար ըզդոսա.
Զի ակն երբէք դոքա հիւրոյն ոչ ածէին
յաշխարհի,
Ոչ բարւոյ առն ևոչ չարի. և արդ կո-
րեան յիրաւի.
Բայց դու աղէ տուր ինձ ասասէն ճշգրիտ
համար ըզկանանց,
Ոյք յանցաւորք են 'ի դոսա, ոյք անա-
րատք և անյանց":

Կրկնեաց անդէն Եւրիկլիա. " Արդ
ճշգրտեմ քեզ, որդեակ.
Յիսուն թուով 'ի մեր յարկին են արդ
կանայք աղախնեայք.
Զգոսա ողջոյն ես վարժեցի, գործ վաս-
տակել 'ի յոստայն,
Նստել սանտրել նաև զասուիս, կալ և
յայլ գործ պաշտաման.
Ցովքք 'ի նոսա երկոտասանք լիրբք լրկնե-
ցան գլխովին,
Եւ զիս ինքնին և ըզդշխոյն յընչաց իւ-
րեանց քերեցին:
Տելեմաքոս այն ինչ զարգուն էր 'ի յար-
բունս իւր հասեալ,
Եւ թոյլ նրմա ոչ տայր տիկին այնց ա-
զախնեայց տիրանալ:
Բայց ես արագ ելից զարգիս ազդել 'ի
յարկ դշխոյին,
Ում անոյշ քուն ոմն յաստուածոց հե-
զեալ է արդ 'ի մահճին":
" Թող ննջեացէ նա տակաւին, նրմա Ո-
դիս ձայն կրկնեաց.
Եւ դու արի, ասա՛ գալ ասա յանցաւո-
ւրացդ այդ կանանց":
Ոքաւ պառաւն, և տայր կանանցն
յառնել երթալ փութապէս.
Իսկ ընդ հովուացն ըզՏելեմաք կարդաց
յայնժամ Ոդիսէս.

« Ըզդիակունս, ասէր նոցա, դուք տո՛ւք բառնալ կանանուոյն.
Հրամայեցէք ողջ և ըզկահսին յարդարել մաքրագոյն.
Առցեն ըզջուր, 'ի նոյն և սպունգըս ծակոտկէնս 'ի ձեռին,
Եւ սրբեսցեն նոքա զսեղանս և ըզգահոյս տաճարին.
Այսպէս համբուն մաքրեալ ըզտունն, դուք ըզկանայսն 'ի գաւթի
Քարշեալ տարա՛յք 'ի վայրն ուր կայ ցանգն և դարան բոլորշի.
Անդ ըզնոսա երկայն սրրովք խոցոտեցէք դառնագին,
Մինչև ողջոյն առ 'ի մարմնոցն ոգիք նոցա քաղեսցին.
Այնպէս զԱստղիկն մոռացին այդ պագշոտեալքդ յաւէժ,
Որով տարփմամբ ընդ հոմանիս աստ խառնէին գաղտապէս »:
Այն ինչ ասաց. և կանանին անդէն հասին միաբան
Կողկողելով յորդ արտասուս հեղուն յաչաց և ձրչան.
Միմեամբք միմեանց լեալ զօրավիգն ըզդիակունս բառնային,
Բարձեալ եդին անդ 'ի բակի 'ի ցանգապատն 'ի գաւթին:

Կայր 'ի վերայ ահեղակերպ հրամանա-
տար Ոդիսէս,
Եւ կանանին յանզերծ 'ի հարկ վաստա-
կէին դառնապէս.
Բերին ըզքուր և ծակոտկէն սպունգս ա-
ռեալ մաքրեցին
Ողջ ըզսեղանս և ըզդահոյս ըզգեղեցիկս
տաճարին:
Տելեմաքոս, զնոյն և հովիւքն ըզյարկ
պայծառն աւելին,
Եւ կանանին զաղբիւսն առեալ բառնան
տանին 'ի յարկէն.
Այնպէս ողջոյն զտունն յարդարեալ, նո-
քա զկանայսն 'ի գաւթի
Քարշեալ տարան 'ի վայրն ուր կայր
ցանգն և դարան բոլորշի.
Պնդեն նեղեն զնոսա յանձուկն, ուր և
վայր չէր փախըստեան.
Ապա ելաց Տելեմաքոս, ձայն զայս հո-
վուաց ետ յայնժամ.
"Անշուշտ այսօր ես մահ շըքով չածեմ
յօրհաս կանանուցն,
Որ անարգուք կացին ըզբեռաք արդոյ իմ
մօրս ւ իմ գլխոյն.
Նա և 'ի սէր այդ ըզբենկքդ ընդ հոմա-
նեաց խառնեցան":
Ասաց այսպէս, և զսեամբ պատեալն էառ
նաւուն ըզպարան.

Առ և ձգեաց և պատատեաց շուրջ ըզ-
դարանն 'ի բարձանց,
Զի մի զգեստինքն կոխեսցեն ոտք յանցա-
ւոր այնց կանանց.
Զոր օրինակ մուտ արարեալ 'ի ցանգն 'ի
թաւ անտառին
Կամ աղաւնիք և կամ սորդիկք հոլա-
թևեանք ըմբռնին,
Եւ թըրթռեալք 'ի ճողոպրիլ անզերծ
շաղին 'ի վարմէն,
Եւ անդ մահիճ մահահամբոյր անձանց
իւրեանց գըտանեն,
Այսպէս յայնժամ գըլուխք նոցա կարդ
ըստ կարգէ դասեցան,
Եւ պարանոցք անցնիւր նոցա շաղեալ
կային 'ի խեղդան.
Հէգ կանանին առեալք յանձինս մահ
դառնութեան յօրհասի,
Վայրիկ մի զոտս տատանէին, չէին ապա
'ի միջի:
Ըզմելանթոան յետ այնորիկ ածեալ
'ի բակն 'ի գաւթին,
Զականչս նորա և ըզբընգուանս 'ի սուր
յերկաթ կտրեցին.
Կորզեալ յառնէն և զամօթոյն շանց
արկանել առ 'ի գէշ,
Ըզձեռան և զոտս կոճոպեցին, սրտնեալք
յոգիս սոսկապէս:

Ապա ըզձեռս լուացեալք և զոտս հա-
սեալ յամբոկ 'ի գործոյն,
Այնպէս մաքրեալք, առ մեծն Ոդիս
դարձ արարեալ գան 'ի տուն։
Զայն Եւրիկլեայ տայր Ոդիսէս. « Ինձ
արդ ծրծումբ ած, դայեակ,
Դեղթափ բնաւին է դա ժահից. ած ինձ
'ի նոյն և կըրակ.
Նովաւ ըզտուն ես ծրխեցից. իսկ դու
արդ Էրթ առ դշխոյն,
Ազդ արասջիր, նա ասա դայցէ ընդ նա-
ժըշտաց իւր ողջոյն »։
« Քաջ են, կրկնեաց Եւրիկլիա, քաջ են
քո բանք, որդեակ իմ.
Այլ պատմուճանս ես նախ ածից արդ 'ի
ծածկոյթ քում անձին.
Մի դու գրծուած կացցես այդպէս զան-
ձամբ արկեալ ցնցոտի,
Զի տարադէպ է կերպարանդ յորժամ
'ի քում կաս յարկի »։
« Բայց դու ած ինձ նախ զասացեալս.
կրկնեաց անդէն Ոդիսէս.
Անսաց պառաւն, յարեաւ եբեր հուր և
ծրծումբ փուրթապէս.
Առեալ Ոդիս ծուխ ետ դաւթին, ծուխ
և սրահին ետ և տան.
Իսկ էլ պառաւն և հրաւիրակ տայր կա-
նանցոյն գալըստեան.

Ջահ 'ի ձեռին դասք կանանուոյն ելին ելկին 'ի յարկէն,
Շուրջանակի հեղան կացին և զՈդիւսէս ողջունեն.
Խնդամբոեալք գիրկս ածէին 'ի սիրտ բերկրեալ և յանդոյր,
Կալան զաջոյն և տարփանօք գլխոյն, ուսոց, տան համբոյր.
Ետես Ոդիս ըզկանանին և քաջ ծանեաւ մի առ մի,
Գորովեցաւ 'ի գուրթ սրտին և յարտասուս հատանի:

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԳ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Եւրիկլէ պառաւ դայեակն Ոդիսեայ վազէ աւետաբեր լինել Պենեղոպէայ՝ դալստեան փեսային և կոտորածի հոմանեացն։ Ա՛յլ յայլմէ Պենեղոպէ, խելայեղեալ կարծէ զպառաւն։ Ի վերայ այսր՝ ի՛ջանէ 'ի վերնայարկէն. կայ 'ի բացեայ յՈդիսեայ. չկամի ճանաչել. սրտմոլի Տելեմաք ընդ մայրն։ Ոդիս տօն զգնծութեան կաքաւուց հրամայէ 'ի տանն, իբրու վասն նորոգ հարսանեաց դշխոյին 'ի լուր դրացեացն, զի առ ժամն զանխուլ կացցէ բան կոտորածին։ Ապա մտեալ 'ի բաղանիս, և յառաջին կերպարան իւր փոխակերպեալ յԱթենասայ, միւսանգամ մօտի առ Պենեղոպէ. որ և ոչ յայնժամ կամի ճանաչել զայրն։ Ապա հուսկ ուրեմն լուեալ յՈդիսեայ զճառ պատմութեան ամուսնական մահճին՝ զոր ամուսնացն միայն էր գիտել, 'ի բաց դնէ զամենայն խէթ և գրկախառնի։ Աթենաս յերկարաձգէ զգիշերն զայն։ Զրուցատրութիւնք Ոդիսեայ և Պենեղոպէայ։ Ընդ առաւօտն յարուցեալ գընայ Ոդիս ընդ որդւոյն առ հայրն իւր Լայերտէս ծերունին յագարակն՝ ամրաձաձուկք յԱթենասայ։

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԳ.

Յաջնեամ պառաւքն խայտալով եւ 'ի սենեակն 'ի վերին,
Աւետաբեր լինել տիկնոջքն գալստեան փեսային.
Առ մեծ խնդին արագ արագ ծունկք շարժէին պառաւոյն,
Վազեաց անդէն և մօտ կացեալ ձայն արձակեաց առ դշխոյն.
« Զարթիր, զարթիր, Պենելոպէ, էկ սիրուն դուստր, ծն զարթիր.
Զի դու քոյին տեսցես աչօք, ում և անդուլ ցանկայիր.

Եկին Ոդիսէս, դարձ արարեալ Թէպէտ
և յոյժ անապան,
Ըզհոմանիսն էարկ տապաստ ըզխրոխ-
վիչս իւրում տան.
Ոբք ըզնորա կերան ըզկեանս, նաև զոր-
դին դրձձեցին».
Այն ինչ լուաւ, և ձայն անդէն կրկնեաց
դշխոյն քաջուշիմ.
«Ո՞ղիս, մոլիս, դու ո՛վ դայեակ ան-
շուշտ մոլիս առ 'ի դից,
Նոքա է զի և իմասանոց տան խելս իբրև
մորոսից,
Եւ է դարձեալ զի և զանմիտս իբր իմաս-
տունս առադրեն,
Որպէս դու ցարդ ուշիմ էիր, և արդ բար-
ձին զուշդ 'ի քէն..
Հիմ դու այդպէս զիս խաղ առնես, որ
ցաւագին եմ համբուն,
Եւ առասպելս ինձ կըցկցեալ խոչընդոտն
ես իմ քընոյն.
Զարդիս աչացս անդորրաւէտ քունն էր
տիրեալ անուշակ,
Որ Ոդիսեայ յետ չուելոյն չեմ ես առեալ
զայս Ճաշակ,
Յորժամ դիւցազն իմ չու արար անդ 'ի
յանյուշն Եղիոն.
Աղէ, դայեակ, երթ էջ 'ի տուն, դարձիր
'ի քոյ 'ի պաշտոն.

Եթէ այլ ոք եկեալ զարդիս 'ի նաժշտաց
որ առ իս,
Եւ 'ի քընոյս զիս զարթուցեալ բերէր ինձ
զայդ աւետիս,
Անշուշտ ըզնա յետս 'ի յարկէս արձա-
կէի դառնապէս.
Սակայն 'ի քոյ 'ի յալևոյթդ ես ակն ա-
ծեմ մեծապէս »:
Կայը և պնդէր պառաւ դայեակն. « Ըզ-
քեզ, ինձ քաւ, խաղ առնել.
Այո՛ 'ի տուն եկն Ոդիսէս, և չէ բանն
իմ առասպել:
Լո՛ւր արդ, գուսան իմ, դա այդ մեր
հիւրն և այդ մուրիկ նըշաւակ
Դա ինքնին է տէրն Ոդիւսէս, և զայն
գիտէր Տելեմաք.
Սակայն ըզհօրն իւրոյ զխորհուրդ ծած-
կեաց իբրև խորագիտաց,
Զի անարգել ըղվրէժն առցեն ըզ գոռո-
զից հոմանեաց »:
Ցնծայր, խայտայր Պենեղոպէ, և յա-
ղուցեալ յանկողնոյն
Եղ փարեցաւ ըզդայեկաւն և արտա-
սուէր յորդագոյն.
Զայն արձակեաց. « Ինձ, ո՛վ դայեակ,
դու արդ անսուտ ասա՛ բան,
Թէ արդարև եկն Ոդիսէս, բա՞ռնէ զնա՞ն
նա միայն

Ի մէջ խմբից խուռն հոմանեաց եղեալ
այնչափ նահատակ
Ինքնին ողջոյն արկ գիտապատ զայնչափ
խօլացն երամակ »։
Պատասխանի կրկնեաց դայեակն. « Ոչ
գիտացի, ոչ տեսի,
Ըզձայն միայն և ըզմընչիւն ես զանկելոց
լսէի.
Ահաբեկեալք մեք նստէաք՝ի խորս՝ի մեր
՝ի յարկին,
Եւ քաջակուռ դրանդիք դըրանց մեզ անդ
ողջոյն փակ կային.
Առ իս նախ հայրն ըզՏելեմաք զորդին՝ի
կոչ առաքեաց.
Զոքայ գրսի ես զՈդիսէս, կայր նա՝ի
մէջ դիականց.
Շուրջ ըզնովաւ ընդ ապաժոյժ անդ հո-
մանիքն հասարակ
Կային տապատ և ընչասպառք և շեղջա-
շեղք ընդ յատակ.
Բաբէ, քեզ անդ էր տեսանել իբրև ա-
ռիւծ զՈդիսէս
Շաղեալ յարիւն և ընդ շարաւ, և ցին-
ծայիր հրաշապէս.
Արդ կան նոքա կուտեալ՝ի բակն. և նա
հուր մեծ բորբոքեալ
Ծրիսէ ըզտունն. և զիս յղեաց քեզ հրա-
ւիրակ առ՝ի գալ։

Արի և Ա՛կ, և երկոցուն ձեր սիրտ՝ի սպառ բերկրեսցի,
Որ ընդերկար բազմաչարչար դուք տանջեցայք յաշխարհի.
Անձուկն ահա ձեր բազմամեայն այսօր լըցաւ սպառարուն.
Եգիտ ըզքեզ, եգիտ զորդին և ինք դարձաւ ողջ՝ի տուն.
Նաև ըզվրէժ առ ըզչարաց ըզհոմանեացն՝ի յարկին »:
Լուաւ ողջոյն, և անդրադարձ զայս տայր դշխոյն քաջուշիմ.
«Ա՛ի, ո՛վ դայեակ, մի դու այդչափ արդ ցնծալից Ճոխանար.
Այո՛ անշուշտ գալուստ դորա էր մեզ ընաւից բերկրարար,
Եւ ինձ յաւէտ և մեծապէս նաև որդւոյս զոր ծընաք,
Բայց քո այդ բանդ, զոր աւետես, չէ անպատիր, ո՛վ դայեակ:
Գիտեա՛ դու քաջ, ոմն յանմահից զայդ հոմանիս չարաբաստ,
Ի մեծ ցասումն բրդեցաւ, և արկ ողջոյն դիտապատ.
Զի ակն հիւրոց դոքա երբէք ոչ ածէին յաշխարհի,
Ոչ չարի առն և ոչ բարւոյ, և արդ կորեան յիրաւի.

Բայց Ոդիսեայ էնք յոյս դարձին, էնք և նորա յոյս կենաց »։

Այն ինչ էին բանքն 'ի բերան, ցասեաւ պառաւն և կարձեաց։

« Իսկ ո՞ր բան, դուստր, արդ 'ի ցանգէ քոց ատամանցդ էլ սրացաւ,

Ո՞չ աւադիկ փեսայդ քո ողջ կայ ընդ իւրով մարդակաւ։

Դու զնա անդարձ նաև հատեալ 'ի յա-րևէն ինձ գուժես,

Սիրտ անհաւատ գրաւեալ ուրեմն ունի ըզքեզ սնդապէս։

Բայց ես այժմիկ տաց և զբսպին քեզ 'ի նշան 'ի յայտնի,

Զոր անդ երբեմն էհար 'ի նա սպիտակ ժանեղ կինձ վայրի։

Տեսի զբսպին ես 'ի լուանալն և կամէի քեզ յայտնել,

Բայց խորագէտն իմ ծամելեացս սանձ էդ զլուր ապին, և արգել։

Օ՜ն արդ արի, քեզ աւադիկ ես գրա-ւական տամ զանձն իմ։

Տուր ինձ յօրհաս մահ դառնութեան է-թէ քեզ սուտ բարբառիմ »։

Կրկնեաց գշխոյն 'ի հիացման։ « Ո՞ՐՔ ծածուկս աստուածոց

Ո՞ 'ի քընին առցէ երբէք, թէպէտ և մարդ քաջափորձ։

Ա՛ղէ ուրեմն առ իմ որդին արդ ի՞նչանեմ
էս ահա,
Ըզմահ տեսից ըզհոմանեացն և որ ըզմահն
ածն նոցա »։
Բ՚սաց և էջ վերնատանէն, սակայն ծը-
փայր 'ի յոգին.
Արդեօք կացեալ ինքն 'ի բացուստ ինչ մի
հարցցէ ցամուսինն,
Եթէ մնտեալ զանչն ունիցի, համբոյր սա-
ցէ և գլխոյն.
Յայսկոյս յայնկոյս ծրփայր 'ի միտս, մին-
չև 'ի վայրն հաս դշխոյն։
Անց նա ընդ սեամն ընդ մարմարեայ, և
հանդիպոյ Ոդիսին
Առ ըզբազմոցն 'ի միւս անդ կողմն նստաւ
առ լոյս խարուկին.
Նստէր Ոդիս առ մեծի սեանն, աչքն իւր
յերկիր, և մընայր
Զինչ ինչ արդեօք վերհ ամուսինն տե-
սեալ ըզնա տայ բարբառ.
Բայց Պենելոպ լուռ հարուստ ժամ և
անբարբառ կաց այնպէս,
Զի յափշտութիւն միտքն և խորհուրդքն
էին դրաւեալ մեծապէս.
Մերթ նա անքթիթ զաչս իւր յառեալ
գոգցես զՈդիս ճանաչէր,
Մերթ և սարտնոյր յակն իւր արկեալ
ըզյընցոտին զոր ունէր.

Ոչ հանդուրժեաց Տելեմաքոս, և ձայն սաստիւ ետ անդէն.

«Բաւէ, ով մայր չուառական. լցէ՛ քո սիրտ քարեղէն.

Հիմ՚ի հօրէս կաս մեկուսի. զի՞ դու չերթաս առընթեր.

Զի՞ ոչ նստեալ և հարցանես իբրև ըզկին անվեհեր.

Իսկ ո՞ այնչափ կին ապառուամ, որ սարտնուցու՛ի յառնէ,

Որ քանամեայ սարաշխարհիկ և դարձ ապա արասցէ

Բազմաչարչար ողջամբ՚ի տունն և առկին իւր սիրասուն.

Բայց արդ քո սիրտն սալացաւ և քան ըզվէմ կարծրագոյն»։

Յոգւոց Եհան Պենեղոպէ. «Ես յափշտակութիւն, որդեակ իմ,

Ես յափշտակութիւն կրթեալ եմ արդ, և խօսել ինչ չըմարթիմ.

Հարցումն առնել չեմ բաւական և ոչ յերեսն ակնարկել,

Մինչև Ճշգրիտ ես հաւաստեաք ոչ Ճանաչեմ անարգել.

Թէ արդարև դա Ոդիսն է, և՚ի տունն իւր եկն այժմիկ,

Բա՛ հեշտաբար ասա այր զընկեր արդ ծանիցուք մեք քաջիկ.

Գոն մեզ նշանք գաղտնածածուկք, զոր
և մարդիկ ոչ գիտեն »։
Նա զայս ասաց և Ոդիւսէս անդ ժպտե-
ցաւ 'ի բանէն։
« Թոյլ տուր մեր քում, Տելեմաքէ, դար-
ձաւ խօսէր ընդ որդւոյն։
Թոյլ տուր մեր քում, փորձել զիս արդ,
և ծանիցէ վաղագոյն։
Անշուշտ, քանզի ձունձ բրդդզեալ իմ
արդ զանձամբ արկեալ է,
Վասն այն զինև նա զանց առնէ, և զիս
Ոդիս ոչ կարծէ։
Բայց Թողցուք զայդ։ իսկ քաջապէս
մեզ խորհրդոյ արդ պէտք են։
Աղէ թէ ոք զայր մի միայն յոգի հարցէ
յոստանէն,
Թէպէտ և զայր ոք սինլրքոր, զայր անա-
ւադ, անսատար,
Ո՞չ 'ի փախուստ Ճեպի արդեօք ըզտուն
Թողեալ և զաշխարհ։
Իսկ մեք քաջաց և աւագաց մարդախո-
շոշք եմք զարդիս,
Սիւնք Իթակայ էին նոքա։ դու, արդ ա-
սա, զինչ խորհիս »։
Ուշիմն յայնժամ Տելեմաքոս զայս ան-
դրադարձ եառ ձայնի։
« Բա՛ քեզ անշուշտ, հայր իմ սիրուն, քեզ
զայդ խորհել անկանի։

Խմաստայեղց ընդ տիեզերս զքոյդ համ-
բաւեն ըզհանճար,
Եւ յերկրածնաց և ոչ մի ոք ընդ քեզ մըտ-
ցէ 'ի պայքար.
Դու ինքն ասա. և մեք ըզհետ փոյթ ըն-
թասցուք քոց շաւղաց,
Եւ ըստ ձեռին բաւականին էս արու-
թեամբ քաջացայց "։
«Խորհուրդ քաջիկ թուի ինձ այս, էտ
Ոդիսէս պատասխան.
Դուք արդ լուացեալք առէք ըզզարդ,
արկէք ըզձեօք պատմուճան։
Թոյղ և կանայք 'ի տաճարիս հանդեր-
ձաւորք պճնեսցին,
Եւ ասուածեան մեր երաժիշտն էլցէ
քընարն 'ի ձեռին,
Հարցէ նուագ և կայթահարք պար պա-
րեսցեն 'ի յարկիս,
Եւ արտաքոյ կացեալքն յարկին զայն
կարծեսցեն հարսանիս,
Եթէ լըսողք, թէ անցաւորք, և թէ որ
մեզ են դրացիք,
Զի մի այժմն ինչ գիտասցեն եթէ կո-
րեան հոմանիք.
Մի կանխագոյն այս կոտորած հուչակ
հարցի ընդ քաղաք,
Մինչև ապա մեք տնկախիան էլցուք 'ի
մերն յագարակ.

Անդ մեք քաջիկ առցուք խորհուրդ զոր
մեզ տացէ Ողիմպեանն ».
Լուան նոքա, և հրամանին 'ի գործն ան-
դէն փութացան։
Յարեան լուացան, արկին ըզձորձ, զար-
դարեցան և կանայք,
Եւ 'ի ձեռին առ զիլ ըզքնարն ասառուա-
ծայինն այն երգակ.
Խանդ 'ի նոսա վառ բորբոքեաց 'ի գեղ-
գեղել քընարին
Ըզգերապանծ պարերգութեանն և զա-
նուշակ նուագին.
Յարկ լայնատարը հնչէր գանգիւն 'ի
կայթս ոսկց 'ի յարանց,
Նոյն և 'ի պերճ քաջագօտի գեղապարի-
ցն կանանց։
Որ արտաքոյ լըսէր ըզձայնն, զայս ինչ ա-
սէր առանձին.
« Եւ արդ անշուշտ ած ոք 'ի կին ըզտար-
փացեալ թագուհին.
Այ հէգ, ջուառ. որ 'ի գալուստ իւր
փեսային ոչ ժուժեաց,
Ում կուսութեամբն իւր հարանացաւ,
և զտուն նորա ոչ պահեաց ».
Զայսօրինակ բարբառէին որ արտաքոյ
անդ կային,
Ոչ գիտացեալ զինչ ինչ 'ի նեղքս գործք
գործեցան 'ի յարկին։

Բայց զՈդիսէս Եւրինոմէն կինը անօ-
րէն օծ լուաց.
Եւ ըզչքնաղ ըզպատմուճանն արկեալ
զնովաւ, զարդարեաց.
Իսկ Ամենաս գեղ էտ գլխոյն, և քաջ-
առոյգ ըզդիտակ,
Եւ գանդրահերքն հեղան զնովաւ վարսք
յակընթի հանգունակ.
Որպէս զոսկին ընդ արծաթոյ յորժամ
յեռուս այր ճարտար,
Զոր Հեփեստէս և Ամենաս եդին ներ-
հուն գործարար,
Նոյն շուք և շնորհն մեծն Ոդիւսէայ
արկաւ ուսոցն և գլխոյն,
Եւ ինքն էլեալ 'ի բաղանեաց դից անմա-
հից էր հանգոյն.
Ձոքաւ անդրէն և առ բազմոց 'ի հանդի-
պոյ դշխոյին,
Ձայն արձակեաց. «Բա՜խէ սիրոյն, զոր
դիւքն 'ի քեզ հաստեցին.
Սիրտ քո 'ի քեզ սիրտ անվրկանդ, այլոց
կանանց չէս նման.
Ա՛ղէ ո՞ր այլ կին ապառուամ ո՛չ գրդեսցէ
զիւր փեսայն,
Որ քսանամեայ տանջեալ թափառ,
դարձցի ապա յիւր մարդակ.
Շա՜տ է արդ շատ. բայց ինձ զարդիս ա՛րկ
անկողին, ո՛վ դայեակ.

Թո՛ղ վայրիկ մի ընկողմանեալ անդորրացայց յանկողնի.
Քանզի անշուշտ սիրտ այդ կընոջդ սիրտ է համբուն երկաթի՝՝:
՝՝Լո՛ւր ինձ, ո՛վ քաջ, ձայն քաջուշիմ Պենելոպէն եւ անդէն.
Զեմ ինչ գոռոզ, և ոչ ոանհար եղեալ ըզքեզ անարգեմ.
Եւ ոչ դարձեալ յոյժ հրաշանամ, որպէս ըզքեզ քաջ ծանեայ
Երբ նաւագնաց դու ամբարձեալ չու արարեր յԻթակայ.
Այլ՞ն դայեակ, հանգո՛ ըզնա այլ մի՛ 'ի յիմ սրսկական.
Նըմա ըզթանձրն ա՛րկ զանկողին զոր ինք գործեաց ասա՛ 'ի տան.
Դըմա հանգիստ տո՛ւր արտաքոյ, և ա՛րկ վերայ յանկողնոյն
Մորթըս քնքուշս նաև խըլայս, և պերճ՝ վերմակս ա՛րկ 'ի նոյն՝՝.
Ասաց այսպէս տիկինն ուշիմ, քանզի փորձէր զՈդիսէս.
Այլ նա անդէն կրկնեաց առ կինն, 'ւ էր զայրացեալ մեծապէս.
՝՝Ո՛վ, դառնապէս յոյժ ապառումըս խոսեցար դու ո՛վ կին.
Իսկ ինձ ո՞ ոք ուրեք յայլ վայր էարկ երբէք զանկողին.

Զեռակերտ է այդ գրժնդակ նաև մարդոյ Ճարտարի,
Միայն ստուած տեղափոխէ զայն հեշտաբար, թէ կամի.
Սակայն մարդ ոք, թէպէտ և քաջ, ոչ շարժեսցէ զայն հեշտին,
Քանզի նշան մեծ գործեցաւ յայն քաջ արուեստ յանկողին.
Եւ միայնակ զայն գործեցի 'ի կուռ փայտէ ձիթենւոյն,
Որ էր բուսեալ 'ի մեր բակին տունկ քաջ առոյգ սաղարթուն.
Մեծ էր և յաղթ իբրև ըզսիւն ամբարձուցէշ ամրոստեան
Եւ բոլորեալ շուրջ ըզնովաւ էր հիւանեցի սրսկապան.
Վիմաք կանգնեալ զայն քաջակուռ, և 'ի վերուստ ծածկեցի,
Նաև դրանդիս էս վայելուչս և մեծամուրս հաստեցի.
Ի գեղեցիկ զերծեալ վարսիցն ըզձիթենին զայն զարգուն
Եւ յղկեցի 'ի սուր յերկաթ ըզբունն կորեալ յարմատոյն.
Քաջիկ այնպէս յղկեալ ուղղորդ և կըշռակի գործեցի,
Նաև գչբաւ արուեստակեալ էս անկողնոյն մոյթ եդի.

Այսպէս գործեալ ես զանկողինն և հա-
սուցեալ զայն յաւարա,
Զարդարեցի յեռեալ փրղոսկը, 'ի նոյն
ոսկի և արծաթ.
Տարածեցի և մորթ գունեան փայլեալ
կարմիր 'ի յորդան,
Եւ զայս ահա ճշգրտեցի քեզ արդ ո՛վ
կին, 'ի նշան.
Այլ ոչ գիտեմ, եթէ նոյնպէս կացցէ
անդ իմն անկողին,
Եթէ այլ ոք փոխեաց այլուր մօտ կարե-
լով զձիթենին »։
Լուաւ տիկինն, ծունկքն լուծան,
նուաղեցաւ սիրտ նորա.
Ծանեաւ ողջոյն նա ըզնշանսն ճշգրտ-
եալ յՈդիսեայ.
Ողջ ցնդեցաւ 'ի յարտասուս, յարեաւ
դիմեաց անվեհեր
Եւ զՈդիսեայ պարանոցաւն շուրջ ըզբա-
զուկսն արկանէր.
Համբոյր դլխոյն եառ խանդակաթ, յո-
գւոց եհան և ասէ.
« Դու ինձ զարդիս մի ցանուցուս մի
իմ դիւցազն Ոդիսէ.
Ցանգ 'ի մարդիկ երևեցար դու հանճա-
րեղ մեծապէս.
Սակայն աստուածքն առ 'ի վերուստ քաջ
խոչընդոտն եղեն մեզ.

Ըզմեր վայելըս խանդացին, զկնոջ ընդ առն յառոյգ տիս,
Եւ յալևոյթ յենուլ ապա միմեանց գոլով յարկակից.
Եւ արդ ընդ իս մի սրտնեսցիս, և մի ցասնուր, Նազելի,
Զի յետ տեսոյն ոչ փոյթ ընդ փոյթ քեզ տարփանօք գիրկս արկի.
Քանզի 'ի ծուփըս խորհրդոց ցանգ խիթայի ես սաստիկ,
Գուցէ զիս ոք 'ի հաղըս արկցէ, զի շատք գոն արք խաբուսիկ.
Եւ ոչ ինքնին այն վարսագեղըն Հեղինէ մնանէր
Ընդ օտարին այն փեսայի առ 'ի համբոյր և 'ի սէր,
Եթէ գիտէր, զի մարտ մղեալ Հելլենացիք ահագին,
Դարձ միւսանգամ տալոց էին նըմա յերկիրն հայրենին.
Ոմն յաստուածոց դրդեաց ըզնա 'ի յայն ձեռնարկ գուժաբեր,
Ոչինչ գիտաց նախահայեաց ըզվիշտն Յունաց և ըզմեր.
Իսկ զի նշան ինձ անհրաժեշտ գու քաջայայտ եսուր արդ,
Զայն քաջալուսեստ մեր զանկողնոյն զոր ոչ գիտաց այլ ոք մարդ,

Բայց դու միայն և ես միայն, ընդ մեզ՝ և այլ ոք աղախին
Այն Ակտորիան, զոր ինձ հարսինս լինել նաժիշտ եւ հայրն իմ,
Զի սա զծածուկ մեր սրսկապանքն պահ- պանէր միշտ անքուն,
Վասն այն սիրտ իմ արդ ընկճեցաւ թէ- պէտ և սիրտ ապառուամ»:
Այս զայս ասաց, և արտասուք աչքն լցան Ոդիսին,
Լայր և գրկէր ըզծնգասէր ըզսիրասուն զամուսինն.
Որպէս ցամաքն ալէտանջեալ է որ երոյն փարելի,
Զորոց ընկաւքն Պոսիդոն կորոյս՝ի ծոնէն ամեհի,
Այն ինչ կուռ նաւն հողմակոծեալ և ընկլուզեալ՝ի կոհակ,
Եւ անձնապուր արք նրաղունք յալեաց եղեն կապուտակ,
Ի լիւղ անկեալք և թաթաղունք ողջոյն յաղին՝ի փրփուր,
Սակայն զուարթք յերկիր ցամաք անդր ելանեն մազապուր.
Նոյնպէս տիկնոջն էր Ոդիսէս յայնժամ վայելք գերունակ,
Եւ յուլանէն չառնոյր՝ի բաց զփարեալ բազուկն ըսպիտակ:

Անշուշտ անդ այդ վարդածըղին զլալիս նոցա տեսանէր,
թէ դիցուհին մեծն Ամենաս գործ նոր բասքանչ ջրհնարէր.
Նա 'ի վախճան զհասեալն յայնժամ պահ գիշերոյն երկայնեաց
Եւ զառաւօտն զոսկեգահն յՈվկիանոս առ սանձեաց.
Եկաց ջերմողըզ լուսաբեր ըծեալ ըզձիսն արագուն,
Զ Լամպոն ասեմ և ըզ Փեթոն, որ քաջ մորուկքն են այգուն:
Բայց Ոդիսէս զայս բանս յայնժամ բարբառեցաւ. «Լուր, ովկին,
Մեք մրցանաց մերոց 'ի վերջն ոչ եմք հասեալ տակաւին.
Դեռ ճիգն ամբաւ հանդերձեալ կայ ինձ ընդ առաջ ելանել,
Գործ բազմադէմ և դըժուարին զոր ես պարտիմ պըսակել.
Զոր միանգամ ինձ Տիրեսեայ անդ դուշակեաց մեծ հոգին,
Յորժամ ինքնին ես գժոխոցն ելի 'ի տունն 'ի նեըքին.
Ելի ես անդ զողջամբ ըզդարձն իմ և զիմոցն 'ի գիտել.
Բայց մեք զարդիս քուն անուշակ աղէ առցուք 'ի հանդչել»:

«Մահիճ պատրաստ, կրկնեաց տիկինն,
քեզ ցանդ կազմէ ըստ կամի,
Յորժամ աստուածք եւտուն քեզ արդ
դառնալ'ի տուն հայրենի.
Այլ ըզմրցանդ զոր յիշեցեր, այժմէն
սա՛ ինձ ողջիկ.
Անշուշտ լուայց ես զայն յապայս, և առ
'ի մէ՞ ոչ այժմիկ».
«Հիմ դու այնպէս, կին հեռախոյզ,
կրկնեաց անդէն Ոդիսէս,
Հիմ դու այժմէն լսել ողջոյն զիս արդ
այնչափ թախանձէս:
Այլ ես 'ի քէն ոչ ծածկեցից, այժմէն
ողջոյն ճառեցից,
Սակայն և ոչ քեզ հեշտալուր է պատմու-
թիւնս և ոչ ինձ:
Ինձ ընդ բազում քաղաքս մարդկան,
հրաման յայնժամ ետ հոգին,
Ուղի հորդել, թիակ մի կուռ ես ունե-
լով'ի ձեռին,
Մինչև հասից առ այն մարդիկն որ ծով
երբէք ոչ ծանեան,
Եւ կերակուր աղիւ երբէք ըզհամեմեալն
ոչ կերան,
Եւ լաստափայտս նոքա կարմրայտս եր-
բէք տեսին և ոչինչ,
Եւ ոչ քաշեալս ինչ ամրակուռս, այն որ
թևք են նաւաթռիչ.

Իսկ և նշան եցոյց ինձ նա, զոր և 'ի քէն ոչ ծածկեմ.

Եթէ յորժամ ոք անցաւոր էլանիցէ ինձ ընդդէմ,

Եւ ասասցէ, զինչ հեծանոց զայն ինձ տանել 'ի յուսն իմ,

Յայնժամ առեալ 'ի վայր յերկիր անդ վարսեցից ես ըզթին.

Նաև անդէն զոհ գեղեցիկ ես Պոսիդոն արքայի

Տաց ձօն ըզխոյ և ըզցուլ մի և ըզկինճ մի վայրենի.

Ի տուն ապա դարձ արարեալ հարիւրեզ նեան յաղեցից

Կարգ ըստ կարգէ երկնաձեմից ես բոլոր-ից անմահից.

Այնպէս զերծեալ առ 'ի ծովէն զօրհան առից զիմ անդոյր

Եւ յալեոյթ 'ի խոր հասից 'ի հեշտա-կանն և համբոյր.

Իսկ ժողովուրդք զինև բաղումք երջան-կացեալք ծաղկեսցին.

Զայս ինձ ողջոյն անդ գուշակեաց Տիրե-սիայ մեծ հոգին »։

Զայն ես յայնժամ Պենելոպէ յոյժ ցըն-ծացեալ 'ի բանէն.

« Բաբէ ուրեմն հեշտ ալեոյթ քեզ դիքն անմահք ձօնեսցեն.

Լէր դու ապա, լէր քաջայոյս, թէ զերծ
լեցիս 'ի կարեաց ».
Այր ընդ ընկեր խօսին յայնժամ նոքա 'ի
յայս 'ի զրուցաց։
Լսակ և անդուսա գողորիկ գորգովք 'ի
լոյս ջահեալ ճրագին
Եւրինոմէ և Եւրիկլէ նոցա մահիճ կազ-
մէին.
Թանձր անկողին առեալք 'ի ձեռն և
փուքթապէս արկանեն,
Եւ 'ի յարկ իւր անդորրանալ դառնայր
անդրէն Եւրիկլէն.
Եւրինոմէ ենեկապանն կալեալ ըզջահն
'ի ձեռին
Էր նախընթաց Ոդիսեւսեայ և հոյակապ
դշխոյին.
Էած 'ի պերճ 'ի սրսկապանն և միւսան-
գամ դարձ արար,
Եւ սրբուքթեան հին անկողնոյն իւրեանց
նոքա կան պատկառ։
Մինչ այս մինչ այն, և Տելեմաք և Փիլե-
տոս և Եւմէս
Դուլ արարին 'ի կայթս ոտից, դուլ և
կանանցն 'ի հանդէս։
Ընկողմանեալք մնային 'ի քուն անդ 'ի
յանլոյսն 'ի դահլիճ,
Մինչդեռ անդուսա և ամուսինքն հանդ-
էլ առնուն ըզմահիճ.

Զրուցեալք անդէն ըսփոփէին, այր պատմելով ընկերին.
Պատմէր ըզվիշտ իւր Պենելոպ, զոր ինչ կրեաց 'ի յարկին.
Ըզհոմանիսըն յուշ ածէր ըզպագշոտից զայն երամ,
Որ 'ի պատճառըս տարփանաց միշտ ցեցք եղեն պալատան,
Քանի՞ ոչխարս յոյրս 'ի հօտէն, քանի՞ արջառս յաղեցին,
Իսկ քանիսն և Թակուվաց նոքա զգինին քամեցին:
Տայր անդրադարձ և Ոդիսէս, և ինք քանի՞ Թշնամեաց
Հասոյց ըզվիշտ, և քանիսն աղէտս և ինքըն կրեաց:
Ոդիս պատմէր, Պենելոպէն զուարճանայր 'ի լսել.
Եւ չանկաւ քուն աչաց նորա մինչև 'ի սպառ 'ի պատմել:
Պատմեաց յառաջ, եթէ զիարդ նա ըզ Կիկոնս եդ նրկուն.
Ապա արանց Լոտասակեր եհաս յերկիր բարեբուն.
Զիարդ Կիկղոպն այն ամեհին, զինչ ինչ գործեաց և կրեաց,
Լուծեալ ըզվրէժ ըզհամհարզնցն, զորս նա ուտէր մարդախանձ.

Զի՞ արդ նա եկն առ Էոլոս առ Թագաւորն հիւրընկալ,
Եւ տակաւին օրն անձկացեալ դարձին իւրոյ չէր ծագեալ.
Զի միւսանգամ յափշտակեաց ըզնա մըրրիկ ահագին,
Եւ տայր 'ի ծովն 'ի ձկնաւէտ ծրփալ նըմա ցաւագին.
Եւ զի՞արդ նա, ուր բնականան Լեստրիկոնաց ազգ դաժան,
Եհաս յերկիրն և մուտ յոստանն Տելեպիլոս լայնդռնեան.
Անդ նաւախումբն ողջոյն կորեաւ, կորեան համհարզքն հասարակ,
Եւ ինքն 'ի նաւն իւր անձնապուր Հողոսրեցաւ միայնակ:
Պատմեաց նըմա նաև ըզնենդ բազմահընարն ըզԿիրկէայ.
Եւ Թէ զի՞արդ 'ի դրժոխոց 'ի տունն անլոյս չոքաւ նա,
Նաև մի առեալ բազմաքաշտի և քաջակուռ հատ զուղին
Ի հարցանել զԹեբայեցւոյն Տիրեսիայ ըզհոգին.
Ուր էտես նա ողջոյն զընկերս, և ըզմայր իւր էտես նա,
Որ զնա ծընաւ նաև սընոյց յորժամ ինքն էր երախայ:

Եւ թէ զիարդ ըզձայն լուաւ նա զիսմբէ-
լոց համբարուաց,
Եւ զիարդ նա եհաս 'ի վայրն տեղափո-
խիկն այն վիմաց.
Ոչ Իսկիւլէ, ուր Քարիւբդէ ժայռք
անդանօր սոսկալիք,
Եւ տակաւին 'ի յայն յանձուկս ոչ ապրե-
ցան նաւաստիք:
Եւ թէ զիարդ զանդեայս Արփւոյն ըն-
կերքն 'ի սանդ վարեցին,
Եւ զինչ գունակ եհար ըզնաւն շանթ
հրաբորբոք Դիոսին.
Քաջ համահարզքն առ հասարակ կո-
րեան անդէն ծովակուր,
Եւ մահագոյժ յօրահասէն նա ինքն եղև
անձնապուր:
Եւ թէ զիարդ նա յՈվգիւգեայ 'ի տար
կղզին հասանէ,
Ուր յարգելան յաւերժահարան ունէր
ըզնա Կալիփսէ.
Ի քարանձաւս իւր կերակրէր և զնա փե-
սայ իւր խնդրէր,
Եւ խոստանայր շնորհել նմա զանմահ
ըզկեանս և զանծեր.
Սակայն և ինքն 'ի հրապուրիցն յայն դից-
ուհւոյն ոչ յանկչէր,
Եւ բազմատանջ մեկնեալ անտի յօտար
երկիր հասանէր:

Էր այն երկիրն Փէակէցւոց հիւրընկալու մեծ ազգին,
Որք ժողովեալ ըզնա սիրով իբրև աստուած պատուէցին.
Տուեալ և շատ 'ի պատարագ ձորձ, և պըղինձ, և ոսկի,
Եդին 'ի նաւ և 'ի յերկիրն արձակեցին հայրենի:
Այն ինչ Ոդիս 'ի պատմութեանն ասաց ըզբան զայս վերջին,
Քուն անուշակ էառ ըզնա անդորրաւէտ 'ի մահճին:
Նմա Պալլաս կայր հովանի և պահ ունէր գիշերոյն,
Մինչև հանդէաւ անոյշքընով նա ընդ պարկեշտ ամուսնոյն.
Առեալ ապա զայգն ոսկեգահ յՈվկիանուն հոսանաց,
Ի լուսաբեր համաշխարհի նա գիւցաբար 'ի վեր ած:
Յարեաւ յայնժամ մեծն Ոդիսէս յանդորրաւէտ յանկողնոյն,
Եւ 'ի կին կողմն անդէն դարձեալ բարբառեցաւ առ դշխոյն.
„Շատ ինչ մրցանս, բա՜ւէ, ո՛վ կին, մեք մրցեցաք երկոքին,
Դու ինքն 'ի տան յարտօսր անդուլ լեալ անձկայրեաց իմ դարձին,

Իսկ զիս ինքնին մեծն Աբրամազդ նաև այլ դասք անմահից

Ի տար աշխարհըս արդելին զերկ 'ի տանէս ցաւալից.

Բայց զի զարդիս մեք զանձկացեալքն մեր գլուսաք սրսկական,

Դու ինքն իմոց ըստացուածոց ցանգ պահական լեր 'ի տան.

Ես ըզհօտն իմ բազմացուցից, զոր հոմանիք վատնեցին,

Նաև տացեն ինձ Աքայեանք մինչև ըստացին փարախք իմ:

Սակայն զարդիս 'ի տնկախիտ մեր յագարակն ես ասուի

Յայցելութիւն գրնամ անդ հօրս, որ ցանգ վատն իմ տառապի.

Բայց և ունիմ քեզ պատուիրան, թէ պէտ կին ես խորազգաց.

Դ 'արեւածայրս վաղ հնչեսցի գոյժ օրհասին հոմանեաց.

Արդ դու էլ նիստ 'ի վերնատանն, և զաղախնեայս առ ընդ քեզ,

Անդ մեկուսի մի զոք տեսցես և մի ումեք ինչ հարցցես »:

Ասաց Ոդիս, և զէն ըզզարդն իւր գեղեցիկ արկ ուսոյն,

Զայն ետ Եւմեայ և Փիլիտեայ, ձայն արձակեաց և որդւոյն.

Կազմ և պատրաստ առ հասարակ զին-
ւորութեան ետ հրաման,
Ճեպեն նոքա և ժիրաժիրք 'ի զէն 'ի զարդ
վառեցան.
Բացին ըզդուրս, ելին արտաքս յանձնա-
պատանք քաջապէս.
Էր նախընթաց ուղղոյն նոցա ինքնին դիւ-
ցազն Ոդիսէս.
Այն ինչ երկիրն էր լուսացեալ, և ըզ-
նոսա Աթենաս
Ամբով, միգով քողածածուկ 'ի քաղաքէն
հան արտաքս։

Սալ ի 8 թվ
Սարդարեան

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԴ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հոգւոց հոմանեացն կոտորելոց հորդան 'ի գԺոխս տայ Հերմէս։ Զրուցատրութիւն հոգւոյ Ագամեմնոնին ընդ հոգւոյ Աքիլլեսին, և ընդ հոգւոյ հոմանեացն, այլոքն հանդերձ։ Բայց յայնժամ Ոդիւս ընդ իւրոցն հասանէ յագարակն ծերունւոյն Լայերտեայ իւրոյ հօրն. ծանօթս տայ զանձնէն. անպատում խնդութիւն ծերունւոյն։ Դողիոն հաւատարիմ ծառայ Լայերտեայ ընդ վեցից որդւոցն խնդայ մեծապէս 'ի գալուստ Ոդիսեայ։ Գոյժ 'ի քաղաքին վասն կոտորածի հոմանեացն։ Եւպիթէս հայր Անտինոսեայ դրդռէ զԺողովուրդն 'ի վրէժխնդրութիւն. ընդդէմ դառնան նմա Մեդոն քարոզ և Ալիթերսէս ծերունին։ Խմբին 'ի մարտ ընդդէմ Ոդիսեայ, յաղթանակէ Ոդիս. Լայերտէս ծերունին սպանանէ զԵւպիթէս։ Հանդարտէ մարտն 'ի շանթելոյն Արամազդայ. և խաղաղութիւն հաստէ 'ի քաղաքին Աթենաս զկերպարան առեալ զՄենտորին։

ՈԳԻՍԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ի Դ.

Յաճնամ հոգւոցն հոմանեաց ձայն տայր Հերմէս Կիլլինեան 85.

Բարձեալ 'ի ձեռն իւր գեղեցիկ և ոսկեղէն գաւազան.

Նովաւ նա տայ, որոց կամի, արթուն մարդկան աչաց քուն,

Դարձեալ 'ի նոյն և ըղձմբրեալս զարթուցանէ 'ի քընոյն.

Սովաւ յայնժամ նա տայր հորդան հոգւոցն այնմիկ երամին,

Նոքա ճիչ մեծ արձակելով և խուռն ըզհետ գընային,

Զորօրինակ խումբք սեագունդ խաւա-
րային զղջիկանց
Ի ճիչ հատեալ ցանգ թրթռան 'ի խորս
ահեղ անձաւաց,
Երբ յանկարծոյն ոք 'ի նոցունց զերծա-
նիցի 'ի վիմէն,
Ուր ընդ միմեանս կռուեալ նոքա իբրու
հոծեալ գունդ գործէն.
'Նովին ճչմամբ և այն հոգիքն համախրո-
նեալք երթային,
Եւ կարապետ ինքնին Հերմէս էր ընդ ու-
ղին խաւարին.
Անցեալք ընդ վէմն ընդ ըսպիտակ, և ընդ
հոսանան յՈվկիան,
Եւ ընդ ժողովրն Անրջոց և ընդ դրան-
դիս Արեգեան,
Հասին եկին 'ի սիզաւէտ մարգագետնոյն
'ի սահման,
Յորում հոգիք, տիպք մեռելոց ունին
անդէն օթեվան.
Անդ ըզհոգին զԱքիլլեսի գըտին ըզմեծ
դիւցազին,
ԸզՊատրոկղեայ, զԱնտիղոքեայ զորդւոյն
մեծի Նեստորին.
Անդ ըզհոգին և զԱյասայ, որ 'ի Հել-
լենս գերագոյ
Էր նա մարմնով նոյն և տեսլեամբ, բաց
'ի մեծէն Աքիլլեայ.

Սոքա անդէն 'ի միասին բակ զԱքիլլեաւ գործէին,
Եւ եկն եհաս անդ և հոգին Ագամեմ նեայ ցաւագին.
Եկին անդ խուռն և ոչք յայնժամ 'ի հացկերոյթն Եգիպթեան
Տապաստ անկեալ ընդ Ատրիդեայ յօրահասէն գրաւեցան։
"Ընչուշտ ըզքեզ մեք, Ատրիդէս, մեծն Աքիլլես առ խօսել,
Համարէաք լինել Դիայ ըզքեզ սիրուն առաւել,
Քան զամենայն կարգ դիւցազանց, իբրև բազմաց պետ քաջաց,
Երբ Յեղիոն քրանավաստակ մեք կռուէաք ընդ Տրովեանց.
Զի՞ է զի քեզ նախ առաջին չար օրահաս կնքեցաւ,
Այն օրահասն որ անհրաժեշտ է 'ի մարդոյն որ ծընաւ.
Բաբէ, պարտ էր, յորժամ փառաք իշխան էիր դու յայնժամ,
Անդ Յեղիոն 'ի ճակատուն մահ քեզ առնուլ և վախճան.
Զիարդ Հելլենք դամբան յայնժամ քեզ կանգնէին 'ի պրսակ,
Զի և որդւոյդ շուք մեծաշուք լինէր յապայս ժամանակ.

Աւաղ բախտին. քեզ օրահան այն կրն-
քեցաւ ողբալի ».

Ի լուր բանիցն Ագամեմնոն զայս անդրա-
դարձ տայր ձայնի։

«Դեզ, Աքիլլէս, քեզ դիւցանման, ես
զերանին տամ 'ի ձօն,

Որ տարադէմ'ի յԱրգոսէն տապաստան-
կար յԵղիոն.

Անդ շուրջ ըզքեզ 'ի վէգ գային քաջքն
Հելլենաց և Տրովեանց,

Եւ դիտապաստ ասոի անոի անկանէին
մահազդեաց,

Դու 'ի փոշւոջ մեծ այրդ անկեալ վայր
գրաւէիր մեծապէս

Լեալ անյարիր և մոռացեալ ըզկառա-
մարտ քո հանդէս.

Իսկ մեք անդուլ զողջոյն ըզտիւ մինչդեռ
կային դիտապաստ,

Մարտ մղէաք, թէ մրրրկաւ դուլ չէր
տուեալ Արամազդ.

Ապա 'ի նաւս ածեալ ըզքեզ անդ հան-
գուցաք 'ի մահճին,

Օծմամբ մաքրեալ և գաղջ ջրով ըզդե-
ղեցիկդ ըզմարմին.

Յոյնք դառնապէս արտասուէլով, նաև
ըզվարսըս կտրեն,

Իսկ մայրդ ըզդոյժ լուեալ մահուն, էլ
և վաղեաց 'ի ծովէն.

Էառ ընդ իւր և զանմահից ըզծովայնոց բազմերամ,
Եւ 'ի ծովէն բոմբիւն ահեղ արձագանգէր անպայման.
Ահ և դողումն առ ըզՀելլենս դիմեալք 'ի նաւս Թափ տային,
Եթէ զնոսա չէր արդելեալ Նեստորիոս ծերունին,
Այն հինաւուրցն այր քաջուշիմ, այր մշտայաղթն 'ի յատեան,
Որ և ահեալ այն որերոյն էտ քաջ խորհուրդ և յայնժամ.
„Հա՛ պինդ կացէք, Աքայեցիք. զի մայրն 'ի գոյժ զաւակին
Յայցելութիւն գայ 'ի ծովէն ընդ անմահից երամին՝՝։
Լուան Հելլենք, և անխուճապք կացին ճնացին յակաստան.
Բոլորեցան ըզքև, Աքիլլ, դատերք ծերոյն ծովական.
Ողբս առնուին և քեզ 'ի փառս ձորձ զանմահից ագուցին,
Մուսայք լիններակ երերամարք ձայնիւ փոփոխ կարդային.
Բարի անդէն այր անարատաւոր ոչ ոք եկաց 'ի Յունաց.
Այնչափ յայնժամ երդ զղջական Մուսայն ողորմ յարդարեաց.

Զոիւ Եօթն և տասն և ըզգիշեր յայն դիահանս գեղեցիկ
Ջերմ արտասուս մեք թափէաք անդ և աստուածք և մարդիկ.
Այն ինչ ծագեաց օր ութ և տասն, և 'ի խարոյկ ամբարձաք,
Եւ յոյր օդիս և յանդէոց գալարեղջիւրս յազեցաք.
Դու այրեցար արկեալ այնպէս զայն աստուածոց պատմուճան,
Եւ օծեցար առատ իւղով, նաև մեղու քաղցրութեան.
Աքայեցւոց շատ դիւցազունք հետիք, հեծեալք, զինարուկաւ
Ընթանային զինու զարդու. շկահիւն շաջիւն մեծ հատաւ.
Բոց Հեփեստեան ծախեալ ըզքեզ, մեք քո զոսկերաղ քսակիտակ
Վաղ քաջընդ այգրն ամփոփեմք 'ի յիւղ անոյշ, յանապակ.
Ըզգեղեցիկ սափորն ոսկի եդ մեզ քո մայրն յանդիման,
Դիոնիսեայ էր այն պարգևն, և գործ հրաշից Հեփեստեան.
Ի յայն սափոր, քաջազն Աքիլլ, քոյին ոսկերքդ հանդուցան.
Անդ ամփոփեալ կան խառն ոսկերք և Պատրոկղեայ Մենետեան,

Սակայն ոսկերքն Անտիոքեայ կան անդ
ուրոյն մեկուսի,
Որում յաւէտ դու շուք տայիր յետ օր-
հասին Պատրոկղի.
Բայց և դամբան մեծ հոյակապ մեք քաջքս
Հելլենք ամբարձաք,
Էր կարկառեալ 'ի ծովեզեր յԵլլեսպոն-
տոսն ընդարձակ.
Զի 'ի բացուստ կայցէ այնպէս յերևանի
'ի ծովէն
Ծնելոց մարդկան և ապագայց որ ըզհետ
մեր գալոց են:
Իսկ և մրցանըս գեղեցիկս, մայր քո խըն-
դրեալ յաստուածոց,
Եդ յագոնին 'ի յասպարէս մեզ աւադաց
Աքեցւոց.
Շուք ըզթաղման ըզդիւցազանց ես շատ
տեսի գեղեցիկ,
Երբ արքայից 'ի դիահանս մրցին հըզօր
պատանիք.
Սակայն ընդ քոյդ ըսքանչացեալ յակ-
ճիռս յայնժամ ես կացի,
Զի վասըն քո արդոյն թեսիս հանդէս
կարգեաց հրաշալի.
Դու նազելիդ վեհ աստուածոց թէպէտ
ըզմահ ճաշակեալ,
Սակայն անմահ է առ մարդիկ քո շուք
անուանդ քաջափայլ.

Եղեւկ եմ ես. ինձ ոչ վայելք ըզկնիկ մարտի վախճանին,

Որում 'ի դարձն Ամպրոպայինն աղէտ նիւթեաց ահագին.

Զիս Եգիպթէս 'ի սպանդ վարեաց, զիս և կինն իմ մահաբեր՝՝.

Յայս օրինակ զրուցաց յայնժամ այր ընդ ընկեր բարբառէր։

Մինչ այս մինչ այն հաս անդանօր մեծ նուիրակն Հերմէս,

Ածեալ զհոգիսն ըզհոմանեաց զոր արկ տապաստ Ոդիսէս։

Այն ինչ եռեռ մեծն Աքիլլէս, եռեռ Ատրիդ և արքայն,

Հիացեալք կացին, յարեան ձեռով և ընդ առաջ ընթացան.

Անդէն հոգին Ագամեմնեայ զԱմֆիմեդոս ծանեաւ քաջ,

Զի յԻթակէ ինքն յօթեվան հօրըն նորա հիւր եկաց.

"Զի՞նչ իրք իցեն, Ամֆիմեդէ, Ագամեմնեայ հարց հոգին,

Զի՞ աստ ելջէք դուք համախուռն 'ի յայս երկիր խաւարին.

Դուք այրընտիրք և համատիք, դուք քաջորեար քաղաքիդ,

Զի՞ է զի այդ խուռն աւադացդ աստ ձեպեցայք խիտ առ խիտ.

Արդեօք ըզձեզ ծովայածեալըս Պոսիդոն
առ մատնեաց
Մբբրկաշունչ այսոց հողմոց և կոհակաց
ամեհեաց.
Կամ թէ ըզձեզ 'ի ցամաքի տապաստ արկին թշնամիք,
Յորժամ զանդեայս դուք վարէիք և կամ
զոգիս գեղեցիկ.
Եթէ արդեօք վասն հայրենեաց և կանանուոյն դոռ մարտի.
Ա՛ղէ պատմեա՛ ինձ հարցողիս, քանզի
հիւր քո ես կացի.
Ո՞չ իսկ յիշես, յորժամ ես ինքն և եղբայրն իմ'ի տուն ձեր
Կալաք մեզ վանս, մեծն Ոդիւսեայ 'ի յԵղլոն տալ հրաւէր.
Ողջ ամիս մի քրանավաստակ մեք ընդ
ծով մեծ յածեցաք,
Եւ զՈդիսէս քաջամարտիկն հազիւ ուրեմն հանդուցաք »:
Կրկնեաց հոգին Ամֆիմեդեայ. « Լո՛ւր
ինձ, արքայ գերապատառ.
Յիշեմ ողջոյն, և դու ողջ լո՛ւր զորահասին մեր ըզձառ.
Ձեր Ոդիսէս մեծն 'ի միջի չէր ընդ հարուստ ժամանակ,
Եւ յայնժամ մեք դասք պատանեացս վեհ
ամուսնոյն տարփացաք.

Սա ըզդժնի զայն հարսանիս մեզ 'ի գը-
լուխ ոչ հանէր,
Դարձեալ և զայն ոչ զըլանայր, բայց
օրահաս մեզ նիւթէր.
Նենգ մի լարեաց, և ինք նստեալ ժիր
անկանէր մեծ ոստայն,
Ոստայն քնքուշ, և լայնատարը. և զայս
ասէր մեզ յայնժամ.
Ինձ ուՆկըն դէք, ո՞ պատանիք. անշուշտ
օրհասն առ զՈդիս.
Վայրիկ մի արդ դուք ժուժացէք կարդել
մեզ զայս հարսանիս,
Մինչև 'ի յանդ հանիցզոստայնս մեր
Լայերաեայ 'ի պատան,
Զի մի իմ թեզքս և իմ առէջք զուր վատ-
նեսցին յայս ոստայն.
Արկանելի զայն տաց ծերոյն պատան
թաղման դիւցազին,
Երբ նա ըզքուն զայն ննջեսցէ, քուն ան-
յարիր զօրհասին.
Զի մի թերևս ոք սրտնեսցի ինձ 'ի յու-
նաց բամբըշաց,
Թէ անպատան թաղեալ ահա կայ ծերու-
նին բազմագանձ.
Մէք անսացաք. նա առ զոստայնն և ըզ-
ցերեկ անկանէր,
Իսկ գիշերի 'ի լոյս ճրագին դարձեալ
զանկեալն իւր քակէր.

Նա զամն երիս զայս օրինակ իւր խաբա-
նօք Թանգուզեաց,
Ցանգ յուսացոյց ըզպատանիսս, մինչև
չորրորդ ամն եհաս.
Հոլովեցան աւուրք, ամիսք. ժամանեցին
եղանակք,
Յետ այնորիկ մեզ մատն եղև գործոյն նո-
րա կին տեղեակ.
Ըզնա 'ի ժամն ըմբռնեցաք, մինչ նա քա-
կէր զիւր ոստայնն.
Հարկեալ ապա Պենեղոպէ հասոյց ըզնոյն
'ի վախճան.
Ողջ պրսակեաց և ջինջ լուաց, և մեզ զոս-
տայնն ցուցանէր.
Պերճ ձեռագործն իբրև արև, իբրև լու-
սին փայլակէր:
Յայնժամ չարաւ ոմն 'ի Քաջաց ուստեք
զՈդիս մեզ էած,
Ած և եբեր յիւր ագարակն, ուր այր
բնակէր խոզարած.
Եկն անդանօր և քաջորդին մեծ դիւցա-
զին Ոդիսեայ,
Դարձ նաւագնաց էր արարեալ նա յա-
ւազուտն 'ի Պիւղեայ:
Եկին սոքա մրտին յոստանն օրհաս մեզ
տալ չարաչար.
Տելեմաքոս եհաս յառաջ, իսկ Ոդիսէս
ըզհետ գայր.

Այր խոզարածն էած ըղնա, ձորձն էր զանձամբ գրգռլեակ,
Ցուպ 'ի ձեռին, ինքն էր մուրկի և ծերունւոյ հանգունակ.
Հանդերձն այնչափ էր բրդգզեալ, զի և այր ոք ծեր 'ի մեզ
Բա՛ ոչ կարաց ինչ ճանաչել յորժամ այնպէս զնա եռեռ.
Այպանեցաւ, հարուածեցաւ Ոդիան 'ի մէնջ յիւրումեանս,
Բայց ժուժկալեաց նա առ վայր մի, և լուռ տարաւ զամենայն.
Ապա ազդեալ յԱրամազդայ իւր գործակից առ զորդին,
Եւ զէնս յարկին բարձին ողջոյն և յառագաստ փակեցին.
Յայնժամ Ոդիսն խորագէտ Պենեղոպեայ Թելադրեաց
Մրցանս խաղու յաղէն, յերկաթ, գնել հանդէպ հոմանեաց.
Եւ եղև մեզ այն լայնալիճն և այն մանեակք երկաթիք
Մրցանք խաղու մահահրաւէրք, և մեր արեանց ճապաղիք.
Ոչ ոք 'ի մէնջ զորեաց լարել զլայնալիճն հաստաձիգ,
Զի յայն մրցանս մեզ բաւական չէիցաք բաղուկ զօրավիգ.

Իսկ երբ առեալ զլայնալիճն առ Ոդիսէս տանէին,
Մեք սրտմբտեալ և բան սաստիկ պարսաքարեմք տանողին.
Թոյլ ոչ տայաք տանել առ նա, թէպէտ և շատ ժրտեսցի,
Բայց Տելեմաք առնուլ տանել անդ բուռն արար ծառայի։
Առեալ Ոդիս զաղեղն 'ի ձեռս, 'ի նոյն լարեաց զայն փուքթով,
Եւ թափ ընդ օղն անցոյց փրքին, ինքն անց եկաց առ սեմով,
Հեղ առ ոտիւք զերեքթևեանն, ահեղ աչօք ակնարկեաց,
Ընդ գիրկն եմուտ և առաջին զԱնտինոոս հար խոցեաց.
Ըստ նրմանէն նա շեշտ անդուլ զմահահոտն ըզփրքին
Ձրգէր և յայլս, և խիտ առ խիտ մի ըզմիով անկանին։
'Նրմա անշուշտ նիզակակից ոմն յաստուածոց անդ եկաց,
Ձի և համհարզքն իւր մոլեգնեք տային ամբաւ կոտորած.
Վայ ըզվայիւ սաստիկ գուժեաց 'ի ջախջախել կառափանց,
Եւ առուանայր խաղայր սասկն յապաժուժից 'ի յարեանց։

Արդ մեք այսպէս, Ագամեմնէ, 'ի մահ կորուստ մատնեցաք,
Եւ դիակունք մեր դեռ անթաղք յՈդիսևսեայ կան 'ի բակ.
Քանզի և յունկրն սիրելեաց մեր օրահան ոչ գուժեաց,
Ոչ լուացին 'ի մեր մարմնոց զաղտ, զապաժոյժն ըզվերաց.
Դեռ ոչ եռուն մեզ դիահանս 'ի զղջական 'ի յերդոց,
Դեռ զհանգստեան դիր ոչ առաք, շուք ըզվերջին մեռելոց »:
«Բեզ երանի տամ, Ոդիսէս, Ագամեմնոն էտ բարբառ,
Բաբէ, զիարդ իմաստութեամբ դու ամուանոյդ տիրացար.
Բաբէ, զիարդ և կին պարկեշտ Իկարոսեանն հրաշացաւ,
Որ միշտ սերտիւ սիրեաց զՈդիս, որում նա կոյս հարսնացաւ.
Անջնջելի փառքն յընդհանուրս կացցէ նորայն բարոյից,
Երդ շնորհաշուք Պենեղոպէ առցէ յաւէժ յանմահից,
Ո՛չ որպիսի այն չարարուեստ Տինդարոսեանն այրասպան,
Որ նա կուսան ինձ հարսնացաւ տարաբախտիս 'ի չար ժամ.

Երգ չարաշուք կացցէ նորա և յընդհա-
նուրս հնչեսցի,
Որ բիծ այնպէս նաև լաւաց եդ կանա-
նուոյն երամի ։։ ։
Զայս ընդ միմեանս հոգիքն յայնժամ
փոփոխակի զլուցէին
Ի ստորերկրեայ փակեալք յանձաւս անդ
Դժոխոց 'ի յարկին ։
Բայց Ոդիսէս ընդ քաջորդւոյն, ընդ
Փիլիտեայ, ընդ Եւմեայ,
Փոյթ յոստանէն էկին հասին 'ի յագա-
րակ Լայերտեայ.
Ինքնին Լայերտ խնամով մեծաւ էր մշա-
կեալ զայն կալուած,
Շէն բարեբեր կացոյց ըշնա, զի քիրան
անչափ անդ թափեաց.
Անդ բնակութիւն էր ծերունւոյն, հիւղք
և գաւիթք շուրջ կային,
Ուր և ծառայք իւր հողագործք ըզկերա-
կուր առնուին.
Անդ և բազմոցք և ննջարանք էն կարևոր
սպասարկուաց,
Որ ձեռն 'ի գործ 'ի սերտ սրտէ վաստա-
կէին յայն կալուած.
Նաև աւասրդ կին ժիրաժիր 'ի Սիկիլեայ
'ի կղզւոյն
Էր մենացեալ անդ յագարակն, էր հո-
գատար ծերունւոյն ։

Զայն եւ Ոդիս Տելեմաքեայ, ըզնոյն հովուաց իւր կրկին.
«Ա՛ղէ մըտէք դուք արդ 'ի նեռքս 'ի բա-
ռեշէն 'ի յարկին.
Առէք ընտիր խոզ պարարակ, և մեզ զե-
նէք 'ի յընթրիս,
Եւ ես գընամ արդ 'ի փորձել վայր մի ըզ-
հայր ծերունիս.
Արդեօք 'ի յակն իւր զիս արկեալ և ծա-
նիցէ՞ նա անդէն,
Եւ կամ թէ ոչ, իմ ընդ երկար գոլով
յերկրէս տարադէմ».
Ասաց Ոդիս, և ծառայիցն առեալ ըզ-
զէնս իւր յանձնեաց,
Նոքա մըտեալք հանդերձեցան և տանէին
հոգ ընթրեաց։
Յարեաւ Ոդիս և ուղղեցաւ 'ի մեծ պար-
տէզ պտղալից,
ԸզԴոլիոս անդ ոչ եգիտ, չեգիտ և զոք
ծառայից.
Նաև յորդւոց ոչ ոք գըտաւ, զի "նդ հօր
իւրեանց գընացին,
Թուփըս փըշոտըս ժողովել և ցանդ պա-
տել պարտիզին.
Բայց անդանօր 'ի չէն դրախտին նա ըզ-
հայր իւր գիտ միայն,
Որ ըզտնկովքըն շուրջ բըրեր ձունձ մի
արկեալ պատմուճան,

Էր բրդգզեալ և կարկատուն, և էր նո-
ցա սռնապան
Արջառամորթ և կարկատեալ առ 'ի ցըտ-
մանց պահապան.
Եւ ձեռնապան էր ծերունւոյն 'ի զգու-
շութիւն մորենեաց,
Եւ այծենի ունէր գլխարկ, և էր մարմ-
նով յոյժ ցաւած։
Ըզտեսիլ զայն յակն իւր արկեալ Ոդիսև-
սեայ դիւցազին,
Տուայտեալ այնպէս 'ի յալևոյթ և վշտա-
կիր 'ի յանձին,
Աղէկիզեալ երթ ընդ բարձու ընդ տան-
ձենեաւ կաց և լայր,
Եւ տարակոյս 'ի կրկնակի նա 'ի խոր-
հուրդս իւր ծըփայր։
Արդեօք խակոյն նա գիրկ ընդ խաՀն ընդ
հօր իւրում լինիցի,
Եւ մերկացի ըզՀառ դարձին իւրոյ յեր-
կիրն հայրենի,
Եթէ արդեօք հարցաքննին նախ փորձես-
ցէ զամենայն.
Կայր և խորհէր և 'ի վերջինն հաստատե-
ցաւ նա յայնժամ։
Նախ հնարիմաց խնդրեաց բանիւք ըզ-
ծերունին ըզկրծել,
Եւ ել գընայր նա դէպ ուղիղ առ հայրն
իւր 'ի փորձել.

Մինչդեռ խոնարհ նա անդ գլխով շուրջ
ըզբընկովն բերէր,
Մերձ Ոդիսէս եկաց առ հայրն և ձայն
կարդաց անվեհեր.
« Բաբէ, քաջ ես, ով Ծերունիդ, դու
զայդ պարտէզ մըշակել,
Ահա զքրտունդ ասա խիտ առ խիտ ես
տեսանեմ անարգել:
Ձիք ասատանօր տունկ անմըշակ, ոչ
տունկ որթոյ, ոչ թըզոյ,
Ոչ ձիթենւոյ և ոչ տանձի, նաև ոչ ափ մի
գետնոյ:
Բայց քեզ ասեմ, մի ցասնուցուս, դու
անմըշակ զքեզ ունիս,
Յայդ ալևոյթ 'ի խոր հասեալ և արկեալ
ես հընոտիս.
Բայց և անշուշտ յայդ գերգելեակ ձիք
ինչ քո մեղ յուլուլեան,
Այլ քոյին տեառն որ այդգունակ թող-
ղու ըզքեզ անդարման.
Եւ այն զի դու հայեցողացն 'ի դիտակ քո
և հասակ
Ձես ոք ծառայ, այլ Ճչգրտիւ առն ար-
քայի նըմանակ.
Տիպ բարեկեաց բերես զմարդոյ, որ
լուացեալ և առեալ հաց,
Եւ յանկողին գիրդ հանգիցէ ըստ օրինի
ծերունեաց:

Բայց ասէ դու, ով Ծերունի՛դ զայն ինձ պատմեա՛ ուղղապէս.
Ո՞յր ուրուք տեառն ես դու Ծառայ, և զո՞ր պարտէզ մըշակես.
Նաև զայն ինչ ասա՛ ինձ պարզ, թէ Իթա՛կէ՞ է այս վայրը,
Զորս ինակ ընդ առաջեալ ասէր ոք ինձ այր ախմար,
Զի ոչ ասաց ինձ ճշգրտիւ, և ո՛չ եկաց 'ի լըսել,
Զոր միանգամ ես կամէի նըմա յայնժամ հարցանել.
Լուր ինդրէի առնուլ զհիւրոյս, ո՞ւր լցէ նա, չընկալայ,
Ո՞ղջ է արդեօք, եթէ մեռեալ. և դըժոխք են տուն նորա:
Եւ արդ քեզ զայն 'ի վեր հանեմ, դու քաջ միտ դիր, Ծերունի.
Է՛ր զի երբեմն, ես 'ի տուն իմ զայր ոք արգոյ հիւր առի.
Զէր իմ տեսեալ հիւր այնպիսի արգոյ սիրուն աննըման,
Որչափ ինչ հիւրք տարաշխարհիկք յիմ իջևան օթեցան.
Ասէր զանձնէն բնակասընուն գոլ ծընընդեամբ Յիթակայ,
Եւ դաւանէր զինքըն որդի Արկիսոսեան Լայերտեայ.

Եւ հիւրընկալ առի ըզնա և սիրաբար գրգեցի,
Եւ 'ի տանէս իմ բաղմագանձ նրմա հիւրոյթ ձօնեցի.
Տաղանդըս եօթն 'ի ձիր նրմա ետու զոսկւոյն ըզգործած,
Եւ խառնարան մի արծաթի քանդակագործ 'ի ծաղկանց,
Զորձըս սատակ երկոտասան, նոյնչափ և գորդ գեղեցիկ,
Եւ պերճ լոգիկս երկոտասան, նոյնչափ թուով և շապիկ,
Զորս և կանայս ետու նրմա վարժունս 'ի գործ 'ի ձեռաց,
Պարկեշտակրօնս և շնորհաշուքս, զորս և ինքնին իւր ընտրեաց »։
Հայր ծերունին լուաւ կրկնեաց, և 'ի նոյն լայր դառնապէս.
« Անշուշտ, ո՛վ հիւր, երկիրս ահա է Ի-թակա, զոր խնդրես.
Արք անօրէնք ըզսա այսօր գրաւեալ ունին բռնաբար,
Եւ ըզքո ձիրս լիապարգև դու սփռեցեր վայրապար.
Թէ արդ հիւր քո կեայր յԻթակէ, քեզ ձիր հանէր փոխադարձ,
Հիւրամեծար և վանատուր զինքն ցուցեալ 'ստ իրաւանց.

Բայց ՕՆ ասա՛, ըզնա 'ի հիւր ելբ դու առեր քում յարկին,
Աւա՜ղ, եղո՛ւկ, հիւր հիքացեալ, (եթէ դեռ կեայ), զորդեակն իմ.
Եղո՛ւկ եմ ես. յո՞ր խորշ ծովու արդեօք եղև կեր ձրկանց,
Կամ յո՞ր ցամաք որս օդայնոց, և գէշ արկաւ գազանաց.
Արդ ոչ մայրիկն իւր որդեսէր ըզնա պատեաց և ելաց,
Եւ ոչ նորա հայր ծերունին. բա՛ւէ, ծընողք ցաւազդեաց.
Եւ ո՛չ պարկեշտ Պենելոպէն ելաց 'ի ոանն զայր սիրուն,
Ո՛չ 'ի մահճին փակեալ և զաչսն, այնպէս 'ի քուն եդ մահուն:
Լայ նա այժմիկ, խբրու վերջին ըզչուք թաղման չեռ նըմա.
Բայց դու աղէ, ո՛վ հիւր բարի, ինձ ճըշգրտիւ զայն ասա.
Ո՞վ ելցես դու, և կամ յորոց, ո՞ւր քո ծընողք, ո՞ւր քաղաք,
Եւ որ ըզքեզ ած ասա առ մեզ, ո՞ւր կայ արդ նաւն այն արագ.
Ո՞ւր են քո քաջ նիզակակիցք, արդեօք դու նա՛ւ յօտարին
Եռուր ըզվարձն, և նաւասաիքն ըզքեզ հանեալ չուեցին՞»:

Հիւսեաց յայնժամ բան խորագէտն.
«Ասեմ քեզ արդ կարդաբար.
Քաղաք ծննդեանս է Ալիբաս, ուր և կայ իմ տուն պայծառ.
Որդի եմ ես Ափիդասայ Պողիպեմեան արքային,
Եւ ինձ 'ի բնէ Եպերիտոս յորջորջեցին զանուն իմ.
Ի Սիկանեայ ձգեաց աստուած զիս յայս կղզի դժկամակ,
Եւ 'ի բացեայ 'ի քաղաքէն մօտ կայ արդ նաւս յագարակ.
Քաջ հինգերորդ է այս տարի, զի հիւր առի զՈդիսէս,
Եւ հիքացեալն հրաժեշտ յինէն առ և գընաց 'ի յերկրէս.
Բայց 'ի չուէլն անդ հաւք աջինք բարեդուշակք թռչէին.
Ես խնդութեամբ արձակեցի, էր և նա ինք խնդագին.
Այլ հանդիպել միմեանց անդրէն մեք յուսայաք անվեհեր,
Եւ վանատուր գոլ իրերաց, նաև լինել օժտաբեր»:

Լռեաց Ոդիս, և զծերունին ամբ մի ցաւոց խաւարին
Պատեաց ողջոյն, և շէկ ըզհողն էառ ձեռաքն իւր կրկին,

Ափովք լիովք զալևորեալ ըզգլուխն ողջ
ոյն փոշոտէր,
Եւ խիտ առ խիտ թառաչ հառաչ 'ի խոր
սրտէն արձակէր։
Անդուստ Ոգիս աղէկիզեալ և ընդ ուրն-
գունս 'ի ժամուն
Շունչ մի հրակէզ շնչէր փնչէր, տեսեալ
ըզհայրն իւր սիրուն.
Դիմեաց թափով և փարեցաւ և համբու-
րեաց, ետ բարբառ,
"Եմ աւագիկ ես այն ինքն եմ, զոր արդ
խնդրես դու ո՞վ հայր.
Ամք այս քըսանք բոլորեցան և արդ դար-
ձայ 'ի տուն իմ.
Ժուժեա՛ հայր իմ, ժուժեա՛ մի լար. սըր-
բեա՛ քո զաչս ցողագին.
Սուղ է ինձ ժամն. լուր 'ի կարճոյ. ես
մահ ածի հոմանեաց.
Ըզվերջին առի ըզշամբչելոցն և զոգե-
տանջն ըզբարեաց"։
Զայն հապճեպով տայր ծերունին.
"Դո՞ւ Ոգիսէն իմ որդեակ,
Դո՞ւ ես Ոգիսն. արդ տո՛ւր, որդեակ,
ինձ աներկբայ նըշանակ"։
Ճեպեաց Ոգիս, հանգոյց ըզհայրն, ա-
սէր, "Զքսակիս նախ զննեա՛,
Զոր յիս եհար վարազ ժանեղ անդ 'ի
Լերին Պարնասեայ.

Եւ առ 'ի ձէնջ առ Աստուծիկ ուղի առ պապն իմ Հատի,
Առնուլ ըզձիրան զոր ինձ երբեմն աստ խոստացաւ ակնարկի։
Նաև ըզծառան ասեմ քեզ, Հայր, զքո մըշակեալ այս դրախտի,
Զոր դու երբեմն ինձ շնորհեցեր, զոր ես 'ի քէն խնդրեի.
Մինչ ես մանուկս ընդ քեզ, ո՛վ Հայր, առ այն ծառովք շրջէաք,
Եւ դու յայնժամ ողջ յանուանէ ինձ ծանուցեր կարգ 'ի կարգ.
Ծառըս տանձի երեքտասան, և տասըն ծառ խնձորոյ,
Եւ թըզենիս թիւ քառասուն, նա և յիսուն կարգ որթոյ.
Որթք քաջաբերք 'ի յայդեկութս ամէն աղգաց խաղողոց,
Եւ մրգաւէտք և ուռճացեալք յերկնատարափ 'ի ցօղոց »։
Լուաւ զնըշանսըն Լայերտէս, քաջիկ ծանեաւ զայն ողջոյն.
Եւ ա՛յլ յայլմէ լեալ 'ի յոգին, ծունկքըն լուծան ծերունւոյն.
Բազկատարած փարեալ զորդւոյն, էր խանդակաթ սաստկապէս,
Մինչ յինքն առեալ ըզնուաղեալըն յանձանձէր Ոդիսէս.

Իբրև անդրէն արծարծեցաւ, և քաջ
'ի յուշ իւր դառնայր,
Ամբարձ ըզձայն իւր ծերունին, « Բաբէ,
դու Զևս, դու ով հայր,
Անշուշտ ապա դու և անմահք կայք 'ի
բարձունս 'ի յերկին,
Եթէ անշուշտ շամբուշ սեղեխքն արդ
մատն եղեն օրհասին:
Բայց ես խիթամ եթէ յանկարծ խրո-
նեալ աստէն Իթակեանց,
Նաև գուժկանս արձակեսցեն անդ 'ի
քաղաքս Կեփաղեանց »:
« Բաջ լեր, ով հայր, և մի հոգար.
պատասխանի ետ Ոդիս.
Բայց դու արի գնասցուք զարդիս մեք 'ի
տուն մօտ պարտիզիս.
Տելեմաքոս կայ անդանօր և Փիլիտոս և
Եումէս,
Ես ըզնոսա անդ յըղեցի ընթրիս մեզ տալ
փութապէս »:
Ասաց Ոդիս. յարեան գընալ, և մըտա-
նեն 'ի շէն յարկ,
Եւ գըտանեն անդ ըզհովիւսն, էր ընդ
նոսա Տելեմաք.
Յօշեն ըզմիս, խառնեն գինի. իսկ յայն-
ժամ կինն Սիկիլեան
Ըզ Լայերտէս լուաց և օծ, և արկ ցքնաղ
պատմուճան.

Մերձ կաց նըմա մեծն Աթենաս և ողջ զանդամս արքային
Եդ քաջառոյդ, հաստահարուստ, և շուք էհար պատկերին.
Եւ Լայերտէս 'ի բաղանեաց, և հիանայր Ոդիսէս,
Նըման ըզնա տես անմահից. և արձակեաց ձայն այսպէս.
"Բաբէ ո՞վ հայր, անշուշտ զարդիս ոմն յաստուածոց յաւերժից
Ի յայդ պատկեր և 'ի հասակ հաստեաց ըզքեզ շնորհալից":
Ձայն կրկնեաց հայրն. "Ո՞վ թէ էի, բաբէ ո՞վ մեծդ Արամազդ,
Եւ Ապողոն, ո՞վ քաջ արանց, և Աթենաս բազմիմաստ,
Որպէս երբեմն ըզՆերիկոս ըզմարդաշատն ըզքաղաք
Առի իշխանս ես Կեփաղեանց, անդ 'ի յերկրին 'ի ցամաք.
Այնպիսի ոք և քեզ Ոդիս ես 'ի յաւուրն Երիկեան
Ըզձն և զարդ արկեալ զուսով քեզ մերձ կայի 'ի մեր տան,
Նիզակակից և զօրավիգ ըզհոմանիս վանէի,
Բազմաց գոլով կարթակոտոր նահատակեալ 'ի յարկի.

Իսկ դու անդուստ զիս յակն արկեալ և
ցնծայիր 'ի յոգին ».

Զայսօրինակ անդ ընդ միմեանս հայր և
որդի զրուցէին։

Զ ընթրիսն յայնժամ վայելչապէս պատ-
բաստելով արքն 'ի տան,

Այր այր առեալ զիւրքն բազմոց բոլորե-
ցաւ 'ի սեղան.

Այն ինչ ըզձեռն արկանէին և հանդեր-
ձին առնուլ հաց,

Անդէն 'ի նոյն և Դոլիոսքն ծերունին
մերձ եկաց.

Նաև որդիքն ընդ հօր իւրեանց խոնջք և
վաստակք միաբան,

Զորս և ելեալ կոչեաց 'ի նեբքս անդ
մայրն աւաղդ Սիկիլեան.

Սա էր որդւոցն սընուցիչ և դարմանէր
զծերունին.

Անդէն իբրև տեսին զՈդիս, ծանեան ըզ-
նա դլխովին.

Կացին լըռիկք և ապշեցան։ Զայն Ոդի-
սէս ետ հեզիկ,

«Նիստ դու յընթրիս ո՛ ծերունիդ. և մի
յապուշ հարկանիք.

Մեք 'ի վաղուց, ընթրիս առնուլ աստ
բազմելով 'ի սեղան,

Զեզ մընայաք 'ի մեր յարկիս սպասեալք
ձերում գալստեան »։

Այս Ոդիսէս, իսկ Դոլիոս պարզեալ զբազուկս իւր կրկին,
Դիմեաց Թափով, և ողջունիւ համբոյր նորա ետ ձեռին.
« Բա՜ի, սիրուն, ձայն արձակեաց, ըզ-սիրելիս քո գլուեր,
Յոյս մեր հատաւ. սակայն աստուածք ածին ըզքեզ անվնասեր :
Ո՛ղջ լեր յաւէժ, ինդա՛ յաւէտ, և արդ լեցիս երջանիկ.
Բայց և զայն ինձ ասա՛ ճշգրիտ, զի գի-տացից ես քաջիկ.
Ըզդարձըն քո Պենելոպէն գիտէ՞ արդեօք աներ կբայ.
Ապա թէ ոչ, բանբեր յղեալ մեք աւետիս տամք նմա ».
Պատասխանի ետ Ոդիսէս. « Պենելոպէն գիտէ քաջ.
Դու լե՛ր անդորր ո՛ ծերունի. մի՛ ինչ հոգար, և բազմեա՛ց » :
Բազմոց յայնժամ առ Դոլիոս, առին որդիքն 'ի յարկին,
Եւ ցնծային ընդ Ոդիսէս և ըզձեռացն ունէին.
Առ հօր իւրեանց առին ըզկարգն և բազ-մեցան առընթեր,
Այր այր յայնժամ ուրախացեալ և 'ի յընթրիս պարապէր.

Բայց հոմանեաց գոյժն օրհասին 'ի քաղաքին հնչեցաւ,
Եւ բօթ հարեալ և խուճապեալ խըռներ անդէն խումբ ամբաւ.
Սաստիկ շըռինդն և մեծ գոչիւն էր տանն հանդէպ Ոդիսին,
Եւ բառնային ըզդիակունս, ձեռով 'ի հող ծածկէին.
Ոչք միանգամ բնակասընունդք էին յայլոց քաղաքաց,
Յիւրաքանչիւր տունս ըղէին 'ի ձկնորսաց 'ի նաւակս:
Եկին ապա ժողովեցան յոյժ ցաւագինք 'ի յատեան,
Եւ մընացին մինչև ողջոյն համագումար խմբեցան:
Յարեաւ յայնժամ անդ Եւպիթէս, և խօսեցաւ առաջին.
Էր նա յոգին իւր կարեվէր խոցեալ ընդ մահ զաւակին.
Անչընչելի էր ցաւ սրտին, զի հայր էր նա Անտինեայ,
Զոր առաջին արկ դիտապաստ հաստ լայնալիճն Ոդիսեայ.
Կայր և խօսէր, միանգամայն և արտասուէր դառնապէս,
" Բաբէ, զըմբաղ, ոչ բարեկամք, մեծ այդ Ոդիս հասոյց մեզ.

'Նա շատ որեար և քաջ որեար նախ ած
ընդ իւր նաւագնաց,
Ըզկուռ մեր նաւս և գունդ սատիկ նա
'ի կորուստ առ մատնեաց.
Իսկ և զարդիս արկ դիտապատ ըզկե-
փաղեանց կորովիս.
Արիք, զի՞ կայք. մինչև դորա է խուճա-
պեալ 'ի Պիւղիս,
Եւ կամ Եղիս վայր դիւցազանց, յորում
Եպեանք կապէն թագ.
Արիք, ո՞ւմ կայք, օ՞ն կանխեսցուք մեք
'ի վանել զայդ վիրագ,
Եւ կամ թէ միշտ, արդ վատացեալք,
կացցուք մնասցուք նըշաւակ.
Քանզի յառակ լիցին այդ իրք մեզ և յա-
պայս ժամանակ.
Եթէ մահունց չեմք քինահան մեք մեր
որդւոց և եղբարց,
Զի՞ և ես ինձ ըզքաղցր արևն արդ տեսա-
նել զիմ կենաց.
Ո՛վ, մահ առեալ և առ մեռեալս կա-
նուխ ինչից ես անշուշտ.
Բայց արիք, քաջք, մինչև դոցա աճա-
պարեալ 'ի փախուստ »:
Այս նա ասէր, և արտասուէր. ոչ-
ջոյն 'ի գուռթ շարժեցան,
Մինչդեռ անդուստ էհաս Մեդոն, հաս
և արդոյն երգահան.

Ի յՈդիսեայ գայլին տանէն սթափեալք յայնժամ 'ի քընոյն .
Եկին կացին , և ափշուԹիւն էառ զատեան զայն ողջոյն .
Զայն հանճարեղին արձակեաց Մեդոն Քարոզն յատենի ,
"Աղէ դուք , ո՞վ Ի՛Թակացիք , արդ ուՆկին իմոյն դիք ձայնի .
Ո՛չ յակամայս ինչ անմահից յանդ էլ նախճիրդ Ոդիսեան .
Զանմահն ասուուած էս , էս ինքնին անդ յակին արկի յանդիման .
'Նա մերձ եկաց քաջն Ոդիսեայ , ըզտիպ բերեալ զՄենտորին .
Է՛ զի անմահն 'ի հանդիպոյ կորով ազդէր դիւցազին ,
Է՛ զի Թափ տայր նա 'ի յարկին խրոով հարեալ հոմանեաց ,
Մինչև անկան անդ խիտ առ խիտ ողջ ընչասպառք 'ի կենաց " :
Զայս խօսեցաւ . առհասարակ 'ի գոյն հատան 'ի դալկան ,
Մինչև յարեաւ դիւցազն այն ծեր Ալ-Թերսէս Մաստորեան .
Քաջ և ներկուռ սա տեսանող էր անցեալոց և ապայց ,
Հանճարիմաստն և անդանօր նոցա յայնժամ ձայն կարդաց .

« Ինձ ունկընդիք , ինձ ծերունւոյս .
բնակասընունդք Իթակեան ,
Ձեր յանցանօքդ , ո՞ բարեկամք , մեծ այդ
նախճիրք գործեցան .
Դուք ոչ աւաղ մեր Մենտորին , ո՛չ և
ծերոյս անսացէք ,
Այլ 'ի լինել սանձակոտորս ինքնին զոր-
դիս ձեր թողէք .
Նոքա գնացեալք խոտորնակի քարուա-
կանօք լցէին ,
Ըզկեանս քաջին առին կերան և զամու-
սին գձձէին .
Ոչ կարծէին եթէ դարձցի այր բաղմամ-
եայն տարադէմ .
Բայց դուք զարդիս ուշիմ լերուք , և ան-
սացէք զոր ասեմ .
Հանդարտ լերուք և դիմադրաւ մի ոք
յառաջ խաղասցէ ,
Գուցէ ըզմահն ըզհրաւիրեալն ընդառա-
ջել իւր գոցէ » :
Այս ծերունին . և բաղմագոյնք մեծա-
բարբառք հաճք հաւան ,
Լցին զատեանն . սակայն և կէսք կացին
անդէն միաբան :
Բանից ծերոյն ո՛չ անսացին համախո-
հեալք Եպիթին ,
Յարեան գնացին և փութապէս 'ի զէն 'ի
զարդ վառէին .

Եկին կազմեալք և կարգեցան զրահա-
վառեալք 'ի պատեան,
Եւ խմբեցան 'ի յասպարէզ անդ քաղա-
քին յանդիման.
Խօլաց խմբին 'ի զօրավար արձանացաւ
Եւպիթէս,
Եւ քինահան արեան որդւոյն կարծէր
լինել փութապէս.
Ո՛վ, հիքացեալն 'ի տուն իւր դարձ չու-
նէր առնել միւսանգամ,
Ինքն ընդառաջ գընայր իւրոյ օրահասին
դառնութեան:
Բայց հնարագիւտ, մեծն Ամենաս վեհ
Արքային հարցանէր.
«Ա՛ղէ ասա՛ ինձ, Զրուանեանդ, տէր
արքայից և հայր մեր.
Զի՞նչ խորհրդոցդ ելցեն գաղտնիք.
մաքուր դրժնդակ յուզեսցես,
Եթէ արդեօք կրկին կողմանց սէր և համ-
բոյր հաստատեսցես.
«Առ ի՞նչ դու զայդ, ձայն արձակեաց
ամպրոպային Արամազդ,
Առ ի՞նչ դու արդ հետաքննես յինէն,
դուստր իմ բազմիմաստ.
Ո՞չ աւադիկ դու խորհեցար ըզդոյն խոր-
հուրդ մեծապէս,
Զի 'ի դարձին մահ հոմանեաց ածցէ ինք-
նին Ոդիսէս.

Ա՛ղէ արա՛ դու ըստ կամի. սակայն ասեմ քեզ զարժանն.

Ո՞Է Ոդիսէոդ այդ քաջարանց եկաց դոցա քինահան,

Արդ նա ինքնին թագ կապեսցէ, թագ հաստատուն 'ի դաշանց,

Իսկ մեք ինքնին ողջմտուացօնք արդ արասցուք դառն արեանց.

Մի՛ յիշաչարք լեցին դոքա, 'ի սէր դարձցին յառաջին,

Եւ միւսանգամ խաղաղութեամբ և մեծութեամբք լիասցին »:

Ասաց Աքքայն, և զԱթենաս զարդէն վառեալն յորդորեաց.

Էջ նա փութով արփայագնաց յՈղիմպոսին կատարաց:

Բայց Ոդիսեանք անդ 'ի յարկին խրախուն առեալ 'ի յընթրեաց,

Դիւցազն յայնժամ մեծն Ոդիսէս բազմականին ձայն կարդաց.

« Օ՞ն արդ ելցէ ոք 'ի դիտել մեզ ըզգալուստ հրոսակին »:

Այն ինչ լուաւ, Ճեպեաց արտաքս Դոլիոսի քաջորդին.

Կաց առ սեմովքն, և ըզհրոսակն ողջոյն դիտեալ նա քաջիկ,

Ձայն առ Ոդիս կարդաց անդէն. « Մօտ կան առ մեզ աւադիկ.

Հ՚ապա ՚ի զէն առ հասարակ. արէք, ո՛վ քաջք, ՚ի Ճակատ ».

Լուան, վառին միանգամայն. և ոչ էկաց ոք ՚ի զատ.

Ոլոք համահարզք շուրջ զՈդիսեաւ նաև Դոլէայ վեց զաւակք

Զինու զարդու արձանացան իբրև ըզքաջ նահատակ.

Կացին համհարզք և Լայերտէս և Դոլիոս ծերունիք.

Զի հարկ ժամուն և զալևորսըն իրախուսեալ էդ մարտիկ.

Բացին ըզդուրս, ելին արտաքս, էր Ոդիսէս նախընթաց,

Նիզակակից կաց առ ընթեր և քաջ մաղդեզն Ամենաս.

Ըզմենտորին բերէր ըզսիպ քաջ ըզմարմնոյն և ձայնին,

Եռեա դիւցազըն Ոդիսէս և ցնծացաւ ՚ի յոգին.

Դարձաւ յորդին ձայն արձակեաց, « Քեզ աւադիկ, Տելէմաք,

Քեզ ահա մարտ ուր քաջն ընտրի, ուր այր ընտրի նշաւակ.

Մի՛ կացուցցես անփառունակ դու զազգ ըզմերն հայրենի,

Որ միշտ ոգւով քաջարութեան մեք փայլեցաք յաշխարհի » :

«Տեսցես դու, հայր, եթէ կամիս, կըրկ-
նեաց առ նա Տելեմաք.
Երբէք ըզքո զարմ հայրենի ոչ կարդեցիս
ես յառակ».
Ասաց այսպէս, և առ խնդին ըզձայնն
ամբարձ Լայերտէս.
«Բա՜ի, աստուած. զի՞նչ ելցէ օրս, որ
ինձ ծագեաց մեծապէս,
Օր ծերունեայս երջանկաւէտ. զի՞արդ
չելցեմ խնդագին,
Ահա որդի, ահա և թոռն վասն արու-
թեան պայքարին»:
Բայց Աթենաս կարդաց յայնժամ առ
Լայերտէս ծերունի.
«Ինձ ո՞ւնկըն դիր, քաջդ Արկիսեան, ո՛վ
դու բնաւից փարելի.
Դու զԱրամազդն և ըզծաւին մեծ զՕ-
լիմպոսդըն կարդա՛,
Եւ փութապէս ըզկուռ զաշտէն կըշիռ
գործեալ արձակեա՛».
Ասաց, և ոյժ շնչեաց 'ի ծերն, և նա
զՊալլաս աղերսէր,
Եւ ձեպ ընդ ձեպ քաջ կշռակի ճոճեալ
զաշտէն արձակէր.
Ի յերկաթին կուռ գլխանոց հար զԵ-
պիթէս և խոցեաց,
Եւ անարգելտէգ անարին ընդ երկաթին
անց թափանց.

Անկաւ տապաստ, շրջինդն հարաւ, և զէնքն անդէն հնչեցին,
Խուժեն յայնժամ 'ի նահատակս քաջն Ոդիսէս և որդին.
Հարուն խոցեն սուր սուսերօք և 'ի նիզակս երկայրի.
Եւ ողջ անշուշտ անդ դիտապաստ անկանէին 'ի դաշտի,
Եթէ անդուստ վերն Աթենաս ձայն արձակեալ մեծագոչ,
Ողջոյն ըզգունդ ըզհրոսակին չառնէր յայնժամ սանձակոծ.
„Հրաժեշտ, հրաժեշտ, Իթակացիք, տո՛ւք արդ 'ի դառն 'ի մարտէ,
Եւ անարիւնք դարձիք 'ի տուն տեղի տուեալ 'ի դաշտէ"։
Զայս Աթենաս գոչեաց յայնժամ. նոքա յահէն թալացան,
Եւ սարսեալոցն առ 'ի ձեռաց զէնքն սրացեալ և թռեան,
Ընդ օդ ողջոյն անկան յերկիր յորժամ գոչեաց դիցուհին,
Եւ անձնապուրք անդ 'ի քաղաքն հատկըլեալք փախչէին։
Հեռամրտեալ ճեպէր Ոդիս գոչիւն բարձեալ ամենի,
Եւ թափ տուեալ սրանայր երբև բարձրաթռիչ մեծ արծուի։

Բայց 'ի բարձանց Ամպրոպայինն ահեղ
շանթեալ յանկարծոյն,
Հրացան կայծակն էարկ հանդէպ Օրիոր-
դին հօրամոյն.
Դարձաւ անդէն սա յՈդիսէս և ձայն
կարդաց յանդիման.
"Լո՛ւր արդ, ուշիմըդ Ոդիսէս, լո՛ւր
ինձ, ո՛վ քաջդ Լայերտեան.
Շա՛տ է արդ շատ սանձեա՛ ըղձեդ զամե-
նածանն ըղմարտի,
Զի մի՛ ընդ քեզ որոտընդոստ մեծն Ա-
րամազդ սրտնեսցի":
Զայս Ամթենաս, լուաւ Ոդիս և ցնծա-
ցաւ և անսաց,
Եւ ապա ուխտ յաւէժական երկուց կող-
մանց եդ հաստեաց
Խաղաղարարն արամազդեան վեհ հօրա-
մոյն Դիցուհին,
Ի ձայնն յայնժամ և 'ի մարմին ըզտիպ
բերեալ զՄենտորին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

54. Κύρος, Կիրկոս, ասեն Յոյնք զազգ մի սրաթռիչ բազէի։

55. Նաւահանգիստ է սա Իթակայ կղզւոյն։ Եւ էր 'ի նաւահանգստիս մեհեան Նուիրեալ Փորկիւնոսի որդւոյն Պոսիդոնի. և է սա մի 'ի ծովային դիցն։

56. Ἀχιλλεύς։ Տե՛ս 'ի վերս 'ի ծան. 6։

57. Ի յարդէն ճանալն է գիտունքս։ Առհասարակ յառակս ընկալեալ եղև տողս Հոմերի առ Յոյնս և առ այլ ազգս. զոր և յիշատակէ գովութեամբ Արիստոտել 'ի Հռետորականին խրատ, եթէ «Ի յարդէն պարտ է գուշակել զորայն». որպէս և 'ի ծերութենէ առն՝ զերիտասարդութիւն նորա։

58. Զվաղնջուց անուանն վարէ Հոմերոս, որով Հինք կոչէին զգետն Եգիպտացւոց, ոչ նեղոս անուանելով զնա՝ այլ Եգիպտոս. ըստ որում վկայեն Հնագէտք։

59. Դուվրոն, քաղաք յԵպիրոս. հռչակաւոր 'ի պատճառս կաղնեաց, և 'ի պատճառս մեհենին Արամազդայ։ Եւ

է Դովդոն՝ յոյժ վաղնջուց պատգամա-
տեղի Հելլենացւոց։

60. Մայիս. ըստ գիցաբանից, դուստր
Աղլասայ՝ յորմէ Արամազդ ծնաւ զՀեր-
մէս։

61. Ըստ պատեհի իրացն միշտ 'ի բա-
ղոյական անդր նկրտի իմաստուն Հոմե-
ղոս. և աստանօր դարձեալ ընդդէմ գի-
նեղբուաց և արբեցողաց գեղեցիկ խրատ
զգուշութեան կարդէ։

62. Մի էր Եւրիմաքոս յերևելեաց
անտի տարփածուացն Պենեղոպեայ։

63. Զիարդ իրաւապէս ճշմարտաբանէ
Հոմեր յաղագս բազմադիմակ և դժպա-
տեհ հեռևանաց երկրորդի ամուսնու-
թեան կնոջ մարդոյ, զոր և բացատրէ զկնի։

64. Սիրէ, կղզի. է այն զոր այսօր
կոչեն Սիրա։ Այլ Դորիէ արնոն, ասե-
լով Հոմեր վասն Սիրայի, ոչ զԱրևադարձն
իմանայ՝ որպէս մեկնեն՝ այլ զմուտս և զելս
արևուն, հայեցեալ 'ի դիրս Ոտիւգէ
կղզւոյն։

65. Զյանկարծամահ օրհասն համա-
ղեին հեթանոսք յաներևոյթ վիճնացն Ա-
պողոնի և Արտեմեայ։

66. Կի-ի-, կամ Կ-ի-. ռամկ. Կիվիվ։
Եւ է յունականն Κηξ, կամ Κήυξ, ա-
ռեալ 'ի հայկականէն։ Թռչուն խայտա-
փետուր, և թագ 'ի գլուխ. բնակէ մօտ
'ի ջուրս. գնայ 'ի վերայ ջրոց 'ի լիւղ։

67. Դարձուցանէ զբան իւր Տելեմաք
առ Եւմէոս։

68. Մեղմաբար անցանէ զանցիւքն հեղինեայ, պատուասիրեալ զհիւրընկալութիւնն առ 'ի նմանէ Տելեմաք առաջի մօրն։

69. Պատրոկղէան է՝ անուանին, որ մայր եկաց Փիլոմելէ։

70. Ինոյոս և Նեբիոս, որդիք նախնոյն Պոեբելասոսի։ Կղզին Յիթակոսէ էառ զանուն. և 'ի Նեբիտոսէ՝ անուանի լեառն Նեբիտոն Յիթակէ։

71. Զառածն Հոմերեան բազում ուրեք շքով յառաջ բերէ Արիստոտէլ 'ի Բարոյականին իւրում. 'ի նոյն յարեալ և զՅունաց զառածան, եթէ Նման ընմանն ոչիչ. և, Համապիտ 'ի համապիտն զուարճանան։ Զնոյն և Պղատոն։

72. Փռնգալն՝ թէպէտ և 'ի բնական պատճառաց յառաջ եկեալ, սակայն և յամենայն 'ի դարս իբրև նշանական ինչ համարեցաւ առ մարդիկ. ուստի և առ հասարակ բարեմաղթեն այնմ՝ որ փռնգայ։

73. Իսկ թէ յինչ պատճառս այնպէս Իրոս կարդային զնա, 'ի յունական բառիցն ցարդ ոչինչ յարմարագոյն գտին քննիչք։

74. Օրոր Ն նա, վասն իւր ասէ Ոդիւսէս, և զինքն՝ որ 'ի տան իւրում կայր՝ ասէ ոչ յամել 'ի դարձն։

75. Արգոս Յասոնեան է Պեղոպոննիսոս յորջորջեալ յանուանէ նախնոյ արքային Յասոսի։

76. Ոճ զրուցելոյ է Հոմերեան՝ առեալ

'ի հնոց անտի վայրագասուն և անտա-
ռաբնակ արանց, որք ասէին զանձանց՝ 'ի
վիմաց ծնեալս, կամ 'ի հաստահարուստ
հինօրեայ կաղնեաց։ Են զայս տող Հո-
մերի իբրև առակ յեղյեղեալ յառաջ բե-
րեն բազում մատենագիրք, Պղատոն,
Պլուտարքոս, Թէոկրիտոս, Կիկերոն,
Կղեմէս Աղեքս, և այլք։ Եւ ասել կամի
Պենելոպէ առ Ոդիս, «Մի՛թէ 'ի վիմաց
կամ 'ի ծառոց է ազգն քո, զի չունիցիս
ինչ մի ասել ինձ զայնմանէ»։

77. Եռաբաշխ ասին, զի կէսք 'ի Տո-
րեցւոց բնակէին յԵւբիա. կէսք 'ի Պեղո-
պոննիսոս, և կէսք 'ի Կրետէ։

78. Տե՛ս 'ի ծան. 2։

79. Քանզի 'ի ցասման էր մայրենի
պապն Ոդիւսեայ Աւտոլիկէս 'ի ժամա-
նակին՝ յորում եկն նա յԻթակէ և այն
ինչ ծնեալ էր յայնժամ Ոդիւս մանուկն,
եդ զանուն Թոռինն ըստ հայցուածոց ըն-
տանեացն Ոդիսէոս. քանզի Ὀδύσσαι 'ի յն,
է, ցասնում, բարկանամ։

80. Բառն Հոմերեան է Ἐπαοιδία.
Թովչութիւն, Հմայք։ Ոմանք մեկնեն
զբառն՝ իբրու Սփոփանք, Քաջալերք,
տուեալ 'ի զօրացուցանել զվիրաւորեալն
'ի տանել քաջութեամբ։

81. Պանդարէոս Եփեսացի ըստ գլուցա-
բանիցս փոխակերպեալ 'ի Թռչուն հան-
դերձ դատերքն, որ էին Անէոնէ ըստ
յն. Սոխակ. և Քէլիդոնիէ։

82. Իսիս, որդի արքային Ջէթոսի և

Այեդոնեայ. սպանեալ 'ի մօրէն վրիպա-
կաւ 'ի գիշերի. վասն որոյ և Անէոնէ որ
է Սոխակ, միշտ լայ զորդին իւր Իտիւղ
յերգել իւրում։

83. Սարդոնէան ասացեալ Ծիծաղն 'ի
բազմաց բազմօրինակ մեկնի. բայց է այն
ծիծաղ ոչ բնաւորական, այլ բռնադա-
տեալ և ընդ դժկամակս։

84. Երէէան, մականուն Արամազդայ։
Հոմ. Ἐρχίος, Տնական, Առտնին. զի յա-
մենայն տունս և 'ի խորշս տանց պաշտէր
դրօշեալն Արամազդայ։

85. Կիլլենէան, մականուն Հերմէսի.
զի 'ի Կիլլեն անուն լեառն Արկադիոյ
բնակասուն ասեն զՀերմէս։

20 p.

Tuefef

Ko c. 5

20